ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1918 Թ. ՕԳՈՍՏՈՍ - 1921 Թ. ՓԵՏՐՎԱՐ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1918 Թ. ՕԳՈՍՏՈՍ - 1921 Թ. ՓԵՏՐՎԱՐ

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԿԱԶՄՈՂ, ԱՌԱՋԱԲԱՆԻ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿ՝

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱՒԼՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
Քոփի Փրինթ
2023

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 282

Հրատարակված է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ

Հ 282 Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի գործունեությունը, 1918 թ. օգոստոս -1921 թ. փետրվար, վավերագրեր և նյութեր, գիրք առաջին, ժողովածու/կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝ Բենիամին Մաիլյան, Քոփի Փրինթ, Երևան, 2023, 331 էջ:

Ժողովածուն ընդգրկում է Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի 1918-1921 թթ. գործունեությունը լուսաբանող վավերագրերը և նյութերը՝ արդյունքում բացահայտվում են վիրահայության, ջավախահայության, աբխազահայության հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, իրավական, կրթամշակութային և ժամանակի այլ կարևոր խնդիրները ու մարտահրավերները:

Գիրքը նախատեսվում է պատմաբանների, քաղաքագետների, հայագետների, կովկասագետների, ինչպես նաև ընթերցող լայն հանրության համար:

ISBN 978-9939-9313-1-9

© Կազմողի համար, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....19
N 1 Խմբագրական առաջաբան «Հորիզոն» պարբերականում՝ Վրաստանի ՀԱԽ-ի հիմնադրման անհրաժեշտության մասին.....25
N 2 ՀՅԴ-ի Թիֆլիսի ճյուղի «ռայոնական ժողովի» բանաձևը՝ Վրաստանի ՀԱԽ-ի հիմնադրման անհրաժեշտության մասին (1918 թ., 15 հունիսի).....26
N 3 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի կազմավորման մասին.....27
N 4 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի հիմնադիր անդամների մասին.....27
N 5 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի անդրանիկ նիստի մասին (1918 թ., 2 օգոստոսի).....29
N 6 Տեղեկատվություն «Մշակ» օրաթերթում՝ Վրաստանի ՀԱԽ-ի անհատական կազմը բազմացնելու մասին.....30
N 7 Հաղորդագրություն՝ Վրաստանում պետական միջնակարգ դպրոցների ազգայնացման կապակցությամբ՝ փոխվարչապետ Ն. Վ. Ռամիշվիլու հետ ՀԱԽ-ի լիազորների բանակցությունների մասին.....30
N 8 Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1918 թ. օգոստոսի 6-ի նիստի մասին.....32
N 9 Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1918 թ. օգոստոսի 24-ի նիստի մասին.....33
N 10 Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1918 թ. օգոստոսի 25-ի նիստի մասին.....34
N 11 Տեղեկատվություն «Հորիզոն» օրաթերթում՝ Վրաստանի ՀԱԽ-ի նախագահության անդրանիկ կազմի մասին.....37

N 12 «Ժողովրդի Ձայն» պարբերականը՝ Վրաստանի ՀԱԽ-ի առաջացման պատճառների և նրա անդրանիկ քայլերի մասին 38
N 13 Առաջաբան «Ժողովրդի Ձայն» օրաթերթում՝ Վրաստանի ՀԱԽ-ի առաջիկա, հրատապ և անհետաձգելի խնդիրների մասին 40
N 14 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. սեպտեմբերի 8-ի նիստի մասին 42
N 15 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918թ. սեպտեմբերի 10-ի նիստի մասին 43
N 16 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918թ. սեպտեմբերի 13-ի նիստի մասին 46
N 17 Հաղորդագրություն՝ Վրաստանի վարչապետի և ՀԱԽ-ի լիազոր ներկայացուցիչների աշխատանքային հանդիպման մասին (1918 թ., 16 սեպտեմբերի) 48
N 18 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. սեպտեմբերի 20-ի նիստի մասին 49
N 19 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. սեպտեմբերի 22-ի նիստի մասին 51
N 20 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. սեպտեմբերի 24-ի նիստի մասին 53
N 21 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ում ՀՀ զորքերի հրամանատար Թովմաս Նազարբեգյանի հյուրընկալման մասին 56
Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի նախաձեռնութեամբ հրավիրված և որբերի խնամատարության հարցը քննող 1918 թ. հոկտեմբերի 1-ի խորհրդակցության մասին 57
N 23 Տեղեկատվություն՝ Վրաստանի ՀԱԽ-ին հայ «կադետների» դիմումի մասին 58

N 24 «Ժողովրդի Ձայն» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. հոկտեմբերի 6-ի նիստի մասին 59
N 25 «Հորիզոն» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. հոկտեմբերի 6-ի նիստի մասին 61
N 27 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. հոկտեմբերի 17-ի նիստի մասին 63
N 28 Վրաստանի և Իմերեթի թեմի հոգևոր առաջնորդ Մխիթար եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի՝ հայկական եկեղեցական-ծխական դպրոցների հոգաբարձությանը 1918 թ. հոկտեմբերի 5-ին հղած N 298 առաջադրությունը՝ Հայոց Ազգային Խորհրդի հետ փոխհարաբերությունների մասին ... 66
N 29 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. հոկտեմբերի 25-ի նիստի մասին 67
N 30 Վրաստանի ՀԱԽ-ին կից գաղթականների գործերով զբաղվող մարմնի հայտարարությունը 69
N 31 Հաղորդագրություն՝ Վրաստանի լուսավորության նախարարության և ՀԱԽ-ի փոխհարաբերությունների մասին 70
N 32 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. նոյեմբերի 1-ի նիստի մասին 70
N 33 Լրագրային հաղորդում՝ գաղթականներին նյութական օժանդակություն հանգանակելու նպատակով՝ Վրաստանի ՀԱԽ-ի նախաձեռնությամբ 1918 թ. նոյեմբերի 7-ին հրավիրված թիֆլիսահայ հանրության ժողովի մասին 73
N 34 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. նոյեմբերի 8-ի նիստի մասին 75
N 35 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. նոյեմբերի 15-ի և 17-ի նիստերի մասին 76

N 36 Հաղորդագրություն՝ Հայ գաղթականական կազմակերպությունների Գլխավոր Խորհրդի լուծարման և Վրաստանի ՀԱԽ-ի հետ նրա կառույցների միաձուլման մասին 80
N 37 Խմբագրական առաջաբան «Նոր Հորիզոն» պարբերականում՝ Վրաստանում ազգային փոքրամասնութիւնների մշակութային ինքնավարության հրամայական խնդիրների մասին 81
N 38 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 2-ի նիստի մասին 83
N 39 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 6-ի նիստի մասին 84
N 40 «Ժողովրդի Ձայն» լրագիրը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 10-ի արտահերթ նիստի մասին 89
N 41 «Աշխատավոր» լրագիրը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 10-ի արտահերթ նիստի մասին 90
N 42 Վրաստանի ՀԱԽ-ի պատվիրակության հեռագիրը Լոռվա դեպքերի մասին (1918 թ., դեկտեմբեր) 91
N 43 «Ժողովրդի Ձայն» պարբերականը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 13-ի նիստի մասին 92
N 44 «Աշխատավոր» պարբերականը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 13-ի նիստի մասին 96
N 45 Ախալքալաքցիների հայրենակցական միության վարչության փոխնախագահ Գր. Պապոյանի կարծիքը՝ Վրաստանի ՀԱԽ-ի կողմից գաղթականներին ցուցաբերած օգնության մասին 99
N 46 Հաղորդագրություն՝ Վրաստանի վարչապետ Ն. Ն. Ժորդանիայի և ՀԱԽ-ի լիազորների աշխատանքային հանդիպման մասին (1918 թ., 16 դեկտեմբերի) 99

N 47 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի արտգործնախարար Ե. Պ. Գեգեճկորու և ՀԱԽ-ի լիազորված անդամների աշխատանքային հանդիպման մասին (1918 թ., 16 դեկտեմբերի) 100
N 48 «Знамя Труда» պարբերականը Վրաստանի ՀԱԽ-ի անդամների Լոռվա մարզում կատարած միջնորդական առաքելության մասին (1918 թ., դեկտեմբեր)՝ արտատպված «Ժողովրդի Ձայն»-ում 101
N 49 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 29-ի նիստի մասին 102
N 50 Հաղորդագրություն՝ վարչապետ Ն. Ն. Ժորդանիայի և Վրաստանի ՀԱԽ-ի լիազորների աշխատանքային հանդիպման մասին (1918 թ., 30 դեկտեմբերի) 105
N 51 1918-ին Վրաստանի հայկական ժողովրդական և հայոց լեզվի (կամ՝ հայագիտական առարկաների) դասավանդմամբ պետական դպրոցների կացության մասին 107
N 52 Լրագրային հաղորդում՝ վարչապետ Ն.Ն. Ժորդանիայի և Վրաստանի ՀԱԽ-ի լիազորների աշխատանքային հանդիպման մասին (1919 թ., 6 հունվարի) 112
N 53 «Ժողովրդի Ձայն»-ը՝ վարչապետ Ն. Ն. Ժորդանիային հղած Վրաստանի ՀԱԽ-ի գրության համառոտ բովանդակության մասին (1919 թ., հունվար) 117
N 54 «Հառաջ» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հունվարի 12-ի նիստի մասին 124
N 55 «Ժողովրդի Ձայն» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հունվարի 12-ի նիստի մասին 125
N 56 Հաղորդագրություն՝ հայ գաղթականներին օգնելու և խնամելու գործը՝ վրաց իշխանությունների կարգադրանքով առժամանակ կասեցնելու մասին 129

N 57 Պատգամավոր Տ. Ավետիսյանի հաշվետվությունը՝ Վրաստանի խորհրդարանի կազմում ՀԱԽ-ի լիազորների գտնվելու մասին 129
N 58 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հունվարի 19-ի նիստի մասին 130
N 59 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հունվարի 24-ի նիստի մասին 132
N 60 Հաղորդագրություն՝ Բաթումի Հայոց ազգային խորհրդի կազմավորման մասին 137
N 61 Լրատվություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. փետրվարի 7-ի նիստի մասին 138
N 62 Լրատվություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. Փետրվարի 7-ի և 14-ի նիստերի մասին 140
N 63 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. փետրվարի 21-ի նիստի մասին 146
N 64 Հաղորդագրություն՝ «Դաշնակցության» Թիֆլիսի ներկայացուցչական ժողովում Վրաստանի ՀԱԽ-ի ՀՅԴ խմբակցության հաշվետվության մասին 151
N 65 Հաղորդագրություն՝ Բորչալուի գավառի հայ բնակիչներին իրենց գյուղերը վերադարձնելու գործում Վրաստանի ՀԱԽ-ի ներկայացուցիչների մասնակցության մասին 155
N 66 Վրաստանի ՀԱԽ-ի լիազորների հաղորդագրությունը Բորչալուի գավառի (Տաշիր) հայազգի բնակչության սոսկալի ծանր և աղետաբեր կացության մասին 156
N 67 Հաղորդագրություն՝ հայազգի գաղթականներին օգնելու համար՝ ՀՀ-ի կառավարության միջոցներից Վրաստանի ՀԱԽ-ին հատկացրած գումարի մասին 156
N 68 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի գանձարանի գումարները պետական կալանքից ազատելու մասին 157

N 69 «Աշխատաւոր» լրագիրը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. մարտի 14-ի նիստի մասին.....157
N 70 «Ժողովրդի Ձայն» լրագիրը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. մարտի 14-ի նիստի մասին.....161
N 71 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. մարտի 18-ի արտահերթ նիստի մասին 165
N 72 Հաղորդագրություն՝ ՀՀ Կառավարությունից նյութական օժանդակության հայցման նպատակով՝ Վրաստանի ՀԱԽ-ի պատվիրակության Երևան մեկնելու մասին 170
N 73 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի ֆինանսական կացության մասին 170
N 74 Լրագրային հաղորդում՝ հայազգի գաղթականներին օգնելու նպատակին ծառայող Վրաստանի ՀԱԽ-ի գանձարանի ծախսերի մասին 172
N 75 Հաղորդագրություն՝ վիրահայ ունևոր դասից պարտադիր տուրք գանձելու ՀԱԽ-ի մտադրության մասին.....172
N 76 Հաղորդագրություն՝Վրաստանի ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունները հետաձգելու պատճառների մասին 173
N 77 Կարծիքներ ՀԱԽ-ի գործունեության մասին ՝ ըստ ՀՅԴ Վրաստանի ճյուղի 2-րդ «ռայոնական ժողովում» հնչած ելույթների (1919 թ., մարտ) 174
N 78 Հաղորդագրություն՝ Բորչալուի գավառում հայ-վրացական պատերազմի հետևանքով ձերբակալված հայերին ազատելու՝ ՀԱԽ-ի միջնորդության մասին.....177
N 79 Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1919 թ. ապրիլի 11-ի նիստի մասին.....178

N 80 ՀԱԽ-ի դիմումը Վրաստանի կառավարությանը՝ Շուլավերի հայ ազգաբնակչության հոգսերի մասին 180
N 81 ՀԱԽ-ի դիմումի վրաց կառավարությանը՝ Ջավախքի հայ ազգաբնակչության կարիքները հոգալու մասին 181
N 82 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմի մասին 181
N 83 «Աշխատավոր» օրաթերթի խմբագրականը՝ Վրաստանի ՀԱԽ-ի մասին 182
N 84 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. մայիսի 6-ի արտահերթ նիստի մասին 184
N 85 Վրաստանի ՀԱԽ-ի անդամ Ա. Աբեղյանի կարծիքը՝ ՀԱԽ-ի կազմը վերընտրելու անհրաժեշտության մասին 187
N 86 Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1919 թ. մայիսի 13-ի արտահերթ նիստի մասին 189
N 87 Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1919 թ. մայիսի 16-ի հերթական նիստի մասին..... 192
N 88 Վրաստանի ՀԱԽ-ի անդամ Ա. Աբեղյանի կարծիքը՝ ՀԱԽ-ի առջև ծառացած բուն խնդիրների մասին 194
N 89 Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1919 թ. մայիսի 23-ի հերթական նիստի մասին..... 195
N 90 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի շրջանային ընտրական հանձնաժողովների մասին..... 197
N 91 Հաղորդագրություն՝ Վրաստանի վարչապետ Ն. Ն. Ժորդանիայի, ՆԳ նախարար Ն. Վ. Ռամիշվիլու և ՀԱԽ-ի լիազորների 1919 թ. հունիսի 5-ի աշխատանքային հանդիպման մասին..... 198
N 92 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հունիսի 6-ի հերթական նիստի մասին..... 199

N 93 ՀԱԽ-ի կենտրոնական ընտրական հանձնաժողովի ծանուցումը՝ Վրաստանի հայ ազգաբնակչության.....201
N 94 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունների կազմակերպման ընթացակարգի մասին 202
N 95 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հունիսի 13-ի հերթական նիստի մասին.....203
N 96 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի Թիֆլիսի թաղային ընտրական հանձնաժողովների մասին.....205
N 97 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի վերաստուգիչ հանձնաժողովի կազմի մասին.....206
N 98 Կուսակցական թեկնածուների ցուցակները՝ ներկայացված Վրաստանի ՀԱԽ-ի համամասնական ընտրությունների համար (1919 թ., հուլիս).....206
N 99 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի ընտրությունների շուրջն առաջացած խոչընդոտների մասին.....211
N 100 Վրաստանի ՀԱԽ-ի կենտրոնական ընտրական հանձնաժողովի ծանուցումը՝ ի գիտություն Թիֆլիսի հայ ազգաբնակչության 212
N 101 ՎՍԴԲԿ-ի հայազգի անդամների միջնորդությունը՝ Վրաստանի ՀԱԽ-ի ընտրությունները հետաձգելու մասին..212
N 102 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հուլիսի 18-ի արտահերթ նիստի մասին.....214
N 103 «Նոր Աշխատավոր» օրաթերթի մեկնությունը՝ Վրաստանի ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությանների արգելման պատճառների մասին.....216

N 104 ՀՅԴ Վրաստանի ճյուղի ԿԿ-ի դիմումը երկրի հայ քաղաքացիներին՝ ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունները արգելելու կապակցությամբ.....218
N 105 Վրաստանի ՆԳՆ-ի փոխնախարարի գրությունը՝ ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունները արգելելու պատճառների մասին 219
N 106 Բողոք Վրաստանի ներքին գործերի նախարարին՝ ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունները արգելելու կապակցությամբ.....220
N 107 «Գործավոր» պարբերականի մեկնաբանությունը՝ Վրաստանի ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունները արգելելու պատճառների մասին 223
N 108 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունների արգելման պատճառով առաջացած վիրահայ հանրության բողոքների մասին.....226
N 109 Լրատվություն՝ ՀԱԽ-ի 1919 թ. օգոստոսի 1-ի նիստի մասին.....228
N 110 Լրատվություն՝ ՀԱԽ-ի 1919 թ. օգոստոսի 1-ի նիստի մասին.....229
N 111 Հաղորդագրություն՝ Բորչալուի գավառի հայ ազգաբնակչությանը՝ Վրաստանի ՀԱԽ-ի միջոցներից հատկացրած պարենային օժանդակության մասին.....234
N 112 ՀՅԴ-ի Վրաստանի ճյուղի «ռայոնական ժողովի» բանաձևը (1919 թ., 7 օգոստոսի)՝ ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունների արգելման կապակցությամբ.....234
N 113 Լրատվություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. օգոստոսի 8-ի նիստի մասին 235

N 114 «Բորբա» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. օգոստոսի 8-ի նիստի մասին 238
N 115 Լրատվություն՝ Վրաստանի նորացված ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 18-ի նիստի մասին 241
N 116 Լրատվություն՝ Վրաստանի նորացված ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 18-ի նիստի մասին 244
N 117 «Աշխատավոր» լրագիրը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 20-ի նիստի մասին 245
N 118 «Բանվորի Ձայն» շաբաթաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 20-ի նիստի մասին 248
N 119 Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի վերակազմավորման հարցում Վրաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցութեան «հայկական սեկցիայի» դիրքորոշման մասին 251
N 120 Հաղորդագրություն՝ Սուրամի (Գորիի գավառ) հայկական դպրոցը Վրաստանի ՀԱԽ-ին ենթարկելու մասին 252
N 121 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 28-ի նիստի մասին 253
N 122 «Աշխատավոր» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 30-ի նիստի մասին 255
N 123 «Բանվորի Ձայն»-ը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 30-ի նիստի մասին 257
N 124 «Բորբա» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի գործկոմի վերընտրության և նրա նոր կազմի մասին 259
N 125 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի աշխատակազմի ինքնալուծարման մասին 259
N 126 Վրաստանի ՀԱԽ-ի հայտարարությունը՝ ուսուցչական անձնակազմ վարձելու մասին 260

N 127 Վրաստանի ՀԱԽ-ի հայտարարությունը՝ դպրոցական տեսուչներ վարձելու մասին 261
N 128 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի դպրոցական տեսուչներին նշանակելու մասին 261
N 129 Վրաստանի գավառների ու Լոռվա «չեզոք գոտու» հայալեզու դպրոցները 262
N 130 Հաղորդագրություն՝ Բորժոմի հայկական դպրոցը Վրաստանի ՀԱԽ-ին ենթարկելու մասին 262
N 131 Հաղորդագրություն՝ ջավախահայությանն օգնելու նպատակով՝ Վրաստանի ՀԱԽ-ի արած միջնորդությունների մասին 264
N 132 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի նախագահության որոշման՝ Կովկասի հայոց բարեգործական ընկերությունն իրեն ենթարկելու մասին 264
N 133 Հաղորդագրություն՝ նոր դպրոցներ հիմնադրելու և ֆինանսավորելու Վրաստանի ՀԱԽ-ի 265
որոշման մասին 265
N 134 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի անդամներին երկրից վտարելու կապակցությամբ՝ վրաց վարչապետին հղած բողոքի մասին (1919 թ., նոյեմբեր) 266
N 135 Հաղորդագրություն՝ վարչապետի պաշտոնակատար Ե. Պ. Գեգեճկորու և ՀԱԽ-ի լիազորների 1919 թ. նոյեմբերի 22-ի աշխատանքային հանդիպման մասին 268
N 136 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՆԳ նախարարի և ՀԱԽ-ի լիազորների 1919 թ. նոյեմբերի 24-ի աշխատանքային հանդիպման մասին 270
N 137 Հաղորդագրություն՝ Ջավախքի հայկական դպրոցներին նպաստ հատկացնելու ՀԱԽ- ի որոշման մասին 270

N 138 Հաղորդագրություն՝ ՀԱԽ-ի միջոցներով Ջավախքում հայկական դպրոցներ վերաբացելու մասին 271
N 139 Հաղորդագրություն՝ Վրաստանի Սահմանադիր ժողովի ղեկավարության առջև ՀԱԽ-ի նախագահ Բ. Թոփչյանի միջնորդության՝ հայազգի կալանավորների պատիժը թեթևացնելու մասին 271
N 140 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի որոշման՝ իրեն ենթակա դպրոցներում ուսուցիչ-մանկավարժների նյութական կացությունը բարելավելու մասին 272
N 141 ՀԱԽ-ի կոչը Վրաստանի հայ ազգաբնակչությանը՝ Գորիի երկրաշարժի կապակցությամբ 272
N 142 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. փետրվարի 24-ի նիստի մասին 273
N 143 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. մարտի 1-ի նիստի մասին 276
N 144 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. մարտի 6-ի և 9-ի նիստերի մասին 277
N 145 Վրաստանի ՀԱԽ-ի թեզերը՝ վիրահայերի ինքնակառավարում և մշակութային ինքնավարություն հիմնելու մասին 282
N 146 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. մարտի 19-ի արտահերթ նիստի մասին 285
N 147 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. մայիսի 11-ի նիստի մասին 286
N 148 Ծանուցում Վրաստանի հայկական դպրոցների մանկավարժներին 287
N 149 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. հունիսի 22-ի նիստի մասին 288

N 150 ՀԱԽ-ի կոչը Վրաստանի հայազգի քաղաքացիներին՝ մշակութային ինքնավարության պահանջի մասին 291
N 151 Վրաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության «հայկական սեկցիայի» առանձնակի կարծիքը՝ մշակութային ինքնավարության պահանջի կապակցությամբ.....292
N 152 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. հուլիսի 6-ի նիստի մասին.....293
N 153 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. օգոստոսի 3-ի նիստի մասին 295
N 154 ՌՍԴԲԿ «միջազգայնականներ»-ի կուսակցական լրագրի մեկնաբանությունը՝ Վրաստանի ՀԱԽ-ի դպրոցական քաղաքականության մասին 298
N 155 1919-1920 ուսումնական տարվա 300
վիճակագրական տվյալները՝ Վրաստանի ՀԱԽ-ին ենթակա ժողովրդական դպրոցների մասին 300
N 156 Հաղորդագրություն՝ Աբխազիայի (Սուխումի շրջան) հայկական ժողովրդական դպրոցների մասին.....301
N 157 Հաղորդագրություն՝ Թիֆլիսի հայ հանրության 1920 թ. հոկտեմբերի 6-ի ցույցի մասին.....305
N 158 Հաղորդագրություն՝ Թիֆլիսի Ռուսաց ազգային խորհրդի դիմում-առաջարկը՝ Վրաստանի ՀԱԽ-ի հետ միասնաբար գործելու մասին 306
N 159 Հաղորդագրություն՝ Վրաստանում հայազգի քաղաքացիների իրավունքների վերաբերյալ հատուկ «հուշագիր» կազմելու ՀԱԽ-ի ղեկավարության որոշման մասին.....307
N 160 Հաղորդագրություն՝ Վրաստանի բարձրագույն իշխանություններին ՀԱԽ-ի «հուշագիրը» հանձնելու

նպատակով՝ պատվիրակություն կազմելու որոշման մասին 307
N 161 Հաղորդագրություն՝ հայկական դպրոցների ներկայացուցիչների հետ ՀԱԽ-ի գործկոմի 1921 թ. հունվարի 30-ի խորհրդակցության մասին 308
N 162 Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ին ենթակա ժողովրդական դպրոցներում ուսումնական գործի կազմակերպման մասին 309
N 163 Բաթումի ՀԱԽ-ի հայտարարությունը 318
N 164 Հաղորդագրություն՝ Վրաստանի հայկական ժողովրդական դպրոցների ուսուցիչների աշխատավարձերը հավելելու ՀԱԽ-ի որոշման մասին 318
N 165 Լրագրային հաղորդում՝ հայկական ժողովրդական դպրոցների հանդեպ վրաց իշխանությունների ունեցած վերաբերմունքի մասին 319
N 166 Հաղորդագրություն՝ վիրահայերի ինքնակառավարման և մշակութային ինքնավարության խնդրին նվիրված հուշագրի մշակման ավարտելու մասին 320
N 167 Հաղորդագրություն՝ Վրաստանի վարչապետի և ՀԱԽ-ի նախագահի 1921 թ. փետրվարի 10-ի աշխատանքային հանդիպման մասին 320
N 168 Խմբագրական «Մշակ» օրաթերթում՝ Վրաստանի ՀԱԽ-ի գործունեության մասին 321
N 169 Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի նախագահ Բ. Թոփչյանի 1921 թ. փետրվարի 12-ի մամուլի ասուլիսի մասին 324
N 170 Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1921 թ. փետրվարի 15-ի նիստի մասին 325

N 171 Հաղորդագրություն՝ վրաց բանակի կարիքների համար հիվանդանոց հիմնելու ՀԱԽ-ի որոշման մասին 327
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ 328

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայրենի, և ո՛չ միայն, պատմագիտական ուսումնասիրություններում, որոնք անդրադառնում են 1918-1921 թթ. տագնապալից իրադարձություններին, երբեմն հիշատակվում է Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը[1] (այնուհետև՝ ՀԱԽ): Սակայն այդ տեղեկությունները խիստ անբավարար էին նրա մասին լիակատար պատկերացում կազմելու համար: Հետևաբար, օրինաչափորեն առաջ էին գալիս չլուսաբանված մի շարք հարցեր: Անպատասխան էին մնում Վրաստանի ՀԱԽ-ի երևան գալու պատճառներն ու հիմքերը, կազմավորման սկզբունքները, գոյության ժամանակագրական շրջանակները, նաև նրա գործունեության ասպարեզը և այլն: Ժամանակի մամուլն ընթերցելիս ակնհայտ է դառնում, որ հիշյալ կառույցը հաղորդակից է եղել և արագ արձագանքել է բոլոր մեծ ու փոքր այն իրադարձություններին, որոնք պատահել են Վրաստանի հայ համայնքի կյանքում: Ուստի նրա համակարգված պատմությունը պետք է առաջ բերի և բացահայտի յուրահատուկ ուրվագիծ, որի միջոցով և հնարավորինս լայն չափով կհաջողվի, ըստ էության, գիտական ասպարեզ հանել, մեկնաբանել և վերծանել Վրաստանի հայության կյանքի և կացության այն կողմերն ու իրադարձությունները, որոնք առայժմ մութ են մնացել և, հետևաբար, դեռ չեն գտել իրենց պատշաճ տեղը հայրենի պատմագրության էջերում[2]:

---

[1] Ժամանակի մամուլի նյութերում և այլ վավերագրերում կարելի է հանդիպել նաև «Վիրահայ ազգային խորհուրդ» տարբերակը:

[2] Ժողովածուի կազմողը, առաջին անգամ լինելով, փորձել է համառոտ մի ակնարկով լուսաբանել Վրաստանի ՀԱԽ-ի պատմության դրվագները՝ գիտական շրջանառության մեջ դնելով նոր տվյալներ և քննաբար օգտագործե-

Վրաստանի բազմազան ազգությունների (ռուսներ, օսեր, թուրք-թաթարներ, հույներ, հրեաներ, գերմանացիներ, այսոր-ներ, եզդիներ և այլն) Ժամանակի ազգային խորհուրդների շարքում էր գտնվում նաև ՀԱԽ-ը: Նրա կազմավորման մասին Թիֆլիսում գործող հայկական քաղաքական հոսանքները համաձայնության եկան 1918 թ. հուլիս-օգոստոսին: ՀԱԽ-ում ներկայացված էին ՀՅԴ-ի, ՀԺԿ-ի, ՍԴՀԿ-ի, ինչպես նաև ՎՍԴԲԿ-ի, ՌՍԴԲԿ-ի և էսէռների «հայկական սեկցիաների» խմբակցությունները: Վրաստանի ՀԱԽ-ի ակունքների մոտ կանգնած էին և հիմնադիր անդամներ դարձան այնպիսի անվանի քաղաքական ու հասարակական գործիչներ, ինչպես Ն. Պ. Աղբալյանը, Հ. Գ. Արղությանը, Ա. Հ. Երզնկյանը, Լ. Գ. Թումանյանը, Ս. Ս. Հարությունյանը, Գ. Հ. Ղարաջյանը (Ս. Տ. Արկոմեդ), Գ. Պ. Մելիք-Ղարագյոզյանը, Մ. Պապաջանյանը և ուրիշներ (տե՛ս վավ. N 4): Վրաստանի ՀԱԽ-ի կազմը, սակայն, կայուն բնույթ չէր կրում: Նրան մաս կազմող կուսակցություն-ները շատ հաճախ փոխում էին իրենց ներկայացուցիչներին (տե՛ս վավ. NN 15, 19, 115): ՀԱԽ-ի գոյության տարբեր փուլե-րում նրա գործունեությանը մասնակից եղան նաև ականավոր հայ գիտնականներ Ե. Գ. Տեր-Մինասյանը, Ս. Ս. Մալխասյան-ցը, Ա. Գ. Բաբախանյանը (Լեո), Ա. Գ. Աբեղյանը, Ղ. Գ. Տեր-Ղազարյանը, Վ. Հ. Ռշտունին: ՀԱԽ-ի նախագահությունը վարում էր Բ. Թոփչյանը, իսկ գործկոմի ղեկավարն էր Ա. Երզնկյանը (տե՛ս վավ. N 86):

ՀԱԽ-ի ուշադրության կիզակետում էր գտնվում Վրաս-տանի հայ համայնքի իրավական կարգավիճակը և դրանից,

---

լով ուսումնասիրողներին արդեն հայտնի ցաքուցրիվ նյութերը: Տե՛ս Մաիլ-յան Բ.Վ. Վրաստանի հայոց ազգային խորհրդի գործունեության պատմու-թյունից (1918 թ. օգոստոս – 1921 թ. փետրվար) // ՊԲՀ, 2011, թիվ 1, էջ 61 - 82:

նախ և առաջ, բխող վիրահայերի, ջավախահայերի և աբխազահայերի կրթամշակութային ինքնավարության ստեղծման խնդիրը (տե՛ս վավ. N 145): Այն պետք է կարևոր դերակատարում ունենար Վրաստանի հայ համայնքի, այդ թվում նաև վրացախոս վիրահայերի, ազգային ինքնության պահպանման գործում: Ազգի նվիրյալները նպատակ ունեին ստեղծել այնպիսի դպրոց, որտեղ մատաղ սերունդը ոչ միայն կուսաներ հայագիտական առարկաներ, այլ նաև կդաստիարակվեր ազգային և ավանդապաշտ ոգով, ինչը հուսալի երաշխիք կլիներ հեռանկարում աստիճանական ազգաձուլման վտանգից: Նորակազմ ՀԱԽ-ը 1918 թ. օգոստոսի 2-ին գումարված իր առաջին իսկ նիստը նվիրել էր դպրոցական հարցին (տե՛ս վավ. N 5): 1918թ. օգոստոսի 6-ին ՀԱԽ-ը որոշեց իրեն ենթարկել մինչ այդ Վիրահայ թեմի իրավասության ներքո գտնվող ծխական-եկեղեցական դպրոցները և ուսումնարանները, ինչը տարաժամ լարվածության առաիթը դարձավ հայ հոգևորականության հետ նրա շփումներում (տե՛ս վավ. N 28): Ի վերջո, ՀԱԽ-ին հաջողվել էր աստիճանաբար ստեղծել Վրաստանում իրեն ենթակա հայկական ժողովրդական դպրոցների մի ամբողջ ինքնավար համակարգ, որը շուրջ 50 տարբեր աստիճանի կրթական օջախ էր ընդգրկում (տե՛ս վավ. N 155):

ՀԱԽ-ը Վրաստանի հայ համայնքի միակ ներկայացուցչական ամբիոնն էր, որի գոյության փաստը դեռ չէր նշանակում նրա իրավական ճանաչումը: Այդ բացը պատճառաբանվում էր հանրապետական սահմանադրության բացակայությամբ, որը և պետք է որոշեր վրաց պետության ու նրա էթնիկ փոքրամասնությունների տարբեր տեսակի ներկայացուցչական մարմինների փոխադարձ լիազորությունները: Հետևաբար, վրացի պաշտոնյաների հայեցողության էր մնում՝ փոխհարաբերու-

թյուններ ունենալ ՀԱԽ-ի հետ, թե անպատասխան թողնել նրա բոլոր դիմումները: Իրավիճակը մի փոքր շտկվեց, երբ 1918 թ. սեպտեմբերի 16-ին Վրաստանի վարչապետ Ն. Ն. Ժորդանիան ոչ պաշտոնապես ճանաչեց ՀԱԽ-ը (տե՛ս վավ. N 17): Վերջինս, այնուհետև, իրավունք ստացավ լիազորել իր անդամներին (Ա. Երզնկյան, Ս. Փիրումյան, Ա. Իվանյան, Զ. Զորյան, Դ. Դավիթխանյան, Տ. Ավետիսյան, Լ. Թումանյան, Ն. Թարխանյան, Պ. Դոլուխանյան, Ա. Բարխուդարյան) Վրաստանի խորհրդարանում աշխատելու համար (տե՛ս վավ. NN 20, 27): Նրանց առջև, սակայն, ոչ պաշտոնապես դրվել էին մի շարք սահմանափակումներ: Այդպես, օրինակ, արգելվել էր հայ համայնքի լիազորների մասնակցությունը վրաց խորհրդարանի տարբեր տեսակի հանձնաժողովներում (տե՛ս վավ. N 57): ՀԱԽ-ը, հետագայում, այն դառը ճշմարտությունն էր արձանագրում, որ «Հայոց Ազգային Խորհուրդը հանդուրժելի է լոկ տարբեր տեսակի մասնավոր հարցերի վերաբերյալ բարեխոսություններ կատարելու համար, որոնք ոչ մեկի վրա ոչ մի պարտավորություն չեն դնում»:

Վրաստանի ՀԱԽ-ը աշխատեց մինչև 1921 թ. փետրվարի 28-ը, երբ ազգային այլ կազմակերպությունների հետ խորհրդային իշխանությունների կողմից կասեցվեց նաև նրա գործունեությունը:

Վրաստանի ՀԱԽ-ի պատմությանը նվիրված և նրա գործունեությունը լուսաբանող բազմազան նյութերը և վավերագրերը առանձին համապարփակ ուսումնասիրության ու համակարգման չեն ենթարկվել: Եվ այս տեսակետից սույն ժողովածուն իր բովանդակությամբ նման առաջին փորձն է:

Վերջին տարիներին ակնհայտ դարձավ, որ Վրաստանի պատմության նորագույն դարաշրջանի մի շարք բազմակու-

տակ և խճճված հիմնախնդիրներ, որոնք ունեն գիտահետազոտական արդիական նշանակություն, շարունակում են մնալ տակավին չլուսաբանված: Այդուհանդերձ, պետք է փաստել, որ վիրահայերին ուսումնասիրող պատմագիտության մեջ շատ ու շատ հիմնահարցեր թերևս պատշաճ ձևով չեն ուսումնասիրվել, մինչև այժմ չեն գտել իրենց հայեցակարգային լուծումները, հատկապես հայագիտության տեսանկյունից: Մենք անհրաժեշտ ենք գտնում՝ ամփոփելով ժողովածուի մեջ ՀԱԽ-ի ժամանակի զանազան վավերագրերը, դրանով անդրադառնալ այն փաստերին և երևույթներին, որոնք, դիտավորյալ թե ո՛չ, սակայն մնացել են ուսումնասիրողների շարադրանքի ստվերում: Այն արժևորվում է նաև մեկ այլ առումով: Ժողովածուում զետեղված նյութերը պետք է առնչվեն և ճանաչելի դարձնեն վիրահայերի նորագույն հասարակա-քաղաքական պատմությունը: Վավերագրերի տվյալ ժողովածուի հրապարակումը, առաջին հերթին, նպատակ է հետապնդելու լայն շրջանակի ընթերցողին հաղորդակից դարձնել Վրաստանի հայ ստվար ազգաբնակչության պատմության խնդրո առարկա ժամանակահատվածի անցքերին, որի մասին մինչ այժմ էլ չի առաջացել պատմագիտական լիակատար պատկերացում:

Ժամանակի վկայությունները պարունակող հավաքածուն օգտակար կլինի ՀԱԽ-ի կարկառուն դեմքերի կենսագրությունները նորանոր փաստերով և տեղեկություններով հագեցնելու և լրացնելու տեսանկյունից: Փաստաթղթերի նման ժողովածուի լույսընծայումը, անշուշտ, հնարավորություն կընձեռի ճիշտ եզրահանգումներ անել՝ ծանոթանալով տեղեկատվական և այլ արժեքավոր նյութերին, ինչպես և անկողմնակալ պատկերացում կազմել Վրաստանի հայ համայնքի նորագույն պատմության կարևոր դրվագների մասին: Հետազոտությունը

առանձնակի նշանակություն ունի հայկական ինքնության ուսումնասիրությունների տեսանկյունից:

Ժողովածուն ամփոփում է այն արժեքավոր և կարևոր նյութերը, որոնք լույս են ընծայվել թիֆլիսահայ և ժամանակի այլ պարբերական մամուլում: Ուսումնասիրվել են կուսակցական շատ թերթերի հավաքածուներ, ինչպես «Հորիզոն», «Մշակ», «Աշխատավոր», «Ժողովրդի Ձայն», «Բանվորի Ձայն» և այլն, և ընտրվել համապատասխան վավերագրեր և տեղեկություններ: Կազմողը հղում է նաև Հայաստանի ազգային արխիվի (այնուհետև՝ ՀԱԱ) պահոցներում խնամքով պահպանվող Վրաստանի ՀԱԽ-ի թիվ 441 ֆոնդի մի շարք նյութերը: Այս վավերագրերը մեծի մասամբ առաջին անգամ են տրվում գիտական շրջանառության մեջ:

Վավերագրերը ժողովածուում տեղադրված են ժամանակագրական կարգով և հրատարակվում են ըստ բնագրի լեզվի: Յուրաքանչյուր նյութի վերջում նշված է սկզբնաղբյուրը: Ժողովածուում տեղ են գտել նաև լրագրային նյութերի վերնագրերը: Հրապարակվող վավերագրերի իմաստային և լեզվառճային առանձնահատկությունները պահպանվել են բնագրային տեսքով, կատարվել են միայն ուղղագրական և կետադրական շտկումներ: Հրապարակվող տեքստում միջամտությունները իրականացվել են հետևյալ կերպ. կրճատ և պակասող բառերը ու արտահայտությունները լրացված են ուղղանկյուն փակագծերում ([ ]): Ժողովածուի թեմատիկային չառնչվող և հրապարակումից դուրս թողնված հատվածները ցույց են տրվում՝ սուրանկյուն փակագծերի մեջ կախման կետեր դնելով (<...>):

Հույսով ենք, որ ժողովածուն կարժանանա ընթերցողի ուշադրությանը և օգտակար կլինի հատկապես Վրաստանի հայ բնակչության պատմությամբ հետաքրքրվող բոլոր մասնագետների համար:

N 1

Խմբագրական առաջաբան «Հորիզոն» պարբերականում՝ Վրաստանի ՀԱԽ-ի հիմնադրման անհրաժեշտության մասին

Վրաց հանրապետութեան մէջ բոլոր ազգերը հաւասար իրաւունքներ են վայելելու[3] <…>:

Նոյնը վերաբերում է նաև Վրաստանի հայութեանը: Մինչև որ սա չկազմակերպւի և կանոնաւոր ու իրաւասու մարմիններ-ի միջոցով իրաւունքների պաշտպանելու և իրագործելու խնդիրն առաջ չտանի, այդ իրաւունքները լոկ դատարկ խօսքեր կը լինեն:

Օրինակի համար՝ վերցնենք դպրոցական խնդիրը: Վրաստանի հայ համայնքները անշուշտ իրաւունք պիտի ունենան սեփական ազգային դպրոցներ բանալու և վարելու. այդ դպրոցները պէտք է հայկական լինեն իրենց ուսումնական-կրթական բնոյթով և նկարագրով, բայց պէտք է վայելեն պետական դպրոցների բոլոր իրաւունքները. օր[ինակ]. պետական գանձարանից ստանան իրենց ծախսերը հոգալու միջոցները վրացական դպրոցներին հաւասար հիմունքներով. իրենց սաներին տան նոյն իրաւունքները, ինչ որ վրացական դպրոցներն են տալիս իրենց սաներին: Մինչև այժմ գոյութիւն ունեցող կառավարչական դպրոցները ազգայնացուելիս՝ դրանցից մի քանիսը իրենց շէնքերով, կահ-կարասիքով, պիտոյքնե-

---

[3] Այս լոկ վերացական հայտարարությունը բխում էր ոչ թե սույն պարբերականի խմբագրատան համոզմունքից, այլև Վրաստանի անկախության հռչակման օրը՝ 1918 թ. մայիսի 26-ին՝ հնչած պաշտոնական հավաստիացումներից: Վրաստանի նոր պետականության հիմնադիր այրերից ամենակարկառուն դեմքը՝ Ազգային Խորհրդի նախագահ Ն. Ն. Ժորդանիան խոստանում էր, որ «մեր ազգային փոքրամասնությունները կլինեն նույնքան իրավազոր, ինչպես մեր պետության ազգային մեծամասնությունը՝ վրաց ժողովուրդը»: Տե՛ս Նոյեմբեր Սաքարթվելոյ, 28 Մայիս 1918.

րով հայ համայնքներին յանձնելու խնդիր է ծագում: Եւ ահա պէտք է ազգային /հայկական/ մարմին գոյութիւն ունենայ, որ հետամուտ լինի, հոգայ և կարգադրէ այս խնդիրների համար <…> գործի կազմակերպողը պէտք է լինեն իրենք Վրաստանի հայերը: Թերևս հենց արդէն գոյութիւն ունեցող հայ ազգային խորհուրդները, որ կան Վրաստանի զանազան հայաբնակ վայրերում, կը ձեռնարկէին այս կարևոր գործին <…>:

Տե՛ս Վրաստանի հայութեան կազմակերպումը //
Հորիզոն, 9 հունիսի 1918, N 111:

N 2

ՀՅԴ-ի Թիֆլիսի ճյուղի «ռայոնական ժողովի» բանաձևը՝ Վրաստանի ՀԱԽ-ի հիմնադրման անհրաժեշտության մասին (1918 թ., 15 հունիսի)

Վրաստանի Հ. Յ. Դաշնակցութեան անդրանիկ Ռայոնական Ժողովը[4] քննութեան առնելով վրաց պետութեան սահմաններում ապրող հայ աշխատաւորութեան վիճակը, գտնում է անհրաժեշտ քաղաքական կուսակցութիւնների հետ, ստեղծել ամենակարճ ժամանակամիջոցում Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ, որը մի կողմից ուժեղ մասնակցութիւն ունենալով Վրաստանի պետական կազմակերպման մէջ, իբրև Վրաստանի քաղաքացիներ, միւս կողմից իբրև փոքրամասնութեան ներկայացուցչութիւն, իր վրայ պիտի վերցնի հիմնա-

[4] Վրաստանի Հանրապետության տարածքում գործող ՀՅԴ-ի բոլոր կազմակերպությունները՝ տեղական կոմիտեները՝ զումարում էին ընդհանուր «ռայոնական ժողով», որը իրավասու էր կազմել կուսակցության համահանրապետական գործադիր մարմինը՝ կենտրոնական կոմիտեն: Վերջինիս գործերը Վրաստանում 1918-1921թթ. համակարգում էր Տ. Գ. Ավետիսյանը:

ւորելու և կեանքի մէջ իրականացնելու Հայոց Ազգային կուլ-տուրական աւտոնոմիան Վրաստանի սահմաններում:

Տե՛ս Ներքին տեսութիւն. Հայ Յեղ. դաշնակցութիւն //
Հորիզոն, 30 հունիսի 1918, N 128:

N 3
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի կազմավորման մասին

Կազմուել է Վրաստանի Հայոց Ազգ. Խորհուրդ, որի մէջ դաշնակցութիւնից, Հ[այ] ժողովրդական կուսակցութիւնից և սոց.-դեմոկրատներից մտնում են 4-ական ներկայացուցիչ, իսկ էս-էրներից 3: Սեպտեմբերին հրաւիրուելու է Վրաստանի հայերի ազգային համագումար:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգ. Խորհուրդը //
Հորիզոն, 3 օգոստոսի 1918, N 152:

N 4
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի հիմնադիր անդամների մասին

Կազմվել է արդէն Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը՝ համեմատական սկզբունքով:

Խորհրդի կազմի մէջ մտնում են Հայ Ժողովրդական Կուսակցութիւնից Մ. [Ի.] Պապաջանեան[5], Ս. Յարութիւնեան[6],

---

[5] Հայ Ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) հիմնադիր առաջնորդ, նրա Կենտրոնական կոմիտեի նախագահ: Մինչ կուսակցության ստեղծումը հանդիսանում էր Ռուսաստանի Պետ. Դումայի անդամ:

Ա. Բարխուդարեան, Գ. Մելիք-Ղարագեօզեան[7], դաշնակցութիւնից՝ Նիկ. Աղբալեան[8], Յով. Արղութեան[9], [Դ.] Դաւիթխանեան, [Գ.] Տէր-Ստեփանեան[10], սօց[իալիստ]-յեղափոխականներից՝ Լ. Թումանեան[11], [Ա.] Ստամբոլցեան[12], Վ. Թուրազեան, սօց.-դէմօկրատներից՝ Ար. Երզնկեան[13] , Գէորգ Ղարաջեան[14], Ս. Դանդուրեան, Միք. Ղարաբէկեան[15]:

---

[6] **Հարությունյան Սամսոն Ստեփանի** (1875-1941), իրավաբան, ՀԺԿ-ի կենտկոմի փոխնախագահ, ՀՀ-ի արդարադատության նախարար (1918 թ., նոյեմբեր – 1919 թ., հունիս):

[7] **Մելիք-Ղարագյոզյան Գևորգ Պողոսի** (1873-1940), հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀ-ի լուսավորության նախարար (1918 թ., դեկտեմբեր – 1919 թ., հունիս):

[8] **Աղբալյան Նիկողայոս (Նիկոլ) Պողոսի** (1873-1947), ՀՅԴ-ի ականավոր գործիչ, գրականագետ, մանկավարժ, ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարար (1919թ., օգոստոս – 1920թ., մայիս):

[9] **Արղության Հովսեփ Գևորգի**, նաև՝ Խանասորի Իշխան (1863-1925), ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ: Հ. Գ. Արղությանի կենսագրությանը նվիրված բաժնում (տե՛ս Ով ով է. Հայեր. Կենսագրական հանրագիտարան, հ. 1, Երևան, 2005, էջ 166), նա սխալմամբ հիշատակվում է նաև որպես Վիրահայ ազգային խորհրդի նախագահ: Իրականում, լինելով նրա գործադիր մարմնի անդամ, երբեմն վարում էր այդ կառույցի նիստերը:

[10] **Տեր-Ստեփանյան Գարեգին Արշակի**, Վրաստանի Սահմանադիր ժողովի պատգամավոր (1919-1921):

[11] **Թումանյան Լևոն**, Արևելահայերի ազգային խորհրդի (1917-1918), Անդրկովկասյան Սեյմի (1918), Վրաստանի Պառլամենտի (1918-1919) և ՀՀ-ի խորհրդարանի անդամ (1919-1920)

[12] **Ստամբոլցյան Անուշավան**, Արևելահայերի ազգային խորհրդի անդամ (1917-1918):

[13] **Երզնկյան Արամայիս Հարությունի** (1879-1938), նշանավոր քաղաքական և հասարակական գործիչ, ծն. Հաղպատում (Լոռի), 1918թ. Անդրկովկասյան Սեյմի և կառավարության անդամ, 1920-1930-ին՝ Խորհրդային Հայաստանի հողժողկոմ, 1931-1933-ին Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ: Անհիմն բռնադատվել է, հետմահու արդարացվել: Նրա անունով Երևանում կոչվել են փողոց, դպրոց:

[14] **Ղարաջյան Գևորգ Հարությունի** (1861-1936), նույն ինքն՝ Ս. Տ. Արկոմեդ, հայ առաջին մարքսիստներից:

[15] **Ղարաբեգյան Միքայել**, Արևելահայերի ազգային խորհրդի անդամ (1917-1918):

Խորհուրդը սեպտեմբերին գումարելու է Վրաստանի հայոց համագումար:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Մշակ, 3 օգոստոսի 1918, N 151:

N 5
Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի անդրանիկ նիստի մասին (1918 թ., 2 օգոստոսի)

Օգոստոսի 2-ին կայացաւ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի առաջին նիստը, նախագահութեամբ Ա. Երզնկեանի: Ժողովը զբաղուեց դպրոցական խնդրով և այն առաջարկութեամբ, որ արել է լուսաւորութեան նախարարը գիմնազիաներին, որպէսզի հարցնեն ծնողներին, թէ նրանք կամենում են, որ իրենց երեխաները շարունակեն սովորել գիմնազիաներում իբրև Վրաստանի հպատակներ[16]: Ազգ. Խորհրդի կողմից ընտրուեց մի պատգամաւորութիւն, որ ներկայանալու է վրաց կառավարութեանը, երեխաների համար բարեյաջող ելք ստեղծելու նպատակով: Պատգամաւորութեան անդամներ ընտրուեցին՝ Ա. Երզնկեան, Յ. Արղութեան, Ա. Ստամբոլցեան և Ա. Բարխուդարեան: Ազգ. Խորհրդի նախագահութեան ընտ-

[16] Հետևելով այս կարգադրությանը, Թիֆլիսի 3-րդ արական գիմնազիայի վարչությունը, մամուլի միջոցով, դիմել էր աշակերտերի ծնողներին հետևյալ ազդով. «Հիմնուելով Ժողովրդական Լուսաւորութեան Մինիստրութեան կարգադրութեան վրայ, առաջարկում է ոչ-վրացական ազգին պատկանող աշակերտների ծնողներին ոչ ուշ քան սոյն թւի օգոստոսի 5-ի յայտնել, թէ արդեօք, որպէս Վրաստանի հանրապետութեան քաղաքացիներ (հպատակներ) ցանկանո՞ւմ են նրանք իրենց աշակերտներին թողնել Վրաստանի պետական դպրոցներում, թէ ո՛չ»: Տե՛ս Հորիզոն, 1 օգոստոսի 1918:

րութիւնը յետաձգուեց յաջորդ նիստին, որ կայանալու է երեքշաբթի օրը[17]:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգ. Խորհդում //
Հորիզոն, 4 օգոստոսի 1918, N 153:

N 6

Տեղեկատվություն «Մշակ» օրաթերթում՝ Վրաստանի ՀԱԽ-ի անհատական կազմը բազմացնելու մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը իր ամսիս 6-ի նիստում որոշեց անդամների թիւը կրկնապատկել պարիտէտի հիման վրա[18]: Խորհրդի մէջ կը մտնեն իւրաքանչիւր կուսակցութիւնից 8 հոգի: Խորհրդի առաջին պաշտօնական նիստը տեղի կունենայ մօտ օրերս, առանձին յայտարարութեամբ: Խորհուրդը ունենալու է իր գործադիր մարմինը:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Մշակ, 8 օգոստոսի 1918, N 155:

N 7

Հաղորդագրություն՝ Վրաստանում պետական միջնակարգ դպրոցների ազգայնացման կապակցությամբ՝ փոխվարչապետ Ն. Վ. Ռամիշվիլու հետ ՀԱԽ-ի լիազորների բանակցությունների մասին

Վիրահայ Ազգային Խորհրդի անդամներ Ա. Երզնկեանն ու Յ. Արղութեանը ներկայացել են վրաց կառավարութեան փոխ-

---

[17] Իմա՝ 1918 թ. օգոստոսի 6-ը:

[18] Նույն նիստում ՀԱԽ-ը որոշում կայացրեց նաև իր իրավասությանը ենթարկել մինչ այդ Վիրահայ թեմին պատկանող դպրոցները: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 26, թ. 15 շրջ:

նախագահ պ. Ն. Ռամիշվիլուն և խնդրել, որ նա օգնութեան գայ Վիրահայ Ազգային Խորհրդին՝ խճճված դպրոցական խնդրում: Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, յամաձայն յուլիսի 26-ի N 886 հրատարակած օրէնքի, ազգայնացած պետական դպրոցներում նախ պիտի ընդունուեն Վրաստանի հպատակութիւն ընդունած քաղաքացիների զաւակները և ապա՝ ազատ տեղեր եղած դէպքում, և օտարահպատակների որդիները: Թիւրիմացութիւններից խուսափած լինելու համար, այս իսկ պատճառով օրէնքն առաջարկում էր քաղաքացիներին՝ մինչև օգոստոսի 5-ն իրենց հպատակութեան խնդիրը լուծել և այդ մասին յատուկ գրութեամբ յայտնել ուր հարկն է:

Պ[արոն] Ն. Ռամիշվիլին յայտնել է, որ նա անպայման կաշխատի հպատակութեան խնդրի հետ կապ ունեցող «օգոստոսի 5-ն» առ այժմ անորոշ ժամանակով յետաձգել, ասել է՝ որևէ ծնող, եթէ որդուն նպատակ ունի պետական դպրոց տալու, նա այդ կարող է անել և օգոստոսի 5-ից յետոյ՝ միանգամայն անկախ հպատակութեան խնդրից:

Ապա պ. Ռամիշվիլին յայտնելով, որ, իրօք, դպրոցների ազգայնացման խնդիրը սկզբունքով ընդունած է արդէն, խնդրել է Վիրահայ Ազգային Խորհրդի անդամներին մօտ ապագայում յատուկ գրութեամբ յայտնել վրաց կառավարութեան՝ թէ քանի դպրոց կը բաւարար էին վիրահայութեան դպրոցական պէտքերը:

Տե՛ս Դպրոցական խնդիրը Վրաստանում //
Հորիզոն, 7 օգոստոսի 1918, N 155:

N 8

Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1918 թ. օգոստոսի 6-ի նիստի մասին

Երեքշաբթի, օգոստոսի 6-ին կայացաւ Վիրահայ ազգային խորհրդի նիստը նախագահութեամբ Ար. Երզնկեանի: Երկար մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշուեց խորհուրդը համարել օրէնսդրական մարմին, որի մէջ իւրաքանչիւր ֆրակցիայից մասնակցելու է 8 հոգի, սրանք ունենալու են նախագահութիւն և ունենալու են Թիֆլիսի քաղաք[ային] դումայի կազմի ձևը: Այս մարմինը իր միջից ընտրելու է գործադիր մարմին, որ ունենալու է գործադիր իշխանութեան դեր և պատասխանատու կը լինի օրէնսդիր մարմնի առջև:

Ընտրուեց ֆրակցիաների աւագների խորհուրդ, գործնական խնդիրները փոխադարձ համաձայնութեամբ գործադրելու համար: Աւագների խորհրդի մէջ դաշնակցական ֆրակցիայից մտան՝ Յ. Արղութեան, Գ. Տէր-Ստեփանեան, Հայ Ժող. կուսակց.՝ Ս. Յարութիւնեան, [Ա.] Բարխուդարեան, ս[ոցիալ]-դեմոկրատներից՝ Ա. Երզնկեան, [Մ.] Ղարաբէկեան, սոց[իալիստ]-յեղափոխականներից՝ Ան. Ստամբոլցեան և Ռ. Ենգիբարեան:

Խորհրդի յաջորդ նիստը տեղի կունենայ մօտ օրերս քաղաքային դումայի դահլիճում:

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդում //
Հորիզոն, 8 օգոստոսի 1918, N 156:

N 9

Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1918 թ. օգոստոսի 24-ի նիստի մասին

Երեկ եր[եկոյան] ժ. 7-ին տեղի ունեցաւ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի առաջին նիստը: Ինչպէս յայտնի է, այդ խորհուրդը ժամանակաւոր է և կազմուած է հայ իրականութեան մէջ գոյութիւն ունեցող չորս կուսակցութիւնների՝ դաշնակցութեան, սոց.-դեմ., սոց.-յեղ., և ժող. կուսակցութեան փոխադարձ համաձայնութեամբ: Կուսակցութիւնները մասնակցում են խորհրդին պարիտետ սկզբունքով համաձայն, տալով իւրաքանչիւրը 8 ներկայացուցիչ: Այսպիսով ամբողջ խորհուրդը կազմուած է 32 հոգուց: Խորհուրդը կազմելիս դաշնակցութեան հիմնական պահանջներից մէկն էլ այն էր, որ այդ մարմինը համարւի ժամանակաւոր և օր առաջ հրաւիրւի Սահմանադիր Ժողով:

Առաջին նիստի օրակարգի խնդիրներն էին. 1. Խորհրդի իրաւասութեան սահմանները, 2. կազմակերպչական խնդիրները, 3. Ժողովի կազմը:

Երկար վիճաբանութիւններից յետոյ, իրաւասութեան վերաբվերեալ Դաշնակց., ս.-դեմ. և ս.-յեղափոխ. կողմից առաջարկւեց հետևեալ բանաձևը:

«Դաշն., ս.-դեմ. և ս.-յեղափոխ. կուսակցութիւնները կողմնակից լինելով իւրաքանչիւր փոքրամասնութեան կուլտուրական աւտոնոմիայի, ճանաչում են Վրաստանի Հայոց Ազգ. Խորհուրդը, որպէս իրաւազօր մարմին ազգային կրթական կուլտուրական գործի Վրաստանի սահմաններում»:

Բանաձևն անցաւ բոլորի ձայներով ընդդեմ ժողով. կուսակցութեան, որի բանաձևը, համաձայն լինելով առաջարկւա-

ծին, ունէր մի յաւելում, որ կապ ունէր եկեղեցական կալուածքների հետ: Ժողովը գտաւ, որ այդ հարցը լուծել դեռ վաղաժամ է: Որաշուեց կազմել մի Գործադիր մարմին բաղկացած 4 հոգուց, որ վարելու է դպրոցական, ֆինանսական և գաղթականական գործերը:

Ընդհանուր ժողովների պրեզիդիումը բաղկացած է լինելու 3 նախագահներից և մէկ քարտուղարից: Ընտրութիւնները յետաձգուեցին հետևեալ նիստին, որ տեղի կունենայ այսօր եր. ժ. 7-ին:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 25 օգոստոսի 1918, N 116:

N 10
Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1918 թ. օգոստոսի 25-ի նիստի մասին

Կիրակի, օգոստոսի 25-ի երեկ[ոյան] ժ. 7-ին տեղի ունեցաւ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի պաշտոնական բացումը: Օրակարգի խնդիրներն էին:

1. Խորհրդի պրեզիդիումի ընտրութիւն:
2. Գործադիր մարմնի ռոճիկների հարցը:
3. Գործադիր մարմնի ընտրութիւնը:

Համաձայն նախորդ ժողովի որոշման Ազգ. Խորհրդի պրեզիդիումը կազմւած պիտի լինի 4 հոգուց, 3-ը՝ նախագահներ և չորրորդը քարտուղար: Ֆրակցիաները տալիս են իրենց թեկնածուները. Հ. Յ. Դաշնակցութեան կողմից՝ Ա. Թարխանեան, Սոց.-Դեմ. – [Գ.] Ղարաջեան, Սոց.-յեղ.՝ Լ. Թումանեան և Ժող. կուսակցութիւնից Ս. Յարութիւնեան:

Ժողովը միաձայն ընդունում է աւագների խորհրդի առաջարկը՝ նշանակել Գործադիր մարմնի անդամներին 1000-

ական ռուբլի ռոճիկ ամսական, իսկ նախագահին ևս 300 ռուբ-
լի արտակարգ ծախսերի համար:

Գործադիր մարմնի ընտրությունների առթիւ խօսք վերց-
նելով Ս. Յարութիւնեանը (Ժող. կուս.) առաջարկ է մտցնում յե-
տաձգել այդ ընտրությունները, որովհետև Ազգ. Խորհուրդը չու-
նի իր բիւջէն, յայտնի չէ թէ արդեօք դպրոցական վարչութիւն-
ները կամ գաղթ. խորհուրդը կենթարկուեն նրան թէ՞ չէ: Բացի
այդ, կուսակցութիւնների համաձայնութեամբ կազմուած այս
մարմինը չի կարող ունենալ այն քաշը, ինչ որ կունենայ
Սահմ[անադիր] Ժողովը: Ուստի առաջարկում է յետաձգել
ընտրությունները մինչև Սահմ. Ժողով, կամ մինչև դրութեան
պարզելը, յանձնելով ընթացիք գործավարութիւնը Խորհրդի
պրեզիդիումի անդամներից մէկին, որպէս նախագահ-գործա-
վարի:

Յ. Արղութեան (դաշն.), Ա. Երզնկեան (ս.-դ.) և Ա. Ստամ-
բոլցեան (ս.-յեղ.) տարօրինակ են գտնում այդ առաջարկը, մա-
նաւանդ որ Ազգ. Խորհուրդը գործադիր մարմնի ստեղծելը
հենց Ժող. կուսակց. առաջարկով է եղել: Ձայների մեծամաս-
նութեամբ որոշում է անցնել ընտրություններին:

Ընտրությունների ժամանակ, շնորհիւ ֆրակցիաների հա-
մաձայնութեան բացակայութեան, տեղի են ունենում վիճաբա-
նութիւններ:

Ա. Երզնկեան (ս.-դ.). – Որովհետև գործադիր մարմնի,
մասնաւորապէս նախագահի ընտրութեան առթիւ ֆրակցիա-
ները համաձայնութեան չեն եղել, ապա կարելի է անել մի
փոքր ընդմիջում բանակցութիւնների համար: Համաձայնու-
թեան չգալու դէպքում խնդիրը կը լուծի ձայների մեծամաս-
նութեամբ:

Ս. Յարութիւնեանը (Ժ.Կ.) կողմնակից է նոյն առաջարկին:

Կէս ժամւայ ընդմիջումից յետոյ պարզւում է, որ համաձայնութեան են եկել միայն ս.-դ. և ս.-յեղ.: Ժողովրդական կուսակցութիւնը նախագահութեան համար թեկնածու չի առաջարկում:

Առաջարկ է արւում ընտրութիւնը կայացնել ձայների մեծամասնութեամբ:

Բ. Թոփչեան (դաշն.). - Ֆրակցիայի կողմից անհրաժեշտ եմ համարում յայտարարելու, որ Դաշնակցութեան համար նախագահի ընտրութիւնը ձայների մեծամասնութեամբ ոչ մի դէպքում ընդունելի լինել չի կարող:

Ա. Երզնկեան և Ա. Ստամբոլցեան տարօրինակ են գտնում Դաշնակցութեան պահանջը: Պարիտետի ընդունելուց յետոյ պիտի ընդունել և նրանից բխող բոլոր հետևանքները: Փոքրամասնութիւնը պիտի ենթարիւի մեծամասնութեանը: Այլ կերպ աշխատանքն անհնարին է, առաւել ևս, որ նախնական բանակցութիւնների ժամանակ այդպիսի պահանջ չէ արւած և Դաշնակց. առարկութիւնը բաւարարւած էր նրանով, որ դրւած էր Վրաստ. պարլամենտում 2-ի փոխարէն երեք ներկայացուցչի իրաւունք:

Իս. Յարութիւնեան. - Դաշնակցութեան յայտարարութիւնը լուրջ է և արդիւնք կենտրոնական մարմնի որոշման: Ցանկալի է գիտենալ այդ յայտարարութիւնն անտես անելու հետևանքները, որպէսզի ֆրակցիաները կշռադատեն իրենց քայլերը:

Բ. Թոփչեան (դաշն.). - Այդ զարմանքը, որ յայտնեցին այստեղ մի քանիսներն իմ յայտարարութեան առթիւ, միանգամայն անտեղի էր. աւագների խորհրդում դաշնակցութեան ներկայացուցիչը դրել էր մեր կուսակցութեան պահանջը: Մեր պահանջը չընդունելու և ընտրութիւնները կայացնելու դէպ-

քում մենք ստիպված կը լինենք հրաժարուել թէ՛ Գործադիր մարմնից և թէ՛ պրեզիդիումի մէջ մասնակցելուց, Խորհրդի մէջ մասնակցելու հարցը թողնելով առկախ, մինչ Կենտ. կոմիտէի համապատասխան որոշումը: Այն մեղադրանքը, թէ մենք փոխել ենք մեր վերաբերմունքը դէպի Ազգ. Խոր., ճիշտ չէ: Բոլորին յայտնի են այն զիջումները, որ մենք արեցինք և այն ջանքերը, որ գործ դրինք նրա կազմակերպման համար: Մեր դիրքը մնում է անփոփոխ, որովհետև այդ զիջումները մենք արել ենք գիտակցաբար, յանուն ծով կարիքի մէջ տառապող հայ աշխատաւորութեան շահերի:

Թէր և դէմ վիճաբանութիւններից յետոյ որոշուեց նիստը յետաձգել հինգշաբթի օրւան, մինչ այդ նշանակելով ֆրակց. ներկայացուցիչների խորհրդակցութիւն հարցի շուրջ համաձայնութեամբ գալու համար:

Տե՛ս Վրաստանի հայոց ազգ. խորհուրդ //
Աշխատաւոր, 28 օգոստոսի 1918, N 117:

N 11
Տեղեկատվություն «Հորիզոն» օրաթերթում՝ Վրաստանի ՀԱԽ-ի նախագահության անդրանիկ կազմի մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի նախագահութեան մէջ ընտրուել են՝ Ա. Թադէոսեան, Գ. Ղարաջեան, Լ. Թումանեան և Ս. Յարութիւնեան: Գործադիր կոմիտէի և անդամների ընտրութիւնը յետաձգուած է:

Տե՛ս Լրատու //
Հորիզոն, 29 օգոստոսի 1918, N 171:

N 12

«Ժողովրդի Ձայն» պարբերականը՝ Վրաստանի ՀԱԽ-ի առաջացման պատճառների և նրա անդրանիկ քայլերի մասին

Այն օրից, երբ Հայոց Ազգային Խորհրդն իւր ամբողջ կազմով տեղափոխուեց Երևան[19] հենց այն օրից կարիք առաջացաւ հիմնելու մի նոր ազգային խորհուրդ Վրաստանի սահմաններում: Անշուշտ Վրաստանի հայերի կուլտուրական-գաղթականական և այլ խնդիրները չէր կարելի մատնել անուշադրութեան, պէտք էր առաջաւոր մի նոր մարմին՝ այդ պահանջներին բաւարարելու համար: Այսպիսով Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը կազմելու համար սկսուեցին բանակցութիւններ մեր մէջ եղած կուսակցութիւնների միջև - Դաշնակցական, Հայ Ժողովրդական Կուսակցութեան, էսդեկների և էսերների: Բաւական ժամանակ անցնելուց յետոյ կարողանում են համաձայնութեան գալ որոշ պայմաններով՝ կազմել Ազգ. Խորհուրդը պարիտետի սկզբունքով: Ամեն մի կուսակցութիւնից մասնակցում են 8-ական ներկայացուցիչ: Ընտրուած են աւագներ: Աւագների նիստերում թեր ու դէմ կարծիքներ փոխանակելուց յետոյ որոշում են ունենալ պրեզիդիում խորհրդի համար՝ ամեն մի կուսակցութիւնից մէկական հոգի: Հայ ժողովրդական կուսակցութիւնից պրեզիդիումի անդամ է՝ Ս. Յարութիւնեան, դաշնակցութեան կողմից՝ Ա. Թադէոսեան, Էսդեկներից՝ [Գ.] Ղարաջեան, էսերներից՝ [Լ.] Թումանեան: Ընդունուել է նաև գործադիր կոմիտէ ունենալու խնդիրը՝ բաղկացած դարձեալ 4 անդամից:

---

[19] Իմա՝ 1918 թ. հուլիսի 17-ը, երբ արևելահայերի ազգային խորհուրդը մեկնեց Թիֆլիսից:

Ազգային Խորհուրդը իր լրացրած կազմով (8-ական) ունեցել է երկու նիստ: Ա. նիստում ընտրուել են պրեզիդիումի անդամները, իսկ ինչ վերաբերում է գործադիր կոմիտէի ընտրութեան – չկայացաւ այն. այդ մարմնի նախագահութեան ընտրութեամբ առանձնապէս շահագրգռուած են դաշնակցականներն ու էսդեկները՝ էսերների հետ միացած: Խնդիրն ստանում էր այնպիսի կերպարանք, որ կարող է խորհրդի վիժման առիթ ներկայանալ: Մեր կուսակցութիւնը[20] առաջարկեց յետաձգել գործադիր մարմնի ընտրութիւնը՝ սկզբում բաւականանալ միայն նախագահութիւնով, վերջինիս յանձնելով ժամանակաւորապէս գործադիր կոմիտէի որոշ ֆունկցիաներ - ա) Վրացոց Ազգային խորհրդին հայ անդամներ ուղարկելը, բ) Աշխատել ըստ կարելոյն շուտ կազմակերպել Հայոց Ազգային Խորհրդի անդամների ընտրութիւնը, գ) Զբաղուել դպրոցական խնդիրներով և աշխատել Վրաստանի խորհրդից[21] նիւթական օժանդակութիւն ստանալ մեր դպրոցների համար: Այդ առաջարկութիւնն ընդունուեց Դաշնակցութեան և միւս ֆրակցիաների կողմից օգոստոսի 21-ին, նիստին, որին նախագահում էր Ս. Յարութիւնեան: Այսպիսով, գէտ ժամանակաւորապէս ընդհատւում է գործադիր կոմիտէի նախագահի շուրջն առաջացած վէճը, վերջին նիստում առաջարկւում է մի քանի կոմբինացիաներ գործը համերաշխութեամբ վերջացնելու համար: Այդ յանձնւում է աւագների խորհրդին և վերջնականապէս հարցը լուծելու և ապա բերելու Ազգային Խորհրդին: Երբ գործադիր կոմիտէն կազմուի այն ժամանակ նախագահութիւնն իւր՝ այդ մասին վերաբերեալ գործերը պէտք է յանձնէ

[20] Խոսքը Հայ ժողովրդական կուսակցության մասին է:
[21] Պետք է լինի՝ խորհրդարանից, կամ՝ Վրաստանի Ազգային Խորհուրդ:

գործադիր կոմիտէին: 29-րդ[22] նիստը որոշեց 1000 ռուբլի յատկացնել պրեզիդիումին սկզբնական ծախսեր անելու համար:

Խ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 1 սեպտեմբերի 1918, N 1:

N 13

Առաջաբան «Ժողովրդի Ձայն» օրաթերթում՝ Վրաստանի ՀԱԽ-ի առաջիկա, հրատապ և անհետաձգելի խնդիրների մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի նախագահական ճգնաժամը վերջապէս կարելի է աւարտուած համարել: Երկար ու բարակ բանակցութիւններից եւ անվերջ ընդմիջումներից յետոյ, վերջապէս հնարաւոր եղաւ գտնել այդ հարցի համար այնպիսի մի լուծում, որը թէպէտ և կոմպրոմիսսական է, բայց կարող է որոշ չափով մեղմացնել գրգռուած նեարդերն ու կրքերը և թոյլ տալ անցնել հերթական շինարար աշխատանքներին:

Մեր կուսակցութեան[23] ֆրակցիայի առաջարկով ընդունուեց հետևեալ բանաձևը. «Որովհետև գործադիր մարմնի ընտրութիւնները երկար ժամանակ չեն կայանում նախագահական աթոռի շուրջը առաջացած վէճի պատճառով և այդպիսով Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը հնարաւորութիւնից զուրկ է անցնել գործնական պարապմունքներին, ընտրել մի գործադիր մարմին առանց նախագահի, իսկ նախագահու-

[22] Վրիպակ է վավերագրում, պետք է լինի՝ 2-րդ:
[23] Իմա՝ Հայ ժողովրդական կուսակցության:

թիւնը դարձնել հերթական, բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչներից»:

Այդ առաջարկն ընդունուեց բոլոր ներկայ եղող կուսակցութիւնների կողմից և այսպիսով Խորհուրդը այժմ կանգնած է իր իրաւասութեան վերաբերուող հերթական և հրատապ հարցերի գործնական որոշումների առջև:

Ինչպէս ինքը Խորհուրդն է որոշել, նրա գործունէութեան սահմանները տարածւում են միայն և գլխաւորապէս ազգային կուլտուրական աւտոնոմիային վերաբերեալ հարցերի շուրջը, որոնց թւում ամենագլխաւոր տեղն է բռնում ի հարկէ մեր դպրոցական խնդիրների բարեյաջող լուծումը:

Խորհուրդը պիտի զբաղուի որոշ չափով և այն հարցերով, որոնք ամենից հրատապ են ու այրող: Այդ՝ մեր գաղթականութեան և ֆինանսների հարցն է:

Բացի այս երեք հարցերից Խորհուրդը պիտի զբաղուի ապագայում Վրաստանում գումարելիք ընդհանուր Հիմնադիր Ժողովի համար կոնստիտուցիա մշակելու խնդրով, յարմարացնելով այն մեր հայկական քաղաքացիական շահերի կենսական և իրաւական պահանջներին:

Այսպիսով Խորհրդի առաջ դրուած են շատ լուրջ և խոշոր հարցեր, որոնց նշանակութիւնը պէտք է որ պարզ լինի բոլոր այն կուսակցութիւնների համար, որոնք ներկայացուցիչներ ունին յիշեալ Խորհրդում:

Աչքի առաջ ունենալով այդ խնդիրների անվիճելի կենսականութիւնը և այժմէականութիւնը, մենք կարծում ենք, որ Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը իսկապէս կըմբռնի իր առաջ դրուած խնդիրների կարևորութիւնը և մի կողմ թողնելով կուսակցական ներշահերի պաշտպանումը, առանց աւելորդ բանակռիւների և ձգձգումների կանցնի իրական և գործ-

նական այն աշխատանքներին, որոնց վաղուց արդէն սպասում է Վրաստանի սահմաններում պատսպարուած հայ ժողովրդի մի խոշոր հատուածը:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը //
Ժողովրդի Ձայն, 10 սեպտեմբերի 1918, N 8:

N 14
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. սեպտեմբերի 8-ի նիստի մասին

Նիստը բացւում է Լ. Թումանեանի նախագահութեամբ երեկ[ոյան] ժամը 8-ին չնայելով, որ նշանակուած էր ժամը 7-ին:

Ժողովի նախագահի և ոմանց բացատրութիւններից երևաց, որ ֆրակցիաների աւագների խորհուրդը տակաւին չկարողացաւ լուծել գործադիր կոմիտէի նախագահութեան շուրջն առաջացած վէճը մի կողմից Դաշնակցութեան, միւս կողմից սոցիալ դեմոկրատների միջև:

Այնուհետև ստեղծուած արդէն անտանելի դրութիւնից դուրս գալու համար իբրև վերջին միջոց առաջարկուեց Հայ Ժողովրդական ֆրակցիայի կողմից հետևեալը: Ինչպէս հենց սկզբից, այժմ էլ առաջարկում ենք համաձայնել, որ խորհրդի նախագահութիւնը շարունակի իր հերթական նախագահութիւնը՝ Ազգային խորհրդի նիստերին, իսկ գործադիր կոմիտէ ընտրել և թողնել նրանց նոյնպէս հերթով – որոշ ժամանակամիջոցով – նախագահութիւն անելը:

Այս առաջարկութիւնը 10 րոպէ ընդմիջումից համաձայնութեան բերաւ բոլոր ֆրակցիաներին և այդպիսով վերջ տրւեց ծանր կացութեանը:

Ապա ժողովը որոշեց հետևեալ նիստին ներկայացնելու գործադիր կոմիտէի անդամների անունները և թեկնածուներ առաջադրել մէկական հոգի, հետևեալ սեկցիաների համար.

ա. գաղթականական

բ. դպրոցական

գ. ֆինանսական

դ. օրենսդրական և ընտրական

Հետևեալ նիստը նշանակուած է սեպտ. 10-ին երեկ. ճիշտ ժ. 7-ին:

Խ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի
սեպտեմբ. 8-ի նիստը //
Ժողովրդի Ձայն, 10 սեպտեմբերի 1918, N 8:

N 15
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918թ. սեպտեմբերի 10-ի նիստի մասին

Նիստը բացւում է երեկ. ժամը 8-ին, չնայելով, որ քանիցս նախագահական աթոռից յայտարարված էր, որ խորհրդի անդամները ներկայանան ճիշտ ժամը 7-ին և խնայեն պարտաճանաչների ժամանակը: Նախագահում է պ. Գ. Ղարաջեան (էսդեկ), քարտուղար էր պ. [Մ.] Դարբինեան[24]:

Նախագահը նիստը բանալով յայտնեց, որ աւագների խորհրդում գործադիր կոմիտէի համար առաջարկուած թեկնածուների անուններից երևում է, որ 3 կուսակցութիւնները ցանկանում են դպրոցական վարիչի պաշտօնը: Դաշնակցու-

[24] **Դարբինյան Մաթևոս Կարապետի** (1889-1937), մանկական գրող:

թիւնը՝ գաղթականական, ուստի, քանի որ վերոյիշեալ երեք կուսակցութիւններից ֆինանսական աշխարհին աւելի մօտիկ է կանգնած Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը և որ վերջինս իր մէջ այդ գործի համար աւելի հմուտ անձնաւորութիւններ ունի, - խնդրում ենք չպնդի դպրոցականի վրայ, այլ յանձն առնի ֆինանսների վարիչի դերը: Ժողովրդական Կուսակցութեան ֆրակցիայի կողմից Ս. Յարութիւնեանը յայտնում է, որ այդ հարցը մեր կոմիտէում ծեծուել է և եկել ենք այն եզրակացութեան, որ կարող ենք տալ թեկնածու միմիայն դպրոցական գործի համար: Բերում է պատճառներ իր ասածի հաստատութեան: Ապա յայտնելով մեր կուսակցութեան թեկնածուի անունը - Երուանդ Տէր-Մինասեան[25] - առաջարկում է ընդունել և հաստատել: Միւս ֆրակցիաներից առաջարկւում են՝ սոցիալ-յեղափոխականներից՝ Անուշաւան Ստամբոլցեան, սոցիալ-դեմոկրատներից՝ Արամայիս Երզնկեան, իսկ դաշնակցականներից՝ Յովսէփ Արղութեան (գաղթականական գործի համար):

Առաջարկութիւն եղաւ Հ. Ժ. Կ. կողմից հենց խորհրդում որոշուի, թէ վերոյիշեալ անձերից որը ինչ պաշտօն պիտի ստանձնի: Ուրիշներն առաջարկեցին այդ թողնել իրեն գործա-

---

[25] **Տեր-Մինասյան Երվանդ Գալուստի** (1879-1974), ականավոր բանասեր-պատմաբան, բառարանագիր: Փիլիսոփայության (1904) և բանասիրության (1943) գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: ՀԽՍՀ գիտությունների վաստակավոր գործիչ: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, այնուհետև ուսումը շարունակել է Բեռլինի և Լոզանի համալսարաններում: Էջմիածնի վանքի վարդապետ (1905): 1910-ից հրաժարվել է հոգևոր կոչումից: Դասավանդել է Թիֆլիսի հայկական դպրոցներում: Ակտիվ մասնակցություն է ունեցել Վրաստանի ՀԱԽ-ի աշխատանքներում, հանդիսանալով նրա միջնակարգ դպրոցների գործերով զբաղվող բաժնի վարիչ (1918-1919): 1921-ին հայրենադարձ է եղել: Աշխատել է Էջմիածնի մշակութա-պատմական ինստիտուտում: 1943-1949-ին՝ ԵՊՀ-ի օտար լեզուների ամբիոնի վարիչ:

դիր մարմնին որոշելու: Քուէարկութեամբ 15 ձայնով ընդդեմ 10-ի և մի ձեռնպահի անցաւ երկրորդ առաջարկութիւնը: Սակայն կոնֆլիկտի դէպքում հարցը կբերուի Ազգ. Խորհրդի վերջնական որոշման:

1) Դպրոցական գործի համար առաջարկուեցին - ա) Իս. Յարութիւնեան (Հայ Ժողովրդ.), բ) Գ. Մանասեան (դաշնակցական), գ) Գէորգ Ղարաջեան (էս-դէկ), դ) Վահ. Թուրազեան (էս-էր):

2) Ֆինանսների համար՝ ա) Լ. Ղուլեան[26] (հայ ժող.), բ) Բագրատ Թոփչեան (դաշն.), գ) Սիմէօն Փիրումեան (էսդէկ), դ) Միքայէլ Տէր-Ներսիսեան (էսէր):

3) Օրենսդրական-ընտրական՝ ա) Արշակ Բարխուդարեան (հայ. ժող.), բ) Պօղ. Դոլուխանեան (հայ. ժող.), գ) Գար. Տէր-Ստեփանեան (դաշն.), դ) Լոռեցեան (դաշն.), ե) Սիմ. Փիրումեան (էսդէկ), զ)……[27] (էսդէկ), է) Լևոն Թումանեան (էս-էր), ը) Պարոյր Ստամբոլցեան (էս-էր):

4) Գաղթականական՝ ա) բժ. [Կ.] Ստեփանեան[28] (հայ. ժող.), բ) Արշակ Թադէոսեան (դաշն.), գ) Ար. Տէր-Գրիգորեան (էս-էր), դ) Լ. Էլբակեան (էսդէկ):

Ազգային Խորհրդի կոմիսիաների մէջ կարող են մտնել միմիայն խորհրդի անդամները և փոխանդամները: Խորհրդի կազմի և կանդիդատների վերջնական ցուցակը կը յայտարարուի հետևեալ նիստին, որ տեղի է ունենալու սեպտեմբերի 13-ին:

---

[26] **Ղուլյան Լևոն**, ՀՀ-ի պարենավորման նախարար (1918թ., նոյեմբեր –1919 թ., հունվար):

[27] Վավերագրում այդպես է՝ տեղը բաց է:

[28] **Ստեփանյան Կարապետ** (****-1919), ժամանակին եղել է Թիֆլիսի գլխավոր քաղաքային սանիտարական բժիշկը, Վրաստանի ՀԱԽ-ում գլխավորել է բժշկա-սանիտարական բաժինը, նույն ժամանակ առաջնորդել է ՀԺԿ-ն, լինելով նրա ԿԿ-ի փոխնախագահներից մեկը:

Ժողովի վերջում ժողովականներից մէկը առաջարկեց, որ գործադիր կոմիտէն կամ նախագահութիւնը մտածի ընդարձակ շէնքի մասին, որ ցանկացողները կարողանան ներկայ լինել ունկնդրութեան:

Խ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի սեպտեմբերի 10-ի նիստը //Ժողովրդի Ձայն, 12 սեպտեմբերի 1918, N 10:

N 16
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918թ. սեպտեմբերի 13-ի նիստի մասին

Սեպտեմբերի 13-ին կայացաւ Վիրահայոց Ազգային Խորհրդի նիստը նախագահութեամբ Սամսոն Յարութիւնեանի: Օրակարգն էր. - 1)գաղթականական յանձնաժողովի զեկուցումն, 2)դպրոցական զեկուցումն, 3)գործադիր մարմնի անդամների մէջ աշխատանքների բաժանումն, 4)Հնչակեան կուսակցութեան դիմումը, 5)Հայրենակցական միութիւնների միութեան դիմումը և 6)մշտական քարտուղարի հարցը:

Գաղթականական գործի մասին զեկուցումն արաւ յանձնաժողովի նախագահ [Ա.] Թադէոսեան. նա յիշեց գաղթականների թշուառ վիճակը, ֆինանսական ծանր դրութիւնը, նիւթական միջոցների սպառումը և շեշտեց, որ անհրաժեշտ է ամբողջ գործը կենտրոնացնել Ազգային Խորհրդի գործադիր մարմնի ձեռքում, լուծելով և վերակազմութեան ենթարկելով Գաղթականական Գլխաւոր Խորհուրդը. հենց այնպէս, մեր գաղթականութեան համար ծանր դրութիւն չստեղծուի, իսկ գործը ամենայն շտապողականութեամբ կատարուի:

Այս խնդրի շուրջը եղան երկարատև վիճաբանութիւններ, որից յետոյ միակ այն ընդունուեց, որ գաղթականական գործի ղեկավարութիւնը պիտի պատկանի Վիրահայոց Ազգային Խորհրդին, յանձնարարուեց գործադիր մարմնին գաղթականական գործի վերակազմութեան ընդհանուր ծրագիր մշակել և ներկայացնել Ազգային Խորհրդին: Երկրորդ առաջարկը՝ որ գործադիր մարմինը հենց վաղուանից իր վրայ վերցնէ գաղթականական գործի վարումը, անցաւ ձայների մեծամասնութեամբ հակառակ Հայ Ժողովրդ. Կուսակցութեան քուէների, որոնք առարկում էին, թէ այս առաջարկը հակասում է երկրորդին, որի համաձայն նախ պէտք է վերակազմութեան ծրագիր մշակել:

Դպրոցական գործի, յատկապէս պետական միջնակարգ դպրոցների մասին գործադիր կոմիտէի կողմից զեկուցում արաւ Ար. Երզնկեան, որովհետև դպրոցական գործի վարիչ դեռևս վերջնականապէս ընտրուած չէր: Այդ զեկուցման հիմնական կէտերը մեր թերթում տպուած են արդէն[29]: Գլխաւոր խնդիրը իրաւասութեան հարցն է - արդեօք կառավարութիւնը ճանաչում է Ազգ. Խորհրդի իրաւասութիւնը դպրոցական գործում: Ազգային Խորհուրդը հաւանութիւնը տուեց զեկուցմանը և առաջարկեց գործադիր մարմնին համապատասխան քայլեր անել:

Որովհետև գործադիր մարմնի անդամների մէջ աշխատանքների բաժանումն կատարել դեռ հնարաւոր չէ եղել, որոշուեց յանձնարարել առ այժմ կոլլեգիալ կերպով կառավարել, մինչև համաձայնութիւն կառաջանայ:

---

[29] Տե՛ս Տէր-Մինասեան Եր. Դպրոցական գործի ներկայ դրութիւնը // Ժողովրդի Ձայն, 14 սեպտեմբերի 1918, N 12:

Ի վերջոյ Ազգային Խորհուրդը որոշեց մերժել Հնչակեան-ների և Հայրենակցական միութիւնների միութեան առաջարկը՝ իրենց ևս տեղեր յատկացնելու Ազգային Խորհրդում:

Թղթակից

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդի նիստը //
Ժողովրդի Ձայն, 17 սեպտեմբերի 1918, N 14:

N 17

Հաղորդագրություն՝ Վրաստանի վարչապետի և ՀԱԽ-ի լիազոր ներկայացուցիչների աշխատանքային հանդիպման մասին (1918 թ., 16 սեպտեմբերի)

Երէկ, ժամը 1-ին, Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի կողմից պրեզիդիումի անդամներ պ.պ. Ա. Թադէոսեան և Ս. Յարութիւնեան և գործադիր մարմնի անդամներ՝ պ. պ. Ա. Երզնկեան և Լ. Թումանեան ներկայացան Վրաստանի կառավարութեան նախագահ՝ պ. Ն. Ն. Ժորդանիային: Ընդունելութեան ժամանակ արծարծուեցին գաղթականական, դպրոցական և այլ խնդիրներ: Պ[արոն] Ժորդանիան յայտնեց, որ Վրաստանի կառավարութիւնը համահաւասար և արդարացի կերպով է վերաբերուելու իր տերրիտորիայի վրայ ապրող ազգաբնակութեան, առանց ազգային խտրականութեան և մասնաւորապէս ուրախ է, որ Վրաստանի հայերը կազմակերպել են Ազգային Խորհուրդ, որի հետ և կառավարութիւնը կունենայ յարաբերութիւններ:

Տե՛ս Քրոնիկոն //
Ժողովրդի Ձայն, 17 սեպտեմբերի 1918, N 14:

N 18

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. սեպտեմբերի 20-ի նիստի մասին

Նիստը բաց է անում հերթական նախագահ Արշակ Թադէոսեան երեկ[ոյան] 8 ժ. 10 րոպէ պակաս, դարձեալ որոշուած ժամանակ. 50 ր. ուշ:

Ժողովն անցնում է զբաղմունքի առարկաներին: Խօսք է առնում Ար. Երզնկեան և զեկուցում է տալիս Բէլի-Կլիւչի դէպքերի մասին: Վրաց կառավարութիւնը նշանակել է Բէլի-Կլիւչի և շրջակայ գիւղացիների վրայ 2 մլն. 550 հազարի տուգանք, հաշուելով կողոպտուած իրերի արժէքի համաձայն: Թէ ի՞նչ զարհուրելի ծանր բէռ է դրուած գիւղացիների վրայ, բաւական է յիշել 90 ծուխ ունեցող մի գիւղի վրայ դրած 700.000 ռ. տուգանքը: Զօրքը գործ է դնում բռնութիւն, զոռով առնում է ցորեն, առանց որևէ վճարի, տեղի են ունեցել մահուան պատիժներ: Իրանց կացութիւնից դուրս գալու համար գիւղացիք մի քանի անգամ պատգամաւորութիւնների միջոցով դիմել են Ազգ. Խորհրդի գործադիր կոմիտէին: Վերջինս դիմել է վրաց կառավարութեան և աշխատել է կառավարութեան ուշադրութիւնը գրաւել գիւղացիների անել դրութեան վրայ:

Կառավարութիւնը խոստացել է կարճ ժամանակուայ ընթացքում զօրքերը հեռացնել այդ տեղերից և տուգանքի չափը հաշուել, ո՛չ այն դրութեամբ, որ պէտք է լինէր պահեստներում ըստ օրինի, այլ կողոպուտի մոմենտից առաջ եղած իրերի արժողութեամբ: Բացի դրանից նշանակուելու է մի նոր քննիչ յանձնաժողով, որին մասնակցելու իրաւունք է տրւում նաև Ազգային Խորհրդի ներկայացուցիչներին: Այնուհետև ժողովը լսում է գործ. կոմիտէի անդամ Յովսէփ Արղութեանի զեկու-

ցումը գաղթականութեան վերաբերեալ, սկզբից և եթ յայտնելով, որ դա լրիւ զեկուցում չէ, այդպիսին կը ներկայացնէ յետոյ: Նա նկարագրեց մեր այն գաղթականութեան դրութիւնը, որ գտնւում է 300 վերստ վրայ: Նրանք մերկ են, սոված, կեղտի մէջ, անխնամ: Եղած օգնութիւնը չափազանց քիչ է: Նա տեսել է ուրուականների մի խումբ, որոնք մահուան են դատապարտուած:

Նրանք բնակւում են բաց վրաններում կամ տախտակներից շինած տաղաւարներում, որոնք ունեն մեծ բացուածքներ: Նա մինչև մի ծայրից անցել է մինչև միւս ծայրը և նորից վերադարձել առաջին վրանին, արդէն 3-4 անշնչացած ընկած են եղել:

Առայժմ նա գործադիր կոմիտէի կողմից դնում է հետևեալ առաջարկութիւններ ընդունելու.

ա)[Հայ] Գաղթ[ականական կազմակերպությունների] Գլխ[ավոր] Խորհուրդը՝ կոչուի Ազգ. Խորհրդի գաղթականական բաժանմունք:

բ)Ազգ. Խորհուրդը յանձնարարի ֆինանսական մասնաժողովին՝ կարճ ժամանակուայ ընթացքում ներկայացնէ մի ծրագիր, թէ ինչ միջոցներով պէտք է դրամ գանձել, որի կարիքը հսկայական է:

գ)Իրաւունք տրուի գործադիր կոմիտէին լայն չափերով կազմակերպի հասարակական աշխատանքներ գաղթականների համար:

դ)Ազգ. Խորհրդն իրաւունք ունենայ կոնտրոլի ենթարկելու բոլոր այն հաստատութիւնները, որոնք նպաստ են ստանում Ազգ. Խորհրդից:

ե)Իրաւունք տալ գործադիր կոմիտէին գաղթականներին տեղափոխելու համար որոշ քայլեր անելու:

Բոլոր յիշեալ առաջարկութիւններն ընդունւում են:

Ապա [Ա.] Երզնկեան զեկուցում է Սուխումի հայերի ցանկութեան մասին: Այնտեղի Ազգ. Խորհուրդը որոշել է, որ հայութիւնն ընդունի Վրաստանի հպատակութիւնը, որի մասին Վրաստանի Հայ Ազգ. Խորհուրդի սանկցիան է խնդրում: Խորհուրդը դրական մտքով վճռեց խնդիրը:

Վերջում տեղի ունեցաւ քարտուղարի ընտրութիւնը: Քարտուղար ընտրուեց միայն Ազգ. խորհրդի և պրեզիդիումի նիստերի արձանագրութիւնների համար Դ.[30] Դարբինեանը 500 ռ. ռոճիկով:

Օրակարգի միւս հարցը – Վրաստանի պարլամենտի հայ անդամների ընտրութիւնը յետաձգուեց միւս անգամին:

Խ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 25 սեպտեմբերի 1918, N 19:

N 19
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. սեպտեմբերի 22-ի նիստի մասին

Հերթական նախագահն է Լ. Թումանեան:

Նիստը բացւում է 7 և կէս ժ. և յայտարարւում է օրակարգը. - ա) Վերջնական հաստատումն Ազգ. Խորհրդի անդամների և կանդիդատների, բ) Վրաստանի պարլամենտի 10 պատգամաւորների ընտրութիւն և գ)նակազի խնդիրը:

Ա. Ֆրակցիաները յայտարարում են Ազգ. Խոր. իրանց անդամների անունները:

---

[30] Վավերագրում հապավումը սխալ է, պետք է լինի «Մ»՝ Մաթևոս:

Հայ ժողովրդական կուսակցութիւն. – Ս. Յարութիւնեան, Լ. Ղուլեան, Արշ. Բարխուդարեան, Իս. Յարութիւնեան, Գ. Մելիք-Ղարագեօզեան, բժիշկ Կ. Ստեփանեան, Եր. Տ[էր] Մինասեան, Խ. Կանայեան:

– Կանդիդատներն են. – Մին. Բերբերեան, Պ. Դոլուխանեան, Յ. Փիրալեան, Լ. Դանիէլեան[31], Ռ. Յովհաննիսեան, Հայր. Յովհաննիսեան:

Հայ Յեղ. Դաշնակցութիւն. – Յ. Արղութեան, Արշ. Թադէոսեան, Մ. Մանասեան, Լոռեցեան, Յովհ. Ամիրխանեան, [Դ.] Դաւիթխանեան, Բ. Թոփչեան:

– Կանդիդատներն են. – Կ. Ղազարեան, Հ. Եաղջեան, Պ. Սոտնիկեան, [Մ.] Զարգարեան:

Սոցիալ-յեղափ. կուս. – Ա. Ստամբոլցեան, Լ. Թումանեան, [Ռ.] Ենգիբարեան, [Վ.] Թուրազեան, Պարոյր Ստամբոլցեան, Ա. Տէր-Գրիգորեան, [Մ.] Տէր-Ներսիսեան, բժ[իշկ] Մարկոսեան:

– Կանդիդատներն են. – [Նիկ.] Թարխանեան, Մելիքեան, [Ա.] Յովհաննիսեան, Սիմէօն Ղուլեան:

Սոցիալ-դեմ. կուս. – Ար. Երզնկեան, [Մ.] Ղարաբէգեան, [Ս.] Փիրումեան, [Բ.] Մկրտումեան[32] , [Մ.] Դարբինեան, [Լ.] Էլբակեան, [Ս.] Աբովեան, [Մ.] Պալեան:

– Կանդիդատներն են. – [Գ.] Ղարաջեան, Բալայեան, Յովակիմեան, [Գ.] Կաֆեան, Արշամ Տէր-Յարութիւնեան:

Այնուհետև ժողովն անցաւ 10-րդ անդամի ընտրութեան: Ամեն մի ֆրակցիան իրաւունք ունի 2-ական ներկայացուցիչ տալու, իսկ դաշնակցութիւնը 3. Այսպիսով 9 պատգամաւորի

---

[31] ՀԺԿ-ի ԿԿ-ի քարտուղար:

[32] **Մկրտումյան (Միկիրտումով) Բազրատ**, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր (1918-1919), ՎՍԴԲԿ-ի ԿԿ-ի անդամ (1920-1921):

ընտրութիւնն անվիճելի է. դրանք միայն պիտի յայտարարուեն ֆրակցիաների կողմից և Ազգ. Խոր. պիտի հաստատի: Միայն 10-րդ պատգամաւորը պիտի ընտրուի բոլորի համաձայնութեամբ: <…>

Խ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 26 սեպտեմբերի 1918, N 20:

N 20
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. սեպտեմբերի 24-ի նիստի մասին

Հերթական նախագահն է. Գ. Ղարաջեան: Ժողովը բանալով նախագահը խօսք է տալիս գործադիր կոմիտէի նախագահ Ար. Երզնկեանին, որը Եր. Տէր-Մինասեանի ու Ան. Ստամբոլցեանի հետ ներկայացել են լուսաւորութեան մինիստրին[33] ու զրուցել մեր դպրոցական խնդիրների շուրջը: Մինիստրն ասել է, որ առհասարակ մենք ուշացել ենք. հնարաւորութեան սահմաններում կաշխատի բաւարարել Ազգ. Խորհրդի ներկայացուցիչներին: Այս ուսումնական տարում այլևս նշանակուած վերատեսուչները չեն փոխուի, բայց ուսուցիչ-ուսուցչուհիները կարող են նշանակուել այն ցուցակից, որ կը ներկայացնէ մեր գործադիր կոմիտէն: Ցիրկուլիարով գիմնազիոններում ազգայնացումն սկսուելու է սկզբից մինչև դ. դասարանը: Գործ. Կոմիտէի անդամներն առաջարկել են թոյլատրել մինչև ա. դասարանը: Այնուհետև խօսք է լինում հպատակութեան օրէնքի մասին: Այս տարի այդ օրէնքը խստութեամբ չի գործադրուելու դպրոցներում: <…>

[33] Խոսքը Գիորգի Լասխիշվիլու մասին է:

Արշ. Բարխուդարեանի և Ս. Յարութիւնեանի առաջարկութեամբ որոշւում է ունենալ իրաւաբանական կոմիսիա՝ բաղկացած Ազգ. Խորհրդի բոլոր իրաւաբաններից. այս կոմիսիան հրաւիրելու է հայկ. իրաւաբանների ընկերութիւնից նաև անդամներ, որոնք կատարելու են որոշ անյետաձգելի յանձնարարութիւններ:

Նախագահը դնում է 10-րդ պատգամաւորի «չարաբաստիկ» հարցը: Կրկին ընդմիջումներ, փոխադարձ զիջումների առաջարկութիւններ, սակայն և այնպէս խնդիրը մնում է անլուծելի: <…>

Առաջարկութին եղաւ 10-րդի ընտրութիւնը յետաձգել, այժմ ընտրել 9 հոգուն: Ընդունուեց այդ առաջարկութիւնը:

Ֆրակցիաների առաջարկած թեկնածուները Ազգ. Խորհրդի կողմից ընդունուեցին և հաստատուեցին: Վրաստանի պարլամենտի անդամներն են հետևեալները[34]. –

Հայ Ժողովրդական կուս. – Արշակ Բարխուդարեան և Պօղոս Դոլուխանեան:

---

[34] Վրաստանի խորհրդարանում հայ համայնքի ներկայացուցչության կարևոր հարցին, անշուշտ, անդրադարձ եղավ նաև ՀՅԴ-ի կուսակցական մամուլում: Այսպես, կարծիք հնչեց, որ «մեր ներկայացուցիչները միշտ պիտի <…> հեռու լինելով անպատասխանատու օպպոզիցիայի դերից, պիտի գործակցեն բոլոր այն տարրերի հետ, որոնք իրենց հերթին հեռու լինելով նեղ ազգայնական քաղաքականութիւնից, անվերապահ կերպով պաշտպանում են Վրաստանի դեմոկրատիայի շահերը»: Տե՛ս Աշխատաւոր, 24 սեպտեմբերի 1918: Այս խոսքերը հավելում է, մեր կարծիքով, մեկ այլ պարբերություն, որը խնդրո առարկան ավելի շեշտված է բացահայտում: «Մենք մեր պատգամաւորներին ուղարկելով Վրաստանի պարլամենտ՝ հրահանգում ենք <…> գործօն մասնակցութեամբ շինարար աշխատանք կատարել իբրև հաւասար, ազատ ու հարազատ քաղաքացիներ ուժեղ վրացական դեմոկրատական հանրապետութիւն ստեղծելու համար»: Տե՛ս Աշխատաւոր, 29 սեպտեմբերի 1918:

Հայ Յեղ. դաշնակցութիւն.– Զօրի Զօրեան[35], Տիգրան Աւետիսեան[36] և [Դ.] Դաւիթխանեան:

Սոցիալ-դեմոկրատ. – [Ս.] Փիրումեան և [Ա.] Իվանեան[37]:

Սոցիալ-յեղափ. – Լևոն Թումանեան և Նիկ. Թարխանեան[38]:

Խ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 28 սեպտեմբերի 1918, N 22:

---

[35] **Զորյան Զորի Նավասարդի** (1886-1943), ծնվել է Թիֆլիսում: Հայրը Գողթն գավառի Ցղնա գյուղից էր, զոկ: Զորյանը Ախալցխայի քաղաքագլխի պարտականութիւնները մեծ պատվով ու ջանասիրությամբ կատարեց՝ 1917-ի նոյեմբերի վերջերից մինչ 1921-ի գարունը: Նա հաջողությամբ ղեկավարեց Ախալցխայի ինքնապաշտպանությունը (1918թ., փետրվար-հունիս) թուրքմեսխեթական խաժամուժի դեմ, այնուհետև կնքեց մի համաձայնագիր օսմանական կողմի հետ, ինչը փրկեց ախալցխացի հայերին ու վրացիներին գաղթի բոլոր այն աղետաբեր հետևանքներից, որոնք տեղի ունեցան Զավախքի պարագայում: Զորյանը հանդիսանում էր ՀՅԴ-ի Վրաստանի ճյուղի առաջնորդներից մեկը, ինչպես նաև ներկայացնում էր այդ կուսակցությունը Սահմանադիր ժողովում (1919 թ. օգոստոս – 1921 թ. մարտ): 1920-ից, մինչև նրա լուծարումը, գլխավորում էր Կովկասի Հայ Բարեգործական Ընկերության վարչությունը:

[36] Վրաստանի Սահմանադիր ժողովի պատգամավոր (1919-1921):

[37] ՀԱԽ-ի նիստի որոշմամբ 1918 թ. հոկտեմբերի 17-ին նրանց գումարվեց նաև Ար. Երզնկյանը: Տե՛ս N 27 վավերագիրը:

[38] 1918 թ. հոկտեմբերի 1-ին Վրաստանի ՀԱԽ-ի ընտրված լիազորները ներկայացան վրաց խորհրդարան և ճանաչվեցին որպես նրա իրավազոր անդամներ: Գործընկերների անունից խորհրդարանի պատգամավորներին ամբիոնից ողջունեց Դ. Գ. Դավիթխանյանը, որն ի միջի այլոց ասաց. «Մենք Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչներն ենք, բայց եկել ենք այստեղ ոչ թէ միայն մեր ազգային-կուլտուրական շահերը պաշտպանելու, այլև Ձեզ հետ միասին լծուելու և մեր փոքրիկ ազատ հայրենիքի – Վրաստանի բարօրութեան համար աշխատելու»: Տե՛ս Վրաց Ազգային Խորհուրդ // Ժողովրդի Ձայն, 5 հոկտեմբերի 1918: Խորհրդարանի բարձր ամբիոնից հնչած այս խոստովանությունը դահլիճի կողմից դիմավորվեց որոտալից ծափահարություններով: Վրաց կուսակցական մամուլը նույնպես ջերմորեն ողջունեց հայ պատգամավորներին: Տե՛ս საქართველო, 4 ოქტომბერი 1918. Նաև՝ შრომა, 4 ოქტომბერი 1918.

N 21

Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ում ՀՀ զորքերի հրամանատար Թովմաս Նազարբեգյանի հյուրընկալման մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի Նախագահությունը և Գործադիր Մարմինը հինգշաբթի, [1918 թ.] սեպտեմբերի 26-ի երեկոյեան հանդիսաւոր կերպով ընդունեցին Խորհրդի շինութեան մէջ հայոց զօրքերի հրամանատար գեներալ Ֆ. Ի. Նազարբէգովին, ողջունեցին նրա գալուստը և հիւրասիրեցին թէյով ու քաղցրաւէնիքով: Հրաւիրուած և ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական բաժանմունքի ներկայացուցիչ պ. Ա. Ջամալեան իր օգնականներով, զինուորական նախարարի պաշտօնակատար գեներալ Ի. Ս. Բաղրամեան, Հայոց պատուիրակութեան զինուորական խորհրդական գեներալ Գ. Գ. Կորգանով, Ադրբէջանի Հայոց դիւանագիտական բաժանմունքի ներկայացուցիչ պ. Ա. Բէգզադեան և Հայոց Ազգային Խորհրդի[39] լիկուիդացիոն մասնաժողովի նախագահ պ. Լ. Ղուլեան: Ողջոյնի ճառեր արտասանեցին պ.պ. Ս. Յարութիւնեան և Ա. Թադէոսեան. շատ զգացուած պատասխանեց գեն. Նազարբէգովը, յայտնելով խորին շնորհակալութիւն: Տեղի ունեցաւ հետաքրքրական և մտերմական զրույց, որը տևեց մօտ երեք ժամ:

Տե՛ս Գեներալ Նազարբէգովը
Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդում //
Ժողովրդի Ձայն, 28 սեպտեմբերի 1918, N 22:

---

[39] Խոսքն Արևելահայերի ազգային խորհրդի մասին է, որը գործեց Թիֆլիսում մինչև 1918 թ. հուլիսի 17-ը:

N 22

Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի նախաձեռնութեամբ հրավիրված և որբերի խնամատարության հարցը քննող 1918 թ. հոկտեմբերի 1-ի խորհրդակցության մասին

Երեքշաբթի հոկտեմբերի 1-ին, բարեգործ ընկերութեան դահլիճում տեղի ունեցաւ Վրաստանի Հայոց Ազգ. Խորհրդի գաղթականական բաժնի հրաւէրով գումարուած Թիֆլիսի հայ ազգային հասարակական ընկերութիւնների և կազմակերպութեանց ներկայացուցիչների խորհրդակցութիւն հայ որբերի խնամատարութեան հարցի շուրջը: Ներկայ էին 20-ից աւելի հաստատութիւնների կողմից 35 հոգի, նախագահ ընտրուեց Արշ. Թադէոսեան: Գաղթ. Բաժնի նախագահ Յ. Արղութեան կարդաց համառօտ զեկուցում որբերի թիւի և վիճակի մասին: Զեկուցման համաձայն գաղթական. բաժնի նպաստներով, ինչպէս և Ամերիկական Կարմիր Խաչի ընկերութեան օժանդակութեամբ. Թիֆլիսի և շրջակայգի որբանոցներում խնամւում են 3 հազարի չափ որբեր, բացի դրանից մօտաւորապէս 10 հազար որբ տակաւին մնում են թէ քաղաքից դուրս զանազան գաղթականական կենտրոնատեղիներում և թէ քաղաքում իրենց անօգնական և թէ քաղցած ծնողների խնամքի տակ փողոցներում ցիրուցան եղած, դրանք բոլորն էլ մերկ են, կեղտոտ, հիւծուած և ենթակայ անխուսափելի կորստի, եթէ ամենակարճ միջոցում չժողովուեն և որբանոցներում չպատսպարուեն:

Սակայն Ազգային Խորհրդի գաղթականական բաժինն անկարող է այդ անել, որովհետև այդ նպատակով եղած միջոցները խիստ սահմանափակ են և սպառուելու վրայ, և, միւս կողմից, եղած միջոցների թոյլ տուած սահմաններում անգամ

այդ ուղղութեամբ գործող կազմակերպութիւններն անկարող են բոլոր որբերին պատսպարել գլխաւորապէս բնակարանի համար շէնքեր գտնելու և մի շարք այլ արգելառիթ հանգամանքների շնորհիւ: Ուստի անհրաժեշտ է, որ ամբողջ հայ հասարակութիւնը իր բոլոր խաւերով հանդէս գայ և ինքը որոշէ հայ որբերին սպառնացող կորստից փրկելու միջոցները: <…>

Վ. Փ.

Տե՛ս Խորհրդակցութիւն հայ որբերի պահպանութեան հարցի մասին //
Ժողովրդի Ձայն, 5 հոկտեմբերի 1918, N 27:

N 23
Տեղեկատվություն՝ Վրաստանի ՀԱԽ-ին հայ «կադետների» դիմումի մասին

Ժողովրդական Ազատութեան Կուսակցութեան կից հիմնուել է նոյն կուսակցութեան հայկական ֆրակցիան, որի վարչութիւնը դիմել է Վրաստանի Հայոց Ազգ. Խորհրդին իրանց ֆրակցիայի անդամներին էլ տեղ տալ յիշեալ Խորհրդում, բացատրելով այս պահանջը այն հիմունքով, որ իրանք ոչ մի կապ չունեն Հայ Ժողովրդակ. Կուսակցութեան հետ, որից տարբերւում են զանազան տակտիկական և գաղափարական հարցերում:

Տե՛ս Քրոնիկոն //
Ժողովրդի Ձայն, 4 հոկտեմբերի 1918, N 26:

N 24
«Ժողովրդի Ձայն» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. հոկտեմբերի 6-ի նիստի մասին

Ժողովին նախագահում է պ. Սամսոն Յարութիւնեան, առաջարկում է յոտնկայս յարգել Բագուի հայ ժողովրդի ընկածների յիշատակը: Ժողովը ոտքի է կանգնում:

Խօսք է տրւում Բէլի-Կլիւչի դէպքերի առթիւ[40] նշանակուած քննիչ յանձնաժողով հայ անդամ Ալէքսանդր Պապովեանին:

Նա յայտնում է, որ այդ խոշոր և ըստ ամենայնի հետաքրքրական գործի քննութիւնը դեռ շարունակւում է, ուստի վերջնական խօսք ասել չի կարող:

Ձեկուցումից յետոյ Ազգ. Խորհուրդը որոշեց նորից դիմել կառավարութեանը, որ զօրքն այնտեղից հեռացուի և 2 մլն. 600000 ռ. գանձումը ժամանակաւորապէս դադարեցուի մինչև քննութեան վախճանը:

Ժողովը լսում է Ազգ. Խորհրդի կողմից նշանակուած քննիչ յանձնաժողովի զեկուցումը Գայիանեան դպրոցի վերաբերմամբ: Ձեկուցող պ. [Մ.] Ղարաբէգեանը մանրամասն կարդում է քննութեան խնդրին վերաբերեալ կարևոր դոկումենտները:

---

[40] Անդրկովկասյան դաշնության կազմալուծման պահին տիրող անիշխանության մթնոլորտում Թիֆլիսի գավառի Բելի-Կլյուչ (թորք.՝ Աղբուլաղ, վրաց.՝ Թեթրի-Ծղարո) բնակավայրում գտնվող և հսկայական պաշարներ ունեցող ռազմական պահեստները՝ ի սպառ թալանվեցին տեղի բնակիչների կողմից: Վրաց կառավարության ձեռնարկած միջոցների շնորհիվ կիրառվեցին նաև պատժիչ գործողություններ, որոնք այնուհետև ակամայից ազգային հալածանքի բնույթ ստացան, քանզի տեղի բնակչության մեծ մասը բաղկացած էր ռուս և հայ երկրագործներից: Տե՛ս նաև Ռուսաց Ազգային Խորհրդի հաղորդածը Բելի-Կլիւչի անկարգութիւնների մասին // Ժողովրդի Ձայն, 8 սեպտեմբերի 1918, N 7:

Յանձնաժողովը մանրազննիչ քննութեան չէ առել հոգաբարձութեան և ուսուցչութեան փոխյարաբերութիւնները և ոչ էլ մեղադրել մէկին կամ միւսին ըստ էութեան, այլ ի շահ դպրոցի, որ ահա մի ամբողջ տարի է ինչ ենթարկուած է՝ իր վրայ կրելու երկու խմբերի տարաձայնութիւնների դառն հետևանքներ և մինչև այժմ էլ երերուն վիճակում է, - հիմնուելով մի շարք փաստաթղթերի վրայ եկել է այն եզրակացութեան, որ արձակուած պիտի համարուեն թէ՛ հոգաբարձուները և թէ՛ ուսուցիչները: Ապա Ազգ. Խորհուրդը ընտրէ մի լիազօր չէզոք անձերից բաղկացած մարմին, որ վարէ դպրոցական բոլոր գործերը միչև հոգաբարձութեան նոր ընտրութիւնները կը նշանակուեն:

Ազգ. Խորհրդի Գործադիր Կոմիտէն պ. Երզնկեանի միջոցով յայտնեց, որ համաձայն է քննիչ յանձնաժողովի Ա. կէտին, սակայն դպր. ուսումնական գործերը վարելու է Գործադիր Կոմիտէն ինքը, և ոչ մի առանձին մարմին, մինչև հոգաբարձական ընտրութիւնների կայանալը: Գործադիր Կոմիտէն կը հրաւիրէ տեսուչ և ուսուցչական խումբ:

Ա. Բարխուդարեան և Ա. Թադէոսեան արդարութեան և իրաւական տեսակէտից առաջարկում են անմիջապէս անցնել հոգաբարձական ընտրութիւններին և նրան յանձնել ամբողջ գործը:

Ժողովը խնդիրը մանրազննին քննութեան ենթարկելուց յետոյ՝ ձայների մեծամասնութեամբ ընդունեց Գործադիր Կոմիտէի առաջարկութիւնը:

Այնուհետև Երզնկեանը համառօտ զեկուցում տուեց Բագուի դէպքերի մասին: Լրացուցիչ տեղեկութիւն տուաւ նաև Ս. Յարութիւնեանը: Զոհերի թիւը եղել է առնուազն 20.000 հոգի: Մնացածները գտբւում են անել կացութեան մէջ, ժողովուր-

դը մատնուած է սովի, իսկ ինտելիգենցիան սարսափի: Ազգ. Խորհուրդը որոշեց մի պատգամաւորութիւն ուղարկել Բագու՝ ստեղծելու նորմալ յարաբերութիւն ու կարգ հայերի և կառավարութեան միջև և հասցնել անմիջական օգնութիւն Խորհրդի աղքատիկ գանձարանից առայժմ 100.000 ռուբլի:

Ազգ. խորհուրդը Գործադիր Կոմիտէի պաշտօնները բաշխեց հետևեալ ձևով.- Գաղթականական մասը վարելու է Յ. Արղութեան (դաշն.), դպրոցականը՝ Ե. Տէր-Մինասեան (Հայ. Ժող.) և Ա. Ստամբոլցեան (էս-էր), իսկ ֆինանսականը՝ Ար. Երզնկեան (էս-դէկ):

Խ. Կ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 8 հոկտեմբերի 1918, N 29:

N 25
«Հորիզոն» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. հոկտեմբերի 6-ի նիստի մասին

Վրաստանի Հայոց. Ազգ. Խորհուրդը լսելով քննիչ յանձնաժողովի նախագահ Մ. Ղարաբէգեանի զեկուցումը Գայիանեան օրիորդաց դպրոցի մասին, որոշեց. 1)յուլիսի 1-ից արձակուած համարել թէ՛ ուսուցչական և թէ՛ հոգաբարձական կազմը, 2)գործի ղեկավարութիւնը յանձնել ժողովրդական խորհրդի գործադիր օրգանին՝ մինչև ծխական ժողովի գումարումն ու հոգաբարձութեան ընտրութիւնը:

Գործադիր կոմիտէի անդամ Ա. Ստամբոլցեանի զեկուցման համաձայն, պարզուեց, որ գործ. կոմիտէն ձայների մեծամասնութեամբ որոշել է հետևեալ կերպով կազմել բաժանմունքները. 1)գաղթականական բաժանմունքի ղեկավարն է Յ.

Արդութեան (դաշնակ), 2)դպրոցական գործի ղեկավարներն են՝ Ա. Ստամբոլցեան (էս-էր) և Ե. Տէր-Մինասեան (հ. ժ. կ.) 3)ֆինանսական բաժանմունքի ղեկավարն է Ա. Երզնկեան (սոց.-դեմ.):

Վրաց հանրապետութեան ազգ. խորհրդի համար 10-րդ անդամի ընտրութիւնը յետաձգւեց հոկտ. 9-ի նիստին:

Նիստի սկզբում Ա. Ստամբոլցեանի առաջարկով խորհուրդը յոտնկայս յարգեց Բագւում վանդալիզմի զոհերի յիշատակը:

Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը լսելով Ա. Երզնկեանի զեկուցումը Բագւի անցքերի և Բագւի հայերի դրութեան մասին, որոշեց օգնութեան հասնել տուժածներին և խորհրդի միջոցներից ուղարկել առայժմ հարիւր հազար ռուբլի:

Հոկտ. 6-ի նիստում՝ խորհուրդը լսելով քննիչ յանձնաժողովի անդամ երդւեալ-հաւատ[արմատար] Ա. Պապովեանի զեկուցումը Բելի-Կլիւչի անցքերի մասին, որոշեց դիմել վրաց կառավարութեան և խնդրել՝ 1)ժամանակաւորապէս, մինչև քննութեան վերջանալը, յետաձգել կառավարութեան նշանակւած 2600000 ռ. տուգանքի գանձումը, 2)խնդրել կառավարութիւնից, որ Բելի-Կլիւչից և շրջանից հեռացնէ պատժիչ զօրախումբը, քանի որ այնտեղ այժմ կատարեալ հանգստութիւն է տիրում:

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհուրդ //
Հորիզոն, 10 հոկտեմբերի 1918, N 205:

N 26

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. հոկտեմբերի 12-ի նիստի մասին

Նախագահում է [Մ.] Ղարաբէգեան:

Մի մասնաւոր խորհրդակցութիւնից յետոյ, որ տևեց բաւականին երկար ժամանակ, խորհուրդը կարողացաւ զբաղուել միայն օրակարգի մի խնդրով, – այն է ինվալիդների և գերիների:

Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցչի դիմումի համաձայն – խորհուրդը որոշեց գաղթականական ֆոնդից 60000 ռուբլի փոխարինաբար յատկացնել՝ գերիների և ինվալիդների կարիքների համար[41]: <…>

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 13 հոկտեմբերի 1918, N 34:

N 27

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. հոկտեմբերի 17-ի նիստի մասին

Նախագահում է պ. Լ. Թումանեան: Խօսք է տրւում Գործադիր Կոմիտէի նախագահ պ. Արամայիս Երզնկեանին: Վերջինիս տուած տեղեկութիւններից երևաց, որ Գործադիր Կոմիտէի բոլոր ջանքերը՝ Բէլի-Կլիւչի հայ ազգաբնակութեան նեղ դրութիւնից ազատելու համար՝ յաջողութեամբ է պսակուել: Քննութիւնը պարզել է կառավարութեան առաջ, որ ազգաբնակութիւնը արժանի չէր այն խոշոր պատժին, որին ենթարկուած

[41] Խոսքը Վրաստանի տարածքով տուն վերադարձող այն հայ զինվորականների մասին է, որոնք մինչ այդ գերության մեջ էին գտնվում Գերմանիայում և Ավստրա-Հունգարիայում:

էր նա, ուստի իր և պ. Ա. Պապովեանի անմիջական միջամտութեամբ Վրաստանի կառավարութիւնը որոշել է յետ կանչել Բէլի-Կլիւչից անմիջապէս զօրքը, որի փոխարէն կուղարկուի մի փոքր զօրամաս՝ իբրև այնտեղի գարնիզոն: Բացի դրանից հրամայուած է այլևս տուգանքը չընհաւաքել, արդէն ժողովուած գումարի մի մասը գործադրուելու է տեղական-կուլտուրական կարիքների համար, իսկ միւս մասն էլ կըվերադարձնուի ազգաբնակութեան:

Գաղթականական խնդրի նկատմամբ զեկուցանողը յայտնեց, որ ամենից շատ հոգացողութեան առարկայ է եղել Գործ. Կոմիտէի համար Ախալքալաքի գաղթականութիւնը, որոնց հայրենիք վերադառնալու խնդիրն է դրուած հրապարակ: Վրաստանի կառավարութեան՝ զինուորական և քաղաքացիական կառավարիչների հետ պիտի գնայ և Ազգ. Խորհրդի ներկայացուցիչը (իր օգնականներով), որ կարողանայ թշուառ գաղթականների վերադարձը փոքր ինչ կանոնաւոր կերպով կազմակերպել և առհասարակ վերահասու լինի նրանց շահերին:

Հայերի տեղերը բռնած են թաթարները. վերջիններս եթէ կամովին չհեռանան, անշուշտ զինուորական ոյժը կը հեռացնի նրանց, քանի որ վրաց կառավարութիւնը սկզբունքով ընդունում է, որ այդ վայրերը պիտի պատկանին իրենց նախկին իսկական տէրերին:

Ապա զեկուցում է տալիս դպրոցական խնդրի նկատմամբ Երուանդ Տէր Մինասեանը:

Նրա և իր ընկերների աշխատանքով՝ պետական դպրոցների վերաբերմամբ մի շարք խնդիրներ պարզել են, սակայն փաստօրէն ազգայնացած դպրոցների վերաբերմամբ, իսկ տակաւին Ազգային Խորհուրդը հսկողութիւն ունենալու իրաւուն-

քից զուրկ է մնում: Աւելի կնճռոտ է Եկեղ.-ծխակ. դպրոցների հարցը: Արդէն առաջնորդը շրջաբերականով պատուիրել է հոգաբարձուներին չլսելու ո՛չ մի իշխանութեան, բացի, իրեն հոգևոր իշխանութեան, որ տէր և տնօրէն է հանդիսանում յիշեալ դպրոցների[42]:

Այնուհետև կանգ է առնում Գայիանեան դպրոցի չարաբաստիկ խնդրի վրայ: Հոգաբարձութիւնը թուղթ է ուղարկել Ազգ. Խորհրդին յայտնելով, թէ ինքը հրաժարւում է և դպրոցի շուրջը ծագած անախորժութիւնների պատասխանատուութիւնը թողնում է Ազգ. Խորհրդի վրայ:

Սամսոն Յարութիւնեանը յայտնում է, որ Գործ. Կոմիտէն ամեն կերպ պիտի աշխատի, որ խնդիրը լուծուի առանց կոնֆլիկտի, ինչպէս այդ մասին դեռ սկզբներում Հայ Ժող. Կուսակ. ֆրակցիան գրել էր, որ դպրոցների կառավարութիւնն ստանձուի հոգ[ևոր] իշխանութեան հետ համաձայնութեան գալով:

Ազգային Խորհուրդը կրկին զբաղուելով Բագուի հայերի խնդրով, որոշեց անմիջապէս ուղարկել Բագու 4 հոգուց բաղկացած մի պատգամաւորութիւն: Պատգամաւորութիւնը կը կազմէ Գործ. մարմինը և կը հոգայ նրան ուղարկելու հանգամանքների մասին:

– Ընդունւում և հաստատւում է հրահանգը (նակազը) 58 կէտից բաղկացած չնչին փոփոխութիւններով:

Այս նիստին վերջապէս լուծուեց 10-րդ պատգամաւորի ընտրութեան հարցը: 5 րոպէի ընդմիջումից յետոյ՝ Ազգ. Խորհուրդը առաջարկուած երկու թեկնածուներից – Ա. Երզնկեան (էս-դէկ) և Ենգիբարեան (էս-էր) – պերսոնալ-բաց քուէարկու-

[42] Տե՛ս N 28 վավերագիրը:

թեամբ, ձայների խոշոր մեծամասնութեամբ, ընտրեց պատգամաւոր Վրաստանի պարլամենտի համար – Երզնկեանին:

Ժողովի վերջում Ժողովրդական ազատութեան Կուսակցութեան (կադետների) Հայկական ֆրակցիայի ներկայացուցիչ պ. [Ե.] Խանդանեանը հարց բարձրացրեց, որ իրենց ևս տեղ տրուի Ազգ. Խորհրդում – որպէս մի առանձին հոսանք հայկական կեանքում: Սակայն ձայների մեծամասնութեամբ – ընդդէմ Հայ Ժողովրդական Կուս. ֆրակցիայի ձայների – մերժուեց Խանդանեանի առաջարկութիւնը:

Խ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 19 հոկտեմբերի 1918, N 39:

N 28

Վրաստանի և Իմերեթի թեմի հոգևոր առաջնորդ Մխիթար եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի՝ հայկական եկեղեցական-ծխական դպրոցների հոգաբարձությանը 1918 թ. հոկտեմբերի 5-ին հղած N 298 առաջադրությունը՝ Հայոց Ազգային Խորհրդի հետ փոխհարաբերությունների մասին

Վերջին ժամանակներս թեմիս հայոց եկեղեցական ծխական դպրոցների հոգաբարձութիւններից ոմանք Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի Գործադիր Մարմնից ստացել են գրութիւններ, որոնցով Գործադիր Մարմինը տրամադրութիւն է ցոյց տուել միջամտին լինելու Հայոց եկեղեցական դպրոցների գործերին, որոնք գտնուում են բացառապէս ծխական համայնքների և հոգևոր իշխանութեան տեսչութեան ներքոյ: Ուստի և պատուիրում եմ Ձեզ որևիցէ թիւրիմացութիւնից խուսափելու համար շրջաբերականով բացատրել շրջանիդ Հոգա-

բարձութիւններին, որ նրանք պարտաւոր են անշեղ ղեկավարուել Նորին Վեհափառութեան Ազգիս Ընդհարական Հայրապետի կողմից մեր եկեղեցական-ծխական դպրոցների համար հաստատուած ընդհանուր ծրագրով և կանոնադրութեամբ, ուստի և որևիցէ կողմնակի միջամտութիւն դպրոցական գործերում անընդունելի է:

Տե՛ս Սրբազան Առաջնորդի շրջաբերականը //
Ժողովրդի Ձայն, 19 հոկտեմբերի 1918, N 39:

N 29
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. հոկտեմբերի 25-ի նիստի մասին

Նախագահում է [Դ.] Դաւիթխանեանը: Գործադիր Կոմիտէի նախագահ Արամայիս Երզնկեան առաջարկում է յոտնկայս յարգել նորոգ հանգուցեալ հասարակական և կուսակցական (դաշնակցական) գործիչ Աւետիք Շահխաթունեանի յիշատակը: Ժողովականները ոտքի են կանգնում:

Երզնկեանն այնուհետև զեկուցում է հայ-վրացական սահմանագծում առաջացած անհամաձայնութիւնների առթիւ: Ազգ. Խորհուրդը այդ հարցը ենթարկեց մանրազննին քննութեան և արաւ հետևեալ եզրակացութիւնը:

Վրաստանի Հայոց Ազգ. Խորհուրդը յայտնում է ջերմ ցանկութիւն Վրաստանի և Հայաստանի կառավարութիւններին, որ սահմանագծում ծագած վէճը որոշուի փոխադարձ համաձայնութեամբ – խաղաղ ճանապարհով – առանց կողմնակի միջամտութեամբ:

Այնուհետև [Յ.] Արղութեանը զեկուցեց Ախալքալաքի շրջանի գաղթականների վերադարձի խնդրի մասին: Թիւրք

կառավարութիւնը զանազան պատրուակներով խոչընդոտն է հանդիսանում մեր գաղթականութեան շուտափոյթ վերադարձի խնդրում: Թիւրքերը պահանջ են դնում, որ Ախալքալաքում վերաբնակուած թաթարները մնան հայերի գիւղերում, իսկ հայերը բռնեն ազատ մնացած գիւղերը: Խալիլ փաշան հրամայել է, ա) որ կազմուի մի կոմիսիա՝ բաղկացած 2 թուրքից, մի վրացուց և մի հայից, որը տեղաւորելու է գաղթականներին, բ) որ կոմիսիան կազմի գաղթականութեան ցուցակը – որի մէջ մտնելու են միայն բնիկ ախալքալաքցիք. ցուցակը պիտի հաստատուի Խալիլ փաշայից[43] – նոր սկսուի վերադարձը և գ) այն, որ վերևում յիշեցինք, թէ հայ գիւղացիք կը տեղաւորուեն ազատ գիւղերում:

Խորհրդակցութիւնից յետոյ ընդունուեց Սամսոն Յարութիւնեանի հետևեալ բանաձևը միաձայն.

Ի նկատի առնելով, որ տաճկաց հրամանատար Խալիլ փաշայի առաջարկած և երեք կէտերում ամփոփուած պայմանները Ախալքալաքի գաղթականութեան վերադարձի մասին փաստօրէն անհնարին են դարձնում գաղթականների վերադարձը իրենց վայրերը, ի նկատի առնելով, որ եթէ թոյլ է տրուում ներգաղթը, – այդ դէպքում ներգաղթը պէտք է հասկանալ և պէտք է կատարուի այն մտքով, որ վերադարձող գաղթականները վերադառնան իրենց բնիկ վայրերը և ամեն մի վերադարձող գաղթական ստանայ իր տունը և հողը – Վրաստանի Հայոց Ազգ. Խորհուրդը՝ գաղթականութեանը կորստից փրկելու և նրանց նորմալ կեանքի պայմաններում դնելու համար բուռն ցանկութիւն է յայտնում, որ Հայաստանի և Վրաստանի

[43] Այսրկովկասում թուրքական զորքերի ընդհանուր հրամանատար, հայ ժողովրդի դահիճ՝ Էնվեր փաշայի հորեղբայր:

կառավարութիւնները անմիջապէս ձեռք առնեն միջոցներ, որ Ախալքալաքի գաւառի գաղթականութիւնը շուտափոյթ վերադառնայ իր վայրերը՝ ազատելով այդ վայրերը վաղօրոք դրսից եկած օտար տարրերից:

Խ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 29 հոկտեմբերի 1918, N 46:

N 30
Վրաստանի ՀԱԽ-ին կից գաղթականների գործերով զբաղվող մարմնի հայտարարությունը

Սրանով յայտարարւում է ի գիտութիւն քաղաքումս ապրող գաղթականութեան և Թիֆլիսի հասարակութեան, որ այսուհետև փախստականներին իրենց խնդիրների, կարիքների և առհասարակ նրանք, որոնք կամենում են գործ ունենալ փախստականական խորհրդի հետ՝ պէտք է դիմեն Гановская, 6 տունը, որտեղ գտնւում է Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդին կից փախստականական յատուկ մարմին: Վերջինս զբաղւում է միայն Թիֆլիս քաղաքում ապրող փախստականներին վերաբերեալ գործերով – ժողովում է որբերին և տեղաւորում որբանոցներում, փախստականներին անհրաժեշտ անցագրեր է տալիս, հոգում է հիւանդների մասին և առհասարակ օգնութեան է հասնում կարիքաւորներին:

Գրասենեակը բաց է ամեն օր առ[ավոտյան] ժ. 9 և կէսից – 3:

Վրաստանի Հայոց Ազգ. Խորհրդին կից փախստականական բաժին:

Տե՛ս Յայտարարութիւն //
Աշխատաւոր, 31 հոկտեմբերի 1918, N 170:

N 31

Հաղորդագրություն՝ Վրաստանի լուսավորության նախարարության և ՀԱԽ-ի փոխհարաբերությունների մասին

<…> Վրաց կառավարութեան լուսաւորութեան նախարարութիւնը Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչներին քանի անգամներ ասել է, որ շատ ուրախ կը լինի գործակցել նրա հետ, որ ի հարկէ Ազգային Խորհուրդը պէտք է որոշ դեր խաղայ ազգայնացած դպրոցների գործում, մինչև որ կուլտուրական ինքնավարութեան օրինագծով ամբողջ գործը կանցնի նրան, և այլն, և այլն, բացի այս բոլորը մինչև այսօր մնացել են լոկ խօսքեր: Ո՛չ այն պատճառով, որ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի Գործադիր մարմինը միջոցներ չէ ձեռք առել այս ուղղութեամբ – Գործադիր մարմինը մի քանի անգամ գրաւոր և բերանացի դիմումներ է արել այս հարցի մասին, – այլ այն պատճառով, որ անհասկանալի եղանակով Գործադիր մարմնի բերանացի դիմումներին տրուել է վրաց կառավարութեան լուսաւորութեան նախարարութիւնից գոհացուցիչ պատասխան, մինչդեռ նոյն խնդիրների մասին եղած գրաւոր դիմումներին ստացել են միանգամայն անգոհացուցիչ և մերժողական պատասխան: <…>

Տե՛ս Դպրոցական գործի դրութիւնը Վրաստանում //
Ժողովրդի Ձայն, 2 նոյեմբերի 1918, N 50:

N 32

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. նոյեմբերի 1-ի նիստի մասին

Նախագահում է [Դ.] Դաւիթխանեան, որը կարդում է օրակարգը, ու հաստատուելով այն ժողովի կողմից – խօսք է տա-

լիս պ. Ալ. Պապովեանին: Վերջինս պատմեց թէ ինչպէս Ազգ. Խորհրդի պատգամաւորութիւնը[44] հասաւ ճիշտ ժամանակին[45], հայ-վրացական սահմանագլուխը և եթէ փոքր ինչ էլ ուշանար, այն ժամանակ ոչ-ցանկալի և դառն հետևանքներն անխուսափելի կը դառնային՝ թէ՛ վրացիների և թէ՛ հայերի համար: Գեներալ [Գ. Դ.] Ցուլուկիձէն ստիպուած է եղել արդէն պատերազմական գործողութիւններն սկսելու, չնայելով այն հանգամանքին, որ օր առաջ Հայաստանի Կառավարութիւնը հեռագրած է լինում Դրոյի միջոցով մեր զօրքերի Քարինջ և Ծաթեր գիւղից հեռանալու մասին, բայց հաղորդակցութեան անկանոնութեան պատճառով ժամանակին չէ հասել: Ահա պատգամաւորմերը այդ հեռագիրը կարողանում են բերել [Գ. Դ.] Ցուլուկիձէին և այլ միջոցներ գործադրում և հարթում միջադէպը:

[Բ.] Թոփչեանը յայտնում է, որ այդ պատգամաւորութեան առաքումն աւելորդ էր միանգամայն, որ այսպիսի «չնչին» դէպքերի համար գործ է «ասէկօսէների» վրայ հիմնուած տեղեկութիւններն ի նկատի առնելով պատգամաւորութիւն ուղարկել և ծանրաբեռնել առանց այն էլ Ազգային Խորհրդի աղքատ բիւջէն: [Բ.] Թոփչեանին առարկում են շատերը, որ ընդհակառակը պատգամաւորութեան այնտեղ գնալը տուել է շատ դրական արդիւնք և կարևոր է ամեն անգամ նման դէպքերի առաջն առնելու համար ուղարկել պատգամաւորներ:

Ա. Բարխուդարյանն առաջարկում է յայտնել պատգամաւորութեան շնորհակալութին՝ համարելով նրանց գործը միանգամայն բեղմնաւոր: – Ժողովն ընդունում է այդ առա-

---

[44] Պատգամավորության կազմի մեջ մտան. Ս. Հարությունյան, Ա. Երզնկյան, Ա. Հովհաննիսյան (Օգանեզով), Ա. Պապովյան, Ս. Դանդուրյան, Պ. Ստամբոլցյան, Մանասյան, Քոչարյան: Տե՛ս Հայ պատուիրակութեան հեռագիրը // Աշխատաւոր, 31. 10. 1918:

[45] Իմա՝ 1918թ. հոկտեմբերի 27-ին:

ջարկութիւնը ընդդէմ [Բ.] Թոփչեանի, որի առաջարկութիւնը մերժւում է, թէ պատգամաւորների գործը բեղմնաւոր չէ եղել:

Այնուհետև Ազգ. Խորհուրդն զբաղւում է ֆինանսական խնդրով: Խօսում են [Յ.] Արղութեան, Լ. Ղուլեան. պարզւում է, որ Ազգ. Խորհրդի գաղթ. բաժինն իր տրամադրութեան տակ ունի միայն մի օրուայ ծախս, և որ ընդհանրապէս ֆինանսական յանձնաժողովը գործի չի անցել տակաւին ֆինանսական վարիչի հետ մէկ տեղ: Թեր ու դէմ կարծիքների փոխանակութիւնից յետոյ ընդունւում է Լ. Ղուլեանի առաջարկութիւնը, որ փոխառութեամբ վերցնեն 200.000 ռ. մէկ հաստատութիւնից – մինչև որ Հայաստանից սպասուելիք 5 միլ. ռ. կը ստացուի: Թէ այս առաջարկութիւնը և թէ 5 միլ. ռուբլին շուտ հասցնելու դիմումի առաջարկութիւնն ընդունւում է:

Ժողովը միաձայն որոշեց՝ ուժեղացնել ֆինանսական կոմիտէի կազմը երկու անձնաւորութեամբ՝ Ա. Յովհաննիսեանի և [Դ.] Դաւիթխանեանի – որ նա անմիջապէս դիմէ հանգանակութեան հայ ժողովրդի բոլոր խաւերում – գաղթականներին դժուար դրութիւնից ազատելու համար. բացի դրանից նա պիտի կազմէ մի ծրագիր պարտադիր տուրք մտցնելու – նոյն նպատակի համար:

Ապա զեկուցում է տալիս գաղթականականներ ի ծանր դրութեան և նրանց հայրենիք վերադառնալու դժուարին հանգամանքների մասին պ. [Յ.] Արղութեանը: Եր. Տէր-Մինասեանը, ժողովի վերջում, պատասխանում է Բ. Թոփչեանի այն հարցապնդման, թէ, ինչպէս են բաժանուած զործադիր մարմնի պաշտօնները, ով է ֆինանսական բաժնի վարիչը և ինչ է արել ֆինաս. կոմիսիան նաև Գայիանեան դպրոցի դրութեան մասին: Առաջին հարցերի պատասխանը տրուած լինելով՝ ժողովի ընթացքում, Տէր-Մինասեանը կանգ է առնում Գայիանե-

ան դպրոցի մասին՝ պատասխանելու: Նա յայտնեց, որ Գործադիր կոմիտէի նախաձեռնութեամբ ընտրուած է նոր հոգաբարձութիւն, որը և հրաւիրել է նոր տեսուչ՝ յայտնի հայագէտ և բանասէր Ստեփան Մալխասեանին[46], սա ևս հոգաբարձութեան հետ միասին կազմել է ուսուցչական խումբը 22 հոգուց բաղկացած, որից 12-ը բարձրագոյն կրթութեամբ տէր անձինք են, միւսները՝ միջնակարգ:

Ժողովը ցրուեց ժամը 12-ին:

Խ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 3 նոյեմբերի 1918, N 51:

N 33

Լրագրային հաղորդում՝ գաղթականներին նյութական օժանդակություն հանգանակելու նպատակով՝ Վրաստանի ՀԱԽ-ի նախաձեռնությամբ 1918 թ. նոյեմբերի 7-ին հրավիրված թիֆլիսահայ հանրության ժողովի մասին

Երէկ երեկ[ոյան] ժամը 7-ին Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի շէնքում հրաւիրուած էր Թիֆլիսի հայ հասարակութեան բոլոր խաւերի և հաստատութիւնների ժողովը՝ խորհրդակցելու մի միակ հարցի մասին, թէ ի՞նչպէս անել, որ միանուագ հանգանակութեան կամ այլ միջոցով անհրաժեշտ դրամական միջոցներ ստեղծուեն գաղթականների ամենաանհրաժեշտ կարիքները հոգալու համար:

---

[46] **Մալխասյանց Ստեփան Սարգսի** (1857-1947), նշանավոր գիտնական, Հայաստանի ԳԱ հիմնադիր-ակադեմիկոս, ՀՀ-ի պետական եռագույն դրոշակի հեղինակ, Հայաստանի Խորհրդի անդամ:

Հրաւիրուած էին 50-55 ներկայացուցիչ, բարեհաճել էին ներկայ լինել ժողովի սկզբում 15-16, յետոյ մինչ 20 հոգի: Բացակայում էին գլխաւորապէս այն խաւերի և հաստատութիւնների ներկայացուցիչները, որոնք կարող էին և պարտաւոր էին հանգանակութեան մեծ գործը կազմակերպել: Իսկ ներկանները, մեծ մասամբ ուսուցիչներ, լրագրողներ և այլն, հանգանակութեան գործի համար սակաւ օգտակար մարդիկ էին:

Չնայելով այս յուսահատական դրութեան, որ ամօթի կնիք է դրոշմում Թիֆլիսի հայ ուսնոր դասակարգի ճակատին իր քար անտարբերութեան պատճառով դէպի իր հարազատ եղբայրը, ժողովը բացուեց Հ. Եաղճեանի նախագահութեամբ և անցաւ խնդիրների քննութեան:

Ամենից առաջ Ազգային Խորհրդի գործադիր մարմնի և գաղթականական բաժնի կողմից զեկուցումն արաւ պ. Յ. Արղութեանը ֆինանսական դրութեան մասին: Նրա ասելով՝ Գաղթականական Խորհուրդը մի տարուայ ընթացքում ծախսել է 11 միլիոն ռուբլուց աւելի: Իսկ այժմ այդ ծախքերն աւելացել են անհամեմատ չափերով: Ներկայումս գաղթականների միայն 50 տոկոսին օրական մէկ ու կէս ֆ[ունտ] հացով օգնելու համար հարկաւոր է ամսական 4 միլիոն ռուբլի: Սրա վրայ պէտք է աւելացնել վերադարձի հետ կապուած ծախքերը, որ անհրաժեշտ պիտի լինեն ամենամօտիկ ապագայում: Ոչ պակաս խոշոր ծախքեր է պահանջում նաև որբերի խմանատարութիւնը, որոնց թիւը 10-15 հազար է, մի գուցէ և աւելի: Այսպիսով առաջիկայ երեք ամիսների համար անհրաժեշտ է մօտ 20 միլիոն ռուբլի, որ պէտք է այս կամ այն ձևով գտնել: Ի հարկէ այսպիսի խոշոր գումար հանգանակութեամբ ժողովել անկարելի է, այստեղ օգնութեան պէտք է գայ և Հայաստանի կառավարութիւնը, և պարտադիր տուրք պէտք է դրուի Վրաս-

տանի ամբողջ հայութեան վրայ, և ուրիշ միջոցներ պէտք է ձեռք առնուեն: <…>

Թղթակից

Տե՛ս Թիֆլիսի հասարակութեան ներկայացուցիչների ժողովը //Ժողովրդի Ձայն, 8 նոյեմբերի 1918, N 55:

N 34

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. նոյեմբերի 8-ի նիստի մասին

Նախագահում է բժ. [Ար.] Մարգարեան:

Ազգային Խորհուրդը կարողացաւ զբաղուել միայն գաղթականական ֆինանսական խնդիրներով: Գաղթականական վարիչ Յ. Արղութեանի և Ախալքալաքի փախստականների ներկայացուցիչների ներկայացրած գրութիւնից երևաց[47], որ հայ գաղթականութիւնը Ծալկայում և Բակուրիանում ուղղակի հիւծւում է և ոչնչանում սովից և ցրտից:

Արղութեանը յայտնեց, որ վերջապէս վրաց կառավարութիւնը տուել է իր համաձայնութիւնը, որ իր ներկայացուցիչն ևս մասնակցէ այն կոմիսիային, որ պիտի գնայ գաղթականութեանը հայրենիք տեղաւորելու համար: Կառավարութեան գլուխը յայտնել է միևնոյն ժամանակ, որ եթէ բոլոր հայերը չը տեղաւորուեն Ախալքալաքում – մահմեդականների կողմից գիւղերի մեծ մասը բռնած լինելու պատճառով, այն ժամանակ վրաց կառավարութիւնը կհամաձայնէ, որ մնացածի մէկ երրորդականը տեղաւորուի Բորչալուի շրջանում, իսկ երկու երրորդականը Հայաստանի մէջ:

[47] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 10, թ. 10-11:

[Ա.] Տէր-Գրիգորեանը և ուրիշները առանձին յոյս չունենալով, որ կոմիսիան շուտափոյթ գործ կատարի, իսկ ամեն մի օրուայ յապաղումը հաւասար է 4-5 հայեր զոհի - առաջարկում են կրկին վերադարձնել գաղթականութեան Մանգլիսի և Բէլի Կլիւչի «կազարմաները», այդպիսով, թերևս մահուան ճանկերից շատերին ազատեն:

Այնուհետև խօսեց պ. [Ա.] Յովհաննիսեան ֆինանսական դրութիւնից: Պարզուեց, որ տակաւին ոչինչ դրական գործ չէ կատարուած: Յանձնարարուեց, որ անմիջապէս դիմեն հանգանակութեան և մշակեն պարտադիր տուրքի նախագիծ, որը պիտի իրագործուի Վրաստանի կառավարութեան գիտութեամբ և առաջարկութեամբ: - 3 ամիս գաղթականութեան պահելու համար կը հարկաւորուի 10-12 միլիոն ռուբլի:

Խ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 10 նոյեմբերի 1918, N 57:

N 35
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. նոյեմբերի 15-ի և 17-ի նիստերի մասին

Առաջին ժողովին նախագահում էր Իս. Յարութիւնեանը, իսկ երկրորդին Հ. Եաղճեանը[48]:

Ամենից առաջ ժողովը յոտնկայս յարգեց Երևանում չարագործի ձեռքով սպանուած խնամատարութեան մինիստր Խ. Կարճիկեանի յիշատակը և ապա անցաւ հերթական հարցերին:

---

[48] **Եաղճյան Հայկ**, ՀՅԴ-ի նշանավոր գործիչ, Թիֆլիսի քաղաքային դումայի փոխնախագահ (1917-1918), ՀՀ-ի խորհրդարանի անդամ, ՀՀ ՆԳՆ փոխնախարար:

Ա. Երզնկեանը տեղեկութիւններ տուեց Շուլաւերի դէպքերի մասին և յայտնեց, որ միջադէպը արդէն հարթուած է[49]: Թիֆլիս բերուած ձերբակալուած շուլավերցիների մասին երաշխաւոր է եղել Ազգային Խորհուրդը և նրանք շուտով կարձակուեն:

Յ. Արղութեանը զեկուցանում է գաղթականների դրութեան մասին: Որովհետև վերադարձը ձգձգւում է և ձմեռը վրայ հասնելով գաղթականներին չի կարելի թողնել լեռների վրայ, գործադիր մարմինը որոշել է իջեցնել գաղթականներին լեռներից և տեղաւորել նրանց ժամանակաւորապէս Բակուրիանում, Բէլի-Կլիւչում, Մանգլիսում, Բորժոմում, ռեկլիզիցիայի ենթարկելով բոլոր դատարկ զօրանոցներն ու ամարանոցները: Այս առաջարկն ընդունւում է:

Ե. Տէր-Մինասեան զեկուցանում է, որ Հայաստանի Կառավարութիւնից արդէն ստացուել է միլիոն ռուբլու փոխանակագիրը, գումարը յատկացուած է գաղթականներին: Պէտք է այդ դրամն ստանալու համար որոշում կայացնել և յատկացնել ֆինանս. վարիչ պ. Արամայիս Երզնկեանին գումարն ստանալ և յանձնել գաղթականական բաժնին, այդ որոշման մասին պաշտօնապէս Խորհրդի կողմից յայտնել Հայաստանի Հանրապետութեան ֆինանս. գործակալին Թիֆլիսում:

Խորհուրդը ընդունում է այս առաջարկութիւնը և որոշում է անել համապատասխան կարգադրութիւնները: <…>

Ներկայ մոմենտի մասին զեկուցանում է Ա. Երզնկեանը, շեշտելով որ անտեղի է այն անվստահութիւնը, որ Վրաստանի պարլամենտն իր ճառերով արտայայտեց ամբողջ հայ ժո-

---

[49] Վրացական զորքերն իրականացրել էին շուլավերցիների զինաթափումը, ձերբակալելով նաև տեղի վարչակազմի հայազգի անդամներին: Տե՛ս Նամակ Շուլաւերից // Աշխատաւոր, 9 նոյեմբերի 1918:

ղովրդի վերաբերմամբ: Վիրահայոց Ազգային Խորհուրդը պէտք է իր ձայնը բարձրացնէ և ապացուցանէ, որ հայ ժողովրդի դէմ ուղղուած մեղադրանքներն անհիմն են: Ժողովը որոշում է այդ մտքով մի բանաձև մշակել ու ուղարկել Կառավարութեան: Բանաձևը մշակելու համար ընտրւում է յանձնաժողով՝ Ստ. Մալխասեանի, Հ. Եաղճեանի, Ա. Տէր-Գրիգորեանի և Մատթէոս Դարբինեանի մասնակցութեամբ, որ բանաձևը պիտի խմբագրէ գործադիր մարմնի հետ միասին:

Ապա խորհուրդը լսելով Երևանից վերադարձած պատգամաւորների զեկուցումն, անցնում է գաղթականական բաժնի վերակազմութեան խնդրին, որի մասին Գործադիր մարմնի կողմից զեկուցանում է Յ. Արղութեանը, զեկուցումից յետոյ նիստը փակւում է կուորում չլինելու պատճառով և շարունակութիւնը նշանակւում կիրակի, ամսիս 17-ին:

Նոյեմբերի 17-ին արձանագրութեան ընթերցումից յետոյ պ. Ե. Տէր-Մինասեան առաջարկում է որոշում կայացնել, որ Խորհրդի նիստերը կայանան ճիշտ նշանակուած ժամանակին <…>:

Խորհրդի նախագահութիւնը ցրուած լինելով քարտուղար Մ. Դարբինեանը առաջարկում է թեկնածուների անուն տալ: Տրւում են անուններ՝ Հայ. Ժող. Կուս. կողմից Ա. Բարխուդարեան (փոխարինող՝ Ա. Մխիթարեան), սոց.-յեղափոխ. կողմից Լ. Թումանեան ([փոխարինող՝] Մ. Տէր-Ներսիսեան), Դաշնակցութեան կողմից [Դ.] Դաւիթխանեան, սոց.-դեմոկրատները խոստանում են առաջիկայ նիստին յայտնել իրենց թեկնածուների անունները:

Ապա Խորհուրդն անցնում է գաղթականական բաժնի վերակազմութեան ծրագրին և ընդունում է Գործադիր մարմնի առաջարկը որոշ փոփոխութիւններով:

Այդ ծրագրով Գաղթականական ներկայ բիւրոն վերանում է, Գործադիր մարմինը իր վրայ է վերցնում այդ բիւրոյի բոլոր ֆունկցիաները: Հիմնական, սկզբունքային կարևոր և դրամական յատկացումների խնդիրները պէտք է որոշուեն Գործադիր մարմնի կողմից, իսկ նրանց գործադրութիւնը պէտք է յանձնարարուի Գաղթ. բաժնի վարիչին: Գաղթականական բաժինն ունենալու է սանիտարական-բժշկական, պարենաւորման և վարչական մաս:

Գաղթականական բաժնի և Գործադիր մարմնի ֆինանսական բաժինները միացում են, ինչպէս և նրանց գրասենեակները:

Ազգային խորհրդի օժանդակութեամբ պահուող բոլոր որբանոցների կրթական-ուսումնական մասի ղեկավարութիւնը յանձնւում է նոյն Ազգային Խորհրդի դպրոցական մասի վարիչներին:

Ժողովի վերջում Ռ. Ենգիբարեանը հարց է տալիս, թէ ի՞նչ միջոցներ են ձեռք առնուած որբերն հաւաքելու խնդրում, որոնք թափուած են փողոցներում:

Յ. Արղութեանը բացատրութիւն է տալիս, որ այդ ուղղութեամբ ամեն միջոց գործ է դրւում և ժողովն ընդունում է նրա բացատրութիւնները բաւարար:

Չնայելով Ե. Տէր-Մինասեանի խնդրին՝ մի փոքր էլ սպասել և լսել զեկուցումն նաև դպրոցական խնդրի մասին, որ ահա շաբաթներ է, ինչ յետաձգւում է կամ ուշ լինելու, կամ կուորում չլինելու պատճառով, ժողովը ցրւում է:

Թղթակից

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 19 նոյեմբերի 1918, N 64:

N 36

Հաղորդագրություն՝ Հայ գաղթականական կազմակերպությունների Գլխավոր Խորհրդի լուծարման և Վրաստանի ՀԱԽ-ի հետ նրա կառույցների միաձուլման մասին

Նախագահ [Յ.] Արղութեանը զեկուցանում է, որ Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը հաստատել է Գաղթականական Բաժնի վերակազմութեան ծրագիրը, որով ամբողջ ղեկավարութիւնը Գործադիր Մարմինը վերցնում է իր վրայ և նա է լինելու պատասխանատու Ազգային Խորհրդի առաջ: Այսպիսով [Հայ գաղթականական կազմակերպությունների] Գլխավոր Խորհրդի Գործադիր Մարմինը համարւում է լուծուած, ֆինանսական մասը, աւելի ևս ընդարձակուելով, դառնում է Ազգ. Խորհրդի մի ընդհանուր ֆինանսական մասը, մի կառավարչի ղեկավարութեամբ:

Ազգ. Խորհրդի դպրոցական մասի վարիչները իրաւունք ունեն հսկողութիւն ունենալու բոլոր որբանոցների դաստիարակչական և կրթական մասի վրայ:

Ծանուցանելով այս մասին, պ. նախագահը շնորհակալութիւն է յայտնում [Հայ գաղթականական կազմակերպությունների Գլխավոր Խորհրդի] Գործադիր Մարմնի անդամներին նրանց թէ՛ ամբողջ գործունէութեան ընթացքում կատարած օգտակար աշխատանքների, և թէ՛ վերջին 2-3 ամսուայ ընթացքում համերաշխ և սրտացաւ գործունէութեան համար:

Գաղթականական բաժինը նոյեմբերի 22-ին լսելով իր նախագահի վերոյիշեալ զեկուցումը՝ որոշեց. –

Համաձայն Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի վճռին, համարել փախստականական Գլխաւոր Խորհրդի Գործադիր Մարմինը լուծուած:

Տե՛ս Գաղթականական բաժնում //
Ժողովրդի Ձայն, 27 նոյեմբերի 1918, N 70:

N 37

Խմբագրական առաջաբան «Նոր Հորիզոն» պարբերականում՝ Վրաստանում ազգային փոքրամասնութիւնների մշակութային ինքնավարության հրամայական խնդիրների մասին

<…> Երբ մենք ասում ենք կուլտուրական աւտոնոմիա, հասկանում ենք մի այնպիսի դրութիւն, որ ամեն մի ազգ իրաւունք պիտի ունենայ պետութեան հաշւով կառուցելու և պահպանելու իր ազգային կուլտուրական կեանքը: Օրինակ՝ հայերը Վրաստանում /կամ՝ աբխազները, թուրքերը, ռուսները, յոյները և այլն/ պիտի ունենան իրենց ընտրովի մարմինը, ասենք Ազգային Խորհուրդ: Պետութիւնը հարկ է հաւաքում անխտիր բոլոր քաղաքացիներից և այդ դրամով պահում զանազան հաստատութիւններ: Պետութեան պարտքն է՝ կրթական-կուլտուրական նպատակների համար յատկացուած ամբողջ գումարը համեմատական չափով բաժանել – նայած ամեն մի ազգի թիւն - ազգութիւնների ընտրովի մարմինների մէջ, որոնք և պիտի պահեն կուլտուրական հաստատութիւնները /դպրոց, թատրոն, գրականութիւն և այլն/: Ապա, նոյն ազգային մարմիններին միայն պիտի վերապահւի այդ կրթական-կուլտուրական հաստատութիւնների ղեկավարութիւնը, ոգի և ուղղութիւն, բովանդակութիւն տալը: <…>

Հայկական դպրոցները թւով աւելի պակաս են, քան վրացական կամ ռուսական դպրոցները, չնայած որ հայերը Թիֆլիսի մէջ իրենց թւով առաջին տեղն են բռնում[50]: Այդ դպրոցների հսկողութեան և ղեկավարութեան մէջ ևս Ազգային Խորհուրդը որևէ մասնակցութիւն չունի: <…> Այսպէս են հասկանում «ռեֆորմը» վրացի սոցիալիստները: Երբ այդ անում էին ցարական ռեժիմի սպասաւորները, այդ որակւում էր որպէս «ռուսիֆիկացիա», իսկ երբ այդ անում են իրենք՝ կոչում են «նացիոնալիզացիա»[51]:

Տե՛ս Լեզուի խնդիրը //
Նոր Հորիզոն, 29 նոյեմբերի 1918, N 9:

---

[50] Թիֆլիսը մեծ մասամբ բնակեցված էր հայ (43.1%), ռուս (26.5%) և վրացի (10.8%) ազգաբնակչությամբ: Տե՛ս Кавказский Календарь на 1917г., Тифлис, 1916. էջ 206-207:

[51] Ազգայնացման, իմա՝ վրացացման քաղաքականության հետևանքները մեծ մասամբ մեկուսացրին և օտարեցին Վրաստանի ազգային փոքրամասնությունները նրա կառավարական, օրենսդրական, վարչական մարմիններիի գործունեությունից: Վրաստանի ՆԳՆ-ի 1918 թ. հուլիսի 20-ին արձակած «ազգայնացման մասին կանոնադրության» հիման վրա աշխատանքից ազատվեցին ոչ միայն վարչական մարմիններում ծառայող և վրացերենին չտիրապետող պաշտոնյանները, այլև պետական ենթակայության տակ գտնվող բոլոր հիմնարկներում աշխատող շատ ու շատ բժիշկներ, ուսուցիչներ, բանվորներ, փոստ-հեռագրական ծառայողներ: Այսպիսով՝ ամենատարածված և հուսալի աշխատանքը՝ պետական ծառայությունը, գործնականում հայ, ռուս և այլազգի մտավորականության, առհասարակ կրթված ոչ վրաց զանգվածի համար գրեթե մնում էր անհասանելի, քանի որ բոլոր պաշտոնները, որպես կանոն, վերապահվում էին վրացիներին:

N 38

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 2-ի նիստի մասին

Նախագահում է Արշակ Բարխուդարեան:

Ժողովը բանալով նախագահը կարդում է Դաշնակցութեան ֆրակցիայի ներկայացուցիչ [Դ.] Դաւիթխանեանի մի գրութիւնը, որով խնդրում է այդ նիստը յետաձգել և առհասարակ խուսափել երկուշաբթի օրերը նիստ նշանակելուց, որովհետև այդ օրը ինքը և իր ընկերները քաղաքային դումայում պիտի լինեն: Ներկայ գտնուող պ. [Հ.] Եաղճեանը բերանացի բացատրութիւններ է տալիս, որ իրենց այդ օրուայ քաղաքային նիստի ներկայութիւնն անհրաժեշտ է:

Ժողովը ի նկատի ունենալով, որ նիստին բացակայելու է մի ամբողջ ֆրակցիա, որոշեց այնուհետև երկուշաբթի օրերը նիստը չը նշանակել, սակայն այսօր յետաձգել օրակարգի բոլոր խնդիրները՝ բացի մի անյետաձգելի խնդրից, որ վերաբերում է Նուխուայ գաղթականութեան: Նուխու գաղթականութեան թշուառ և անելանելի դրութեան մասին զեկուցում է Ա. Երզնկեանը՝ կարդալով մի հեռագիր, որով անմիջական օգնութիւն են աղերսում Նուխու փողոցներում թափուած մերկ, սովալլուկ որբիկների և գաղթականութեան համար: Զեկուցումը լրացրեց Նուխուայ Հայրենակցական Միութեան ներկայացուցիչ պ. Տէր-Պողոսեան՝ տալով մի քանի մանրամասնութիւններ: <…>

Ազգային Խորհուրդը մտքերի փոխանակումից յետոյ հաստատեց Գործադիր մարմնի որոշումը – ուղարկել անմիջապէս 50000 ռ. Նուխուայ գաղթականութեան կարիքների համար: Ժողովը միաժամանակ յանձնարարեց Գործադիր մարմնին՝

հնարաւոր եղածին չափ հոգ տանել նաև օժանդակելու բժշկա-սանիտարական կողմից:

Այնուհետև Գործադիր Մարմինը առաջարկում է հաստատել իր որոշումը պոստ-հեռագրական գործազուրկ հայ ծառայողների ներկայացուցիչների վերաբերմամբ՝ տալով նրանց 1500 ռուբլի, որ գնան Հայաստան ու կառավարութեան ներկայացնեն իրենց անտանելի կացութիւնը. ամեն ինչի ազգայնացումով այստեղ նրանք սովի են մատնուած, ուստի նրանք այժմ միայն իրենց հմայութիւնն ու արուեստը Հայաստանում են կարող գործադրել:

Ժողովը հաստատեց և այդ որոշումը: <…>

Խ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 6 դեկտեմբերի 1918, N 77:

N 39
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 6-ի նիստի մասին

Նիստը բացւում է երեկոյեան ժամը 6-ին նախագահութեամբ Դ. Դաւիթխանեանի:

Նախորդ նիստի արձանագրութիւնը կարդալուց և վաւերացուելուց յետոյ՝ նախ խօսք է տրւում Հ. Եաղճեանին (դաշ.), որ մի ընդարձակ ճառով մանրամասն բացատրում է քաղաքային առաջիկայ ընտրութիւնների հանգամանքները: Պարզւում է, որ հպատակութեան օրէնքը և մի քանի ուրիշ միջոցներ ընտրութիւնների շուրջը այնպիսի դրութիւն են ստեղծելու, որ այդ ընտրութիւններին մասնակցել կը կարողանան բոլոր վրացիները, իսկ օտար ազգիներից միայն շատ քչերը.

հայ ազգաբնակութեան ամենամեծ տոկոսը յամենայն դէպս դուրսը կը մնայ և ընտրութիւններին մասնակցել կը կարողանայ միայն 10-20 տոկոսը: Հարկաւոր է միջոցներ գտնել այս անլուր անարդարութեան առաջն առնելու և հայ ազգաբնակութեանն ապահովելու իր քաղաքացիական իրաւունքները:

Խնդիրը մանրամասնօրէն քննելուց յետոյ՝ Խորհուրդը գալիս է այն եզրակացութեան, որ նախքան ազգաբնակութեան ցուցակագրութիւնն սկսելը առաջիկայ ընտրութիւնների համար՝ անհրաժեշտ է հպատակութեան օրէնքը լրացնել համապատասխան բացատրութիւններով և առհասարակ հետևել այս գործին հայ ազգաբնակութեան շահերի ապահովութեան տեսակէտից: Այդ նպատակն իրագործելու համար ժողովն ընտրում է մի յանձնաժողով՝ բաղկացած գործադիր մարմնի անդամներից և նոր չորս անձերից, որոնք են պատգամաւորներ՝ [Պ.] Դոլուխանեան, [Հ.] Եաղճեան, Լ. Թումանեան և [Լ.] Էլբակեան:

Երկրորդ՝ գերիների և ինվալիդների խնամատարութեան և հայրենիք ճանապարհ դնելու մասին զեկուցանում է Յ. Արղութեան (դաշն.): Պարզւում է, որ սկզբում, քանի դեռ գերիների և ինվալիդների թիւը քիչ էր և Հայաս. Հանրապետ. հաւատարմատար պ. Ա. Ջամալեանն էլ միջոցներ չունի իր ձեռքի տակ, նրա խնդրով գերիների և ինվալիդների հոգսը իր վրայ էր վերցրել Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը, որ և այդ նպատակի համար յատուկ գումար էր բաց թողել: Այդ հոգատարութիւնը կատարւում էր կանոնաւոր կերպով և յատկացուած գումարի մի մասն արդէն ծախսուած էր գերիների և ին-

վալիդների[52] վրայ Գաղթականական բաժնի միջոցով, երբ ստացուեց պ. Ա. Ջամալեանից մի պաշտօնական գրութիւն, թէ Հայաստանի Կառավարութիւնը առանձին գումար է յատկացրել գերիների և ինվալիդների համար և յանձնարարել է իրեն այդ գործը վարել: Ազգային Խորհրդի Գործադիր Մարմինը ի հարկէ անմիջապէս յանձնեց պ. Ա. Ջամալեանին բոլոր հաշիւներն ու գերիների խնամատարութեան գործը: <…>

Այժմ էլ ստացուած է արտաքին գործոց նախարար [Ս.] Տիգրանեանից մի հեռագիր, որով խնդրում է Ազգային Խորհրդի գաղթականական բաժնին՝ իր վրայ վերցնել առժամանակ գերիների և ինվալիդների խնամատարութիւնը, որի համար օրինագիծ է մտցնում պարլամենտ և գումար է յատկացնելու այդ առթիւ: Հեռագիրը շատ էլ պարզ չէ, բայց կասկած չկայ, որ բոլոր ծախսերը պիտի կատարուեն ի հաշիւ Հայաստանի կառավարութեան: Գործադիր Մարմինը մինչ այդ այս խնդիրը Խորհուրդ մտցնելով՝ խնդրում է նրա թոյլտուութիւնը այդ գործը վարելու: Խորհուրդը յանձնարարում է Գործադիր Մարմնին կազմակերպելու և վարելու այդ գործը:

Երրորդ՝ լսելով Մուշեղեանի (ս.-ր.) համառօտ զեկուցումը Հիւսիսային Կովկասի գաղթականների վերադարձի մասին, Խորհուրդը առաջարկում է Գործադիր Մարմնին զբաղուել այդ հարցով: <…>

Հինգերորդ՝ Ե. Տէր-Մինասեան (Հայ Ժող. կուս.) զեկուցանում է դպրոցական գործի մասին: Յիշելով, որ վրաց կառավարութեան լուսաւորութեան մինիստրութիւնը մինչև վերջին շաբաթները կտրական կերպով մերժում էր Հայոց Ազգ. խորհրդի

---

[52] Խոսքը Գերմանիայից և Ավստրա-Հունգարիայից տուն վերադարձող հայազգի նախկին ռազմագերիների մասին է:

մասնակցութեան իրաւունքը դպրոցական գործում որևէ ձևով, նոյնիսկ գործին ծանօթանալու և տեղեակ լինելու համար, միջնակարգ դպրոցների վարիչը այնուհետև զեկուցանում է գործադիր մարմնի արած վերջին քայլերը բերանացի և գրաւոր դիմումը վրաց նախարարապետ [Ն.] Ժորդանիային և նրանից ստացուած նպաստաւոր պատասխանը: Այնուհետև յայտնում է, որ տեսակցութիւն է ունեցել այսօր լուսաւորութեան նախարարի օգնականի հետ, որ և համաձայնելով իր տեսակետի հետ, կարգադրել է անմիջապէս բոլոր գիմնազիաներից պահանջել հայկական առարկաների ծրագիրը և դնել իր տրամադութեան տակ, որպէսզի այդ ծրագիրների հետ տեսականօրէն ծանօթանալուց յետոյ անցնի գործնականօրէն ծանօթանալու իւրաքանչիւր գիմնազիայում հայկական առարկաների դասաւանդութեան հետ:

Խորհուրդն ընդունում է պ. Ե. Տէր-Մինասեանի զեկուցումը ի տեղեկութիւն:

Վեցերորդ՝ տարրական դպրոցների վարիչ պ. Ա. Ստամբոլսեանը (սոցիալ-ր.) զեկուցանում է եկեղեցական-ծխական դպրոցների դրութեան մասին, յայտնում է ուսուցիչների անմխիթար վիճակը նիւթականի տեսակէտից, շատ դպրոցների պակուիլը և այլն: Այնուհետև յայտնում է, Գործադիր մարմնի որոշմամբ, Խորհրդի նշանակած 100 հազար ռուբլուց 50 հազար ռուբլին յատկացրած է մի քանի տեղերում ծխական դպրոցներ բանալու և եղածներին նպաստելու համար: Նոր դպրոցներ պիտի բացուին օրինակ Հաղբատում, Սանահնում, Կումիսում և այլն: Ի վերջոյ, Գործադիր մարմնի կողմից առաջարկում է ուսուցիչների դրութիւնը բարելաւելու և գոյութեան փոքր ի շատէ տանելի պայմաններ ստեղծելու համար դասագնի նուազագոյն չափն ընդունել 250 ռուբլի: Յայտնում է նաև,

որ դպրոցներ բանալու և հանգամանքներին <…> ծանօթանալու համար Գործադիր մարմինն արդէն աչքի առաջ ունի նշանակելու մի լիազօր:

Լսելով այս զեկուցումը՝ Խորհուրդն ընդունում է Ազգային Խորհրդի նպաստներով նոր բացուելիք դպրոցներում դասագինը նշանակել 250 ռուբլի, պարտաւորեցնելով Գործադիր մարմնին նոյնը գործադրել նաև այն բոլոր դպրոցներում, որ այդ հնարաւոր է դպրոցի նիւթական ապահովութեան տեսակէտից:

Եօթերորդ՝ ֆինանսական յանձնաժողովի կողմից Հ. Եաղճեանը (դաշն.) յայտնում է, որ մշակւում է մանրամասն զեկուցագիր Խորհրդի ֆինանսական կարիքների բաւարարութեան համար, որի հետևանքով պէտք է պարտադիր տուրք դրուի հայ հասարակութեան վրայ, ի հարկէ համապատասխան օրինագիծ մտցնելով վրացական պարլամենտ: Իսկ մինչև այն՝ անհրաժեշտ է միանուագ տուրք ժողովել հայ հարուստներից, որի համար ֆինան. յանձնաժողովը խնդրում է Խորհրդին արտայայտուել, թէ նա համաձայն է սկզբունքով ստիպողական միջոցների դիմելու չվճարողների վերաբերութեամբ, թէ ոչ:

Ազգային Խորհրդի սոցիալիստական երեք ֆրակցիաները իրենց համաձայնութիւնն են յայտնում ստիպողական միջոցների դիմելու՝ վճարել չը ցանկացողների վերաբերութեամբ, իսկ Հայ Ժողովրդական Կուսակցութեան ֆրակցիան կտրուկ կերպով յայտարարում է, որ ինքը կողմնակից լինելով պարլամենտով անցկացրած ստիպողական թէ՛ միանուագ և թէ՛ մշտական տուրքին, նրանց գանձումը պետական միջոցներով: Ո՛չ մի ձևով և ո՛չ մի նկատառումով, չէ կարող համաձայնել այլ կերպ բռնութիւն գործ դնելու քաղաքացիների վրայ:

Ուշ լինելու պատճառով ժողովը փակւում է ժամը 10 և կէսին:

Թղթակից

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 10 դեկտեմբերի 1918, N 80:

N 40
«Ժողովրդի Ձայն» լրագիրը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 10-ի արտահերթ նիստի մասին

Դեկտեմբերի 10-ին տեղի ունեցաւ Վիրահայ Ազգային Խորհրդի արտակարգ նիստը, որն զբաղուեց Սանահնի դէպքերի խնդրով: Ա. Երզնկեանը Սանահնի դէպքերի մասին զեկուցում տալուց յետոյ Խորհուրդը որոշեց՝ 1) Նկատի ունենալով, որ վրաց կառավարութիւնը մի պատգամաւորութիւն է ուղարկում Սանահին ներքին գործերի նախարարի օգնական [Գ.] Մախարաձեի ղեկավարութեամբ, մի պատգամաւորութիւն ևս ուղարկել նաև Վիրահայ Ազգային խորհրդի կողմից, ծանօթանալու է դէպքերի մասին տեղն ու տեղը և միջոցներ է ձեռք առնելու միջադէպը լուծելու, 2) Իրական քայլերի դիմել, որպէս զի Հայաստանի և Վրաստանի կառավարութիւնները վերջնականօրեն լուծեն սահմանագծային վէճը: Վերջում կայացաւ պատգամաւորութեան ընտրութիւն: Պատգամաւորութիւնը Սանահին մեկնեց երէկ առաւօտեան:

Տե՛ս Վիրահայ Ազգ. Խորհրդում //
Ժողովրդի Ձայն, 12 դեկտեմբերի 1918, N 82:

N 41
«Աշխատավոր» լրագիրը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 10-ի արտահերթ նիստի մասին

Ազգային խորհրդի դեկտ. 10-ի արտակարգ նիստը հրաւիրուած էր Սանահնի միջադէպի քննութեան համար: Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ վերջին ժամանակներս գաղթականները յատուկ գնացքներով ուղարկւում են Ղարաքիլիսա և որ այդ միջադէպը ընդհատում է գաղթականական բաժնի աշխատանքները, գործադիր մարմինը հրաւիրել էր Խորհրդին, նրանից որոշ դիրեկտիւներ ստանալու համար:

Գործադիր Մարմնի կողմից տրուած զեկուցումից պարզւում է, որ Սանահնում կանգնած տաճկական էշելոնի վրայ բարձրունքներից սկսել են քարեր տեղալ: Լեռներից ևս սկսւել է հրաձգութիւն և այսպիսով համարեա 10 ժամ տևող հրաձգութեան ժամանակ պահակներից եղել են մի քանի զոհեր: Տաճկական էշելոնը անմիջապէս հեռացւում է դէպքերի վայրից:

Ենթադրւում է, որ յարձակւողները շրջակայ գիւղացիներն են, որոնք անկարող լինելով հանդուրժել այլևս կատարւող բռնութիւններն ու անարդարութիւնները, ուզեցել են այս կամ այն ձևով իրենց վրայ գրաւել կառավարութեան ուշադրութիւնը: Մտքերի կարճատև փոխանակութիւնից յետոյ խորհուրդը միաձայն որոշեց հրահանգել կարգադիր մարմնին:

1. Դիմել Վրաստանի կառավարութեանը և խնդրել դադարեցնել Բորչալուի, Լոռու և Ախալքալաքի վիճելի շրջաններում զօրակոչը:

2. Պահանջել դադարեցնել բոլոր ռեկւիզիցիաները և պարենաւորման ու այլ մթերքների բռնագրաւումները:

3. Ուղարկել մի յատուկ դելեգացիա տեղնուտեղը ծանոթանալու համար Լոռում տեղական իշխանությունների և զորքերի կողմից կատարված հակաօրինական քայլերի և բռնությունների հետ:

4. Խնդրել կառավարությունից արագացնել հայ-վրացական սահմանագծային կոնֆերենցիայի գումարումը, որովհետև սահմանագծային թիւրիմածութիւնները աննպաստ ազդեցութիւն են գործում հայ-վրացական յարաբերութիւնների վրայ:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 1918, 12 դեկտեմբերի, N 205:

N 42
Վրաստանի ՀԱԽ-ի պատվիրակության հեռագիրը Լոռվա դեպքերի մասին (1918 թ., դեկտեմբեր)

Ալլահվերդի, 12 դեկտ.

Պատուիրակութիւնը ապահով հասաւ Ալլահվերդի: Հախպատ կայարանում հրաւիրեցին շրջակայ գիւղերի ներկայացուցիչներին՝ պարզելու իրերի դրութիւնը:

Դէպքերը կրում են տեղական բնոյթ: Պատուիրակութիւնը ձեռք առաւ բոլոր միջոցները հաղորդակցութիւնը վերականգնելու Ակորի, Ուզունլար[53] , Ագուի և այլ գիւղերի միջև, որտեղից ծագում էին առել դէպքերը: Յոյս ունենք հաշտութեամբ վերջացնել: Հայաստանի Կառավարութեան պատուիրակութիւնը, որը [Ս.] Մդիւանու հետ միասին, ճանապարհները

[53] Այժմ՝ Օձուն:

փչացած լինելու պատճառով կանգ է առել, նոյնպէս միջոցներ է ձեռք առնում: Աշխատում ենք կապ պահպանել նրանց հետ:

[Ա.] Երզնկեան, [Պ.] Դոլուխանեան, [Լ.] Թումանով:

Տե՛ս Վերջին ժամ. Թիֆլիս, Հայոց Ազգային Խորհրդին // Ժողովրդի Ձայն, 14 դեկտեմբերի 1918, N 83:

N 43
«Ժողովրդի Ձայն» պարբերականը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 13-ի նիստի մասին

Նիստը բացւում է ժամը 6-ին նախագահութեամբ Դ. Դաւիթխանեանի:

Ամենից առաջ ժողովն զբաղւում է աբսենտէիզմի[54] հարցով և միջոցներ են առաջարկում Ազգային Խորհրդի նիստերը արդիւնաւոր և կանոնաւոր դարձնելու համար: Այս առթիւ կարդացւում է պատգամաւոր Դաւիթխանեանի գրաւոր առաջարկը՝ Ազգային Խորհրդի կազմը անփոփոխ դարձնելու մասին:

Այս խնդրի շուրջը տեղի են ունենում տաք վիճաբանութիւններ. Բ. Թոփչեան (դաշն.) և Հ. Եաղճեան (դաշն.) առիթից օգուտ են քաղում միանգամ էլ յարձակուելու Ազգային Խորհրդի վրայ առհասարակ և պահանջելու նրա ցրումը, պատճառաբանելով, թէ ժողովները չեն կայանում, որովհետև պատգամաւորներն ընտրուած չեն, այլ կուսակցութիւնների կողմից են նշանակուած և ուրեմն՝ աւելի պակաս չափով ունեն պատասխանատուութեան զգացումն:

[54] Խոսքը բացակայության մասին է, իմա՝ անգլերեն «absent» բառը:

Այս տեսակէտի դէմ առարկում են շատերը, գլխաւորապէս Լ. Թումանեան (ս.-դ.), որ յայտնում է թէ քաղաքային դումայի նիստերն էլ շատ անգամ չեն կայանում, թէև նրա անդամներն ընտրուած են ամենակատարեալ ձևով և Ա. Մելքոնեան (ս.-դ.), որ խորհուրդ է տալիս դաշնակցականներին ազնիւ լինել և պարզ կերպով յայտարարել, որ իրենք առհասարակ հակառակ են Ազգային Խորհրդի գոյութեանը, որովհետև մինչև այժմ սովոր են եղել հայոց ազգի բախտը տնօրինել ըստ իրենց հայեցողութեամբ, ամեն տեղ մեծամասնութիւն լինելով, այն ինչ այստեղ՝ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդում մեծամասնութիւն չեն և իրենց կամքը թելադրել չեն կարողանում: Դաշնակցականների դժգոհութեան գլխաւոր հիմքն այս է, որից բղխում են նրանց բոլոր անտեղի յարձակումները: <…>

Վերջ ի վերջոյ ժողովն ընդունում է Դ. Դաւիթխանեանի (դաշն.) առաջարկը Խորհրդի կազմը անփոփոխ դարձնելու մասին և յանձնարարում է ֆրակցիաներին ներկայացնել 8-ական անդամների և 4-ական փոխ-անդամների ցուցակը: Փոխ-անդամները կարող են անդամներին փոխարինել միայն այն դէպքում, երբ որ անդամներից որևէ մէկը իսպառ հրաժարուի իր պարտականութիւնները կատարելուց: Բացի սրանից՝ որոշւում է Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի կազմից դուրս եկած համարել այն անդամներին, որոնք երեք անգամ իրար ետևից, առանց յայտնի կացուցանելու ֆրակցիաների և խորհրդի նախագահութեանը պատճառների մասին, կբացակայեն Խորհրդի նիստերին:

Ա. Ստամբոլցեան (ս.-դ.). Առաջարկ է մտցնում փոխել նախկին որոշումը, որի համաձայն Ազգային Խորհրդի նիստերն սկսուելու են ժամը 6-ից 15 րոպէ անցած: Ժողովը միաձայն մերժում է այս առաջարկութիւնը:

Այնուհետև ժողովն անցնում է Սանահնի դէպքերի քննութեանը: Պատգամաւոր Ա. Երզնկեան (ս.-դ.) մանրամասն զեկուցում է տալիս, որ լրացնում է Լ. Թումանեան (սոց.-դեմ.)[55]: Այդ զեկուցումներից պարզւում է, որ դէպքերը մասնաւոր բնոյթ են կրում, առաջ են եկել բեկվիզիցիայի առթիւ կատարուած բռնութիւնների պատճառով և ո՛չ մի հիմք չկայ ենթադրելու հայկական զինուորական մասերի մասնակցութիւնը տեղի ունեցած ընդհարումների մէջ: Առաջարկում է կրկին անգամ պատգամաւորութիւն ուղարկել և անպատճառ ընկնել Ուզունլար գիւղը, որ դէպքերի կենտրոնն է համարւում:

Ժողովը որոշում է երկու պատգամաւորութիւն ուղարկել. մէկը՝ երկաթուղով և վրաց կառավարութեան ներկայացուցիչների հետ դէպի Սանահին, իսկ միւսը Վորոնցովկայի[56] վրայով դէպի Ուզունլար՝ գիւղացիների հետ տեսնուելու և խնդիրը հարթելու համար, նախապէս վրաց կառավարութեան հետ համաձայնութեան գալով, որ հարցը խաղաղութեամբ վերջացնելու դէպքում՝ պատժիչ զօրամասեր չեն ուղարկուի գիւղերը և սահմանավէճն էլ կը յարդարուի Հայաստանի և Վրաստանի կառավարութիւնների փոխադարձ համաձայնութեամբ, մանաւանդ որ Հայաստանի հանրապետութեան արտաքին գործերի մինիստր [Ս.] Տիգրանեանը և Վրաստանի դիւանագիտական ներկայացուցիչ [Ս.] Մդիւանին արդէն ճանապարհին են և միայն ճանապարհների փակուելու պատճառով չեն կարողանում հասնել Թիֆլիս:

Ապա՝ Ազգային խորհուրդն անցնում է Գործադիր Մարմնի բժշկա-սանիտարական և տնտեսական-պարենաւորման

---

[55] Բնագրում այդպես է, պետք է լինի՝ սոցիալիստ հեղափոխական:
[56] Այժմ՝ Տաշիր:

բաժինների վարիչների, ինչպէս և վերահսկիչի ընտրութեանը: Մի քանի րոպէ ընդմիջումից յետոյ՝ ձայների մեծամասնութեամբ ընտրում են բժշկա-սանիտարական մասի վարիչ՝ բժիշկ Կ. Ստեփանեան (Հայ Ժող. Կուսակցութիւն), տնտեսական-պարենաւորման վարիչ՝ Ա. Յովհաննիսեան (ս.-դ.) և վերահսկիչ՝ Յովսեփ Խունունց (անկուսակցական):

Ժողովի վերջում Խորհուրդն զբաղւում է Գ. Տէր-Ստեփանեանի (դաշն.) հարցապնդումով:

Պատգամաւոր Տէր-Ստեփանեանը Խորհրդի ուշադրութիւնն է հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ընտրական-օրենսդրական յանձնաժողովը մատնուած է անգործունէութեան, մինչդէռ անհրաժեշտ է, որ նա օր առաջ գործի անցնի և միջոցներ մշակի Ազգային Խորհրդի օրինաւոր ընտրութիւններ կատարելու համար: Քանի անգամ նիստեր են նշանակուել, բայց այդ նիստերը չեն կայացել, որովհետև յանձնաժողովի անդամները չեն բարեհաճել ներկայ գտնուել:

Վիճաբանութիւնների ընթացքում յիշատակւում է, որ Ազգային Խորհրդի միւս յանձնաժողովներն էլ մինչև այժմ գործունէութիւն չեն ցոյց տուել, որ անթոյլատրելի է:

Յատկապէս ընտրական-օրէնսդրական յանձնաժողովի նկատմամբ նոր ընտրութիւններ են կատարւում և նախկին ութ անդամի փոխարէն ընտրւում են 4 հոգի (Ա. Բարխուդարեան, Լ. Թումանեան, Գ. Տէր-Ստեփանեան և էսդեկների ներկայացուցիչը, որի անունը կը յայտնուի երկու օրից յետոյ), որոնց յանձնարարւում է անմիջապէս գործի անցնել և երեք շաբաթուայ ընթացքում իրենց կազմած ծրագիրը ներկայացնել Ազգային Խորհրդին, հրաւիրելով իրենց նիստերին կօօպտացիայի իրաւունքով նաև դրսից կարևոր ուժերի:

Գաղթականական մասի վարիչ Յ. Արղութեանի (դաշն.) բացակայութեան պատճառով (նախագահը յայտնեց, որ պ. Արղութեանը հիւանդ) է) յետաձգուեց հետևեալ նիստին պատգամաւոր Ա. Տէր-Գրիգորեանի (ս.-դ.) հարցապնդումը գաղթականական գործի ներկայիս միանգամայն անբաւարար և ողբալի վիճակի մասին, համեմատելով այն դրութեան հետ, որի մէջ էին գաղթականները պ. [Յ.] Արղութեանի պաշտօնի մտնելուց առաջ:

Ժողովը փակւում է ժամը 9 և կէսին:

Թղթակից

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 18 դեկտեմբերի 1918, N 84:

N 44
«Աշխատավոր» պարբերականը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 13-ի նիստի մասին

Օրակարգ.

1. Զեկուցում Սանահին մեկնած դելեգացիայի:
2. Պարենաւորման, բժշկա-սանիտարական բաժնի վարիչների և գլխաւոր վերահսկիչի ընտրութիւններ:
3. Աբսենտիզմի վերացման խնդիրը:
4. Հարցապնդում Խորհրդի ընտրական-օրէնսդրական կոմիսսիայի գործնէութեան մասին:
5. Հարցապնդում գաղթականական բաժնի գործնէութեան մասին:

Ազգային խորհրդի որոշման համաձայն, Սանահին մեկնած դելեգացիան վերադառնալով Թիֆլիս տեղեկացրեց Խորհրդին, որ նրան չի յաջողուել որևէ գործնական արդիւնքի

հասնել: Պարզւել է միայն, որ շարժումը ունի զուտ տեղական բնոյթ, որ ռազմական գործողութիւնները վարում են մէկ կողմից գիւղացիները, միւս կողմից վրացական կանոնաւոր զօրքերը:

Սկզբնապատճառն է համարւում այն հանգամանքը, որ գիւղերում այս կամ այն օրինական պատրւակի տակ տեղական վրացական իշխանութիւնները գործում են անասելի բռնութիւններ: Ըստ երևոյթին համբերութիւնից դուրս եկած գիւղացիները որոշել են ինքնապաշտպանութեան դիմել: Պատւիրակութեանը յաջողւել էր համոզել վրաց հրամանատարութեանը չռմբակոծել Սանահինը և մօտակայ գիւղերը, մինչև որ կը յաջողւի խնդիրը խաղաղ կերպով լուծել: Դելեգացիան վերադարձել է ցուցմունքներ ստանալու համար:

Խորհուրդը որոշեց.

Ստանալով վրաց կառավարութիւնից գարանտիաներ, որ գործողութիւնների դադարեցնելու դէպքում շրջակայ գիւղերը չեն ուղարկւի պատժիչ զօրամասեր և չեն գործադրւի բռնի միջոցներ, ուղարկել երկու պատւիրակութիւն. մեկը դէպի Ուզունլար համոզելու գիւղացիներին վերջ տալու գործողութիւններին, միւսը Սանահին շարունակելու բանակցութիւնները վրաց հրամանատարութեան հետ:

2. Բաց քւէարկութեամբ պարենաւորման բաժնի վարիչ ընտրւում է Ա. Օգանեզովը, բժ. սանիտարական՝ բժ. [Կ.] Ստեփանեան և գլխ. վերահսկիչ - [Յ.] Խունունց:

3. Խորհրդում նկատւող աբսենտիզմի վերջ տալու համար ընկ. Դ. Դաւիթխանեանը առաջարկում է ա)կազմել խորհրդի իսկական անդամների և փոխանդամների լիակատար ցանկը, բ)թեկնածուներին ձայն տալ միայն այն ժամանակ, երբ խորհրդի անդամը կը հրաժարւի իր կողմից, գ)համապատաս-

խան փոփոխութիւններ մտցնել նակազի մէջ: Առաջարկութիւնները ընդունում են:

4. Ընկ. Գ. Տէր-Ստեփանեանի հարցապնդումից պարզւում է, որ ընտրական-օրէնսդրական կոմիսիան, որ պարտաւոր էր մշակել ապագայ ազգային խորհրդի ընտրութիւնների նախագիծը, բնաւ ոչ մի քայլ այդ ուղղութեամբ չի կատարել:

Ընկ. Բ. Թոփչեանը դրա պատճառը գտնում է նրանում, որ մի քանի ֆրակցիաներ բնաւ շահագրգռուած չեն այդ ընտրութիւններով: Գտնում է, որ Խորհուրդը ոչ մի բարոյական կամ իրաւական հիմունք չունի իր գոյութիւնը շարունակելու: Կտրուած մասսաներից, անկարող որևէ գործ անել, չզգալով և ոչ մի պատասխանատուու[թիւն] աշխա[տանքի] հանդէպ, այդ մարմինը մի քառանկիւնի անախրոնիզմ է: Պէտք է վերջապէս պարզօրէն դրւի ինքնացրման և ընտրութիւններ նշանակելու հարցը: Առաջարկում է փոփոխել կոմիսսիայի կազմը և տալ նրան 3 շաբաթ ժամանակ ընտրութիւնների նախագիծ մշակելու համար:

Առաջարկներն ընդունւում են:

5. Գաղթականական գործի վերաբերեալ հարցապնդումը յետաձգւում է, համապատասխան բաժնի վարիչի հիւանդ և բացակայ լինելու պատճառով:

Արմիկ

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգ. Խորհուրդ //
Աշխատաւոր, 17 դեկտեմբերի 1918, N 207:

N 45

Ախալքալաքցիների հայրենակցական միության վարչության փոխնախագահ Գր. Պապոյանի կարծիքը՝ Վրաստանի ՀԱԽ-ի կողմից գաղթականներին ցուցաբերած օգնության մասին

<…> Այն օգնութիւնը, որ ցոյց է տալիս Վիրահայ Ազգային Խորհրդի գաղթականական բաժինը (նախկին Գլխաւոր Խորհուրդը միացեալ հայ գաղթականական հիմնարկութիւնների) աննշմարելի է և ունի ձևական բնոյթ, իրականօրէն ոչ մի օգուտ չի տալիս գաղթականութեան, որովհետև այնտեղ, ուր պահանջւում է տասնեակ միլիոններ, Ազգային Խորհուրդը հնարաւորութիւն ունի ծախսելու միայն մի քանի հարիւր հազար ռուբլի: Յիշեալ ընկերութիւնը, որ լարել է իր բոլոր ուժերը և միջոցները, մի գաղթականի վրայ ամսական ծախսել է հինգ ռուբլուց ոչ աւելի <…>:

Տե՛ս Ախալքալաքի գաւառի հայ գաղթականութեան համար // Նոր Հորիզոն, 18 դեկտեմբերի 1918, N 22:

N 46

Հաղորդագրություն՝ Վրաստանի վարչապետ Ն. Ն. Ժորդանիայի և ՀԱԽ-ի լիազորների աշխատանքային հանդիպման մասին (1918 թ., 16 դեկտեմբերի)

Դեկտ. 16-ին Վիրահայ Ազգ. Խորհրդից մի պատուիրակութիւն ներկայացաւ վրաց կառավարութեան նախագահին և յայտնեց խորհրդի վերաբերմունքը դէպի հայ-վրացական միջադէպը: Պատուիրակութիւնը համարեց կործանարար երկու ժողովուրդների բախումը և Վիրահայ Ազգ. Խորհուրդը աջակ-

ցութիւնն առաջարկեց բարոյապէս ազդելու հայկական կառավարութեան վրայ վերջ տալու արիւնոտ միջադէպին:

Տե՛ս Վրաստանի Հ. Ազգ. Խորհրդի
պատուիրակութիւնը Ժորդանիայի մօտ //
Աշխատաւոր, 18 դեկտեմբերի 1918, N 208:

N 47
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի արտգործնախարար Ե. Պ. Գեգեճկորու և ՀԱԽ-ի լիազորված անդամների աշխատանքային հանդիպման մասին (1918 թ., 16 դեկտեմբերի)

Դեկտեմբերի 16-ին, երկուշաբթի օրը, ներկայացաւ արտաքին գործերի մինիստրին Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի պատուիրակութիւնը հինգ հոգուց բաղկացած, որոնց հետ ներկայ էին Ա. Զուրաբեան[57], Լ. Թումանեան, [Դ.] Դաւիթխանեան:

Պատուիրակութիւնը բացատրեց Հայոց Ազգային Խորհրդի վերաբերմունքը Վրաստանի և Հայաստանի միջև ծագած կոնֆլիկտի մասին, արտայայտելով հանդերձ այն կարծիքը, որ պատերազմը կործանիչ հետևանք կունենայ երկու հասարակապետութեան վրայ: Պատուիրակութիւնն առաջարկեց իր բարոյական աջակցութիւնը՝ Հայաստանի Կառավարութեան վրայ ազդել պատերազմը կանխելու նպատակով:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդի
ներկայացուցիչները Ե. Պ. Գեգեչկորու մօտ //
Ժողովրդի Ձայն, 19 դեկտեմբերի 1918, N 85:

---

[57] **Զուրաբով (Զոհրաբյան) Արշակ Գերասիմի** (1873-1920), անվանի սոցիալ-դեմոկրատ, Վրաստանում և Հայաստանում գործող «մենշևիկ ինտերնացիոնալիստներ» հոսանքի առաջնորդ:

N 48

«Знамя Труда» պարբերականը Վրաստանի ՀԱԽ-ի անդամների Լոռվա մարզում կատարած միջնորդական առաքելության մասին (1918 թ., դեկտեմբեր)՝ արտատպված «Ժողովրդի Ձայն»-ում

<…> Դեկտեմբերի 11-ին, երեկոյեան Թիֆլիսից դէպքերի վայրը մեկնեց մի պատուիրակութիւն, որի կազմի մէջ էին մինիստրների օգնականներ՝ [Գ.] Մախարաձեն և [Ա.] Գեղևանով, վրաց պարլամենտի և Վիրահայոց Ազգ. Խորհրդի անդամներ՝ Ա. Ա. Երզնկեան, Լ. Գ. Թումանեան և Պ. Մ. Դոլուխանեան: Պատուիրակութեանը չհաջողուեց Ալլահվերդի կայարանից այն կողմն անցնել: Պատուիրակութիւնը կանչեց Հաղբատ և Սանահին գիւղերի պատուաւոր գիւղացիներին և ուղարկեց նրանց Ուզունլար և Ակոռի գիւղերը, առաջարկելով այդ գիւղերի ներկայացուցիչներին գալ Ալլահվերդի կայարանը բանակցութիւնների համար: Սուրհանդակները ուղևորուեցին դեկտ. 12-ի առաւօտը և չվերադարձան մինչև հետևեալ օրուայ ժամը 11-ը: Դեկտ. 13-ին, ժ. 11 և կէսից վրաց զօրքերը վերանորոգեցին թնդանօթային և գնդացիրային կրակը շրջակայ բարձունքների վրայ: Գիւղացիները պատասխանում էին հրացաններով: Յաջողութեան չհասնելով և չկարողանալով կապուել Սանահնի կամ Երևանի հետ, պատուիրակութիւնը 13-ի երեկոյեան վերադարձաւ Թիֆլիս: Հակառակ Բորչալուի գեներալ գուբերնատորի[58] հաւաստիացումներին, պատուիրակութեան միահամուռ կարծիքն այն էր, որ դէպքերը սկզբում կրել են զուտ տեղական բնոյթ և նրանց մէջ հայ կանոնավոր զօրամասերը մասնակցութիւն չեն ունեցել:

---

[58] Խոսքը, հավանաբար, գեներալ Գ.Դ. Ծուլուկիձեի մասին է:

Դեկտեմբերի 15-ին Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի պատուիրակութիւնը նորից փորձ արաւ աւտոմոբիլով ներս անցնել Ուզունլար և Ակոռի գիւղերը ոլոր ճանապարհով, որպէսզի ռազմական գործողութիւններին վերջ տալ կարողանայ: Պատուիրակութեան հետ մեկնեց նաև հայոց պարլամենտի անդամ [Գր.] Տէր-Օհանեանը, որ յանձն առաւ ուղիղ հեռախօսագծով խօսել Երևանի հետ: Պատուիրակութիւնը նախապէս առել էր վրաց կառավարութեան համաձայնութիւնը դէպքերի վայրը գնալու համար, սակայն Եկատերինենֆելդ[59] գիւղի մօտ ժողովրդական գուարդիականները նրանց չե թողին անցնել և ուզում էին նրանց վրայ բռնութիւններ գործ դնել: 17-ի առաւօտեան պատուիրակութիւնը վերադարձաւ Թիֆլիս: <…>

«Знамя Труда» (Թիֆլիս, 1918 թ., N 68) թերթից
արտատպված հոդվածը
տե՛ս Ճշմարտութիւնը Սանահնի դէպքերի մասին //
Ժողովրդի Ձայն, 20 դեկտեմբերի 1918, N 86:

N 49
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1918 թ. դեկտեմբերի 29-ի նիստի մասին

Նախագահում է Ա. Բարխուդարեան:

Այն օրուանից[60], երբ կառավարութեան կարգադրութեամբ խուզարկութիւն կատարուեց Արամեանցի տանը[61], ուր գտն-

---

[59] Խոսքը գերմանացի գաղութաբնակների ավանի, այժմ՝ Բոլնիսի քաղաքի մասին է:

[60] Իմա՝ 1918 թ., դեկտեմբերի 20-ը:

[61] Խոսքը մեծահարուստ և բարերար Միքայել Արամյանցի առանձնատան մասին չէ: Թիֆլիսահայերը՝ իրենց առօրյա զրույցներում «Արամեանցի տուն» ասելով, սովորաբար ի նկատի ունեին նրան պատկանող «Մաջես-

ւում էր և Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը, դեռ Ազգային Խորհուրդը նիստ չէր գումարել. վերջապէս ամսիս 29-ին Բարեգործական Ընկ. դահլիճում կայացաւ արտակարգ նիստը, ուր քննութեան առնուեցին մի շարք խնդիրներ՝ կապուած ներկայ ծանր հանգամանքների հետ:

Արամայիս Երզնկեանի տուած զեկուցումից երևաց, որ Ազգային Խորհուրդը փաստօրէն ենթարկուած է անգործութեան, որովհետև գրաւուած է նրա շէնքը, գոյքը, ամբողջ դրամն ու պարէնը: Գաղթականական բաժինը մնացել է անելանելի դրութեան մէջ, գաղթականութիւնը տառապում է սովից ու այլ տանջանքներից և հնարաւորութիւն չկայ նրան օգնութեան հասնելու: Բացի դրանից կառավարութիւնը մեղադրում է Ազգ. Խորհրդին այն բանի մէջ, որ իբրև թէ հակակառավարական գործեր է կատարել[62]: Նա անձամբ խօսել է ներքին գործոց մինիստրի հետ[63] յիշեալ խնդիրների մասին և այն մասին, որ

տիկ» (այժմ՝ Թբիլիսի-Մարիոտ) հյուրանոցը: Դրա հարկերից մեկում այդ օրերին գտնվել է նաև ՀՀ-ի ներկայացուցչության գրասենյակը:

[62] Մինչ օրս վրաց պատմաբաններից ոմանք շարունակում են կրկնել ժամանակի բարբաջանքները, իբր ՀԱԽ-ը չարամտորեն էր տրամադրված վրաց հանրապետության հանդեպ, իր գրասենյակում գաղտնի խորհրդակցություններ է հրավիրել և դավադիր ծրագրեր է մշակել նրա դեմ, ինչպես նաև հավաքագրել է հայազգի երիտասարդներին մտադրությամբ՝ կամավորների բանակ ստեղծել Վրաստանի դեմ պայքարելու համար: Տե՛ս Вадачкория Ш. Вопросы грузино-армянских взаимоотношений в политической мысли Грузии (1918-1920). Тбилиси, 1999, с. 107-108. Այն ինչ, Վրաստանի ՆԳ նախարարը խորհրդարանի բարձր ամբիոնից խոստովանել էր, որ ՀԱԽ-ը վրաց պետության հանդեպ օրինապահ է եղել և մասնակցություն չի ունեցել որևէ դավադրության մեջ: Տե՛ս Վրացական պառլամենտ //Ժողովրդի Ձայն, 5. 01. 1919: Ինչպես տեսնում ենք, վրաց հետազոտողները միտումնավոր, թե ո՛չ, թերանում են պատմական իրողության մեջ:

[63] Խոսքը Ն. Վ. Ռամիշվիլու մասին է:

սկսուած է հայ ազգի դէմ առանձին հալածանք և թւում է, թէ հայութիւնը օրէնքից դուրս է յայտարարուած[64]:

Զեկուցումից յետոյ տեղի ունեցաւ մտքերի փոխանակութիւն: Ժողովը կայացրեց հետևեալ որոշումները:

1. Կանոնաւոր շարունակել Ազգային Խորհրդի պարապմունքները ուրիշ շէնքում:

2. Պարլամենտի հայազգի անդամները անպատճառ յաճախեն պարլամենտ, առանց ի նկատի առնելու այն հանգամանքը, որ տակաւին չեն բաւարարուած իրենց հասցրած վիրաւորանքի համար անցեալ նիստերից մէկում[65]: Պարլամենտի անդամները պէտք է բացատրեն իրենց բացակայութեան պատճառը և այն՝ թէ ի՞նչն է ստիպում իրենց յաճախել այսուհետև պարլամենտական նիստերին: Պարլամենտի հայ անդամները պէտք է մի շարք հարցապնդումներ անեն վերջերս տեղի ունեցած և տեղի ունեցող կառավարչական հալածանքների առթիւ: Ազգային Խորհուրդը ուրեմն պէտք է գործէ պարլամենտի հայ անդամների միջոցով յայտարարութիւններ անելով և ինքն անձամբ վերահասու պէտք է լինի ամեն մի ճնշման դէպքում հարկաւոր օրինական միջոցները ձեռնարկելով:

---

[64] Ինչպես ասված էր Վրաստանի խորհրդարան մտցված նրա հայ պատգամավորների հարցապնդման մեջ՝ «Թիֆլիսում և թէ Վրաստանի այլ և այլ վայրերում տեղի են ունենում բոլորովին անհիմն, անսիստեմ, մասսայական խուզարկութիւններ, ձերբակալումներ և աքսորներ հայերի, միայն նրա համար, որ նրանք հայ են»: Տե՛ս Ժողովրդի Ձայն, 25. 12. 1918:

[65] Խոսքը՝ Վրաստանի խորհրդարանում 1918 թ. դեկտեմբերի 17-ին տեղի ունեցած միջադեպի մասին է, երբ Հայաստանի կառավարության դեմ արտասանած վարչապետ Ն. ժորդանիայի ճառը ողջունող դահլիճի բուռն ծափահարություններին՝ չմիացան ներկա եղած հայազգի պատգամավորները: Վերջիններիս հասցեին հնչեցին վիրավորանքներ, վրաց պատգամավորներից ոմանք էլ բռունցքներով հարձակվեցին ՀՅԴ-ի խմբակցության անդամների վրա: Տե՛ս Վրաստանի պառլամենտում դաշնակցական պատգամաւորների բողոքը // Նոր Հորիզոն, 18 դեկտեմբերի 1918:

Եւ քանի որ ամենահրատապ հարցը մեր գաղթականութեան սոված չթողնելն էր, ուստի որոշուեց անմիջապէս ընտրել մի պատգամաւորութիւն, որ վաղն և եթ ներկայանայ կառավարութեան, որ նա կարգադրութիւն անի Ազգային Խորհրդի գոյքն ու ստացուածքը վերադարձնելու: Պատգամաւորութիւնը բաղկացած է ֆրակցիաների աւագներից. - ա) Ա. Բարխուդարեան (ժողովրդ.), բ) Ա. Թադէոսեան (դաշն.), գ) Ա. Երզնկեան (էսդէկ), դ) Ա. Յովհաննիսեան (էս-էր):

Ազգային Խորհուրդը զբաղուեց նաև քաղաքային ընտրութիւնների ցուցակագրման խնդրով: Ի նկատի ունենալով, որ այժմ հայ հասարակութիւնը ենթարկուած է ահաբեկման և հպատակութեան հարցն էլ շատ անորոշ դրութեան մէջ է, աշխատելու է, որ միաժամանակ յետաձգուի ցուցակագրութիւնը[66]:

Խ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգ. Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 31 դեկտեմբերի 1918, N 95:

N 50

Հաղորդագրություն՝ վարչապետ Ն. Ն. Ժորդանիայի և Վրաստանի ՀԱԽ-ի լիազորների աշխատանքային հանդիպման մասին (1918 թ., 30 դեկտեմբերի)

Դեկտեմբերի 30-ին, ցերեկուայ ժամը 1-ին Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի պատգամաւորութիւնը ներկայացաւ կառավարութեան նախագահ Ն. Ն. Ժորդանիային և երկա-

[66] Թիֆլիսի ընտրազանգվածի ցուցակագրությունն իրականացվել է 1918 թ. դեկտեմբերի 28-ից 30-ը, ուստի հայերի նկատմամբ իրականացվող հալածանքների ամենաթեժ պահին: Տե՛ս Քրոնիկոն // Ժողովրդի Ձայն, 31 դեկտեմբերի 1918:

բատև զրոյց ունեցաւ նրա հետ թէ՛ Թիֆլիսում վերջին օրերս տեղի ունեցող անցքերի և թէ՛ բազմաթիւ ձերբակալութիւնների և գրաւումների մասին:

Կառավարութեան նախագահը, յայտնելով այն կարծիքը, որ ներկայ պայմաններում ցանկալի չէ վիրահայոց Ազգային Խորհրդի գործունէութիւնը նրա նախկին ծաւալով և չափերով, յամենայն դէպս խոստացաւ անմիջապէս կարգադրութիւն անել, որ Խորհրդի Գործադիր Մարմինը և նրա Գաղթականական բաժանմունքը բոլորովին անարգել շարունակեն իրենց ընդհատուած գործունէութիւնը: Ինչ վերաբերում է Ազգային Խորհրդի բոլոր այն գումարներին, որոնք գրաւուած են վրաց իշխանութիւնների կողմից՝ կառավարութեան նախագահը կտրուկ կերպով յայտնեց, որ այդ գումարները, ինչպէս և Խորհրդին պատկանող այլ իրերը անմիջապէս կը վերադարձուեն ըստ պատկանելոյն[67]:

---

[67] Վրաց իշխանությունները առգրավել էին նաև մի շարք հայկական այլ կազմակերպությունների ունեցվածքը, ինչպես Կովկասի Հայ Բարեգործական Ընկերության ստացվածքը: Վերհիշելով այս անհրապույր երևույթները, Վրաստանի ՀԱԽ-ի անդամները 1921 թ. գրում էին. «Характерна конфискация имущества Армянского Благотворительного Общества, солиднаго и аполитичнаго учреждения, в то время целиком ушедшаго в дело призрения сирот <…> Власти <…> не пощадили <…>их продовольствия, а также тех 5.500 фунтов стерлингов, которые были предоставлены Обществу на нужды сирот Американским Комитетом Помощи Ближнему Востоку. Незакономерность и жестокость этой меры в отношении архи-благонадежного Общества и невинных детей – трудно было, конечно, хотя и поздно, после причинения напрасных страданий сиротам, признать грузинскому Правительству, которое вскоре вернуло Обществу конфискованное имущество; но и тут характерно то замечательное обстоятельство, что из всего конфискованнаго имущества Благотворительное Общество до сих пор не может получить этих 5500 фунт. стерлингов, и не потому, чтобы Правительство считало их не подлежащими возврату, т. к. при каждом обращении соответствующий Министр заверяет, что, конечно, правительство обязано их вернуть Обществу по принадлеж-

Քաղաքում տեղի ունեցող ձերբակալութիւնների ժամանակ կատարուող անկարգութիւնների առթիւ Ն. Ն. Ժորդանիան, որպէս կառավարութեան գլուխ յայտնել է իր զայրոյթը և հաստատ համոզմունքը, որ այդպիսի անկարգութիւնների դէմ կառավարութիւնը ձեռք կառնի բոլոր միջոցները և բոլոր մեղաւորներին ու յանցաւորներին կը պատժի ամենախիստ կերպով:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի
պատգամաւորութիւնը
կառավարութեան նախագահի Ն. Ն. Ժորդանիայի մօտ //
Ժողովրդի Ձայն, 1919, 1 հունվարի, N 1:

N 51

1918-ին Վրաստանի հայկական ժողովրդական և հայոց լեզվի (կամ՝ հայագիտական առարկաների) դասավանդմամբ պետական դպրոցների կացության մասին

<…> Դպրոցական կեանքը Վրաստանում սկսուել է պաշտօնապէս սեպտեմբերի 21-ին, բայց իրապէս կանոնաւոր պարապմունքները հոկտեմբերի 1-ից առաջ չեն եղել:

Վրաստանի կառավարութեան դպրոցական քաղաքականութեան մէջ նկատուել են և դժվարութիւն առաջացրել հետևեալ հանգամանքները.

Նախ՝ Վրաստանի կառավարութիւնը կամենալով ազգայնացման ենթարկել դպրոցները, գլխաւորապէս միջնակարգ

ности, хотя – и это характерно – уклоняется от подтверждения этого обязательства в письменной форме». Տե՛ս MEMORANDUM, Учредительному Собранию о Национальном Самоуправлении армян в Грузии. [Тифлис, 1921]. С. 43-44.

դպրոցները և բաժանելով եղած դպրոցական հաստատութիւնները երեք գլխաւոր ազգութիւնների՝ վրացիների, հայերի և ռուսների մէջ, միանգամայն ոտքի տակ տուեց տարրական արդարութեան պահանջները. այդպէս հայերը երկու անգամ աւելի աշակերտութիւն ունենալով, քան թէ վրացիները[68], ստացան անհամեմատ աւելի պակաս թուով դպրոցներ և լաւագոյն դպրոցական շէնքերն էլ յատկացուեցին վրացական գիմնազիաներին: Վրացական չորս լրիւ գիմնազիաների դէմ հայերն ստացան միայն երկուսը՝ Երրորդ արականը և Երրորդ իգականը:

Երկրորդ՝ Հայերի համար ազգայնացրած գիմնազիաների վարչութիւնը նշանակուեց Վրաստանի հանրապետութեան լուսաւորութեան նախարարութեան կողմից, առանց համապատասխան հայկական հիմնարկությունների, օրինակ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի, ցանկութիւնն ու կարծիքը հարցնելու: Այդ բաւական չէ. ազգայնացած հայկական գիմնազիաներում նշանակուեցին օտարազգի վերատեսուչներ կամ տեսուչներ, լիովին անհամապատասխան ազգայնացման պահանջներին, լոկ քաղաքական նպատակներով և ո՛չ թէ մանկավարժական[69]:

---

[68] 4800 աշակերտություն ունեցող Թիֆլիսի 6 պետական արական գիմնազիաներում 1918-1919 ուս. տարվա մեկնարկի սկզբում ուսանում էր 1600 ռուս, 1500 հայ և 900 վրաց ազգությամբ դպրոցական: Տե՛ս Տէր –Մինասեան Ե. Դպրոցական գործի ներկայ դրութիւնը // Ժողովրդի Ձայն, 14 սեպտեմբերի 1918:

[69] ՀԱԽ-ն ի սկզնանե, ավաղ, այն թյուր համոզմունքը ուներ, թե վրաց նորաստեղծ հանրապետության առաջնորդները հետևողական կլինեն ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնավարության հարցում և ՎԴՀ-ում կիրականացնեն այն նույն կերպով և ծավալով, ինչպես դա իրենք նախկինում էին պահանջում Ռուսաստանի ցարական իշխանություններից՝ Կովկասի ողջ ժողովուրդների համար:

Երրորդ՝ Այսպիսի դրութեան մէջ պէտք էր սպասել, որ գէթ վերահսկողութեան իրաւունք կըտրուի Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդին այդ դպրոցների վերաբերութեամբ, քանի որ Վրաստանի լուսաւորութեան մինիստրութիւնը ո՛չ ցանկութիւն և ո՛չ էլ կարողութիւն ունէր դրանով զբաղուելու: Սակայն, չնայելով Ազգային Խորհրդի եռանդուն միջնորդութիւններին ու բանակցութիւններին, մինչև անգամ կառավարութեան նախագահի հետ, զգալի հետևանք չըստացուեց այս հարցում՝ գլխաւորապէս լուսաւորութեան մինիստրութեան անհասկանալի դիմադրութեան պատճառով: Խոստումներ լինում են, բայց այդ խոստումները իրական գործի չեն վերացւում:

Այսպիսով՝ թէև կան Թիֆլիսում հայերի համար ազգայնացած գիմնազիաներ, բայց հայ հասարակութիւնը բոլորովին չէզոքացրած և մեկուսացուած է նրանց գործերից և տեղեկութիւն անգամ չունի, թէ ի՞նչ է կատարւում նրանց մէջ: Ինչպէս և զլացւում է նրան իրաւունք իրազեկ լինելու հայկական առարկաների դասաւանդութիւնը նաև մասնաւոր բազմաթիւ դպրոցներում. մի իրաւունք, որ մի ժամանակ վայելում էին հայոց հոգևոր իշխանութեան ներկայացուցիչները: Աւելի վատ է դրութիւնը գաւառում, ուր բոլորովին չկան հայկական միջնակարգ դպրոցներ, բացի Թելաւից, ուր հայերը բացել են մասնաւոր հայկական գիմնազիա[70], որը մեծ կարիք ունի արտաքին

[70] Երբ տեղի պետական գիմնազիան ենթարկվեց ազգայնացման, այսինքն վրացացվեց, Թելավի հայերը խնդրեցին իշխանություններին թույլ տալ իրենց ունենալ սեփական գիմնազիա: Նրանք հայցեցին այդ նպատակի համար և՛ շենք և՛ որոշ գումար, որպես նպաստ: Լուսավորության նախարարության միջոցով իրազեկվեց, որ նա կարող է նպաստել հայերին, եթե վերջիններս ընդունեն Վրաստանի հպատակությունը: Թելավի հայերը ժողով գումարելով, միաձայն որոշեցին ընդունել այդ պահանջը: Շուտով Թիֆլիսից ժամանում է մի հանձնաժողով, որին, ի միջի այլոց, հանձնարարված էր շենք

օժանդակութեան, քանի որ վրաց կառավարութիւնը նրան ոչինչ չի տալիս:

Այդ տեսակէտից շատ աւելի բարեյաջող վիճակի մէջ են պետական քաղաքային տարրական դպրոցները, որոնց վերահսկողութիւնը լիովին յանձնուած է քաղաքային վարչութիւններին[71], իսկ սրանք հրաւիրում են, ինչպէս օրինակ Թիֆլիսում, համապատասխան հայ մանկավարժ՝ այդ դպրոցներում վերահսկողութիւն կատարելու համար:

Ինչ վերաբերում է ազգայնացման ձևի և տեմպի հարցերին, վրաց կառավարութիւնը կարգադրել է վրաց գիմնազիաներում ազգայնացնել միանգամից մինչև Ե. դասարանը, միայն ծայրայեղ դէպքերում բացառութիւն թոյլ տալով, իսկ հայկական գիմնազիաներում ազգայնացրած է մինչև Բ. դասարանը, տեղ տեղ միայն մինչև Ա. դասարանը[72], Վրաստանի Հայոց Ազ-

---

գտնել հայկական գիմնազիայի համար: Տեղի իշխանությունները առաջարկեցին մի շարք շինություններ, որոնք այնպիսի վիճակի մեջ էին, որ այնտեղ դպրոց բանալ բոլորովին անհնարին էր: Տե՛ս Թելաւում // Ժողովրդի Ձայն, 19 հոկտեմբերի 1918: Ի վերջո, «Թէլաւ քաղաքի ուսումնարական յանձնաժողովը <…> դիմել է Թիֆլիսի հարուստ վաճառական, տեղիս քաղաքացի Ալէքսանդր Ռոստոմեանցին, [որը] իր լայնածաւալ սեփական տունը, III Նազօրնի փողոցի վրա գտնվածը, յատկացրել է գիմնազիային, որտեղ արդեն սովորում են մօտ 180-ի չափի երեխաներ»: Տե՛ս Բերինեան Բ. Առաջին հայկական գիմնազիան Թէլաւում // Մշակ, 2 հոկտեմբերի 1918:

[71] Տե՛ս Школьное дело в Тифлисе // «Борьба», 23 января 1920. Նաև՝ Хроника: Городские школы// «Слово» (Тифлис), 11 марта 1920.

[72] Ռուսաստանում գործող Ժողովրդական լուսավորության նախարարության կանոնադրության համաձայն արական դասական գիմնազիաներում (միջնակարգ հանրակրթական հաստատություն) ուսուցումն ութամյա էր: Գիմնազիաներ ավարտող օրիորդները զուրկ էին մնում Ռուսաստանի պետական համալսարաններում ուսումը շարունակելու իրավունքից: Սակայն օրիորդաց գիմնազիաները ունեին լրացուցիչ 8-րդ մանկավարժական դասարան և շրջանավարտ սաներին շնորհում էին նաև ուսուցչուհու վկայական:

գային Խորհրդի վճռի համաձայն, որ հաղորդուած էր լուսաւորութեան նախարարութեանը:

Աննախանձելի դրութեան մէջ են եղել 1918 թիւն Վրաստանի հայոց եկեղ.-ծխական դպրոցները: Սրանց մի մասը մնացել է փակ՝ շէնքերի գաղթականներով կամ այլ պէտքերի համար բռնուած լինելու պատճառով, միւս մասը նիւթական հնարաւորութիւն չունի գործի անցնելու և բաց մնացել են շատ քիչ թուով դպրոցներ: Դրութիւնը համեմատաբար աւելի լաւ է Սուխումի և Սոչիի շրջաններում, ուր դպրոցները բաց են և կան նոյն իսկ շրջանային տեսուչներ: Այս ցաւին դարման տանելու և նոր դպրոցներ բաց անելու համար որոշ աշխատանքներ սկսեց գործ դնել Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի դպրոցական բաժինը, բայց այդ աշխատանքները խանգարուեցին վերջին հայ-վրացական կոնֆլիկտի պատճառով:

Ծրագրի կամ կանոնադրութեան փոփոխութիւն այդ դպրոցների համար տեղի չի ունեցել: Միայն Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդն յայտարարել է իրեն գերագոյն տէր ու տնօրէն բոլոր դպրոցների և դրանով ստեղծել մի տեսակ երկմիտ կացութիւն: Թեմական Առաջնորդն էլ է իրեն տէր ու տնօրէն համարում, Ազգային Խորհուրդն էլ և հարցը իրաւականօրէն վճռուած չէ դեռ ևս, իսկ այդպիսի երկուութիւնը օգտակար լինել չի կարող:

Աւելի բարեյաջող վիճակի մեջ են հայոց սակաւաթիւ միջնակարգ դպրոցները Վրաստանում՝ Ներսիսեան, Յովնանեան, Գայիանեան և այլն, որոնք փոքր ի շատէ կանոնաւոր շարունակել են իրենց ընթացքը, բացի Գայիանեան դպրոցից, որի շուրջը անցեալ ուսումն. տարուանից խոշոր վէճեր ու թիւրիմացութիւններ են առաջացել հոգաբարձական մարմնի և մանկավարժական կազմի մէջ. այն աստիճան խոշոր, որ վտանգ

են սպառնացել դպրոցի փակմանը: Ներկայ 1918-1919 ուս. տ. սկզբին Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի միջամտութեամբ միայն յաջողուեց այդ ծանր միջադէպը հարթել, դպրոցն ազատել կրքերի պայքարի ասպարէզ լինելուց և բաց անել նրա դռները աշակերտութեան առաջ: <…>

Քուիրինուս[73]

Տե՛ս Դպրոցական կեանքը 1918-ին //
Ժողովրդի Ձայն, 5 հունվարի 1919, N 3:

N 52
Լրագրային հաղորդում՝ վարչապետ Ն.Ն. Ժորդանիայի և Վրաստանի ՀԱԽ-ի լիազորների աշխատանքային հանդիպման մասին (1919 թ., 6 հունվարի)

Յունուարի 6-ին, ճաշից յետոյ ժամը 4-ին Վրաստանի հանրապետութեան կառավարութեան նախագահ Ն. Ն. Ժորդանիային ներկայացան Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի պրեզիդիումն ու Գործադիր մարմինը՝ բողոքելու համար այն ընդհանուր ձերբակալութիւնների, շուրջկալների դէմ, որ տեղի ունեցաւ յունուարի 5-ին վաղ առաւօտուանից մինչև ժամը 3-ը, որի ժամանակ ձերբակալուել էին աւելի քան 4-5 հազար հոգի միայն նրա համար, որ հայ լինելու «դժբախտութիւնն են» ունեցել:

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի պրեզիդիումն ու Գործադիր մարմինը կառավարութեան նախագահի ուշադրութիւնը մի վերջին անգամ հրաւիրեց այն հանգամանքի վրայ, որ կառավարութեան գործելակերպի և կարգադրութիւնների շնորհիւ ամբողջ հայ ազգը փաստօրէն օրէնքից դուրս է

[73] Հայագետ Ե. Գ. Տեր-Մինասյանի ծածկանունն է:

յայտարարուած և ենթակայ է ամեն տեսակ ապօրինինութիւնների և խժդժութիւնների ու կամայականութիւնների, որ տանելի լինել չի կարող: Յունուարի 5-ին ձերբակալում էին ո՛չ թէ միայն Հայաստանի Հանրապետութեան հպատակներին, այլ անխտիր բոլորին, որոնք յայտնում էին, թէ հայ էին կամ չէին կարողանում ապացուցել, որ հայ չեն: Եւ այդ բանն արւում էր այնպիսի ձևով, որ վիրաւորական լինէր հայ ժողովրդի ազգային արժանապատուութեան համար:

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդը խնդրում է բացատրել, թէ ի՞նչ էր երէկուայ այդ շուրջկալների և ձերբակալութիւնների պատճառը և միևնոյն ժամանակ կարգադրել, որ այդպիսի դէպքերը միանգամ ընդ միշտ վերջ ունենան, քանի որ նրանք օգտակար լինել չեն կարող ո՛չ պետութեան համար և ո՛չ էլ նպաստաւոր դրութիւն են ստեղծում Ազգային Խորհրդի գործունէութեան համար, որ ստիպուած պէտք է զգայ իրեն բոլորովին մի կողմ քաշուելու:

Կառավարութեան նախագահը բացատրեց, որ յունուարի 5-ի ձերբակալութիններն ու շուրջկալները կատարուել են ի ն ե ր ց ի ա յ ո վ[73], նախկին կարգադրութիւնների հիման վրայ, որոնց համաձայն պէտք է կալանաւորուէին իբրև զինուորական գերիներ Հայաստանի հանրապետութեան այն բոլոր քաղաքացիները, որոնք 18-45 տարեկան հասակ ունեն: Նա արդէն խստիւ կարգադրել է դադարեցնել բոլոր մասսայական շուրջկալներն ու ձերբակալութիւնները և եթէ ամսի 5-ից յետոյ տեղի են ունեցել այդպիսի դէպքեր, այդ նշանակում է եղած է իր պարզ և որոշ հրամանին հակառակ, որի համար միջոցներ ձեռք կառնուեն: Կարգադրուած է կառավարութեան կողմից,

[73] Ընդգծումը հեղինակինն է:

որ առհասարակ այդպիսի ընդհանուր շուրջկալներ ու ձերբակալութիւններ չլինեն այսուհետև, քանի որ արդէն զինադադար ու խաղաղութիւն է: Առանձին անհատների ձերբակալութիւններ կարող են լինել, եթէ նրանց դէմ որոշ մեղադրանքներ լինեն:

Կը շարունակուեն նաև խուզարկութիւնները զէնք գտնելու և ժողովրդին զինաթափ անելու համար, որովհետև կառավարութիւնը չի կարող թոյլ տալ, որ կրկնուեն Շուլաւերի և Բէլի Կլիւչի դէպքերը, երբ կառավարութիւնը լսեց Հայոց Ազգային Խորհրդի միջնորդութիւնը և ազգաբնակութիւնից զէնքը չը խլեց, իսկ դրա հետևանքն եղաւ վերջին օրերի դէպքերը, որի ժամանակ տեղական հայ ազգաբնակութիւնը զինուած անցաւ Հայաստանի հանրապետութեան զօրքերի կողմը և յարձակուեց Վրաստանի զինուած ոյժերի վրայ: Վերջապէս կառավարութիւնը պարտաւոր է ինքը զէնքերը հաւաքել, եթէ չի ուզում, որ օտարները միջամտեն և քայլեր անեն այդ ուղղութեամբ: Նման դէպքերում կառավարութիւնը անցեալի փորձերից խրատուած՝ այլ ևս այնպիսի վստահութեամբ չի կարող վերաբերուել Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի միջնորդութիւններին:

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչները կառավարութեան նախագահի ուշադրութիւնը հրաւիրեցին այն հանգամանքի վրայ, որ Հայաստանի հանրապետութեան հպատակ գաղափարը դեռ պարզ չէ, որովհետև Հայաստանի կառավարութիւնը հպատակութեան օրէնք չի հրատարակել, իսկ շատերն իրենց շարունակում են Ռուսաստանի քաղաքացիներ հաշուել, քանի որ դեռ դրութիւնը չի պարզուել: Այդ տեսակէտից անհիմն է Վրաստանում գտնուած բոլոր ոչ վրացահպատակ հայերին նկատել Հայաստանի հպատակներ

և իբրև ռազմագերիներ ուղարկել Քութայիս: Այս րոպէիս մի գնացք 800-1000 այդպիսի հայերով ուղարկւում է Քութայիս: Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդը խնդրում է կարգադրել, որ այդ գնացքը չուղարկուի և յունուարի 5-ին բանտարկուածները բոլորը ազատ արձակուին, իսկ Քութայիս ուղարկուածներն առհասարակ վերադարձուեն:

Մինիստր-նախագահը խոստացաւ կարգադրել, որ գնացքը չուղարկուի Քութայիս, բանտարկուածներն ազատուին, իսկ արդէն Քութայիս ուղարկուածների համար կարգադրութիւն լինի անմիջապէս ազատել և վերադարձնել, հենց որ վաղը կամ միւս օրը հեռագիր ստացուի, թէ Հայաստանի հանրապետութեան զօրքերը արդէն յետ են քաշուել զինադադարի պայմանով որոշուած սահմանը:

Վերջապէս Ազգային Խորհրդի ներկայացուցիչները մատնանշեցին այն բոլոր ապօրինութիւններն ու խժդժութիւնները, խոշոր ու մանր կաշառակերութիւնն ու կազմակերպուած թալանը, որ տեղի է ունեցել հայերի վերաբերութեամբ այս ձերբակալութիւնների առթիւ և խնդրեցին կտրուկ միջոցներ ձեռք առնել մեղաւորներին գտնելու և պատժելու համար:

Կառավարութեան գլուխը յայտնեց, որ արդէն կազմուած է քննիչ յանձնաժողով այդ նպատակի համար, որ կը կարողանայ հարցը պարզել և մեղաւորներին պատժել, եթէ հասարակութեան անդամները բարոյական քաջութիւն ունենան յայտնելու քննիչ յանձնաժողովին եղածները: Ազգային Խորհրդի անդամները հրաւիրեցին Ն. Ն. Ժորդանիայի ուշադրութիւնը այն հանգամանքի վրայ, որ հայ հասարակութիւնը կառավարութեան վերաբերմունքից ու կարգադրութիւններից ահաբեկուած լինելով՝ կը վախենայ ներկայանալ նրա քննիչ յանձնաժողովին և ցուցումներ տալ՝ ապագայի վրէժխնդրութեան եր-

կիւղից: Այդ բանի առաջն առնելու միակ միջոցն այն է, որ քննիչ յանձնաժողովների մէջ մասնակցեն Հայոց Ազգային Խորհրդի անդամները և ներկայացուցիչները և այդպիսի քննիչ յանձնաժողովներ լինեն թէ՛ այստեղ և թէ՛ Քութայիսում կամ այլ տեղերում, որ պէտք է տեսնուի:

Կառավարութեան նախագահը միանգամայն ընդունելի և ցանկալի համարեց այդ առաջարկը և խոստացաւ հարկաւոր կարգադրութիւնն անել այդպիսի քննիչ յանձնաժողովներ կազմելու Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչների մասնակցութեամբ, որպէսզի վնասուածները վստահութեամբ կարողանան մօտենալ այդ յանձնաժողովներին և պատմեն իրենց գլխին եղածները[74]:

---

[74] 1919 թ. առաջին օրերին ստեղծվել էր մի իրավիճակ, երբ Վրաստանի և նրա կառավարության հետագա ճակատագիրը տակավին մնում էր խավար և անորոշ: Թիֆլիս ժամանած բրիտանական բանակի առաջին զորավարները (գեներալ Ու. Ռայկրոֆտ և ուրիշներ) դրսևորեցին անբարյացակամ վերաբերմունք Ն. Ժորդանիայի վարչակազմի նկատմամբ, որպես գերմանական «խամաճիկ դրածոների»: Հայ հասարակությունն, ընդհակառակը, հույսեր էր փայփայում, որ Անտանտի հաղթանակը կնպաստի հայերի շահերին: Հետևաբար վրաց վարչապետը տրամադրված էր արագ հարթել բոլոր այն ապորինությունների հետևանքները, որոնք դարձան հայ խաղաղ բնակչության տառապանքների պատճառը: Նրա բերանով շռայլորեն տարածվող ամեն տեսակի խոստումները, ինչպես հետագայում պարզվեց, ձևական բնույթ ունեին և, ակներևաբար, ժամանակ շահելու նպատակն էին հետապնդում: Խոստացած քննիչ հանձնաժողովը, որի անդամ էր նաև ՀԱԽ-ի լիազոր Դ. Դավիթխանյանը (տե՛ս Ժողովրդի Ձայն, 22 հունվարի 1919), այդպես էլ վճռական որևէ դեր չունեցավ հայերին հալածողների ապօրինությունները բացահայտելու գործում: Ավելին, շարքային ոճրագործների անպատիժ թողնելը, որպես անմիջական հետևանք ունեցավ 1919 թ. ապրիլ ամսին հայերի տների և ունեցվածքի զանգվածային թալանն ու ավերը Գագրայի գավառում: Տե՛ս Մաիլյան Բ. Վ. Աբխազիայի հայ գաղութի պատմությունից (1918-1920 թթ.) // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVII, Երևան, 2009, էջ 115-116:

Ն. Ն. Ժորդանիան մի քանի անգամ շեշտեց, որ այս օրերս տեղի ունեցած բոլոր դէպքերն ու գործողութիւնները ցոյց են տալիս, որ պատերազմը հազարաւոր տարիներ իրար հետ հաշտ ու համերաշխ ապրած հայերի և վրացիների մէջ մի մեծ յանցագործութիւն է, որ երբէք տեղի չպէտք է ունենար:

Այն հարցին, թէ ե՞րբ կարող է կանոնաւորապէս վերսկսել իւր գործունէութիւնը Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդը, Ժորդանիան պատասխանեց – մի երկու օրից յետոյ, երբ Հայաստանի հանրապետութեան զօրքերը յետ քաշուած կը լինեն իրենց նախկին սահմանները:

Տեսակցութիւնը տևեց 1 և կէս ժամ:

Թղթակից

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի նախագահութիւնն ու գործադիր մարմինը կառավարութեան նախագահի մօտ //Ժողովրդի Ձայն, 9 հունվարի 1919, N 5:

N 53

«Ժողովրդի Ձայն»-ը՝ վարչապետ Ն. Ն. Ժորդանիային հղած Վրաստանի ՀԱԽ-ի գրության համառոտ բովանդակության մասին (1919 թ., հունվար)

Ի լրումն «Ժողովրդի Ձայն»-ի անցեալ համարում[75] տպուած այն տեսակցութեան և բանակցութիւնների, որ Ազգային Խորհրդի ներկայացուցիչներն ունեցել էին կառավարութեան գլուխ Ն. Ժորդանիայի հետ, տալիս ենք այսօր համառոտակի այն պաշտօնական գրութեան բովանդակութիւնը, որ Ազգային Խորհրդի պրեզիդիումն ու Գործադիր մարմինը ուղղել են Վրաստանի հանրապետութեան կառավարութեան պետին:

[75] Տե՛ս N 52 վավերագիրը:

Գրութիւնն սկսւում է նրանով, որ մատնանշւած է, թէ ինչպէս երկու հարևան պետութիւնների մէջ պատերազմ ծագելու օրից վրաց կառավարութիւնը զինուորական գերի յայտարարեց Վրաստանում ապրող բոլոր հայերին, որոնք Հայաստանի հպատակ են և սկսեց նրանց բանտարկել, Քութայիս աքսորել, չնայելով այն հանգամանքին, որ Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը սկզբից և եթ նախազգուշացրեց կառավարութեանը, թէ ինչ անխուսափելի էքսցեսսներ կարող են ծագել այդ կարգադրութեան իրագործումից և թէ ինչպէս դրանով ընդհանուր հալածանք կը սկսուի Վրաստանում ապրող ամբողջ հայութեան դէմ:

Այդ հալածանքին նպաստում էր մի կողմից Վրաստանի անկատար հպատակութեան օրէնքը, որ բացատրում էր կառավարութեան կողմից մերթ լայն, մերթ նեղ իմաստով[76], միւս

[76] Այս առթիվ ևս Առաջին Հանրապետության նշանավոր գործիչ և հայ-վրացական հարաբերությունների գիտակ Ա. Ջամալյանը գրում է, որ «Վրաստանի այն հայերին, որոնք տարիներից ի վեր հաստատուն բնակութիւն ունէին՝ այստեղ էլ վրաց կառավարութիւնը իւրահատուկ վերաբերմունք ունէր: Երբ նա <…> մտադրում էր նրանց ևս զինուորակոչութեան ենթարկել՝ նա ամէնքին էլ դիտում էր իբրև Վրաստանի քաղաքացիներ: Իսկ երբ Վրաստանի շովինիստական տարրերին բաւարարութիւն տալով հարկ էր համարում բացառիկ հալածանքներ սկսել հայերի դէմ <…> այն ժամանակ խիստ մեծ սահմանափակումների էր ենթարկում իր իսկ հրատարակած քաղաքացիութեան օրէնքը՝ դժուարացնելով նրա նպաստաւոր տրամադրութիւններից օգտուելու հնարաւորութիւնը հայերի համար»: Տե՛ս Ջամալեան Ա. Հայ-վրացական կնճիռը // Հայրենիք (Բոստոն), 1928, հոկտեմբեր, էջ 133: Այդպիսի մի դեպք տեղի ունեցավ Աբխազիայի հայերի պարագայում: Երբ նրանց լիազորները դիմել էին Թիֆլիս հարցապնդմամբ, ենթակա՞ են արդյոք աբխազահայերը զորակոչին, թե՞ ոչ, ապա կառավարությունից իսկույն եկավ դրական պատասխան: Տե՛ս Հպատակութեան խնդրի շուրջը // Հորիզոն, 8 օգոստոսի 1918: Սակայն 1918 թ. հուլիսի 16-ից գործող «հպատակության մասին կանոնադրություն»-ը Վրաստանի քաղաքացիության ձեռք բերման տեսակետից բարենպաստ չէր մեծ մասամբ թուրքահպատակ տեղի հայության համար:

կողմից՝ Հայաստանի հանրապետութեան միչև օրս հպատակութեան օրէնք չունենալը: Այդ հանգամանքները պատերազմի հենց առաջին օրերից թշնամական մթնոլորդ ստեղծեցին և միլիցիայի և առանձին յանձնախմբի[77] ներկայացուցիչներին ազատութիւն տուին ամեն տեսակ ապօրինութիւն գործ դնելու հայերի վերաբերութեամբ, խուզարկելով, բանտարկելով և աքսորելով նրանց, այլ և բացարձակ դրամաշորթութեան դիմելով նրանց վերաբերութեամբ:

Հայերի դրութիւնն աւելի ևս վատթարացավ, երբ գեներալ-նահանգապետը Հայաստանի հպատակների շարքում դասեց նաև Բորչալուի գաւառի այն մասերի բնակիչներին, որոնք բռնուած էին հայոց զօրքերով, սակայն առանց յիշելու, թէ ո՞ր մասերն են դրանք, որպէսզի քաղաքացիները հնարաւորութիւն ունենայն գոնէ իրենք ինքնակամ ներկայանալու նահանգապետին և դրանով ազատելու բանտարկութիւնից և կայքերի գրաւման սպառնալիքից:

Կառավարութեան և վարչութեան այդպիսի բռնութիւնների հետևանքն եղաւ կէս միլիոն հայ ազգաբնակութեան իրաւազուրկ դրութիւնը, որի պատիւը, արժանապատուութիւնը, ազատութիւնն ու կարողութիւնը առարկայ դարձան միլիցիայի և առանձին պահնորդախմբի[78] կամայանութիւնների:

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի իր ժամանակին արուած նախազգուշացումները ոչ միայն ոչ մի դրական հետևանք չհասցրին, այլ ընդհակառակն՝ սկսուեցին բռնու-

---

[77] Խոսքը պետական անվտանգության ոլորտը վերահսկող և ՆԳ նախարարությանը կից գործող «Հատուկ ջոկատ»-ի մասին է: Գերազանցաբար քաղաքական ոստիկանության պարտականություններ կատարող այս կառույցը (ղեկ.՝ Մ. Կեդիա), հիմնականում և գլխավորապես կազմված էր կառավարական կուսակցության անդամներից՝ սոցիալ-դեմոկրատներից ու նրանց համակիրներից:

[78] Խոսքը դարձյալ «Հատուկ ջոկատ»-ի մասին է:

թիւններ հենց Ազգային Խորհրդի դէմ և վերջ ի վերջոյ առաջ եկաւ այն սիստեմատիքական հալածանքը հայերի դէմ, որի վրդովեցուցիչ տեսարանին ականատես եղաւ Թիֆլիսը յունուարի 5-ին:

Պատրուակ բերելով, թէ իբր Արամեանցի տանը[79], ուր բացի Ազգային Խորհրդից ուրիշ բազմաթիւ հիմնարկութիւններ կային, կամաւորների ցուցակագրութիւն է կատարուել յօգուտ Հայաստանի հանրապետութեան, կնքեցին Ազգային Խորհրդի սենեակները, գրքերը, դրամական և բժշկական միջոցները, որ նշանակուած էին գաղթականներին օգնելու համար և Ազգային Խորհուրդը մինչև այսօր տեղ ու հնարաւորութիւն չունի իր խանգարուած աշխատանքներն սկսելու, հայ ազգի ներկայացուցիչը լինելու, որ իրապէս օրէնքից դուրս է մնացել Վրաստանում և գաղթականների խնամելու, որպիսի դրութիւնը վիրաւորում է մարդկայնութեան զգացմունքներն անգամ: Մանաւանդ որ ներքին գործերի մինիստրը պարլամենտի ամբիոնից յայտարարեց, որ Ազգային խորհուրդը լոյալ է եղել[80]:

Երկու շաբաթ է արդէն, որ յատկապէս Թիֆլիսի հայ ազգաբնակութիւնը ենթակայ է ամեն տեսակի բռնութիւնների վարչական կարգով: Զինուած միլիցիոներները գիշերով այցելում են հայերի բնակարանները, առանց հպատակութեան և դիրքի խտրութեան, թալանում են ամեն թանգագին իր և բռնութիւններ են գործ դնում:

Օրը ցերեկով շուրջկլաներ են անում և հայերին հարյուրներով լցնում բանտերը և քշում Քութայիսի նահանգը[81], թոյլ

---

[79] Խոսքը «Մաջեստիկ» հյուրանոցի մասին է, այժմ՝ «Թբիլիսի-Մարիոտ»:

[80] Տե՛ս Վրաստանի պառլամենտ // Ժողովրդի Ձայն, 5 հունվարի 1919:

[81] Զինապարտ հասակի հայ տղամարդկանց կալանավորում էին Քութայիսի մոտ ստեղծված հատուկ նշանակության ճամբարներում, ուր նրանց սովատանջ էին անում և ստիպում կատարել տաժանագին աշխատանքներ: Ճամ-

չտալով հարազատներին հրաժեշտ տալու կամ գոնէ անհրաժեշտ իրեր վերցնելու հետները: Հազարաւոր բանուորներ և ինտելիգենտներ խլումեն աշխատանքից և ուղարկում Մետեխի բանտը[82] կամ Ներսիսեան դպրոցի շուրջը, վերածուած կոնցենտրացիոն բանատեղի[83]: Եւ այս բոլորը դարձել է սովորական երևոյթ Թիֆլիսի հայերի կեանքում: Իսկ դրա հետ միասին՝ ամենաանպատկառ դրամաշորթութիւն և կաշառակերութիւն՝ անմեղ բանտարկութիւններին ազատելու համար, սպառնալով տեղն ու տեղը սպանել որոշուած գումարը չտուողներին և կամ այդ մասին կառավարութեան յայտնողներին:

Դեմորալիզացիայի աստիճանը որոշելու համար բաւական է մատնանշել, որ միլիցիոներներն ու առանձին պահնուդախմբի անդամները որոշ սակագին են նշանակել ազատելու համար՝ յիսուն ռուբլուց մինչև յիսուն հազար ռուբլի և մի հաստատութեան ներկայացուցչին տուողը չի ազատւում միւս հաստատութեան ներկայացուցչին էլ վճարելուց, այլ միայն աւելի է ամրապնդում երկրորդի իրաւունքը՝ իր պահանջն ևս կատարել տալու: Եւ զարմանալի չէ, որ այդ սիստեմատիքական երկու շաբաթ տևող հալածանքների հետևանքն եղաւ այն խայտառակ տեսարանը, որ ներկայացնում էր Թիֆլիսը կիրակի օրը, յունուարի 5-ին, երբ միլիցիոներները, զինուած վայրենիների նման, որսում էին հայերին, մի քանի ժամուայ ընթացքում ձերբակալելով 6000 հոգի և տուն բաց թողնելով միայն

բարներ աքսորված հայերի թվաքանակը 1919 թ. հունվարի 3-ի դրությամբ կազմեց 1600 մարդ: Տե՛ս Ձերբակալուած հայերի մասին // Յառաջ, 12 հունվարի 1919:

[82] Տե՛ս Լրատու // Յառաջ, 16 հունվարի 1919:

[83] Տե՛ս Ժողովրդի Ձայն, 15 հունվարի 1919:

այն մի քանի հարիւր բախտաւորներին, որոնք հնարաւորութիւն ունէին բացարձակ աճուրդի եղանակով վճարել պահանջուած գումարները կամ խոստանում էին տանը վճարել իրենց հետ եկող միլիցիոներներին աւելի խոշոր փրկանք:

Եւ եթէ այս բոլորը կատարւում էր Թիֆլիսում, դժուար չէ երևակայել, թէ ինչ կը լինէր հայերի դրութիւնը գաւառում, ուր նրանք լիովին թողնուած են իրենց բախտին և տեղական վարչութեան շնորհին, որ կրթւում ու սնուցանւում է վրացական լրագիրների պրոպագանդով հայերի դէմ: Որ այդ հալածանքն սկսուած է ամբողջ հայութեան դէմ իբրև ազգութեան, այդ երևում է նրանից, որ նախ մի քանիսին ինքը՝ իշխանութիւնը տուել է պաշտօնական վկայականներ, թէ նրանք «իբրև հայեր» ենթակայ չեն ձերբակալման և երկրորդ՝ հազարաւոր զինուորական գերիների մէջ չի կարելի գտնել գոնէ մի հատ Հայաստանի կառավարութեան հպատակ, որ ազգով հայ չլիներ:

Նոյնիսկ Վրաստանի պարլամենտ մտցրած հարցապնդումը բոլոր հայ կուսակցութիւնների կողմից ազգային հալածանքի դէմ, այնպիսի թշնամական ընդունելութիւն գտաւ միւս կուսակցութիւնների կողմից, մինչ կառավարական կուսակցութիւնը լուռ հանդիսատեսի դերում էր, որ հաւասար էր կատարուող այլանդակութիւնների բարոյական սրբագործման: Իսկ կառավարութեան բացատրութիւնները, որ ազգային այդ հալածանքները համարեց միլիցիայի առանձին անդամների չնչին զեղծումներ, չէին կարող հայ հասարակութեան վրայ ամենաճնշող տպաւորութիւն չթողնել, մանաւանդ որ այդ բացատրութեան մէջ չէին մոռացուած վերջին ժամանակների սովորական ֆրազները՝ դէպի հայ ազգն ունեցած յարգանքի մասին, որոնք միայն աւելի էին վիրաւորում այդ ազգի զգացմունքները բացարձակ հալածանքի այդ ժամին:

Որովհետև հայ ազգաբնակութեան ոտնահարուած իրաւունքները պահանջում էին քննութիւն նշանակել Վրաստանի հայ ժողովրդի կրած հալածանքների, պաշտօնեաների սիստեմատիքական դրամաշորթութեան մասին՝ վնասները հատուցանելով և յանցաւորներին պատժելով, Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի Գործադիր մարմինն ու Նախագահութիւնը խնդրում են Ձեզ.

1. Կարգադրութիւն անել, որ անմիջապէս ազատուեն բանտերից և վերադարձուեն տուն բոլոր աքսորուածները:

2. Անմիջապէս կազմակերպել յատուկ յանձնաժողովներ՝ մեկը Թիֆլիս քաղաքի, միւսը՝ գաւառի համար, տալով նրանց քննադատական բոլոր լիազօրութիւնները՝ իշխանութեան ներկայացուցիչների արարքները քննելու, վնասները որոշելու, մեղաւորներին ի յայտ բերելու և դատի մատնելու, նախօրօք իրապէս ապահովելով իրենց վնասները յայտնողների կեանքն ու անձեռնմխելիութիւնը:

3. Յիշուած յանձնաժողովների մէջ ընդունել հաւասար իրաւունքներով Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչներին:

4. Անմիջապէս կազմակերպել մի յատուկ յանձնաժողով՝ Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչների մասնակցութեամբ՝ բոլոր բանտարկուածների և աքսորուածների դրութեան հետ ծանօթանալու և նրանց նիւթական օգնութիւն հասցնելու համար:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդում //
Ժողովրդի Ձայն, 12 հունվարի 1919, N 8:

N 54
«Հառաջ» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հունվարի 12-ի նիստի մասին

Կիրակի, յունուարի 12-ին տեղի ունեցավ Վիրահայ Ազգային Խորհրդի նիստը: Թագնուած պատգամաւորներից շատերը արդէն դուրս էին եկել իրենց թագստոցներից և ներկայ էին նիստին: Քննութեան էր դրուած Թիֆլիսի քաղաքային դումայի և Սահմանադիր ժողովի ընտրութիւնների հարցը: Ժողովը արձանագրելով այն ծանր պայմանները, որոնց մէջ դրուած է հայ ընտրողը և աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ազգաբնակութեան ցուցակագրութիւնը Թիֆլիսում տեղի է ունեցել հ ա յ ո ր ս ո ւ թ ե ա ն[84] շրջանում, երբ ամեն մի հայ հարկադրուած էր թագնուել, որոշեց դիմել կառավարութեան և խնդրել յետաձգել Թիֆլիսի քաղաքային դումայի ընտրութիւնները մինչև նոր ցուցակագրութեան կատարելը:

Ընտրուեց յատուկ յանձնաժողով մի պատճառաբանուած յուշագիր պատրաստելու համար:

Ժողովի վերջում քննութեան առնուեց նաև վիրահայ գաղթականներին օգնելու հարցը: Ինչպէս յայտնի է, պատերազմի պատճառով մի շարք հայկական գիւղեր, մասնաւորապէս Շուլաւերի և Դաղէթի շրջանից տեղահան են եղել ու այդ գիւղերը ենթարկուել են պաշտօնական թալանի ու աւերածի և գիւղերի ազգաբնակութեանը իրաւունք չի տրուում իր վաթանը վերադառնալու, «որովհետև» նրանք ապստամբներ են և գիւղացիների պատգամաւորութիւնը կառավարութեան կողմից չի ընդունուել – կարճատև մտքերի փոխանակութիւնից յետոյ ժողո-

[84] Ընդգծումը՝ հեղինակին է:

վը յանձնարարեց Գործ. Մարմնին համապատասխան քայլեր անել, թեթևացնելու համար այդ գաղթականների վիճակը:

Լիդ

Տե՛ս Վրաստանի [Հայոց] Ազգային Խորհուրդ //
Յառաջ, 14 հունվարի 1919, N 2:

N 55
«Ժողովրդի Ձայն» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հունվարի 12-ի նիստի մասին

Նախագահում է Ա[րշակ] Զոհրաբեան:

Ազգային Խորհուրդը գլխաւորապէս զբաղւում է քաղաքային և Վրաստանի Սահմանադիր Ժողովի ընտրութիւնների խնդրով: Արտայայտւում են բոլոր ֆրակցիաները: Ամենքն էլ այն միտքն են արտայայտում, որ այժեմեան պայմաններում հայ տարրը ո՛չ մի հնարաւորութիւն չունի իր բովանդակ իրաւունքով հանդէս գալու ընտրութիւններին:

Խօսում են դաշնակցականների կողմից Հ. Եաղջեան, Հայ Ժողովրդականների կողմից Ա. Բարխուդարեան, էս-էրների կողմից [Ա.] Թարխանեան և էս-դեկների կողմից [Ա.] Զոհրաբեան:

Այնուհետև Ազգային խորհուրդը միաձայն հետևեալ որոշում է կայացնում մօտաւորապէս. Ի նկատի ունենալով, որ հպատակութեան օրէնքը պարզ չէ, որով հայութեան մեծամասնութիւնը դուրս է մնում մասնակցելու իրաւունքից[85], - որ

[85] «<…> Այս օրէնքը ամենից առաջ իրաւական հիմնաւորութիւն է տալիս այն քաղաքականութեանը, որ փառաբանւում է «Կլդէի» և «Գրուզիայի» էջերից (վրաց ազգային դեմոկրատների կուսակցական պարբերականներ. – Բ.Մ.) - – «Վրաստանը վրացոց համար»: <…>

Օրէնքին նայելով, Վրաստանի հպատակ է նա, ով մինչև 1914թ. յուլիսի 19-ը գրուած է այս կամ այն վարչական միութեան մէջ, (кто до 19 іюля 1914 г. был прописанъ къ той или другой административной единице въ пределахъ Грузіи), բացի այդ բոլոր ծագումով վրացիները համարւում են վրացահպատակ: (Այս միտքը արտայայտուած է Սահմանադիր ժողովին վերաբերեալ օրէնքում):

Այսպիսով, քաղաքային ընտրութիւնների ժամանակ վրացիները երբէք պարտաւոր չեն իրենց հպատակութիւնը ապացուցանել և այս իսկ հիման վրայ ամեն մի վրացի, թէկուզ ոչ թիֆլիսեցի, իրաւունք ունի ցուցակագրուելու և ընտրողական իրաւունք ստանալու, եթէ նոյնիսկ նա իր կեանքում առաջին օրը եկած լինի Թիֆլիս և նա ցանկութիւն էլ չունենայ Թիֆլիսում յետագայում ապրելու:

Հայը, ռուսը, թաթարը և ուրիշները իրենց ծագումով ոչ թէ միայն չեն ստանում վրացահպատակութիւն, նրանք, ընդհակառակը, պարտաւորապէս պիտի ապացուցանեն իրենց վրացահպատակ լինելը:

Եթէ ոչ-վրացին ապացուցանում է, թէ արդէն 20 տարի է, որ ինքն ապրում է Թիֆլիսում, այդ դէռ չի նշանակում, թէ նա վրացահպատակ է, որովհետև նա կարող էր այդ ժամանակամիջոցը անցկացրած լինել այստեղ առանց ցուցակագրուելու մի վարչական միութեան մէջ (не будучи приписанъ къ той или другой административной единице), այսինքն՝ մեշչանական (իմա՝ քաղքենի. – Բ. Մ.), գիւղացիական, կամ ազնուական դասի (сословіе) մէջ, այլ իր ձեռքին ունենալով առաջին անցագիրը, որը ստացել է նա, ասենք, Երևանից Թիֆլիս գաղթելու ժամանակ, սրանից 20-30 տարի առաջ:

Այսպիսով՝ մի հայ կամ ռուս, իր որդիներով պիտի զրկւի ընտրական իրաւունքից միայն նրա համար, որ նրանք չեն կատարել մի ձևականութիւն և Երևանի մեշչանների ցուցակից չեն անցկացրել իրենց [Թիֆլիսի քաղքենիների խավի մէջ], թէպէտ 20-30 տարի, առանց ընդմիջումների ապրել են Թիֆլիսում և նրա հետ աւելի սերտ են կապած, քան մի վրացի:

Թիֆլիսի այլազգի բնակչութեան 90 տոկոսը այդպիսիներից է բաղկացած <…>»: Տե՛ս Հպատակութեան օրէնքը Վրաստանում // Յառաջ, 14 հունվարի 1919: Այս օրենքի կիրառման եղանակը պետք է լրացուցիչ որոշվեր ՆԳ-ի և արդարադատության նախարարների հայեցողությամբ, ինչը պարարտ դաշտ էր ստեղծել տարբեր տեսակի կամայականությունների համար: Օրենքի իրականացման պրակտիկայի տխուր հետևանքների մասին ստիպված էր բարձրաձայնել Վրաստանի հայոց ազգային խորհուրդը: «Закон 16 июня (այդպես է վավերագրում, պետք է լինի հուլիս - Բ.Մ.) объявляет гражданами республики, за исключением лиц грузинского происхождения, лишь тех из не-грузин, которые могли представить доказательства о приписке к какой-либо административной единице бывших Тифлисской и Кутаисской губерний до 19 июля 1914 года. Такое определение понятия подданства означало в отношении в частности городского населения армян исключение

ցուցակագրութիւնը տարուել է շատ անկանոն և միակողմանի կերպով և աննորմալ ժամանակում, երբ հայերը մէկ կողմից որոշ հնարաւորութիւն չունէին ցուցակագրուելու, միւս կողմից ցուցակագրողները իրենք չէին մտցնում շատ հայերի անուններ մատեանի մէջ. – Վրաստանի Հայոց Ազգային Խոր-

---

более половины их из числа граждан Грузии…»; «в порядке же разъяснений Министерства Внутренних Дел, целыя группы армянской интеллигенции, служащих и рабочих не только в государственно-общественных, но даже и в частных учреждениях, оказались не-грузинско-подданными и потому зловредными, почему и снимались с мест и мерами администрации выселялись из пределов Грузии…ե; «результатом такого разъяснения явилось исключение из городских избирательных списков по Тифлису и другим городам большинства не-грузин и, в особенности армян, благодаря чему последние оказались почти поголовно лишенными избирательных прав и, Тифлисская Городская Дума оказалась сплошь грузинской»,– մատնշում էին ՀԱԽ-ի անդամները: Տե՛ս MEMORANDUM, Учредительному Собранию о Национальном Самоуправлении армян в Грузии. [Тифлис, 1921]. էջ 15, 20:

Այսպիսով, հանրագումարի բերելով վերը շարադրած նյութը, հավելենք նաև, որ 1918 թ. հուլիսի 16-ին ՎԱԽ-ը հաստատեց «Վրաստանի դեմոկրատական հանրապետության հպատակության մասին կանոնադրություն»-ը, ըստ որի քաղաքացի էին ճանաչվում, բացի էթնիկական վրացիների, նաև այն անձինք, ովքեր իբրև ավանդական խավերի (իմա՝ ազնվական, քաղքենի, գյուղացի) ներկայացուցիչներ գրանցված են եղել Վրաստանի մաս կազմող որևէ վարչական օղակին կից մինչև 1914 թ. հուլիսի 19-ը (ն. տ. օգոստոսի 1-ը): Այս կանոնակարգի համաձայն քաղաքացիության ձեռք բերման որևէ եղանակ չէր նախատեսված: 1919 թ. մայիսին Սահմանադիր Ժողովը վավերացրեց «Վրաստանի հանրապետության քաղաքացիության մասին օրենք»-ը, որը գրեթե անփոփոխ էր թողել նախկին «կանոնադրության» հիմնական սկզբունքները: Նրա գլխավոր նպատակն էր՝ հնարավորինս դարձյալ խոչընդոտել և դժվարացնել Վրաստանում մինչև 1918 թ. մայիսի 26-ը մշտական բնակություն հաստատած ոչ վրացի ազգությունների ներկայացուցիչների համար նորակազմ հանրապետության քաղաքացիության ձեռք բերումը: Գոյություն ուներ նաև խնդրի բարոյահոգեբանական կողմը: Այլ ազգություններին պատկանող բնակչությունը տեսնում էր, որ մինչև այժմ վրացիները ևս, իրենց նման, Ռուսաստանի պարզ հպատակներ էին, որ՝ և՛ իրավական, և՛ ազգային տեսակետից առաջ որևէ տարբերություն չկար նրանց մեջ, այնինչ 1918-ից սկսած մեկը իշխող տարր է դարձել, մյուսը՝ ստորադաս:

հուրդը իր ցանկութիւնն է յայտնում, որ յետաձգուեն ընտրութիւնները, որպէսզի կազմւի նոր և արդարացի ցուցակագրութիւն, որի մէջ մտնեն Թիֆլիսում բնակուող բոլոր նաև ոչ վրացիները, այս դէպքում – հայերը:

Մի բանաձև մշակելու համար ընտրուած մի մասնաժողով բաղկացած հետևեալ անձերից. – Յ. Սպենդիարեան, Ար. Յովհաննիսեան, Ա. Թարխանեան և Յ. Ամիրխանեան:

Ազգային Ժողովի[86] այդ խորհրդակցութիւնն ի նկատի պիտի ֆրակցիաները քաղաքային դումայի երկուշաբթի օրուայ[87] նիստի ժամանակ:

Բանաձևը մշակելուց յետոյ դիմում պիտի լինի կառավարութեան:

Այնուհետև Ան. Ստամբոլցեանը առաջարկում է դիմել կառավարութեան, որ թոյլատրուի Շուլաւերի, Բոլնիս-Խաչէնի, Դաղէթի գիւղացիներին վերադառնալու իրենց վայրերը. նրանց դրութիւնը կրիտիքական է, զրկուած են իրենց տնից-տեղից և կատարելապէս կողոպտուած:

Խորհուրդը թողնում է այդ հարցը ինչպէս նաև Ախալքալաքի հայ գաղթականութեան վիճակի մասին դիմում անելու վերաբերեալ Գործադիր Մարմնին. վերջինս պարտաւորւում է հետևեալ նիստին զեկուցում տալու իր արած քայլերի մասին:

Հետևեալ նիստը կայանալու է չորեքշաբթի օրը ցերեկուայ ժամը 1-ին:

Խ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 14 հունվարի 1919, N 9:

---

[86] Պետք է լինի՝ Խորհրդի:

[87] Խոսքը 1919 թ. հունվարի 13-ի նիստի մասին է:

N 56

Հաղորդագրություն՝ հայ գաղթականներին օգնելու և խնամելու գործը՝ վրաց իշխանությունների կարգադրանքով առժամանակ կասեցնելու մասին

Շնորհիւ Վրաստանի կառավարութեան ձեռք առած արտակարգ միջոցների, գաղթականական մարմինները զրկուեցին նրանց օգնելու հնարաւորութիւնից: Մի կողմից կնքուեց Ազգային Խորհրդի գաղթականական բաժինը, գրաւուեց նրա գոյքը, միւս կողմից ձերբակալուեցին գաւառներում աշխատողները: Բռնագրաւման ենթարկուեցին Բորժոմի, Բակուրիանիի և այլ շրջաններում գտնուող գաղթականական մարմինների հացի, շորեղէնի, դեղօրայքի պահեստները:

Տե՛ս Գաղթականութիւնը //
Յառաջ, 18 հունվարի 1919, N 6:

N 57

Պատգամավոր Տ. Ավետիսյանի հաշվետվությունը՝ Վրաստանի խորհրդարանի կազմում ՀԱԽ-ի լիազորների գտնվելու մասին

<…> Պարլամենտը ընդունեց մեզ շատ սառն և շարունակ մեր առաջ խոչընդոտներ ստեղծեց, որ արգելում էր մեզ ակտիւ կերպով մասնակցել պարլամենտի աշխատանքներին: Բազմաթիւ կոմիսիաներում, որտեղ կատարւում է աշխատանքի մեծագոյն մասը, մենք տեղ չգտանք: Բազմիցս դիմել ենք, թէ՛ գրաւոր և թէ՛ բանակցութիւններ վարելու ժամանակ, որ մեզ

համապատասխան տեղ տրի սինիորէն կոնւենտում[88], բայց մինչև օրս[89] մենք դրական պատասխան չստացանք:

Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութիւն՝ ներկայացուցչական ժողով // Յառաջ, 18 հունվարի 1919, N 6:

N 58

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հունվարի 19-ի նիստի մասին

Նախագահում է [Դ.] Դաւիթխանեանը: Նախագահը նիստը բանալով յայտնում է, որ Երևանում վախճանուել է Մինաս Բերբերեանը[90], որը Ազգային Խորհրդի նախկին անդամ էր. դրւատում է նրա անփոխարինելի կորուստը – իր մասնագիտութեան մէջ – մեր հայրենի իրականութեան մէջ: Ապա յայտնում է, որ հենց այսօր առաւօտեան կնքեց իր մահկանացում Հայ Յեղ. Դաշնակցութեան հիմնադիր և լիդեր ու հայ նշանաւոր գործիչ Ռոստոմ Զորեանը: <…> Առաջարկում է երկու գործիչների յիշատակը յարգելու համար կանգնել ոտքի, յայտնել՝ Գործադիր Կոմիտէի միջոցով նրանց ընտանիքներին ցաւակցութիւն և այն կուսակցութիւնների կենտրոնական մարմիններին, որոնց պատկանում էին հանգուցեալները, Բերբերեանը – Հայ Ժող. Կուսակցութեան, իսկ Ռոստոմը - Դաշնակցութեան:

---

[88] Խոսքը կուսակցական խմբակցությունների ավագների խորհրդի մասին է:

[89] Իմա՝ 1919 թ. հունվարի 16-ը:

[90] **Բերբերյան Մ. Հ.** (1871-1919), ծն. Նոր-Նախիջևանում, ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական բաժինը, այնուհետև վարել է նաև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչի պաշտոնը, վերջին աշխատանքի տեղը եղել է՝ ՀՀ-ի պետական վերահսկիչ: Նրա մասին մանրամասն տե՛ս Ժողովրդի Ձայն, 16 հունվարի 1919, N 11:

Այնուհետև ժողովը լսեց Քութայիսից եկած հայ վարժուհի օր. Ղարագեօզեանի զեկուցումը Թիֆլիսից՝ Քութայիս գերեվարուած հայերի վիճակի մասին: Այնտեղ տակաւին 1701 հոգի կան մնացած, միանգամայն մատնուած անուշադրութեան ու անհոգ վերաբերմունքի: Լցուած են բանտերում իրար վրայ թափուած. հիւանդները առողջների հետ մէկտեղ, միևնոյն սենեակում են ապրում, օրական շնչին կտոր ճաղի[91] ծամելով: Կազմուած է մի յանձնախումբ 3 հոդուց, որ թշուառներին որոշ մխիթարութիւն է պատճառում: <…>

Ժողովը յանձնարարեց Գործադիր Կոմիտէին աշխատելու, որ անմիջապէս վերադարձուին Քութայիսի տարագրուածները:

Այնուհետև զեկուցում է Ա. Երզնկեանը կառավարութեան հետ ունեցած տեսակցութեան մասին: Խօսել է ա) Բորչալուի տեղահան եղած հայ գիւղացիների վերադարձի, բ) Զօրքերը գիւղերից հեռացնելու, գ) Ռէկուիզիցիայի վերացման մասին և դ) Քննութիւն նշանակուի այդ վայրերում կատարուած դէպքերի առթիւ: Յիշեալ կէտերը խոստացուել են ի կատար ածելու անմիջապէս: Բացի դրանից ազատօրէն թոյլատրուելու է փախստականների վերադարձը՝ իրենց վայրերը: Միայն Վլադիկաւկազի հայ գաղթականութեան վերադարձի համար բացասական պատասխան է տրուած՝ բծաւոր տիֆի չտարածուելու հանգամանքով:

-- Վերաքննւում է քաղաքային ընտրութիւնների առթիւ կառավարութեան դիմելու հարցը: Ձայների ճնշող մեծամասնութեամբ որոշւում է դիմումը չկատարել. այլ ամեն բան այդ ուղղութեամբ կատարել դումայում – ֆրակցիաների միջոցով:

---

[91] Խոսքը եգիպտացորենի ալյուրից պատրաստված հացի մասին է:

Ժողովի վերջում Գործադիր Կոմիտէի պատճառաբանեալ առաջարկով, որոշւում է Ազգային Խորհրդի բոլոր ծառայողներին նիւթական օժանդակութիւն անել՝ տօների առթիւ:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 22 հունվարի 1919, N 14

N 59

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հունվարի 24-ի նիստի մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի հերթական նիստը կայացաւ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան դահլիճում նախագահութեամբ պ. Ա. Մխիթարեանի (Հ. Ժ. Կ.) ցերեկ ժամը 1-ին:

Ժողովը բացուելուց յետոյ խօսք տուեց Գործադիր Մարմնի անդամ և գաղթականական մասի վարիչ պ. Յովսեփ Արդութեանին (Դաշն.)՝ զեկուցելու գաղթականների վերադարձի մասին: Զեկուցումից պարզուեց, որ Գործադիր Մարմինը յարաբերութեան մէջ մտնելով Վրաստանի հանրապետութեան կառավարութեան հետ՝ թոյլտուութիւն է ձեռք բերել երկու գնացք ստանալու իւրաքանչիւրը 40 վագոնից բաղկացած, որոնք պէտք է մինչև Ալէքսանդրապոլ հասցնեն մեր գաղթականներին: Այդ գնացքներից առաջինը մեկնելու է ամսիս 25-ին, իսկ միւսը 27-ին և նրանք Գործադիր Մարմնի տրամադրութեան ներքոյ են մնալու գաղթականներին տեղափոխելու համար մինչև այդ գործի աւարտումը: Գնացքները մեկնելու են Նաւթլուղ կայարանից[92], ուր վրաց կառավարութեան և Գոր-

[92] Խոսքը Թիֆլիսի երկու երկաթուղային կայարաններից մեկի մասին է:

ծաղիր Մարմնի ներկայացուցիչները պիտի առանձին կազմուած ցուցակներով տեղաւորեն գաղթականներին նշանակուած վագոններում: Եւ վրաց կառավարութեան ներկայացուցիչը պէտք է ուղեկցէ գնացքներին մինչև սահմանագլուխը, իսկ Գործադիր Մարմնի ներկայացուցիչ և յատուկ նշանակուած ֆելդշեր դեղորայքով պիտի գաղթականներին հասցնեն Ալէքսանդրապոլ:

Գործադիր Մարմնի որոշմամբ իւրաքանչիւր անգամ վերադարձից յետոյ վագոնները պէտք է ախտահանութեան ենթարկուեն՝ վարակիչ հիւանդութիւնների առաջն առնելու համար: Բացի այդ գաղթականութեանը տանելու և ճանապարհին զանազան թիւրիմացութիւններից ազատ պահելու համար՝ կառավարութեան հետ համաձայնութիւն է կայացրած, որ մաքսային ձևականութիւնները կատարուեն ո՛չ թէ սահմանագլխին, այլ այստեղ՝ Թիֆլիսում: Թոյլ է տրւում վերցնել հետը շատ քիչ քանակութեամբ շաքար և ալիւր, ո՛չ աւելի երկուերեք ֆունտից ամեն մի շնչին:

Իւրաքանչիւր գաղթականին ճանապարհի համար պաշար է տրւում Գործադիր Մարմնի որոշմամբ 5 ֆունտ հաց: Մտածւում է նաև վագոնները տաքացնելու մասին, որպէսզի գաղթականները ազատ մնան մրսելուց և հիւանդանալուց:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանում պարէնի սուր ճգնաժամ է և գաղթականները կարող են այնտեղ աւելի անտանելի դրութեան մէջ ընկնել, գործադիր մարմինը որոշել է գաղթականներին տեղափոխել որոշ սիստեմով. առաջին հերթին նրանց, որոնք այժմեան Հայաստանի հանրապետութեան բնակիչներն են կամ կապեր ունեն այնտեղ և բնակարանի ու պարէնի դժուարութիւններ չեն հանդիպի, ինչպէս օրինակ Փամբակի, Ալէքսանդրապոլի շրջանի գաղթա-

կաններին, այլ և Կարսի շրջանից նրանց, որոնք Ալէքսանդրապոլի հետ կապ ունեն, կամ որոնց ընտանիքի մի մասն այստեղ է, միւս մասն Ալէքսանդրապոլում և այլն: Ինչ վերաբերում է Կարսի շրջանի և քաղաքի գաղթականութեանն առհասարակ, պէտք է դէռ մի փոքր սպասել, մինչև որ այնտեղի դրութիւնը լիովին պարզուի և վերադարձի համար հնարաւորութիւններ ստեղծուեն:

Թիֆլիսում և շրջակայքում եղած գաղթականութիւնից ազատուելուց յետոյ միայն կարելի է կազմակերպել նաև Հիւսիսային Կովկասի գաղթականների վերադարձը, նախ՝ ճանապարհի յարմարութիւններ չունենալու, երկրորդ՝ կառավարութեան առաջադրած ժամանակաւոր արգելքի և երրորդ՝ պարենաւորման դժուարութիւնների պատճառով:

Պէտք է շեշտել մի հանգամանք ևս, որ վրաց կառավարութիւնը երկու գնացք դնելով մեր տրամադրութեան տակ՝ երաշխաւորութիւն է պահանջում, որ այդ գնացքները անվնաս կը վերադարձուեն իրեն: Գործադիր Մարմինն ի հարկէ տուել է այդ երաշխաւորութիւնը:

Լսելով այս զեկուցումը, թեր և դէմ վիճաբանութիւններից յետոյ Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը որոշեց հաստատել Գործադիր Մարմնի վճիռները և յանձնարարել նրան՝ կազմակերպել վերադարձի գործը յիշուած ուղղութեամբ, միևնոյն ժամանակ առաջին իսկ գնացքի հետ մարդ ուղարկելու Ալէքսանդրապոլ՝ առտեղեւն ծանօթանալու տեղի դրութեան և հանգամանքների հետ և նրա համաձայն զեկուցումն ներկայացնելու Ազգային Խորհրդին:

Այնուհետև գաղթականական զանազան շրջանների լիկուիդացիայի, Ախալքալաքի գաղթականութեան դրութեան և նրան հասցնելիք օգնութեան մասին Գործադիր Մարմնի կող-

մից զեկուցումն կարդաց բժշկական-սանիտարական մասի վարիչ բժ. Կար. Ստեփանեան (Հ. Ժ. Կ.): Նա յայտնեց, որ այդ զեկուցումը կազմուել է բոլոր հարցերը առանձին յանձնաժողովում քննելուց յետոյ, որ յատուկ այդ նպատակով կազմուած էր և զեկուցման արդիւնքները հաստատուած են Գործադիր Մարմնի կողմից: Զեկուցման մէջ շեշտելով այն հանգամանքը, որ Բակուրիանում և Ծալկայում գաղթականներ բոլորովին չեն մնացել, Մանգլիսում միայն 400 գաղթական հայ, Բելի-Կլիւչում 100 հոգի, իսկ Ախալցխայում ժամանակաւորապէս մնացել են և դեռ չեն կարողացել Ախալքալաք անցնել 2000 հոգի, Գործադիր Մարմինը առաջարկում է լիկւիդացիայի ենթարկել անմիջապէս այդ շրջանների բոլոր գաղթականական հիմնարկութիւնները (Բորժոմ, Ախալցխա, Բակուրիանի, Ծալկա, Մանգլիս), բայց թողնելով այդ նպատակի համար անհրաժեշտ գումարը:

Բայց որովհետև Ախալքալաքի գավառ վերադարձած գաղթականների դրութիւնն ևս շատ անբաւարար է թէ՛ պարենաւորման և թէ՛ բժշկա-սանիտարական տեսակէտից (գաւառում ներկայումն կայ 45 հազար հայ ազգաբնակութիւն, որից 15 հազարը ծայրահեղ չքաւոր դրութեան մէջ), այդ պատճառով Գործադիր Մարմինն առաջարկում է կազմակերպել այդ գավառում օգնութիւն հետևեալ առաջնորդող սկզբունքներով:

ա) Գործի մէջ մտցնել կենտրոնացման սիստեմ:

բ) Ախալքալաքը դարձնել գործունէութեան կենտրոնատեղի:

գ) Նշանակել երկու յատուկ լիազօր, մէկը պարենաւորման ղեկավարութեան, միւսը՝ բժշկա-սանիտարական մասի վերահսկողութեան համար: Սրանք ունենալու են նաև հաշուա-

պահ և վերահսկիչ՝ նշանակուած Գործադիր Մարմնի կողմից, իսկ մնացած շտատը կազմում են իրենք:

դ) Յատուկ լիազօրները պէտք է ընտրել տան տեղական կոմիտէներ և գործակցեն նրանց հետ, նախապէս ներկայացնելով Գործադիր Մարմնին նախագիծ այդ մասին և ստանալով նրա հաւանութիւնը:

ե) Գաւառի պարենաւորման գործը հեշտացնելու ազգաբնակութեանը դիւրութիւններ տալու համար՝ զանազան կենտրոններում բաց անել պահեստներ, այդ նպատակի համար նուագում յատկացնելով 200 հազար ռուբլի իբրև շրջանառութեան մէջ եղող դրամագլուխ: Պահեստների նպատակը պէտք է լինի էժան մթերք մատակարել ազգաբնակութեանը և միայն ծայրայեղ չքաւորներին ձրիաբար կերակրել:

զ) Բաց անել բժշկական պունկտեր Ախալքալաքում, Բարալետում, Սուլտայում, Մեծ Խանչալլում և Գանձայում: Իսկ ուրիշ հինգ կենտրոնական գիւղերում, ինչպէս օրինակ՝ Խանդօ, Արագով, Վաչեան, Ջիգրաշէն և Սաթխա, բաց անել ֆելդշերական կայաններ: Այս նպատակն իրագործելու և հիւանդութիւնների դէմ կռուելու համար հարկաւոր է յատկացնել 250 հազար ռուբլի:

Ցանկալի կը լինէր ի հարկ է, բաց անել նաև մի մեծ հիւանդանոց 500 մահճակալով Ախալքալաքում, բայց դժբաղդաբար այդ անհնար է սաստիկ մեծ ծախքեր պահանջելու պատճառով (միայն 100 մահճակալով հիւանդանոցը վեց ամսուայ ընթացքում կնստի շուրջ 600 հազար ռ.):

Բոլոր վերոյիշեալ կարիքների համար պահանջւում է ընդհանուր հաշուով 790 հազար ռուբլի, առանց հիւանդանոցի:

Գործադիր Մարմինը խնդրում է հաստատել այս որոշումները և բաց թողնել համապատասխան վարկը:

Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը երկար թեր և դէմ արտայայտութիւններից յետոյ որոշեց հաստատել Գործադիր Մարմնի առաջարկները և յանձնարարեց նրան. միջոցներ ձեռք առնել աւելի ևս ընդարձակելու օգնութեան գործը, որ բաւարար լինել չէ կարող տիրող ծով կարիքի հանդէպ:

Ժողովը փակուեց ժամը 4-ին:

Թղթակից

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 26 հունվարի 1919, N 18:

N 60
Հաղորդագրություն՝ Բաթումի Հայոց ազգային խորհրդի կազմավորման մասին

<…> Արդէն կազմուած է Հայոց Ազգային խորհուրդ, որի մէջ մտնում են՝ Ք. Դանիէլեան, Ա. Նիկողոսեան, Գ. Եղիգարեան, Օ. Մարութեան, Աշոտ Մնդոյեան[93], Ա. Մարտիրոսեան, Յովհ. Վարդիկեան, Յ. Տէր-Մկրտչեան, Ե. Շահմելիքեան, Ռ. Շաբանեան, Մ. Չագոեան և Մ. Գալուստեան: Խորհրդի կից կազմուել են գաղթականական, բժշկական, իրաւաբանական և ֆինանսական սեկցիաներ: Խորհուրդը նիւթական մեծ կարիք է զգում: Տեղացի հարուստ հայերը նոյնպէս գրեթէ կարիքաւոր են դարձել: Ուրեմն յոյս դնել տեղացիների վրայ՝ դա անհնարին է:

[93] Այնուհետև Ա. Մնդոյանն ընտրվել էր Բաթումի ՀԱԽ-ի ղեկավար:

Այդ իսկ պատճառով ազգային խորհուրդը մի պատգամաւորի միջոցով դիմել է Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդին՝ խնդրելով նիւթական նպաստ: <…>

Տե՛ս Կովկաս՝ Բաթումի ընթացիկ կեանքից //
Յառաջ, 1 փետրվարի 1919, N 16:

N 61
Լրատվություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. փետրվարի 7-ի նիստի մասին

Ուրբաթ, փետրուարի 7-ին տեղի ունեցաւ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի նիստը:

Քննութեան էին դրուած.

1. Դէպքերը Սոչիի շրջանում
2. Հարցապնդում գաղթականների մասին
3. Յովնանեան դպրոցի հոգաբարձ. ընտրութեան հարցը:

Գործադիր մարմնի զեկուցումից պարզւում է, որ համաձայն Սոչիի Հայոց Ազգային խորհրդի հեռագրի[94], այնտեղ տեղի են ունեցել ընդհարումներ և բռնութիւններ վրաց զօրքերի և տեղական ազգաբնակութեան միջև[95]: Կոնֆլիկտը կարող է ծաւալւել, եթէ ձեռք չառնւեն համապատասխան միջոցներ:

Խորհուրդը որոշում է առաջադրել Գործադիր մարմնին դիմել կառավարութեանը և խնդրել, որ մի յատուկ յանձնաժողով, որի մէջ պիտի մտնի նաև Ազգ. խորհրդի ներկայացուցի-

---

[94] Տե՛ս Սոչիի շրջանի Հայոց ազգային խորհրդի դիմումը // Աշխատաւոր, 25.03.1919, N 57:

[95] Այս նշանավոր իրադարձությունների մասին տե՛ս Մաիլյան Բ. Վ . Վրաստանի կառավարությունը և Սոչիի շրջանի համշենահայ համայնքը (1918-1920 թթ.) // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV, Երևան, 2005, էջ 167-170:

չը, մեկնի այդ շրջանը միջադէպը հարթելու համար: Հետևանքների և ձեռք առնուելիք միջոցների մասին պիտի նախօրոք հաղորդել Սոչիի խորհրդին:

Քննվում է նաև Ա. Տէր-Գրիգորեանի[96] սրանից մէկ ու կէս ամիս առաջ մտցրած հարցապնդմանը գաղթականների վիճակի մասին: Հարցապնդման հեղինակը աշխատում էր ապացուցանել, որ այն օրւանից, ինչ գաղթակ. խնամելու գործը անցաւ Ազգ. Խորհրդին, գաղթականների վիճակը վատթարացաւ: Գաղթականական բաժնի վարիչի բացատրութիւնները միանգամայն հերքելով հարցապնդման մէջ յիշւած փաստերը, ապացուցեցին, որ հենց ինքը պ. Տէր-Գրիգորեանը որպես լիազօր կանգնած չի եղել իր կոչման բարձրութեան վրայ և բացի գաղթականների խնամելու գործի վրայ հսկելուց՝ եղել է նաև Վրաստանի պարենաւորման նախարարութեան լիազօր – մի բան, որ անշուշտ վնասում էր գաղթ. շահերին:

«Ազգային Խորհուրդը լսելով Ա. Տէր-Գրիգորեանի հարցապնդումը և գործադիր մարմնի գաղթ. բաժնի վարիչի բացատրութիւնները գաղթականների վիճակի մասին, անհրաժեշտ համարեց յանձնարարել գործ. մարմնին առաջիկայ նիստին մանրամասն զեկուցում ներկայացնել խորհրդին գաղթականական գործի արդի վիճակի մասին»:

Բանաձևը ընդունւում է: Ուշ լինելու պատճառով օրակարգի միւս հարցերի քննութիւնը յետաձգւում է հետևեալ նիստին:

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհուրդ //
Յառաջ, 9 փետրվարի 1919, N 23:

---

[96] Խոսքը Ծալկայի շրջանում Հայ գաղթականական կազմակերպությունների գլխավոր խորհրդի նախկին լիազորի մասին է:

N 62

Լրատվություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. փետրվարի 7-ի և 14-ի նիստերի մասին

Առաջին ժողովին նախագահում է Ա. Զոհրաբեան, իսկ երկրորդին՝ Դ. Դաւիթխանեան:

Լսելով ամենից առաջ զեկուցումն Սոչիի դէպքերի մասին, ժողովն անցնում է Դաղէթ-Խաչէնի անցքերին, որոնց հետևանքով ժողովուրդը ենթակայ է ամեն տեսակ հարստահարութիւնների, բռնութիւնների և նեղութիւնների՝ չի կարողանում տուն վերադառնալ և կոտորւում է անտառներում ու ձորերում քաղցից ու հիւանդութիւններից ու սառնամանիքից: Որոշւում է դիմել կրկին անգամ վրաց կառավարութեանը և խնդրել վերջ դնել կատարուող այլանդակութիւններին[97]:

---

[97] Նշված սոսկալի ծանր կացությունը ստեղծվել էր Վրաստանի և Հայաստանի միջև առաջացած զինված հակամարտության հետևանքով, քանզի վրաց զինվորականությունը վրեժխնդիր եղավ գավառի խաղաղ հայ բնակչությունից: Ապօրինի ձերբակալությունները և բռնագրավումները դարձել էին սովորական երևույթ: Ազգային հալածանքի պատճառով Դաղեթ-Խաչենի և Շուլավերի գավառակներում տեղի ունեցան հայերի սպանության բազմաթիվ դեպքեր: Անհրապույր և ամոթալի սույն երևույթների մասին բազմիցս բարձրաձայնել է ժամանակի մամուլը: Տե՛ս «Յառաջ»-ի հետևյալ նյութերը. Դաղէթ-Խաչէնը (16. 01. 1919), Բոլնիս-Խաչէն (30. 01. 1919), Շուլաւէրում եւ իր շրջանի հայ գիւղերում վրաց զօրքերի ձեռքով կատարած թալանն ու աւերածութիւնները (31. 01. 1919), Վրաց զօրքերի անկարգութիւնները հայ գիւղերում (07. 02. 1919), Գազանութիւններ Դաղէթի շրջանում (11. 02. 1919), Վրաց զօրքերի գազանութիւնները Բոլնիս-Խաչէնում (15. 02. 1919), Շամշուլդայում (19. 02. 1919): «Հայ-վրացական պատերազմի կապակցութեամբ կատարուած հակահայկական հալածանքների <…> բացատրութիւնը պէտք է որոնել Վրաստանի հայութիւնը նօսրացնելու եւ տնտեսապէս թուլացնելու այն քաղաքականութեան մէջ <…> որին, հետեւում էր Ժորդանիա-Ռամիշվիլիի կառավարութիւնը իր գոյութեան պահից սկսած՝ վրաց շովինիստներին բաւարարութիւն տալու համար: Պատերազմը հարթել էր այս քաղաքականութեան ճանապարհը: Նրա իրականացման համար այլեւս կարիք չկար

Այնուհետև ժողովն զբաղւում է Արամ Տէր-Գրիգորեանի (ս.-ր.) հարցապնդումով:

Արամ Տէր-Գրիգորեանը սոսկալի գոյներով նկարագրում է գաղթականների կրած տանջանքներն ու կորուստները վերադարձի ժամանակ: 700 հոգի իրենց սայլերով ու եզներով քշել տարել են թուրքերը և մինչև այսօր նրանցից լուր չկայ: Գաղթականական մասի վարիչ Յ. Արղութեանը (դաշնակց.) կուսակցական տեսակէտներով ղեկավարուելով պաշտօնից հեռացրել էր լիազօր Գէորգ Յովսէփեանին, իսկ նրա տեղը նշանակել Արարատ Տէր-Գրիգորեանին, որ շրջում էր Թիֆլիսի փողոցներում: Գաղթականութիւնը հարիւրաւոր զոհեր տուեց, որովհետև Արղութեանը արձակել էր ծառայողների շտատը և միլիցիան, որով և քայքայել էր ամեն կազմակերպութիւն: Ճանապարհներին չեն եղել սննդակայաններ և թէյարաններ, չնայելով Յ. Արղութեանի պնդումին, թէ եղել են: Լիազօրները նստած են եղել իրենց տեղերը վերադարձի ժամանակ և էպիքական հանգստութեամբ հեռագրում էին, թէ գաղթականները գնացին: Միակ լուսաւոր կէտը վերադարձի ժամանակ Զօրեանի գործունէութիւնն է եղել, որ կազմակերպել է ճանապարհին սննդակայաններ և թէյարաններ մինչև Ախալցխա:

Վերադարձից յետոյ սոսկալի վիճակ է տեղումը: Պ. Աբէլեանը[98] մեկնում է գաղթ. մարմնի յանձնարարութեամբ Ախալքալաք, իսկ Զօրեանը բոլորովին չի գնում, վերջացած համա-

---

օրինական ձեւակերպութիւնների յետեւից ընկնել»: Տե՛ս Ջամալեան Ա. Հայվրացական կնճիռը // Հայրենիք (Բոստոն), 1929, ապրիլ, էջ 145: Ժամանակի նշանավոր և իրազեկ գործչի այս սպառիչ խոսքերը, հիրավի հավելյալ մեկնաբանության անհրաժեշտություն չունեն:

[98] **Աբելյան Պողոս Գրիգորի** (1877-1943), հրապարակախոս, Ախալքալաքի հայրենակցական միության վարչության քարտուղար (1918-1919):

րելով իր դերը հիմնած սննդակայանով: Մի քանի օր մնալուց յետոյ վերադարձել է պ. Աբէլեանն ևս և այսօր Ախալքալաքում ոչ մի լիազօր չկայ: Գաղթականութիւնը բոլորովին անտէր է և ենթակայ բարոյական թալանի և ամեն տեսակ բռնութեան: Մինչև անգամ դուխաբորները այս դրութեան վրայ ուշադրութիւն են հրաւիրում իրենց մեմորանդումի մէջ:

Շատ աւելի լաւ չէ գաղթականների վիճակը նոյն իսկ մեր աչքի առաջ Թիֆլիսում[99]: Անտանելի է յատկապէս որբերի դրութիւնը, որոնք որբանոցներից փախչում են, որովհետև դրսում՝ փողոցում աւելի լաւ է, քան թէ որբանոցներում: Որբանոցների դպրոցական մասն էլ շատ վատ է դրուած: Ուսուցիչները կանոնաւորապէս չեն յաճախում իրենց պարապմունքներին և նրանց վրայ հսկելու պարտականութիւն ունեցող դպրոցական վարիչն էլ շատ քիչ հսկողութիւն ունի նրանց վրայ, համարեա ոչինչ:

---

[99] Ըստ «Թիֆլիսի քաղաքային գաղթականական բաժանմունքի կառավարիչ [Օ. Ս.] Բուկշտէյնի՝ քաղաքային վարչութեանը տուած զեկուցումից երևում է, որ անցեալ տարուայ մինչև յունիսի 10-ը Թիֆլիս են եկել մօտ 40000 գաղթական, որոնցից 30 հազարը հովանաւորուել են քաղաքային ինքնավարութեան կողմից, իսկ մանցած 10000-ը որևէ կերպ տեղաւորուել է քաղաքում ու ապրել իրենց միջոցներով: Իսկ այն օրուանից (յուլիսի 17-ին), երբ կառավարութիւնը դադարեցրեց գաղթականներին նպաստ տալ, նրանցից 6 հազար հոգի տեղաւորուեցին 300-րդ վերստում, 1500 հոգի քաղաքային հանրակացարանում, իսկ մնացածը ինքնագլուխ որևէ կերպ տեղաւորուեց քաղաքում: Ներկայումս թէև քաղաքից հեռացողներ չեն եղել, բայց գաղթականների թիւը պակասել է յունիս ամսուայ համեմատութեամբ: Գաղթականների պակասելը եղել է նրանց մահացութեան հետևանքով, որի պատճառն եղել են վարակիչ հիւանդութիւնները և սովը: Այսպէս, յունիսի 1-ից մինչև յունուարի 1-ը, այսինքն 7 ամսուայ ընթացքում, Թիֆլիսում մեռել են 7-8 հազար գաղթական: Մնացած գաղթականներին ներկայումս օգնութիւն են ցոյց տալիս քաղաքային, հայկական, ամերիկական և յունական գաղթակ. մարմինները»: Տե՛ս Գաղթականների վիճակը Թիֆլիսում // Ժողովրդի Ձայն, 14 հունվարի 1919, N 9:

Յիշատակելով այս բոլորը՝ Արամ Տէր-Գրիգորեանը հարցնում է. «արդեօք յայտնի՞ է Ազգային Խորհրդին, որ գաղթականներին օգնելու գործը քայքայուեց այն օրից, երբ ամբողջ գործն անցաւ Ազգային Խորհրդի Գաղթականական Բաժնին, և եթէ յայտնի է, ի՞նչ է մտածում Ազգային Խորհուրդը այդ մասին»:

Խօսք է տրւում պ. Աբէլեանին, որ հաւասարապէս մեղադրում է թէ՛ հին և թէ՛ նոր գաղթականական մարմիններին, որոնց օրով գաղթականների ընդհանուր դրութեան մէջ տարբերութիւն չէ եղել: Յատկապէս մեղադրում է Արամ Տէր-Գրիգորեանին, որ «դարձել էր չարիք» գաղթականութեան համար և իր կայանը հիմնել էր այնտեղ, ուր գաղթական չկար: Հենց Արամ Տէր-Գրիգորեանի օրով և նրա գործունէութեան շնորհիւ եղել են հազարաւոր զոհեր: Պ. Աբէլեանը գաղթականական գործադիր մարմնի գլխաւոր թերութիւններն համարում է ինիցիատիւի պակասութիւնը, դանդաղկոտութիւնը և անտարբերութիւնը զեղծումների հանդէպ: Պէտք է ազատուել կամ այդ թերութիւններից կամ Գործադիր մարմնից:

Այնուհետև մանրամասն բացատրութիւններ է տալիս գաղթականական բաժնի վարիչ Յ. Արղութեանը, որ իր կողմից խոշոր մեղադրանքներ է ուղղում Արամ Տէր-Գրիգորեանի հասցէին, նրան համարելով հազարաւոր գաղթականների կորստեան պատճառը: Յ. Արղութեանը կրկնում է այն բոլոր մեղադրանքները, որ նա բարդել էր Արամ Տէր-Գրիգորեանի վրայ գաղթականական խորհրդում, որի հիման վրայ պաշտօնից արձակուել էր Արամ Տէր-Գրիգորեանը: Որովհետև այդ մեղադրանքները մեր թերթում լոյս տեսան իր ժամանակին, աւելորդ ենք համարում այստեղ նորից կրկնել:

Ուշ լինելու պատճառով առաջարկում է հարցապնդման քննութիւնը յետաձգել հետևեալ նիստին, յանձնարարելով գաղթականական բաժնին ներկայացնել նաև մանրամասն զեկուցումն առհասարակ գաղթականների դրութեան մասին:

Փետրուարի 14-ի ժողովում սակայն պարզւում է, որ հարցապնդումը քննուել չէ կարող, որովհետև Գործադիր Մարմինը կապ չէ գտնում հարցապնդման և գաղթականների դրութեան մասին ներկայացուելիք զեկուցման մէջ: Հարցապնդումը պէտք է սպառել, նրա մասին ցոյց տալ Ազգային Խորհրդի որոշ վերաբերմունքը և ապա անցնել լսելու գաղթականների ընդհանուր դրութեան մասին զեկուցումն: Այս տեսակէտին համաձայնում է ժողովը և որոշում է անցնել հարցապնդման քննութեանը, բայց Արամ Տէր-Գրիգորեանը յայտնում է, որ փաստաթղթերը հետը չէ բերել, որովհետև իրեն Գործադիր Մարմնի անդամ Ա. Ստամբոլցեանն ասել է, որ այսօր հարցապնդումը չի քննուի. այդ պատճառով խնդրում է յետաձգել հարցապնդման քննութիւնը հետևեալ ժողովին և հնարաւորութիւն տալ իրեն երևան բերելու բոլոր փաստերը:

Ժողովն յարգում է Արամ Տէր-Գրիգորեանի խնդիրը, բայց յանձնարարում է Գործադիր Մարմնին անկախ հարցապնդումից հետևեալ ժողովին անպատճառ ներկայացնել իր զեկուցումը:

Այնուհետև դրւում է Դաշնակցական ֆրակցիայի առաջարկը Գործադիր Մարմնի վերակազմութեան մասին, որի մէջ ոյժերի փոխյարաբերութիւնը խախտուել է ի վնաս Դաշնակցութեան բժշկա-սանիտարական և պարենաւորման մասերի վարիչների ընտրութիւններից յետոյ:

Որովհետև պարզւում է, որ այդ հարցի մասին ֆրակցիաների մէջ դեռ ևս համաձայնութիւն չի կայացել, որոշում է

յանձնարարել ֆրակցիաներին համաձայնութեան գալ և զեկուցանել ժողովին ոչ ուշ քան հետևեալ ուրբաթ օրը:

Հարց է յարուցւում Ազգային Խորհրդի նոր ընտրութիւններ նշանակելու մասին: Թեր և դէմ խօսակցութիւններից յետոյ որոշւում է օրէնսդրական յանձնաժողովին երկու շաբաթ ժամանակ տալ, որպէսզի նա իր զեկուցումը ներկայացնէ Ազգային խորհրդին, որից յետոյ և նշանակել ընտրութիւնները:

Ապա զեկուցւում է, որ մինչև այժմ ֆինանս. յանձնաժողովը ոչինչ չէ արել, մինչդեռ մենք դրամ չունենք: Հարց է յարուցւում ստիպողական կամ հարկադրական տուրքի մասին, որ պէտք է հաւաքեն կուսակցութիւնները: Երկար թեր և դէմ առարկութիւններից յետոյ որոշւում է ընտրել մի ֆինանս. նոր կոմիսիա և յանձնարարել նրան մի շաբաթուայ ընթացքում զեկուցում ներկայացնել Ազգային խորհրդին, թէ ի՞նչ միջոցներով կարելի է դրամ հայթայթել Ազգային Խորհրդի համար, միևնոյն ժամանակ պարզելով նաև Ազգային Խորհրդի կարիքները:

Նոր ֆինանս. յանձնաժողովի անդամներն են Ա. Երզնկեան (ս.-դ.), Ա. Յովհաննիսեան (ս.-ր.), Պ. Դոլուխանեան (Հ.Ժ. Կուս.) և Հ. Եաղճեան (դաշն.):

Արշ. Մխիթարեան (Հ. Ժ. Կուս.) առաջարկում է Ազգային Խորհրդի արտակարգ նիստ հրաւիրել, եթէ քաղաքում արտաքոյ կարգի նշանակութիւն ունեցող դէպքեր պատահելու լինեն: Ժողովն ընդունում է այն առաջարկութիւնը:

Սոցիալիստ-յեղափոխականների ֆրակցիան խնդրում է Ազգային Խորհրդին քննիչ յանձնաժողով ընտրել Արամ Տէր-Գրիգորեանի և գաղթականական նախկին խորհրդի գործունէութիւնը քննելու համար:

Ժողովը որոշում է գաղթականական նախկին խորհրդի գործունէութիւնը մի կողմ թողնել իբրև անկախ խնդիր, իսկ Արամ Տէր-Գրիգորեանի գործունէութիւնը քննելու համար յանձնաժողով ընտրել հարցապնդման քննութիւնից յետոյ:

Թղթակից

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 16 փետրվարի 1919, N 36:

N 63
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. փետրվարի 21-ի նիստի մասին

Ժողովը բացւում է նախագահութեամբ Լ. Թումանեանի (ս.-դ.) Կ[ովկասի] Հ[այ] Բարեգործական ընկերութեան դահլիճում երեկոյան 6 և կէս ժամին:

Ամենից առաջ ժողովն զբաղւում է Ախալքալաքի դրութեամբ և որոշում է կայացնում յանձնարարել Գործադիր մարմնին շտապեցնել Ազգային Խորհրդի Պարենաւորման լիազօրի առաքումը՝ տեղական ժողովրդի պարենաւորման ինքնօգնութեան գործը կազմակերպելու համար:

Այնուհետև ամբողջ երեկոն նուիրում է գաղթականութեան դրութեան մասին Արամ Տէր-Գրիգորեանի հարցապնդմանը: Խօսում են այդ խնդրի մասին Արամ Տէր-Գրիգորեանի, Բ. Թոփչեան, Պ. Ստամբոլցեան, Ար. Մելքոնեան, [Ար.] Մարգարեան, Ա. Մխիթարեան, Ա. Երզնկեան և Մ. Դարբինեան: Սոցիալիստ ռևոլիւցիոներների ֆրակցիան բերում է մի շարք փաստեր ու տեղեկութիւններ՝ ապացուցանելու համար գաղթականական գործի վատ դրութիւնը թէ՛ շրջանում և թէ՛ այստեղ Թիֆլիսում: Օրինակ՝ յայտնում են թէ Ծալկայի լիազօր

<…> Արարատ Տէր-Գրիգորեանը փոխանակ եղած մթերքն ու հագուստեղէնը բաժանելու գաղթականներին, ծախել է շուկայի գներից էլ էժան կողմնակի անձանց: Ողորմելի է 300-րդ վերստի գաղթականների դրութիւնը. այնտեղ հազիւ 3000 մարդ կայ, բայց ամեն օր 4000-ի կամ 4500-ի պարէն է վերցուում: Ծառայողների վարձումը լինում է տարօրինակ ձևով, անհաշիւ, առանց Գործադիր մարմնի որոշումների և այնպիսի անպատասխանատու անձինք տասնեակ հազարներով աւանս են ստանում. իբրև օրինակ բերւում է նոր որբանոցի կառավարիչը, որ երկու ամսից ի վեր չի կարողացել որբերին տեղափոխել, բայց ծառայողներ վարձել է իր կողմից, դարձեալ առանց Գործադիր մարմնի գիտութեան:

Նոյպիսի տարօրինակութիւն կայ գերիների գործի մէջ: Գործադիր մարմինը որոշել է հրաւիրել միայն 3 մարդ, բայց պարզւում է, որ 3-4 հոգի էլ ջոկ են հրաւիրուած և ռոչիկ են ստանում, յայտնի չէ, թէ ո՞ւմ կարգադրութեամբ: Դրա դէմ բողոքող ծառայող Խաչատրեանին Գաղթականական մասի վարիչն արձակել է յանդգնութեան համար:

Գաղթ. մասի վարիչը բանաւոր ձևով պաշտոնից հեռացրել է Յակովբ Ղազարեանին և Գէորգ Յովսէփեանին, առանց պաշտօնական ձևակերպումները կատարելու, որի պատճառով յիշեալ պարոնները իրենց դեռ ևս հաշւում են ծառայութեան մէջ և ռոճիկ են պահանջում, իսկ Գործ. Մարմինը ստիպուած է լինում բաւարարել նրանց:

Ծառայողների շտատը չի պակասում, շնորհիւ Յ. Արղութեանի արգելքների: Շտատի յանձնաժողովը վաղուց իր գործը վերջացրել է, իսկ Արղութեանը իր եզրակացութիւնը ձգձգում է

շաբաթներով և բազմաթիւ աւելորդ ծառայողներ ռոճիկ են ստանում[100]:

Վերջին 4 ամսուայ ընթացքում Ծալկայի 25000 գաղթականների համար ուղարկուել է ընդամենը 200 փ. ալիւր, 50 փ. շաքար և 200 հազար ռ. դրամ, որից 150 հազար ռ. ծախսուել է ծառայողների ռոճիկների վրայ, իսկ 50000-ը միայն գաղթականների վրայ:

Գաղթ. բաժինը անփոյթ է դէպի կեղծումները և չի պատժում ու պատասխանատուութեան կանչում կեղծարարներին: Իբրև կեղծումներ գործող յիշում են Բզնունի, Յով. Մալխասեան և այլն:

Նոյնիսկ Դաշնակցութեան օրգան «Աշխատաւորը» յայտնել է այն միտքը, թէ գաղթ. գործը Ազգային Խորհրդին անցնելուց յետոյ մնացել է միևնոյն վատթար դրութեան մէջ, ինչպէս առաջ:

Ս.-ր.-ներից մէկը մինչև անգամ յայտարարում է, որ նոյնիսկ բարի կամքն ու բարի հոգին պակասում է գաղթականներին օգնելու համար ([Ար.] Մարգարեան):

Իս. Յարութիւնեան (Հ. Ժ. Կ.) բացատրութիւն է տալիս Ամերիկեան և Կ. Հ. Բ. Ընկերութեան մի որբանոցի մասին և յայտնում է, որ այդ որբանոցները թէ՛ սննդի, թէ՛ հագուստի, թէ՛ բժշկա-սանիտարական և թէ՛ դաստիարակչական տեսակէտներից գտնուում են միանգամայն բաւարար վիճակի մէջ,

---

[100] Ժամանակի ականատեսներից մէկը՝ նկարագրելով ՀԱԽ-ի գրասենյակում տիրող մթնոլորտը՝ ասում էր, թե «սեղանների շուրջը անգործութիւնից յոգնած զանազան տեսակի ու տիպի լիազօրներ ու կոնտրոլեօրներ յօրանջելով ու սրախօսութիւններով են սպանում իրենց “աշխատանքի” ժամերը»: Տե՛ս Բաց նամակ Վիրահայ Ազգային Խորհրդի գործադիր մարմնին // Աշխատաւոր, 25 մարտի 1919:

այսպէս որ որբանոցների վատ դրութեան մասին եղած նկարագրութիւնները չեն կարող այս 10 որբանոցներին վերաբերուել, այլ գուցէ վերաբերում են միւս 4 որբանոցներին, որ պահում են Մոսկուայի կոմիտէտը, հայ կանանց միութիւնը, ինքը Ազգ.Խորհուրդը - և այլն:

Բ. Թոփչեան (Դաշն.) և ուրիշները գտնում են երեք գլխաւոր կոնկրետ մեղադրանք, որոնց համար անհրաժեշտ է քննութիւն կատարել. I. սննդակայաններ չեն եղել վերադարձի ժամանակ, II. մթերքները գաղթականներին բաժանելու փոխարէն՝ վաճառել են, III. հարկաւոր հսկողութիւն չէ եղել պահեստների վրայ, որոնք ենթարկուել են թալանի:

Գաղթականական մասի վարիչ Յ. Արղութեան Գործադիր մարմնի կողմից բացատրութիւններ է տալիս յարուցուած մեղադրանքների առթիւ և յայտնում, որ Գործ. մարմինը արել է այն ամենը, ինչ որ հնարաւոր է մեր պայմաններում: Ինչ վերաբերում է կեղծարարներին, ի հարկէ նրանց վերաբերմամբ պէտք է քննութիւն նշանակել և պատժել յանցաւորին:

Հ. Եաղճեան (Դաշն.) պակասութիւնների մեծ մասը վերագրում է մեզ շրջապատող դրութեանը և պնդում, որ ներկայ պայմաններում աւելի բան անել կարելի չէր և յարձակումներն անարդար են:

Ա. Երզնկեան (Ս. Դ.) խնդրում է Հ. Եաղճեանին իր գեղեցիկ ճառն ուղղել իր ընկերներին և «Յառաջ»-ին, որոնք շարունակ յարձակումներ են գործում Գործադիր մարմնի վրայ, Ազգային Խորհուրդը անուանում «քառակուսի անիւ»[101], մոռանա-

[101] Ճառախոսն, ըստ երևոյթի, ի նկատի ուներ «Աշխատաւոր» լրագրում ընծայված հետևեալ կարծիքը. «Վրաստանի Հայոց Ազգային խորհուրդը ունեցել է 4-5 նիստ և այդ նիստերը եկել են ապացուցելու, որ այդ մարմինն իր գործունէութեամբ բնաւ չի արդարացնում իր վրայ դրած յոյսերը <…> Ազ-

լով, որ գոնէ գաղթականական գործի բոլոր լիազօրներն ու վարիչները դաշնակցականներն են և քառակուսի անիւը նրանց վերաբերել չէ կարող: Դաշնակցականները պիտի ի նկատի ունենան, որ այսօր իրենց ճակատին կպչում է այն փայտի հակառակ ծայրը, որով իրենք շարունակ փորձում են հարուածել Ազգային Խորհրդին:

Քննութիւն նշանակել Գործ. մարմնի վրայ միանգամայն անթոյլատրելի է յայտարարում են Ա. Երզնկեան (Ս. - Դ.) և Ա. Մխիթարեան (Հ. Ժ. Կ.): Պետք է յանձնել գործ. մարմնին՝ կեղծարարների գործերը քննել և նրանց ենթարկել [պատասխանատվութեան]:

Վիճաբանությունները համարելով աւարտուած՝ առաջարկում են մի քանի բանաձևեր, որոնցից ընդունւում է Ա. Մխիթարեանինը. բանաձևի միտքը հետևեալն է. «Ազգային Խորհուրդը լսելով Արամ Տէր-Գրիգորեանի հարցապնդումը գաղթականութեան դրութեան մասին և լսելով գործ. մարմնի գաղթականական մասի վարիչ Յ. Արղութեանի բացատրութիւններն և հռետորների վիճաբանութիւնները, բացատրութիւնները գտնում է բաւարար և յանձնարարում է գործադիր մարմնին՝ հարցապնդման և բացատրութիւնների ժամանակ յիշուած մի քանի անձանց վերաբերութեամբ եղած մեղադրանքների մասին քննութիւն կատարել և եզրակացութիւնները ներկայացնել Ազգային Խորհրդին»:

գային խորհուրդ կոչվածը դարձել է մի մարմին, ուր կուսակցութիւնները մարզւում են հռետորական և ՝դիւանագիտական՝ պարապմունքների մէջ: <…> Պէտք է օր առաջ նշանակել Վրաստանի հայութեան Սահմ. ժողովի ընտրութիւնները և հնարաւորութիւն տալ, որ դեմոկրատիայի իսկական ընտրելիներն իրենց ձեռքը վերցնեն հայ աշխատաւորութեան կրթական-կուլտուրական կեանքի ղեկը»: Տե՛ս Քառանկիւնի անիւը // Աշխատաւոր, 27 սեպտեմբերի 1918:

Ժամանակի ուշ լինելու պատճառով՝ օրակարգի միւս հարցերը մնում են հետևեալ նիստին և ժողովը փակւում է ժամը 11-ին:

Թղթակից

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 23 փետրվարի 1919, N 42:

N 64
Հաղորդագրություն՝ «Դաշնակցության» Թիֆլիսի ներկայացուցչական ժողովում Վրաստանի ՀԱԽ-ի ՀՅԴ խմբակցության հաշվետվության մասին

Երեքշաբթի, ամսոյս 18-ին «Շահխաթունեան» ընթերցարանում կայացաւ Հ. Յ. Դ-թեան Թիֆլիսի ներկայացուցչական ժողովը նախագահութեամբ ընկ. [Ան.] Ղազազեանի: <…>

Վիրահայ Ազգային Խորհրդի Դաշնակցական ֆրակցիայի կողմից զեկուցում են ընկ. Յ. Արղութեան և ընկ. Բ. Թոփչեան, որից առաջինը զեկուցում է գաղթականական բաժնի մասին, իսկ վերջինը՝ Ազգային Խորհրդի ընդհանուր գործունէութեան մասին:

Ընկ. Յ. Արղութեան բաժանելով գաղթական գործը 4 էտապների՝ I. նախքան յեղափոխութիւնը, երբ գաղթականական գործը ընդհանուր պետական գործն էր և պետութիւնը իր ստեղծած ապարատով վարում էր այդ գործը, II. յեղափոխութիւնից յետոյ պետութեան ստեղծած ապարատը անցաւ գաղթականական ընդհանուր գործադիր մարմնին, III. էտապ, երբ գործը անցաւ ազգային մարմինների ձեռք, և մասնաւորապէս հայ գաղթականների գործը Հայոց Ազգային Խորհրդի ձեռքը և IV. երբ Ազգային Խորհուրդը Երևան անցնելուց յետոյ կազմւեց

պարիտետ սկզբունքով Վիրահայ Ազգային Խորհուրդ ու սկսեց տնօրինել հայ գաղթականային վիճակը: Ընկերը մանրամասն կանգ առնելով այս վերջին շրջանի վրայ, ընդհանուր գծերով նկարագրեց գաղթականների այն սոսկալի վիճակը, որի մէջ գտնուում են նրանք ու այդ բոլորի հիմնական պատճառը համարեց Ազգ. Խորհրդի «քառանկիւն անիւ» լինելը, բերաւ մի շարք փաստեր գործերի կրիայի քայլերով առաջ գնալու աթիւ, որոնք ապացուցում էին այդ Վիրահայ Ազգային Խորհուրդ կոչուած մարմնի անընդունակութիւնը գործ կատարելու և առաջարկեց այդ դրութիւնից դուրս գալու համար ցրել այդ Խորհուրդը և հրաւիրել նոր Ազգային Խորհուրդ, որը Վրաստանի հայութեան ու նրա աշխատաւորութեան իսկական արտայայտիչը լինի: Ընկ. Թոփչեան աւելի մանրամասն կանգ առնելով Ազգային Խորհրդի միւս բաժինների՝ ֆինանսական և դպրոցականի գործունեութեան վրայ՝ ցոյց տուեց, որ ինչպէս Վիրահայ Ազգ. Խորհուրգը ընդհանրապէս նոյնպէս և այդ մասնաժողովները ու նրանց վարիչները ոչինչ չեն արել բառի ամենալայն իմաստով, եթէ ի նկատի չունենանք մի քանի շրջաբերականները, որ գրել է դպրոցական մասնաժողովը իր երկու վարիչներով, ու նստել սպասելով ու ոչինչ չանելով: Ապա աւելի մանրամասն կանգ առնելով Ազգային խորհրդի քառանկիւնութեան վրայ, բերեց մի քանի օրինակ, թէ ինչպէս պրեզիդիումի մշտական նախագահ չլինելու պատճառով Ազգային Խորհուրդը համարեա երբէք չի իմացել վաղօրօք օրակարգը այն նիստի, որին հրաւիրուած է ու երբեմն շատ կարևոր խնդիրներ յետաձգուել են միայն նրա համար, որ յայտնի չէ եղել օրակարգը ու նախօրօք ֆրակցիաները իրար մէջ համաձայնութեան եկած չեն եղել: Նկարագրելով այն ողբերգական վիճակը, որի մէջ գտնուում է Ազգային Խորհուրդը ու յայտնելով,

որ Վիրահայ Ազգային Խորհրդի գոյութեան 6-7 ամսւայ ընթացքում Դաշնակցական ֆրակցիան 3-4 անգամ առաջարկել է նոր ընտրութիւններ կայացնել ու միշտ էլ Խորհուրդը որոշել ու ընտրել է մի մասնաժողով, որը պիտի նոր ընտրութիւնների մասին ծրագիր մշակէր և միշտ էլ այդ որոշումը մնացել է որոշում, ընկ. Թոփչեան ուրիշ միջոց չի գտնում քան պայթեցնել այդ Խորհուրդը և նոր ընտրութիւններ նշանակել ոչ այնպէս, ինչպէս կազմւած էր այդ Վիրահայ Ազգային Խորհուրդը, այլ նշանակել դեմոկրատական ընտրութիւններ: <…>

Ապա ընկ. Տիգրան [Ավետիսյան] խօսք խնդրելով, յայտնում է այն միտքը, որ Վրաստանի շրջանում չկայ ոչ մի վիրահայ գաղթականութիւն, եղած շուրջ 25-ից 30000 գաղթականութիւնը բոլորն էլ Հայաստանի հանրապետութեան քաղաքացիներն են և հետևապես Հայաստանի հանրապետութիւնը պիտի հոգայ նրանց կարիքները և այն էլ ոչ թէ Վիրահայ Ազգային Խորհրդի կողմից, որ վրացահպատակ լինելով չի կարող Հայաստանի հանրապետութեան գործերով զբաղւել, այլ Հայաստանի հանրապետութեան կողմից նշանակւած լիազօրների միջոցով, որոնք և պատասխանատու պիտի լինեն այդ հանրապետութեան առաջ իրենց ծախսած գումարների համար: Եւ եթէ մի քիչ հեռուն գնաք, թերևս իրաւական տեսակէտից Վիրահայ Ազգային Խորհուրդը պարտական է հաշիւ տալ Հայաստանի հանրապետութեան, չնայած բոլոր գումարները ստացւում են վերջինից:

Ապա մատնանշելով Վիրահայ Ազգային Խորհրդի սխալ քայլերը թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ հայ-վրացական միջադէպերի ժամանակ, երբ Ազգային Խորհուրդը Հայաստանի հանրապետութեան «առջի ծառայութիւն» մատուցեց խառնւելով այդ զուտ քաղաքական ու պետական գործում, ու Թիֆլիսից

Երևան իր ազդեցութիւնն էր ուզում գործ դնել Հայաստանի հանրապետութեան վրայ, գտնում է, որ Վիրահայ Ազգային Խորհուրդը իրականում ոչ մի հիմք չունէր խառնուելու այդպիսի ու նման քաղաքական դէպքերի մէջ, ասում է, որ պէտք է անմիջապէս առանց տատանումների ցրել այդ խորհուրդը, նախօրօք դիմելով Հայաստանի հանրապետութեան, որ նա անմիջական հսկողութեան տակ առնի իր քաղաքացիների կարիքների բաւարարման գործը: Ընկ. Տիգրան [Ավետիսյան] մեղադրում է նաև դաշնակցական ընկերներին, որ ինչ ինչ փափկանկատութեամբ իրենց գերիշխող դիրքից անհիմն զիջումներ արին այն քաղաքական կուսակցութիւններին, որոնք չունենալով ոչ մի մասսա, Դաշնակցութ. հետ համահաւասար իրաւունքով եկան բազմեցին Վիրահայ Ազգային Խորհուրդ կոչուած՝ մեռած նոյն իսկ իր ծնուած օրից՝ օրգանում ու այսօր հայ գաղթականութեան ու Վիրահայ կուլտուր-ազգային գործերը հասցրին այս անմխիթար վիճակին: <…>

Ընկ. Ա. Աբեղեան[102] յայտնում է, որ Վիրահայ Ազգային Խորհուրդը կազմելու գաղափարը ծնունդ է առել դաշնակցական ընկերների մէջ, երբ նախկին ազգային խորհուրդը տեղափոխուեց Երևան կառաւարութիւն կազմելու և ասաց, որ այդ խորհուրդը կազմելու գլխաւոր և միակ ցանկութիւնը եղել է

---

[102] **Աբեղյան Արտաշես Գաբրիելի** (1878-1955), հայագետ-բանասեր: Գլխավորել է 1942-ին Բեռլինում ստեղծված Հայոց ազգային խորհուրդը: Երրորդ Ռայխի լիազոր ատյանները ճանաչել են իրեն որպես Հայաստանի վտարանդի կառավարության նախագահ: Բեկանել է նացիստական Գերմանիայում հայերի ոչ արիական ծագման մասին արհեստական հարցի քննարկումը: Նրա այս գործունեությունը բախտորոշ նշանակություն ունեցավ շուրջ կես միլիոն հայության համար, սակայն դեռևս պատշաճ գնահատանքի չի արժանացել: Մանրամասն տե՛ս Հայրապետյան Հ. Արտաշես Աբեղյան. Մեծ բանասերն ու հասարակական գործիչը // http://www.armin.am/images/menus/2699/Hayrapetyan_harutyun.pdf

Վրաստանի սահմանում ապրող հայութեան աւտոնոմիայի սաղմ կազմել և միայն վիրահայութեան ազգային-կուլտուրական կեանքը տնօրինել ու կառավարել, սակայն յետագայում այդ խորհուրդը շեղուել է իրեն առաջադրած պարզ ու որոշ խնդիրներից ու սկսել զբաղուել քաղաքական խնդիրներով, որ ոչ մի դէպքում նրա իրաւասութեան չէ վերաբերում ու միանալով ընկ. Տիգրանի [Ավետիսյան] առաջարկին՝ պնդում է ազգային խորհուրդը ցրելու ու նոր դեմոկրատական ընտրութիւններ նշանակելու պահանջին: <…>

Տե՛ս Հ. Յ.Դաշնակցութիւն՝ ներկայացուցչական ժողով //
Յառաջ, 22 փետրվարի 1919, N 34:

N 65

Հաղորդագրություն՝ Բորչալուի գավառի հայ բնակիչներին իրենց գյուղերը վերադարձնելու գործում Վրաստանի ՀԱԽ-ի ներկայացուցիչների մասնակցության մասին

Վրաց կառավարութեան կարգադրութեամբ թոյլատրուած է Բոլնիս-Խաչէնցիների և Դաղէթ-Խաչէնցիների վերադարձը իրենց տեղերը: Գաղթականներին տեղաւորելու համար Բելի Կլիւչ է մեկնել մի ձանձնաժողով կառավարութեան և Վիրահայ ազգ. խորհրդի կողմից: Յիշեալ գիւղերը ներկայումն գտնւում են աւերուած դրութեան մէջ և ծանր վիճակում:

Տե՛ս Լրատու //
Յառաջ, 5 մարտի 1919, N 42:

N 66

Վրաստանի ՀԱԽ-ի լիազորների հաղորդագրությունը Բորչալուի գավառի (Տաշիր) հայազգի բնակչության սոսկալի ծանր և աղետաբեր կացության մասին

Сообщение уполномоченных Армнацсовета Грузии о крайне тяжелом и пагубном положении армянского населения Борчалинского уезда (Ташир)

Правительственная комиссия, совместно с представителями армянскаго национальнаго совета выезжавшая в Белый Ключь для выяснения вопроса о возвращении беженцев, возвратилась в Тифлис. Комиссия передает об ужасающем положении с. с. Дагет-Хачин и Башн Хачи. Деревни эти совершенно разорены. Скот угнан. Хлеб и пр[очие] продукты увезены. Население обречено на голодную смерть, вымирает от тифа. Из 1200 дагет-хачинцев 700 болеют тифом.

Տե՛ս Местная жизнь //
Грузия, 5 марта 1919, N 50.

N 67

Հաղորդագրություն՝ հայազգի գաղթականներին օգնելու համար՝ ՀՀ-ի կառավարության միջոցներից Վրաստանի ՀԱԽ-ին հատկացրած գումարի մասին

Հայաստանի կառավարութիւնը Վրաստանում գտնուող հայ գաղթականներին օգնելու համար՝ Վիրահայ Ազգային Խորհրդի տրամադրութեան տակ է դրել երկու միլիոն ռուբլի:

Տե՛ս Քրոնիկոն //
Ժողովրդի Ձայն, 5 մարտի 1919, N 47:

N 68

Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի գանձարանի գումարները պետական կալանքից ազատելու մասին

Վրաց ֆինանսների մինիստրը կարգադրել է ազատել գրաւումից Անդրկովկասեան բանկում Ս. Յարութիւնեանի անուամբ պահուած Հայոց Ազգ. Խորհրդի գումարները:

Տե՛ս Քրոնիկոն //
Ժողովրդի Ձայն, 16 մարտի 1919, N 56:

N 69

«Աշխատաւոր» լրագիրը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. մարտի 14-ի նիստի մասին

Նիստը բացւում է ըստ սովորականի մի ժամ անց: Ընդունւում է հետևեալ օրակարգը.

1. Հարցապնդում դպրոցական գործի մասին:
2. Կենտրոնական գաղթ. մարմնի ստեղծ. խնդիրը:
3. Հարցապնդում ֆինանսական գործի մասին:
4. Շտատների կրճատումը և մի շարք այլ խնդիրներ:

Կարդացւում է խորհրդի անդամ Բ. Թոփչեանի հարցապնդումը Ազգ. Խորհրդի դպրոցական վարիչների գործունէութեան մասին: Թւելով այն բացերն ու անիշխանութիւնը, որ տիրում է դպրոցական ասպարէզում, հարցապնդման հեղինակը հարցնում է խորհրդին՝ «յայտնի է դպրոցական գործի այս ողբալի վիճակը մեր վարիչներին և խորհրդին և եթէ այո՞, ի՞նչ գործնական քայլեր են արւում այդ դրութիւնը վերջ տալու համար»: Հարցապնդումը պաշտպանում է հեղինակը:

Բ. Թոփչեան. - Ազգ. Խորհրդի կազմակերպման հիմնական նպատակներից մէկն էր, ունենալ մէկ մարմին, որը պիտի վիրահայ աշխատաւորութեան կրթական-կուլտուրական շահերը պաշտպանէր և նրա հոգսերի ու ցաւերի իրաւազօր թարգմանը լինէր: Բայց մի շարք ամիսների գործնէութիւնը ցոյց է տալիս, որ այդ ուղղութեամբ և այդ ասպարէզում ոչինչ չի արուած: Դպրոցական կեանքը թէ՛ այստեղ մեր քթի տակ և թէ՛ գաւառում ողբալի վիճակի մէջ է գտնուում: Համարեա բոլոր հոգաբարձական մարմինների ժամանակամիջոցը լրացած է և նրանք շարունակում են «խնամել» դպրոցները ըստ իրենց հաճոյքի: Շատ դպրոցներում միևնոյն մարդը և՛ հոգաբարձու է, և՛ տեսուչ, և՛ ուսուցիչ: Դպրոցները բացւում և փակւում են հոգաբարձութեան քմահաճոյքով: Ուսուցչութիւնը փող չստանալու պատճառով նոյնպէս փոխւում է ամիսը մէկ անգամ:

Գաւառում բազմաթիւ դպրոցներ իսպառ չեն բացւել, բացւածներից շատերի շէնքերը գրաւուած են և տասնեակ ու 100-աւոր երեխաները ցրտի ու անտէրութեան պատճառով փողոցներում են մնացել: Այս վիճակը անհանդուրժելի է, կամ գործ կատարենք, կամ քաղաքացիական քաջութիւն ունենանք խոստովանելու մեր անճարակութիւնը և հեռանանք ասպարէզից:

Ե. Տէր-Մինասեան. – Որպէս դպրոցական վարիչ՝ տալիս է իր բացատրութիւնները: Նա գտնում է, որ հարցապնդումը ճիշտ հողի վրայ է դրուած: Պիտի արմատապէս լուծել դպրոցական խնդիրը: Երկիշխանութիւնն է բոլոր թերութիւնների պատճառը, բացի այդ կառավարութիւնն էլ մինչև օրս խոչընդոտներ էր յարուցանում Ազգ. Խորհրդի դէմ: Չնայելով նրան արուած է այն ամենը ինչ հնարաւոր է:

Ա. Ստամբոլցեանը (դպրոց. 2-րդ վարիչ) բերում է մի շարք փաստեր, որոնք ապացուցում են հարցապնդման հիմնաւոր

լինելը և ասում, որ այդ թերութիւնները վերացնել անհնար է եղել, որովհետև հոգաբարձութիւնները չեն ճանաչել նրանց իրաւասութիւնը: Յամենայն դէպս Գայիանեան, Թանդոյեան և այլ դպրոցների նպաստ է տրուած և 5 նոր դպրոց է բացուած:

Իս. Յարութիւնեան նոյնպէս գտնում է հարցապնդումը տեղին և վարիչների բացատրութիւնները անբաւարար:

Ա. Երզնկեանը իր երկար ճառով ճգնում է ապացուցել, որ արուած է այն՝ ինչ հնարաւոր է և քաղաքական պայմաններն են, որ թոյլ չեն տուել աւելին անելու:

Բ. Թոփչեան գտնում է առարկութիւնները անհիմն, ֆորմալ: «Ոչ պարոններ! Յանցանքը նետել մասնաժողովի վրայ, յանձնաժողովից պրեզիդիումի կամ վրաց կառավարութեան վրայ - դա հարցի լուծումը չէ: Մենք վստահութեան քւե տւինք գործի և ոչ թէ անգործութեան համար: Խոստաւանեցէք, որ ամենապատասխանատու դրպէին խորհուրդը բռնեց քաղաքական դեզերտիրութեան ու անկարգութեան ուղին և ինքնացրման ենթարկւեց նախ քան կառավարութեան դեպրեսիաները: Պատասխանատուութեան զգացմունքը ու յեղափոխական պարտաճանաչութեան բացակայութիւնն է այս բոլորի պատճառը: Հեռացէք այստեղից, զիջէք ձեր տեղերը աշխատաւորութեան ներկայացուցչութեանը և նա այժ կունենայ թէ՛ սրբազանների, թէ՛ հոգաբարձուների և թէ՛ կառավարութեան ոտնձգութիւններին արժանի պատասխանը տալ»:

Նախագահը գտնում է, որ դեզերտիր բառը վիրաւորական է Խորհրդի համար և առաջարկում է խուսափել նրան գործածելուց:

Բ. Թոփչեան. - Այսպէս շարունակել այլևս անկարելի է: Բացարձակ սաբոտաժով դուք չէք տալիս ժամանակին ընտրութիւններ կատարել…

Երզնկեան (տեղից). - Դաշնակցաններդ էք ամենից շատ սաբոտաժ անում, ձեր ընկերը չի գալիս կոմիս[իայի] նիստերին:

Բ. Թոփչեան. - Երեք անգամ իմ հարցապնդումներից ու հարցումներից յետոյ դուք 2-ական շաբաթ ժամանակ տուիք կենտրոնական կոմիսսիային զեկուցման համար: Անցել են ամիսներ և այդ զեկուցումը չկայ: Սա անհանդուրժելի է: Ազատեցէք այս տեղերը ժողովրդի ընտրելիների համար:

Երզնկեանը նորից առարկում է մեղադրանքների դէմ և «կատեգորիկ կերպով յայտարարում», որ նրանք դէմ չեն ընտրութիւնների և առաջարկում է նոր կոմիսիա ընտրել նախագահութեամբ ընկ. Թոփչեանի:

Ընկ. Թոփչեանի բանաձևը՝ անբաւարար համարել բացատրութիւնները և որպէս միջոց կարճ ժամանակամիջոցում նոր ընտրութիւններ նշանակել տապալւում է էս-դէկների, էս-էրների և կադէտների բլոկի ձայներով: Անցնում է էս-էրների բանաձևը, որը վարիչների բացատրութիւնները բաւարար է գտնում:

Ապա քննւում է և վաւերացւում է Վրաստանի կառավարութեան կից կազմւելիք կառավար. գաղթ. մարմնի կանոնադրութիւնը: Պարզւում է, որ կառավարութիւնը 2 միլ. Վարկ է բաց արել Վրաստանի գաղթականութեանը օգնելու համար, որի բաշխման և այլ աշխատանքների համար բոլոր ազգային խորհուրդների ներկայացուցիչներից մի յանձնաժողով է կազմւում: Խորհուրդը հաւանութիւն է տալիս կատարւած քայլերին: <…>

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 16 մարտի 1919, N 50:

N 70
«Ժողովրդի Ձայն» լրագիրը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. մարտի 14-ի նիստի մասին

Նախագահում էր Արշ. Մխիթարեան (Հ. Ժ. Կ.): Օրակարգի բազմաթիւ հարցերից առաջնութիւն տրուեց դպրոցական խնդրի մասին եղած հարցապնդմանը, որ երեք շաբաթ առաջ մտցրել էր Դաշնակցական ֆրակցիայի անդամ պ. Բ. Թոփչեանը, բայց որը դեռ քննութեան առարկայ չէր եղել:

Հարցապնդման էութիւնն այն էր, որ չնայելով երկու դպրոցական վարիչների գոյութեան, այդ ասպարեզում ծրագրային և սկզբունքային գործ չէր կատարուած, ստեղծուած է դպրոցներում երկիշխանութիւն, որոնցից մէկը բացասում է միւսի իրաւունքները, դպրոցներում իշխում է հոգաբարձուների կամայականութիւնը, շատ դպրոցներ նիւթական անապահովութեան պատճառով փակուել են կամ ենթակայ են փակման վտանգի, իսկ Ազգային Խորհուրդը այդ ուղղութեամբ քայլեր չէ արել գոնէ նպաստներ տալու կարիք ունեցող դպրոցներին, հոգաբարձական ընտրութիւնները կատարւում են տարրական դեմոկրատիկ սկզբունքների խախտումով, և այլն և այլն:

Հարցապնդմանը պատասխանում են միջնակարգ դպրոցների վարիչ Ե. Տէր-Մինասեան և տարրական դպրոցների վարիչ Ան. Ստամբոլցեան: Պատասխանների մէջ շեշտւում է այն հանգամանքը, որ նախ՝ երկու վարիչ ունենալու յանցանքը ոչ թէ վարիչներինն է, այլ իրեն՝ Ազգային Խորհրդի, որ բոլորովին անտեղի կերպով մի դպրոցական գործը երկու մասի է բաժանել՝ իր պարիտետի սկզբունքին բաւարարութիւն տալու համար:

Երկրորդ՝ ծրագրով և սկզբունքային գործ կատարուել չէր կարող, քանի որ Ազգային Խորհրդի ընդունած բանաձևը՝ թէ ինքն է գերագոյն տէրն ու տնօրէնը բոլոր Ազգային կուլտուրական գործերի՝ իրապէս սահմանափակուած և կարելի է ասել ոչնչացած է նոյն Ազգային Խորհրդի ընդունած մի այլ բանաձևով յատկապէս դպրոցների վերաբերութեամբ: Այդ բանաձևն ասում է, թէ Ազգային Խորհուրդն առայժմ իրաւական խնդիրը չվճռելով՝ իր վրայ է վերցնում դպրոցների փաստական կառավարութիւնը: Այն ինչ, ինչպէս քանիցս շեշտուած է Ազգային Խորհրդի առաջ, այդպիսի վարչութիւն գոյութիւն ունենալ չի կարող, որ իրաւունքը մէկինը լինի, իսկ ղեկավարութիւնը՝ մի ուրիշինը: Այդ բանը հնարաւոր էր միայն հոգևոր իշխանութեան և Ազգ. Խորհրդի փոխադարձ համաձայնութեամբ, ինչպէս առաջարկում էր Հայ Ժողովրդ. Կուսակցութիւնը, որի առաջարկութիւնը չէ անցել Ազգային Խորհրդում:

Այդպիսի հանգամանքներում սկզբունքային և ծրագրային գործունէութիւն պահանջել դպրոցական վարիչներից, միայն թիւրիմացութեան արդիւնք է. մանաւանդ որ դաշնակցական հոգաբարձուները, որոնք միաժամանակ Ազգային Խորհրդի անդամ են և բանաձև են ընդունել, թէ Ազգային Խորհուրդը գերագոյն տէր և տնօրէն է դպրոցական գործում, տեղումը հետևում են այլ քաղաքականութեան և հնարաւոր չեն գտնում ճանաչել Ազգային Խորհրդի իրաւասութիւնը, յենուելով այն սկզբունքի վրայ, թէ առայժմ վտանգաւոր է, քաղաքական հորիզոնը և մեր կուլտուրական ինքնավարութեան պայմանները չպարզուած, նախկին հոգևոր իշխանութեան իրաւունքները կրճատել և նոր մարմնի իրաւասութիւն ընդունել, որի իրաւունքների սահմանները որոշ չեն և կառավարութեան կողմից էլ ճանաչուած չեն: Տեսակէտներ, որ միշտ պարզել է Հայ Ժո-

ղովրդ. Կուսակցութիւնը, բայց չէ անցել Ազգային Խորհրդի մէջ: Այսպէս է պատճառաբանում Ազգային Խորհրդի իրաւասութիւնը չճանաչելը օրինակ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, որ այդ խնդրի համար պատգամաւոր էր ուղարկել Գործ. մարմնի մօտ Ազգային Խորհրդի դաշնակցական ֆրակցիայի անդամ պ. Յ. Ամիրխանեանին: Առհասարակ Ազգային Խորհրդի իրաւասութիւնը լիովին ճանաչում են և ենթարկում նրան այն դպրոցները, որոնք նիւթական կարիք և օգնութեան ակնկալութիւն ունին Ազգային Խորհրդից: Երրորդ՝ սխալ է հարցապնդման այն կէտը, թէ դպրոցներ են փակուել և աշակերտներ դուրսը մնացել: Այդպիսի բան տեղի չէ ունեցել: Չորրորդ՝ սխալ է, թէ կարիք ունեցող դպրոցներին նպաստ չէ բաժանուել: Կարիք ունեցող թէ՛ տարրական, թէ՛ միջնակարգ դպրոցները խոշոր օժանդակութիւն են ստացել Գործադիր մարմնի որոշման համաձայն այն 100 հազար ռուբլուց, որ յատկացրել էր Ազգային Խորհուրդը դպրոցական գործին: Մի օժանդակութիւն, որ մեր դպրոցական կեանքում եզակի է և մինչև այժմ չի եղել: Հինգերորդ՝ դեմոկրատիկ սկզբունքների խախտում հոգաբարձական ընտրութիւնների մէջ չի եղել: Եթէ ակնարկւում է Յովնանեան դպրոցի դէպքը. դրա մասին հարկաւոր բացատրութիւնները արուել են նախորդ ժողովում և Ազգային Խորհրդի կողմից բաւարար ճանաչուել:

Դրուած հարցի մասին խօսում են նաև ուրիշ պատգամաւորներ: Վերջը Գործ. մարմնի կողմից խօսում է Ար. Երզնկեան, որ դաշնակցականներին խորհուրդ է տալիս մի փոքր համեստ լինել և չերևակայել, թէ եթէ ամբողջ Ազգային Խորհուրդը կազմուած լինի դաշնակցականներից, գործերն աւելի լաւ կընթանան: Օրինակը մեր առաջն է. նախկին Ազգային Խորհրդի մէջ դաշնակցականները տիրող մեծամասնու-

թիւն էին, բայց բոլոր գործերը, նրանց թւում և դպրոցական գործը, անհամեմատ աւելի վատ էին գնում, քան թէ ներկայումս: Պէտք է նոր ընտրութիւննե՞ր նշանակել Ազգային Խորհրդի համար, դրա համար ընտրուած էր յատուկ յանձնաժողով, որ երկու շաբաթուայ ընթացքում զեկուցում ներկայացնէ: Եթէ այդ յանձնաժողովը շատ բան չէ արել, դարձեալ դաշնակցականներն են, որոնց ներկայացուցիչները չեն յաճախում նշանակած նիստերին: Ա. Երզնկեանն առաջարկում է ընտրութիւնների գործը շտապեցնելու համար նոր յանձնաժողով ընտրել և նրան նախագահ կարգել Բ. Թոփչեանին, որ խօսքից գործի անցնի և ընտրութիւնները կազմակերպէ:

Հարցը սպառուած լինելով՝ կարդացւում են բանաձևեր, որոնցից Դաշնակցութեան բանաձևը ստանում է երեք ձայն և մերժւում է, բանաձևի միտքն էր՝ պէտք է ցրել Ազգային Խորհուրդը և նոր ընտրութիւններ կազմակերպել. մի բանաձև, որ բոլորովին չէր համապատասխանում հարցապնդման <…>: Ձայների ճնշող մեծամասնութեամբ ընդունւում է հետևեալ բանաձևը. «Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը լսելով Բ. Թոփչեանի հարցապնդումը դպրոցական գործի մասին և դպրոցական վարիչների բացատրութիւնները, գտնում է այդ բացատրութիւնները գոհացուցիչ և անցնում է հերթական խնդիրներին»:

Օրակարգի երկրորդ խնդիրն էր «Կենտրոնական պետական գաղթականական կոմիտէի» կազմակերպութեան հարցը, որին մասնակցելու հրաւիրուած է նաև Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը: Կարդացւում է այդ նոր կազմակերպութեան ստատուտը, որ ընդունւում է մի քանի փոփոխութիւններով: Իբրև ընդհանուր ղեկավարող սկզբունք ընդունւում է, որ չպէտք է թոյլ տալ ո՛չ մի ձևով մեր կազմակերպութիւնների

ինքնավարութեան և անկախութեան խախտումն այդ նոր կոմիտէի կողմից:

Այնուհետև լսում է Սուխումի [Հայոց շրջանային] Ազգային Խորհրդի նախագահ Խ. Աւդալբէկեանի[103] զեկուցումը տեղական գործերի մասին և Ազգային Խորհուրդը հաւանութիւն է տալիս Սուխումի Խորհուրդի գործելակերպին և յանձնարարում գործադիր մարմնին աջակցել պ. Աւդալբէկեանին իր միսսիան կատարելու մէջ կառավարութեան առաջ:

Ուշ լինելու պատճառով ժողովը փակւում է ժամը 11-ին:

Թղթ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 19 մարտի 1919, N 58:

N 71

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. մարտի 18-ի արտահերթ նիստի մասին

Նախագահում է Արշ. Մխիթարեան (Հ. Ժ. Կ.):

Ա. Ժողովի բազմաթիւ հարցերից առաջ քննութեան է առնւում ծառայողների շտատի կրճատման, լիկվիդացիայի և մնացող ծառայողների ռոճիկների յաւելման խնդիրը:

---

[103] **Ավդալբեգյան Խաչատուր Հայրապետի** (1888-1975), ծն. Մակու քաղաքում, 1911-1913 թթ. աշխատել է Սուխումի շրջանի Մերխեուլ գյուղի հայկական դպրոցում: 1914-1920 թթ. հանդիսացել է նաև Աբխազիայի ծխախոտագործական կոոպերացիայի կազմակերպող և վարչության նախագահ: 1921թ. տեղափոխվել է Երևան, մինչև 1930 թ. աշխատել է Հայաստանի ԽՍՀ Երկրագործության ժողկոմատում, որպես վարչության պետ և կոլեգիայի անդամ: 1931-1937 թթ. զբաղվել է թարգմանչական աշխատանքներով: 1938-1948 թթ. բռնադատված էր, գտնվում էր կալանավայրերում: 1955 թ. աքսորավայրից վերադարձել է Երևան:

Գործադիր մարմնի կողմից այս հարցի մասին զեկուցանում է Ե. Տէր-Մինասեան: Նա յայտնում է, որ Գործադիր մարմինը վաղուց մտադրութիւն է ունեցել ծառայողների թիւը Ազգային Խորհրդին ենթակայ զանազան հաստատութիւններում կրճատել. դրա համար կազմել է յատուկ յանձնաժողով, որն իր աշխատանքները վերջացնելով՝ մասերի վարիչների փոխադարձ համաձայնութեամբ առաջարկել է գործադիր մարմնին կրճատման նախագիծը: Գործադիր մարմինը ընդունելով այդ նախագիծը մի քանի փոփոխութիւններով, բերում է այն այսօր Ազգային Խորհրդի հաստատութեան: Կրճատման են ենթարկւում սոյն մարտ ամսի 1-ից ընդամենը 31 ծառայող, որոնց հարկաւոր է բաւարարել լիկվիդացիոն վարձադրութեամբ մի ամսական ռոճկի սահմաններում, ի նկատի առնելով նրանց ծառայութեան տևողութիւնը: Այդպիսի լիկվիդացիայի համար հարկաւոր կը լինի ամենաշատը 8-9 հազար ռուբլի:

Ազգային Խորհուրդը առանց վիճաբանութիւնների հաստատում է Գործադիր մարմնի այս առաջարկը:

Ինչ վերաբերում է մնացած ծառայողների ռոճիկների յաւելման խնդրին, զեկուցանող Ե. Տէր-Մինասեան յայտնում է, որ այս խնդիրը վաղուց է յարուցուած ծառայողների կողմից: 1918 թ. նոյեմբեր ամսից, բայց մինչև այժմ չէ իրագործուել զանազան արգել առիթ հանգամանքների շնորհիւ: Այժմ գործադիր մարմինը այս հարցն ևս մանրամասն քննութեան է ենթարկել, աշխատել է վերացնել մինչև այժմ տիրող ռոճիկների անհամաչափ բաշխումը միևնոյն կարգի ծառայողների մէջ, դրա համար ծառայողներին բաժանել է տասն կատեգորիայի և նշանակել նրանց համար հաստատուն, նախկինի համեմատութեամբ աւելացրած ռոճիկներ: Աւելացման ընդհանուր տո-

կոսը չի անցնում 50-ից, որ ներկայ հանգամանքներում կարելի է շատ քիչ համարել: Գործադիր մարմնի առաջարկն է՝ հաստատել ռոճիկների նոր բաշխումը, գործադրութեան մէջ մտցնելով այն յունուարի 1-ից, սակայն միայն այն ծառայողների համար, որոնք շարունակում են իրենց ծառայութիւնը ներկայումս, ծառայողների թուի կրճատումից և լիկվիդացիայից յետոյ:

Այս հարցի մասին լինում են թեր և դէմ վիճաբանութիւններ: Առաջարկ է լինում բոլոր ծառայողներին հաւասար ռոճիկներ նշանակել, առանց նրանց բաժանելու կատեգորիաների, բայց այդ առաջարկը չի անցնում և անփոփոխ հաստատւում է Գործադիր մարմնի ներկայացրած նախագիծը իր բոլոր մանրամասնութիւններով:

Նախագծով որոշուած ամենաբարձր ռոճիկն է 1300 ռուբլի և 500 ռուբլի ամսական, որից սակայն հանւում է որոշ գումար 250-150 ռուբլի այն հաստատութիւններում, ուր ծառայողները սնունդ են ստանում:

Այնուհետև ժողովականների կողմից առաջարկ է լինում աւելացնել նաև ընտրովի պաշտօնների ռոճիկները: Որոշւում է Գործադիր մարմնի անդամներին և գլխաւոր վերահսկիչի ռոճիկ նշանակել 1500-ական ռուբլի, իսկ Ազգային խորհրդի քարտուղարին՝ 1000 ռուբ.:

Բ. Գործադիր մարմնի կողմից Ա. Երզնկեան առաջարկում է Ազգային Խորհրդի ընտրութիւնների գործը փութացնելու համար ընտրել մի յատուկ յանձնաժողով և որոշ վարձատրութիւն նշանակել նրա անդամներին, որպէսզի ո՛չ միայն օրինագիծ մշակէ, այլ և ընտրութիւնները առհասարակ կազմակերպէ:

Ազգային Խորհուրդը ընդունելով այս առաջարկը, որոշում է կազմել ընտրական յանձնաժողով 4 հոգուց բաղկացած, իւրաքանչիւր ֆրակցիայից մի հոգի, նշանակել այդ յանձնաժողովի անդամներին ռոճիկ ամսական 1500 ռուբլի իւրաքանչիւրին, պարտաւորեցնելով որքան կարելի է շուտ ներկայացնել ընտրական օրինագիծը, որի համար հետևեալ նիստին ժամանակ որոշել և յանձնաժողովի անդամների ընտրութիւնները կատարել, քանի որ ներկայ ժողովին ֆրակցիաները պատրաստ չեն ընտրութիւն կատարելու:

Գ. Այնուհետև ժողովն զբաղւում է կուլտուրական աւտոնոմիայի ծրագրի մշակման հարցով: Գործադիր մարմնի կողմից զեկուցանում է Ա. Երզնկեան: Գործադիր մարմինը խնդրում է որոշ վարկ յատկացնել իրեն՝ կուլտուրական աւտոնոմիայի օրինագիծ մշակել տալու և Ազգային Խորհրդին ու նրա միջոցով Վրաստանի սահմանադիր ժողովին ներկայացնելու համար, քանի որ հայերը այժմ ներկայացուցչութիւն չունեն Սահմանադիր Ժողովում և այդ պարտականութիւնը բոլորովին ընկնում է Ազգային խորհրդի վրայ:

Ազգային Խորհուրդը ընդունում է գործադիր մարմնի առաջարկը և այդ նպատակն իրագործելու համար որոշում է Գործադիր մարմնին յատկացնել մինչ 10 հազար ռուբլի:

Դ. Զեկուցում է տալիս Բաթումի [Հայոց] Ազգային Խորհրդի ներկայացուցիչ Գրիգորեան: Ամերիկացիների բերած 300 հազար փութ ալիւրի և 11 հազար փութ այլ ապրանքների մասին, որ թէև Հայաստանի Հանրապետութեան համար է, բայց Բաթումում յատկացնում են և ուրիշներին: Բաթումի ներկայացուցիչը խնդրում է միջոցներ ձեռք առնել դրա դէմ և դժգոհութիւն է յայտնում, որ իրենց նամակները Գործադիր մարմնին մինչև այժմ անհետևանք են մնացել: <…>:

Ժողովն առաջարկում է Գործադիր մարմնին ըստ կարելոյն նպաստելու Բաթումի ազգ. խորհրդի ներկայացուցչին:

Ե. Ախալքալաքի հայրենակցական միութեան կողմից խօսք են առնում պ.պ. Ա. Տէր-Գրիգորեան և Պ. Աբէլեան, որոնք յարձակւում են Գործադիր մարմնի վրայ նրա «դանդաղկոտ»-ութեան և Ազգային Խորհրդի վճիռները Ախալքալաքցիների վերաբերութեամբ չկատարելու համար:

Գործադիր մարմնի կողմից բացատրութիւններ են տալիս Ե. Տէր-Մինասեան և Ա. Երզնկեան, որոնցից վերջինը մի ընդարձակ ճառով հերքում է բոլոր մեղադրանքները և ցոյց տալիս, որ շատ որոշումներ անհնարին է եղել կատարել դրամ չլինելու պատճառով, ուրեմն Գործադիր մարմնից միանգամայն անկախ, որ շարունակ խօսելու փոխարէն լաւ կը լինի հայրենակցական միութեան անդամները բարեհաճէին իրենց հայրենակիցների հետ վերադառնալ հայրենիք և այնտեղ նրան օգնել, փոխանակ ժամանակ խլելու Գործադիր մարմնից և նրա գործերը դրանով աւելի ևս «դանդաղացնելու»: Բացատրութիւններից պարզւում է նաև, որ Ախալքալաքցիներին Գործադիր մարմինը օգնել կարող է միայն Հայաստանի կառավարութիւնից դրամ ստանալուց յետոյ, որի համար արդէն Երևան են մեկնել Ազգային Խորհրդի վճռով պ.պ. Դ. Դավիթխանեան և Ան. Ստամբոլցեան:

Առաջարկելով Գործադիր մարմնին օգնելու Ախալքալաքցիներին ըստ չափու հնարաւորութեան, Ազգային Խորհուրդը վերջապէս քննում է

Զ. Սուխում ներկայացուցիչ ուղարկելու հարցը և այս խնդրի լուծումն ու իրագործումը յանձնարարում է Գործադիր մարմնին:

Օրակարգի միւս հարցերը ուշ լինելու պատճառով յետաձգւում են ուրբաթ օրուայ հերթական նիստին:

Ժողովը փակւում է ժամը 10-ին:

Թղթակից

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Ժողովրդի Ձայն, 21 մարտի 1919, N 60:

N 72

Հաղորդագրություն՝ ՀՀ Կառավարությունից նյութական օժանդակության հայցման նպատակով՝ Վրաստանի ՀԱԽ-ի պատվիրակության Երևան մեկնելու մասին

В Эривань на-днях выехали делегаты армянскаго национальнаго совета в Грузии для исходотайствования у правительства Армении отпуска кредитов в 2 млн. рублей на нужды армян беженцев, находящихся в пределах грузинской республики.

Տե՛ս Местная жизнь //
Грузия, 21 марта 1919, N 63.

N 73

Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի ֆինանսական կացության մասին

Անցեալ երեքշաբթի[104] նշանակուած Ազգային խորհրդի արտակարգ նիստը, մի քանի հանգամանքների պատճառով որոշուեց յայտարարել մասնաւոր խորհրդակցութիւն, որը զբաղուեց ֆինանսական հարցով:

[104] Իմա՝ 1919 թ., մարտի 25-ը:

Ֆինանսական վարիչ Ար. Երզնկեանը ժողովին պարզեց Ազգ. խորհրդի ֆինանսական նեղ կացութեան մասին. ըստ Երզնկեանի տուած տեղեկութիւնների՝ օրական ծախսւում է մօտ 100000 ռուբլի, մինչդեռ Ազգային Խորհրդի գանձարկղում կայ ընդամենը 1 ռ. 50 կոպէկ: Գործադիր մարմինը գտնւում է անելանելի կացութեան մէջ. եթէ դադարեցնի գաղթականութեանը հաց բաժանել՝ վերջինս կընկնի կատաստրոֆիկ դրութեան մէջ, իսկ եթէ շարունակի՝ Ազգ. խորհրդի պարտքը հետզհետէ կաճի: Մինչդեռ Հայաստանի կառավարութեան մօտ ուղարկուած միսիան (որը ըստ նախահաշուի պէտք է նրանից աւելի քան 20 միլիոն ռուբլի դրամ ստանայ) մինչև այժմ ոչ մի տեղեկութիւն չի տուել մեզ, թէ արդեօք Հայաստանի կառավարութիւնը ի՞նչ վերաբերմունք է ցոյց տալիս ծախքերի համար: Ներկայումս Ազգ. խորհուրդը, քանի չի պարզուել նրա վերաբերմունքը՝ անշուշտ չի կարող հետզհետէ աճող ծախքերն իր պատասխանատուութեան վերցնել:

Խորհրդակցութիւնը մտքերի փոխանակութիւնից յետոյ, ցանկութիւն է յայտնում, որ Վիրահայ Ազգ. Խորհրդի Գործադիր մարմինը հեռագրով հաղորդակցութիւն սկսի Հայաստանի կառավարութեան հետ և ամենակարճ ժամանակում պարզի նրա վերաբերմունքը, իսկ բացասական պատասխանի դէպքում՝ անմիջապէս հրաւիրի արտակարգ նիստ[105]:

Տե՛ս Վիրահայ Ազգ. Խորհրդի ֆինանսական կացութիւնը // Ժողովրդի Ձայն, 28 մարտի 1919, N 66:

---

[105] ՀԱԽ-ին գաղթականներին խնամելու համար նպաստ հատկացնելու փոխարեն, հայոց կառավարությունը նախընտրեց Վրաստանի տարածքում ստեղծել ՀՀ-ի Խնամատարության նախարարությանը ստորադաս հատուկ ներկայացուցչություն, որին և հանձնարարեց Վրաստանում բոլոր հայ գաղթականների և որբ երեխաների հետ կապված գործերի տնօրինումը: Այդ կառույցի գլուխ 1919 թ. մարտի 27-ին կարգվեց Վրաստանի ՀԱԽ-ի անդամ Դ. Գ. Դավիթխանյանը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 139, թ. 144:

N 74

Լրագրային հաղորդում՝ հայազգի գաղթականներին օգնելու նպատակին ծառայող Վրաստանի ՀԱԽ-ի գանձարանի ծախսերի մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդը Թիֆլիսում գտնուող գաղթականութեան համար բաց է թողնում օրական 360 փութ հաց (մէջը հաշուած 300-րդ վերստ գաղթականութիւնն ու որբանոցները): Փութը գնում է 130 ռ., ուրեմն միայն այդ բանի համար Ազգային Խորհուրդը ծախսում է աւելի քան 40 հազար ռուբլի: Հաց ստանում են 21 հազար մարդ: Կարիքաւորների թիւը հետզհետէ աւելանում է, որովհետև ունևորները, որոնք մինչև այժմ մի կերպ եօլայ էին գնում, ներկայումս ստեղծուած դրութեան պատճառով ծախում են իրենց վերջին ունեցվածքն ու դառնում ընչազուրկ:

Տե՛ս Քրոնիկոն //
Ժողովրդի Ձայն, 27 մարտի 1919, N 65:

N 75

Հաղորդագրություն՝ վիրահայ ունևոր դասից պարտադիր տուրք գանձելու ՀԱԽ-ի մտադրության մասին

Մօտ մի ամիս առաջ Հայոց Ազգ. Խորհուրդը ընտրել էր մի ֆինանսական յանձնաժողով, որը պիտի մշակէր մի ծրագիր՝ վիրահայերի վրայ պարտադիր տուրք նշանակելու ու գանձելու մասին: Այդ յանձնաժողովը վերջացրել է իր աշխատանքները. բանակցութիւններ է վարուած տեղիս հարուստների հետ, որոնք համաձայնել են 2 միլիոն 200 հազար ռուբլու չէկերով գանձել, պայմանով, որ վրաց կառավարութիւնն այդ մա-

սին պաշտօնական որոշում կայացնի: Խորհրդի գործադիր մարմինը այդ ուղղութեամբ բանակցութիւնների մէջ է մտել կառավարութեան հետ:

Տե՛ս Պարտադիր տուրք վիրահայերի վրայ //
Ժողովրդի Ձայն, 27 մարտի 1919, N 65:

N 76
Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունները հետաձգելու պատճառների մասին

Վիրահայ Ազգային Խորհրդի «փառաւոր» գործնէութիւնը շարունակւում է: Այս ֆրակցիաները, որոնք ամեն տեղ աղմկում էին, թէ իրենք էլ ընտրութիւնների կողմնակից են և ի ապացոյց այդ բանի՝ համաձայնեցին վարձով ընտրական-օրէնսդրական կոմիսիա կազմելու առաջարկին, այժմ արդէն հին, փորձած միջոցի՝ սաբոտաժի են դիմում ընտրութիւնները յետաձգելու համար:

Քաղաքացիական քաջութիւն չունենալով իրենց իսկական ցանկութիւնները երևան հանելու, նրանք աշխատաւորութեան աչքերին թոզ են փչում գեղեցիկ առաջարկներով, որոնք մնում են մեռած տառ հենց առաջարկների հեղինակների ջանքերով…

Չորրորդ անգամ ընտրութիւններն արագացնելու որոշումը տալուց յետոյ, մեր «ազգայինները» հանգիստ սրտով, ահա երրորդ շաբաթն է նիստերին չեն գալիս, «յոյժ կարևոր» գործերով զբաղուած լինելու պատճառով <…>:

Տե՛ս Սաբոտաժը //
Աշխատաւոր, 2 ապրիլի 1919, N 64:

N 77

Կարծիքներ ՀԱԽ-ի գործունեության մասին՝ ըստ ՀՅԴ Վրաստանի ճյուղի 2-րդ «ռայոնական ժողովում» հնչած ելույթների (1919 թ., մարտ)

Բ. Թոփչեան. - «Ընկերներ, ինչպէս գիտէք, ներկայ Ազգային Խորհուրդը կազմուեց նախկին Ազգային խորհրդի Երևան մեկնելուց յետոյ և անուանուեց Վրաստանի [Հայոց] Ազգային Խորհուրդ ու պիտի հիմք կազմէր Վրաստանի հայոց ազգային-կուլտուրական աւտոնոմիայի, կազմուել է պարիտետային հիմունքներով իրականութեան մէջ գործող 4 կուսակցութիւնից, իւրաքանչիւրից 8-ական ներկայացուցիչներով: Առաջնորդուելով այն տեսակէտով, որ հայ իրականութեան մէջ միակ ուժեղ կազմակերպութիւնը Դաշնակցութիւնն է, մենք սկզբում պահանջում էինք տալ մեզ աւելի շատ տեղ, քան միւս կուսակցութիւնները պիտի ունենան, սակայն վերջում մենք զիջեցինք և համաձայնուեցինք նրանց հետ հաւասար ձայն ունենալ, ի նկատի ունենալով միայն մի հանգամանք, որ եթէ մենք պնդենք մեր պահանջի վրայ՝ Ազգային Խորհուրդը չէր կազմի և վաղուայ օրը երբ հարկ լինի մի լիազօր մարմին, որը Վրաստանի հայութեան բերանը հանդիսանար և որ այդ բանի մէջ պիտի մեղադրէին մեզ դաշնակցականներիս, ասելով որ մենք չուզեցինք այդպիսի մարմնի գոյութիւնը, որպէս զի մենք միահեծան տէրը լինենք իրականութեան: Ահա այս մեղադրանքներից խուսափելու համար էր, որ մենք յանձն առանք այդ քառանկիւնի անիւի մի անկիւնը լինել:

Վիրահայ Ազգային Խորհրդի կազմումից յետոյ յոյս ունէինք, գոնէ նախագահութիւնը մեզ կը տային, սակայն այստեղ ևս աթոռակռիւը իր ամբողջ մերկութեամբ երևան եկաւ և ոչ մի

կուսակցութիւն չէր ուզում մէկին զիջել իր աթոռը ու ստիպւած եղաւ Ազգային Խորհուրդը ունենալ 4 նախագահ: Նոյն ձևով կազմւեց և գործադիր մարմինը:

Այսպիսով այդ Ազգային Խորհուրդը իր չորս վարիչներով սկսում է «գործել»: Չակերտների մէջ ենք առնում գործել բառը, որովհետև իր 10 ամսեայ գործունէութեան ընթացքում Վիրահայ Ազգային Խորհուրդը ոչ մի դրական գործ չէ կատարել շնորհիւ իր պատահական բնոյթ կրող քաղաքականութեան, շնորհիւ նրան, որ ամեն մի նախագահ, ամեն մի խնդրի առթիւ ունեցել է իր սեփական քաղաքականութիւնը. թէ եղել ոչ մի ընդհանուր գիծ այդ քաղաքականութեան մէջ: Ինչ շինել է մէկը, քանդել է միւսը: Ամենապատասխանատու, ամենածանր չոպէին, երբ վիրահայութեան հասած ծանր փորձանքի ժամին Ազգային Խորհուրդը դիմումներ է անում վրաց կառավարութեան, նա այդտեղ ևս յանձինս իր չորս նախագահի չորս ձևով էր խօսում վրաց կառավարութեան հետ, չորս պրիզմայով էր նայում հարցին ու ինքը վրաց կառավարութիւնն անգամ մնացել էր շւարած, չգիտէր, որին լսէր, որի կարծիքը ընդունէր իբր վիրահայութեան ներկայացուցչի կարծիք: Ու այդպէս ամէն մի խնդրում, ամէն մի դէպքում: Ու այս բոլորը մենք զգում ու ապրում էինք հենց նրա գոյութեան սկզբից և այդ իսկ պատճառով շատ ու շատ անգամ մենք Ազգային Խորհրդում հարց էինք բարձրացրել նրա վերընտրութեան մասին, նա մանաւանդ, որ սկզբում մենք մի պայման ևս դրել ենք և նրանք համաձայնւել են, որ այդ Խորհուրդը պիտի ժամանակաւոր լինի, նա պիտի ամենակարճ ժամանակամիջոցում մշակի մի օրինագիծ, որի հիման վրայ պէտք է Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի կանոնաւոր ընտրութիւններ կատարւեն: Ահա այս երկու պատճառներով մենք շարունակ պահանջում էինք, որ ընտ-

րութիւնները արագացուեն, բայց ազգային խորհուրդը իր ճնշող մեծամասնութեամբ միշտ դէմ էր գնում մեր պահանջներին, պարզ գիտակցելով, որ ընտրութիւններ անել՝ նշանակում է աթոռներից զրկուել, և այդ իսկ պատճառով մենք մինչև այսօր Վիրահայ Ազգային Խորհրդի փոխարէն ունենք միայն մի քառանկիւնի անիւ, որին շարժելու համար հարկաւոր է մի դրսի ուժ, մի արտաքին խթան, և այն էլ միայն մի կողմից միւսը դարձնելը <…>:

Վիրահայ Ազգային Խորհրդի ամենապատասխանատու գործը եղել է մեր ներկայացուցչի ձեռքին և հետևապէս ամենից շատ յարձակումը մեզ վրայ, սակայն գաղթականական գործը այնպիսի մի հսկայական գործ էր, որ այդպիսի գործ վարել նոյնիսկ մարմնի ուժերից վեր էր. այդ գործը համապետական գործ էր, որի համար նախկին ռուսաց պետութիւնը հարիւրաւոր միլիոններ էր ծախսում, և մենք ժառանգելով նախկին գաղթականական կոմիտէից այդ ծառայութիւնը, առանց դրամի գտնուում էինք մի սոսկալի վիճակում. մեր ծախսած գումարները ստացած Հայաստանի կառավարութիւնից կաթիլներ էին ծով կարիքի դիմաց ու այդ է գլխաւոր պատճառը գաղթականական արդի վիճակի»: <…>

Տ. Աւետիսեան. - «Վիրահայ ազգային խորհուրդը, որ մենք հասկանում էինք ազգային կուլտուրական մի մարմին, սկսեց քաղաքական ակտերով ու խնդիրներով զբաղուել, նա նոյն իսկ հայ-վրացական առաջին կոնֆլիկտի ժամանակ այնքան հեռացաւ իր կոչումից ու քաղաքականութեամբ այնքան տարուեց, որ հարկ համարեց յատուկ պատգամաւորութիւն ուղարկել Երևան ազդելու հայկական կառավարութեան. նոյնը առաւ և երկրորդ կոնֆլիկտի ժամանակ: Նա փոխանակ ազդելու, եթէ

հարկ կար միայն, այն պետութեան վրայ, որի հպատակն է, ինքը գնաց ազդելու մի օտար պետութեան վրայ….»: <…>

Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութեան Վրաստանի ռայոնական ժողով, Գ. նիստ //Աշխատաւոր, 2 ապրիլի 1919, N 64:

N 78

Հաղորդագրություն՝ Բորչալուի գավառում հայ-վրացական պատերազմի հետևանքով ձերբակալված հայերին ազատելու՝ ՀԱԽ-ի միջնորդության մասին

Վիրահայ Ազգային Խորհրդի կողմից վրաց ներքին գործերի և զինուորական մինիստր Ն. Վ. Ռամիշվիլիին ներկայացան Ա. Երզնկեան, Ղ. Տէր-Ղազարեան[106] և Հայաստանի խորհրդարանի անդամ Հ. Ազատեան[107] զրուցաարութիւն ունեցան Բորչալուի շրջանում տեղի ունեցող կալանաւորութիւնների շուրջը, որոնք մեղադրւում են հայ-վրացական պատերազմի միջոցին ապստամբութիւն կազմակերպելու և մասնակցելու մէջ: Այս խնդրի վերջնական լուծման համար Ազգային խորհրդի ներկայացուցիչները մինիստրին առաջարկեցին Սահմանադիր ժողով մտցնել համապատասխան օրինագիծ և բոլոր ձերբակալուածներին ազատել: Ներքին գործերի և զինուորական մինիստր Ռամիշվիլին խոստացաւ շուտով Սահմանադիր ժո-

---

[106] **Տեր-Ղազարյան Ղազար Գրիգորի** (1874-1958), ծն. Շուշիում, քիմիկոս, գիտությունների դոկտոր (1906), պրոֆեսոր (1935): 1906-1910-ին՝ Ժնևի համալսարանի լաբորատորիայի վարիչ: Եղել է կանգնած հայ սոցիալ-դեմոկրատ «սպեցիֆիկներ» կոչված հոսանքի ակունքներին մոտ: Պարենավորման և աշխատանքի կոմիսար Անդրկովկասյան Կոմիսարիատում և Ե. Գեգեճկորու ղեկավարած կառավարության կազմում: 1924-1932-ին՝ Անդրդաշնության Պետպլանի վարչության պետ, այնուհետև աշխատել է ԵՊՀ և ԵՊԲԻ-ում:

[107] **Ազատյան Հայկ Նահապետի** (1881-1964), տնտեսագետ:

ղով մտցնել օրինագիծ, հայ-վրացական պատերազմի միջոցին ձերբակալուած հայերին ազատել և առհասարակ լուծել պատերազմի հետ կապուած խնդիրները[108]:

Տե՛ս Տեղական կեանք. ձերբակալուած հայերին ամնիստիա տալու մասին //Ժողովրդի Ձայն, 13 ապրիլի 1919, N 79:

N 79
Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1919 թ. ապրիլի 11-ի նիստի մասին

Նիստը տեղի ունեցաւ Բարեգ. ընկ. դահլիճում: Օրակարգն էր.

1. Գործադիր մարմնի ինֆորմացիա:
2. Մթերքների վաճառքի խնդիրը:
3. Յովնանեան դպրոցի հոգաբարձութ. խնդիրը:
4. Գործադիր մարմնի վերակազմութիւնը:

1. Ընկ. Երզնկեանի տուած տեղեկութիւններից պարզւում է, որ Գործադիր մարմինը դիմումներ է արել վրաց կառավարութեանը ազատելու բանտից և վերջ տալու այն դատաստանական գործերին, որոնք կապ ունեն հայ-վրացական կոֆլիկ-

[108] Այս խոստումնալից հավաստիացումներին հակառակ ձերբակալված հայերը ոչ միայն ազատություն չստացան, այլև ամիսներ անց կալանքի տակ հայտնվեցին նորերը: Այսպես, Շուլավերի շրջանային կոմիսար Լանդիայի կարգադրությամբ 1919 թ. օգոստոսին ձերբակալվել էր ոմն Ար. Էլիբեկյանը, Վրաստանի և Հայաստանի միջև առաջացած պատերազմի ժամանակ ապստամբություն կազմակերպելու մեղադրանքով: Տե՛ս Տեղական կեանք // Ժողովրդի Ձայն, 15 օգոստոսի 1919: Միջազգային հանրության կողմից Վրաստանի «դե ֆակտո» ճանաչման կապակցությամբ 1920 թ. հունվարի 27-ին Սահմանադիր ժողովը երկրում համաներում հայտարարեց, սակայն ազատություն ստացածների ցանկում բացակայում էին այն հայերը, ովքեր հետապնդվում էին հայ-վրացական միջադեպին մասնակցելու մեղադրանքով:

տի հետ: Կառավարական շրջանները համակրանքով են վերաբերուել այդ առաջարկին և խոստացել են մօտ օրերս համապատասխան օրէնագիծ մտցնել Սահմ. Ժողով:

2. Գաղթականական գործը Հայաստանի խնամատարության մինիստրի կողմից յատուկ լիազօրի յանձնելու պատճառով գաղթ. բաժնի մօտ մնացած մթերքների դրութիւնը մնում է անորոշ, որովհետև լիազօր Դ. Դաւիդեանը[109] հրահանգ է ստացել Հայաստանի կառավարութիւնից ստանալ Ազգ. խորհրդի մթերքներն անվճար: Այդ կարգադրութեան իրագործելը անհնարին է դարձնում այն պարտքերի հանգցնելը, որոնք արուած են նոյն գաղթ. պէտքերի համար:

Որոշւում է յանձնարարել Գործ. մարմնին որոշ համաձայնութեան գալ հայկ. կառ. ներկայացուցչի հետ և աշխատել մթերքները յանձնել նրան, որպէսզի գաղթականութիւնը չը տուժի:

3. Յովնանեան դպրոցի ապօրինի ընտրուած հոգաբարձութիւնը հաստատուած լինելով կաթողիկոսից, պահանջել է հին հոգաբարձութիւնից յանձնել բոլոր գործերը: Գործադիր մարմինը խնդրում է ինստրուկցիաներ: Երկար վիճաբանութիւններից յետոյ որոշւում է.

1. Յանձնարարել Գործ. մարմնին անյապաղ Յովնանեան դպրոցի հոգաբարձութեան նոր ընտրութիւններ նշանակել:

2. Հրահանգել հին հոգաբարձութեանը շարունակել իր աշխատանքները և գործերը յանձնել միայն ապագայում ընտրուելիք հոգաբարձութեան:

3. Առաջնորդի հրաւիրուած ժողովին հոգաբարձութիւնը պիտի մասնակցի և յայտարարի, որ ինքը գործերը չի յանձնում

---

[109] Պետք է լինի՝ Դավիթխանեան:

և ենթարկւում է Ազգային Խորհրդի հրահանգներին: Ուշ լինելու պատճառով նիստը փակւում է գիշ. ժամը 11-ին մօտ:

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 13 ապրիլի 1919, N 73:

N 80
ՀԱԽ-ի դիմումը Վրաստանի կառավարությանը՝ Շուլավերի հայ ազգաբնակչության հոգսերի մասին

Վիրահայ ազգային խորհուրդը դիմել է Վրաստանի հանրապետութեան մինիստր-նախագահին մի գրութեամբ, որի մէջ մատնանշելով այն հանգամանքը, որ քաղաքական յանցանքների համար ձերբակալւած և բանտարկւած շուլաւէրցիների մէջ քիչ չեն այնպիսի անձեր, որոնք իրենց անձնական թշնամիների սուտ մատնութեան զոհեր են և միանգամայն անմեղ, խնդրում է միջոցներ ձեռք առնել անյապաղ արձակելու նրանց բանտերից:

Նկատի ունենալով, որ Շուլաւէրի, ինչպէս և շրջակայ գիւղերի բնակիչները սաստիկ տուժել են թալաններից հայ-վրացական կոնֆլիկտի ժամանակ, կորցնելով իրենց համարեա ամբողջ գոյքը, խորհուրդը խնդրում է առհասարակ վերջ տալու բոլոր նման գործերին յիշեալ գիւղերի շրջանում նորմալ կեանքը վերականգնելու և անցածը մոռացութեան տալու համար:

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդի դիմումը (Շուլաւէրցիների համար) // Աշխատաւոր, 13 ապրիլի 1919, N 73:

N 81

ՀԱԽ-ի դիմումի վրաց կառավարությանը՝ Ջավախքի հայ ազգաբնակչության կարիքները հոգալու մասին

Վիրահայ ազգային խորհուրդը դիմել է Վրաստանի հանրապետութեան մինիստր-նախագահին, անգլիական միսսիային և Վրաստանի փախստականներին օգնող կոմիտէի նախագահին մի գրութեամբ, որի մէջ նկարագրելով հայրենիք վերադարձած ախալքալաքցի փախստականների ծանր աստիճան նեղ կացութիւնը պարենաւորման տեսակէտից, խնդրում է շուտափոյթ օգնութիւն հասցնել հացով և սերմացուով: Հայրենիք վերադարձած փախստականների թիւը հասնում է 40 հազարի, որոնց 4 ամիս կերակրելու համար (մինչև առաջիկայ բերքը) հարկաւոր կը լինի 160 հազար փութ ալիւր (հաշուելով շնչին 4 փութ), իսկ սերմացուի համար 200 հազար փութ ցորեն (շնչին 5 փութ):

Խորհուրդը խնդրում է նմանապէս վերադարձած փախստականներին տալ անասուններ և գիւղատնտեսական գործիքներ, ինչպէս և շաքար, թեյ, կտորեղեն և այլն:

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդի դիմումը
(Ախալքալաքցիների համար) //
Աշխատաւոր, 13 ապրիլի 1919, N 73:

N 82

Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմի մասին

Վիրահայ ազգային խորհուրդը որոշել է կայացնել խորհրդի նոր ընտրութիւն, այդ նպատակի համար ընտրել է ընտ-

բական կենտրոնական յանձնաժողով, որի կազմի մէջ մտնում են՝ Ա. Աթաբէգեան (դաշնակց. ֆրակցիայից), Ղ. Տէր-Ղազարեան (սոց.-դեմ.), Ա. Տէր-Գրիգորեան (սոց.-յեղ.) և Ա. Բարխուդարեան (Հայ. ժող. կուս.): Յանձնաժողովի նախագահ ընտրուել է Ա. Աբեղեան, քարտուղար՝ Ա. Տէր-Գրիգորեան: Յանձնաժողովը արդէն ձեռնարկել է համապատասխան աշխատանքների:

Տե՛ս Լրատու՝ Վիրահայ ազգային խորհրդի նոր ընտրութիւնը //Աշխատաւոր, 1 մայիսի 1919, N 84:

N 83
«Աշխատավոր» օրաթերթի խմբագրականը՝ Վրաստանի ՀԱԽ-ի մասին

Վրաստանում գոյութիւն ունեցող Հայոց Ազգային Խորհուրդը, որ կազմուած է չորս կուսակցութեանց փոխադարձ համաձայնութեամբ և զուրկ է որևէ ժողովրդականութիւնից, զարմանալի յամարութեամբ շարունակում է կառչած մնալ իր աթոռներին:

Մինչև այժմ մեր պահանջին – ընտրութիւններ նշանակել – պատասխանել են, որ «մոմենտը անյարմար» է, որ «Խորհուրդը ծանրաբեռնուած է գաղթականական գործերով» և որ ժամանակ չէ ընտրութիւններ նշանակել և այլն: Այդ պատճառաբանութիւններին զուգընթաց՝ ինքը Խորհուրդը ենթարկւում է իւրատեսակ մետամորֆոզայի: Իր էութեամբ լինելով մի մեռած մարմին, Խորհուրդը իր բոլոր իրաւունքները ու աշխատանքները բարձել է Գործադիր Մարմնի վրայ, որը աշխատում է այնպէս, ինչպէս ինքն է հասկանում:

<…> Գործադիր Մարմինն է ոտնահարել Խորհրդի իրաւունքները: Փաստօրէն նա եղել է ոչ թէ «գործադիր», այլ

«օրէնսդիր» մարմին: Նա իր ձեռքն է կենտրոնացրել բոլոր գործերը և, շնորհիւ նախագահութեան փաստացի բացակայութեան, Խորհրդի նիստերը անգամ հրաւիրել է այն ժամանակ, երբ յարմար է դատել, կամ երբ տրամադրութիւն է ունեցել Խորհրդին իր գործունէութեան «ինֆորմացիա անել»:

Իսկ այդ գործունէութիւնը եղել է շատ «բազմակողմանի», արուել են պատասխանատու քայլեր, ծախսուել միլլիոններ, և այդ բոլորի մասին խորհրդին միայն յայտնել են «ի տեղեկութիւն» կամ, աւելի յաճախ, բնաւ չեն յայտնել:

Այսպիսով Ազգային Խորհուրդը փաստօրէն եղել է մի խրտուիլակ, որը քողարկել է մի շարք մարդկանց գործունէութիւնը: Այդ դրութիւնը հետևանք է այն բանի, որ Խորհրդում չկայ որևէ կայուն մեծամասնութիւն, չկայ հնարաւորութիւն՝ հարկադրելու անհատներին հանրային կարծիքն հաշուի առնելու: <…>

Ժամանակ է նաև հասարակութեանը հաշիւ տալ այն հսկայական գումարների մասին, որոնք ծախսուած են առանց Խորհրդի գիտութեան ու նրա սանկցիայի:

Մեր հասարակական բարքերի այլանդակութեան տեսակէտից հէնց Ազգային Խորհրդի գոյութիւնն ու նրա գործելակերպը շատ բնորոշ են:

Տե՛ս Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 7 մայիսի 1919, N 88:

N 84

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. մայիսի 6-ի արտահերթ նիստի մասին

Նախագահ պ. [Ա.] Մխիթարեանը յայտարարում է հետևեալ օրակարգը.

1. Ինֆորմացիա:
2. Գործադիր Մարմնի վերակազմութիւնը:
3. Զեկուցում պարեն. և ֆինանս. գործերի մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Նախ քան օրակարգին անցնելը ընկ. Բ. Թոփչեանը հարց է տալիս նախագահութեանը, թէ ո՞ւմ որոշումով և ի՞նչ իրաւունքով Խորհրդի որոշած օրերին երկու շաբաթայ ընթացքում նիստեր չեն հրաւիրուել, հակառակ վերջին նիստին տրուած այն յայտարարութեան, թէ գործ. մարմնի վերակազմութեան հարցը կը քննուի ոչ ուշ՝ քան մէկ շաբաթայ ընթացքում:

Նախագահ պ. Մխիթարեանը յայտնում է, շնորհիւ պրեզիդիումի փաստացի բացակայութեան ինքը մենակ ի վիճակի չի եղել հետևել բոլոր գործերին, ուստի ոչինչ չի կարող ասել Խորհրդի նիստերի ժամանակին չհրաւիրելու մասին:

Գործադիր Մարմնի անդամ ընկ. Ա. Երզնկեան յայտնում է, որ նիստը չի հրաւիրուած քանի որ հարցեր չեն եղել:

Ընկ. Բ. Թոփչեան. - Դաշնակցական ֆրակցիան ժամանակին մի գրութեամբ պահանջել է Խորհրդի նիստը գումարել:

Մանի որ այդ գրութեան մասին այստեղ ոչինչ չասուեց, թոյլ տուէք կարդալ գրութիւնը (կարդում է):

«Վիրահայ Ազգային Խորհրդի նախագահութեանը.

Ազգաին Խորհրդի դաշնակցական ֆրակցիան պահանջում է Խորհրդի արտակարգ նիստ նշանակել ոչ ուշ քան երեք-

շաբթի օրը, մի շարք անյետաձգելի խնդիրների քննութեան համար: Իր կողմից ֆրակցիան առաջարկում է հետևեալ օրակարգը. 1. հարցապնդում պարենաւորման գնումների մասին, 2. ընտրութիւնների հարցը, 3. Գործադիր մարմնի վերակազմ., 4. վերաստուգիչ յանձնաժողովի ընտրութիւններ»:

Ակներև է, որ քննելու հարցեր կան:

[Ա.] Երզնկեան. - Գործադր Մարմինը որոշել էր նիստ գումարել նախ քան այդ գրութեան ստանալը: Քանի որ նա պիտի զեկուցում տար նաև պարենաւորման գործի մասին, ուստի աւելորդ համարեց ընկ. Թոփչեանի հարցապնդումը օրակարգի մէջ դնել:

Ընկ. Բ. Թոփչեան ըստ կարգի պահանջում է առաջին հերթին լսել հարցապնդումը, որ ոչ մի կապ չունի զեկուցման հետ և շօշափում է կոնկրետ, բայց խոշոր նշանակութիւն ունեցող մի խնդիր:

Դա Ազգային Խորհրդի բիւջէտային տարրական իրաւունքի ոտնահարումն է, որ սիստեմ է դարձրել Գործադիր Մարմինը:

Ըստ իս, քանի որ մեզ ուղարկւած հրաւիրաթերթիկների մէջ օրակարգը չէր յիշած, քանի որ իմ հարցապնդումը մտցւած է նախ քան նիստ հրաւիրելը, ուստի Գործադիր Մարմնի բացատրութիւնները պիտի լինեն միայն հետևանք այդ հարցապնդման և ոչ թէ կանխեն նրան:

Թէր և դէմ խօսակցութիւններից յետոյ, ժողովը որոշում է առաջ քննել ընտրական յանձնաժողովի նախագահի ընկ. Արտ. Աբեղեանի զեկուցումը Խորհրդի ընտրութիւնների մասին, յետոյ լսել Գործ. Մարմնի զեկուցումը և ապա անցնել օրակարգի միւս հարցերին:

Ընկ. Աբեղեանը զեկուցում է կենտ. ընտրական յանձնաժողովի աշխատանքների մասին, որից պարզւում է, որ կոմիսիան նախապատրաստական աշխատանքները վերջացրել է: Կազմւած է թէ՛ ծախսերի նախահաշիւը, թէ՛ մօտաւոր ստատիստիկա և մաշակւած է պատշաճ հրահանգ շրջանային տեղական ընտրական յանձնաժողովներին: <…>

Կոմիսիան խնդրում է այժմ լուծել այդ հարցը, թէ ընտրի՞ անմիջապէս Ազգային Խորհուրդը, թէ՞ նախ պիտի գումարւի Վիրահայ Ազգային համագումար, որը և կընտրի Ազգային Խորհուրդ:

Ղ. Տէր-Ղազարեան մի ընդարձակ ճառով պաշտպանում է անմիջական ընտրութիւնները կատարւած քառանդամ ֆորմուլայով, անկարելիութեան դէպքում առաջարկելով քիչ էլ յետաձգել ընտրութիւնները մինչ այդ հնարաւոր կը դառնայ:

Ստ. Մալխասեանը անհրաժեշտ է համարում նախ քան այս կամ այն ձևի ընտրութիւնների մասին խօսելը՝ պարզել, թէ արդեօք կառավարութիւնը ո՞ր ձևի ընտրութիւններին արգելք չի հանդիսանայ:

[Ա.] Ստամբոլցեանը պաշտպանում է ամնիջական ընտրութիւնների սկզբունքը:

Ընկ. Բ. Թոփչեան և Երզնկեան կողմնակից են համագումարի, ի նկատի առնելով, որ անմիջական ընտրութիւններ համարեա անկարելի է կատարել այժմ:

Ընկ. Ա. Աբեղեան պատասխանելով բոլոր առարկութիւններին, անհիմն է համարում և արդիւնք որոշ մարդկանց ցանկութեան՝ ընտրութիւնները զանազան պատրւակներով յետաձգելու և պնդում է կոմիսսիայի առաջարկների վրայ:

Քւէարկութեան ժամանակ Իս. Յարութիւնեանը առաջարկում է խնդիրը յետաձգել, մինչև որ իրենց (ժող. կուսակ.)

ֆրակցիան կը քննի հարցը: Միւս ֆրակցիաները տրամադիր են առաջարկն ընդունելու:

Ընկ. Գ. Տէր-Ստեփանյանն առաջարկն ընդունելի է համարում, եթէ նիստը նշանակւի չորեքշաբթի կամ հինգշաբթի: Առաջարկը չի անցնում:

Ընկ. Բ. Թոփչեան. – Տասն ամիս ժամանակ ենք ունեցել այս հարցը քննելու: Յետաձգելով այս հարցը դուք յետաձգում էք նաև մնացած բոլոր հարցերի քննութիւնը: Չի քննւի նաև այսօրւայ հարցապնդումը այնպէս, ինչպէս ամիսներ շարունակ չքննւեց իմ մտցրած հարցապնդումը ֆինանսական գործի մասին: Այս յաւիտենական ձգձգումներին պիտի վերջ տալ: Ֆրակցիայի կողմից լիազօրւած եմ յայտարարելու, որ եթէ Խորհուրդը այս շաբաթւայ ընթացքում վերջնականապէս չլուծի ընտրութիւնների հարցը, մեր ֆրակցիան համաձայն իր որոշման և կուսակցական դիրեկտիւաների՝ հարկադրւած կը լինի դուրս գալ Խորհրդի կազմից: <…>

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 7 մայիսի 1919, N 88:

N 85

Վրաստանի ՀԱԽ-ի անդամ Ա. Աբեղյանի կարծիքը՝ ՀԱԽ-ի կազմը վերընտրելու անհրաժեշտության մասին

1917 թ. հոկտեմբերին, ինչպէս յայտնի է, հրաւիրւեց Ռուսահայոց Համագումար, որն և ընտրեց Ազգային Խորհուրդ: Այդ Ազգային խորհուրդը շարունակեց իր գոյութիւնը և աշխատանքները Թիֆլիսում մինչև անցած տարւայ յուլիս ամիսը, երբ նա, Անդրկովկասի բաժանման հետևանքով, տեղա-

փոխուեց Երևան և դարձաւ Հայաստանի Խորհուրդ կամ պարլամենտ:

Նոյն յուլիս ամսին հենց կարիք զգացուեց Վրաստանի հայութեան համար ներկայացուցչութիւն ստեղծել: Հ. Յ. Դաշնակցութեան Վրաստանի առաջին ռայոնական ժողովն եկաւ ընդգծելու անհրաժեշտութիւնը: Հարկաւոր էր ընտրել Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ: Բայց որովհետև ընտրութիւնները ժամանակ կը պահանջէին, ուստի և մտածեցին ժամանակաւորապէս մի խորհուրդ ընտրել՝ այլ հիմունքներով:

Չպիտի մոռանալ, որ դա մեր կեանքի և պատմութեան ամենամռայլ շրջաններից մեկն էր: <…> Ստեղծուեց Վ. Հ. Ազգային Խորհուրդը «պարիտետային» սկզբունքով: Չորս կուսակցութիւններից իւրաքանչիւրը (Հ. Յ. Դաշ., ս.-դ., ս.-յ., հ.ժ.կ.) տուաւ հաւասար թւով (ութական) պատգամաւորներ <…>:

Ժամանակաւորապէս միայն այդ կազմով ստեղծուած մարմինը փոխանակ անմիջապէս գործի դիմելու՝ մէկ ամբողջ ամիս վիճեց նախ, թէ ո՞վ, ո՞ր ֆրակցիայի ներկայացուցիչն է լինելու Խորհրդի նախագահ, ապա մէկ ամիս էլ՝ թէ ո՞վ է լինելու Ա[զգային] Խորհրդի Գործադիր մարմնի նախագահ: Պարիտետային սկզբունքի արդիւնքն էր դա՝ Հ. Յ. Դաշնակցութեան առաջին և խոշոր դիմումը միւս ֆրակցիաներին անսանձ էր դարձրել: Ու մինչ – այս, մինչ այն՝ եկան սեպտեմբերը ու հոկտեմբերը, դպրոցական-կուլտուրական գործը, որ գլխաւորը պիտի լինէր նորաստեղծ մարմնի համար, մնաց երեսի վրայ և անկազմակերպ վիճակի մէջ: Ո՛չ պետական հայկական և ո՛չ էլ ծխական-միջնակարգ դպրոցները որևէ բարեփոխութեան վրայ չդրուեցին: Խորհուրդը զբաղուեց ամեն խնդրով, բայց շատ քիչ՝ իր բուն խնդրով, որ է ազգային-կուլտուրական աւտոնոմիայի խնդրով:

Վ. Հ. Ազգային Խորհրդի ընտրութիւնները պիտի լինէին, ըստ նախօրօք կայացրած համաձայնութեան, հոկտեմբեր ամսին: Եւ չնայած մեր ֆրակցիայի բազմիցս արած պահանջներին և առաջարկներին՝ այդ ամենակարևոր խնդիրը ձգձգուեց մինչև օրս: Միւս ֆրակցիաները օգտուելով Դաշնակցութեան առաջին զիջումից և «պարիտետային» սկզբունքից, գոհ էին գոյութիւն ունեցող վիճակից և իրենց շատ լաւ զգալով՝ կարիք չէին տեսնում նոր ընտրութիւնների: <…>

Տե՛ս Ա. Աբեղեան, Վ. Հ. Ազգային Խորհրդի ընտրութիւնները // Աշխատաւոր, 14 մայիսի 1919, N 94:

N 86
Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1919 թ. մայիսի 13-ի արտահերթ նիստի մասին

Նախագահում է Ա. Մխիթարեան: Ընդունւում է հետևեալ օրակարգը.

1. Յայտարարութիւն ֆրակցիաների կողմից Գործ. Մարմնի և նախագահութեան մէջ մտցուելիք ներկայացուց[իչների] մասին:
2. Զեկուցում ընտրութիւնների ձևի և ժամանակի մասին:
3. Զեկուցում ֆինանսական դրութեան և պարենաւորման գործի մասին:
4. Հարցապնդում պարենաւորման գնումների մասին:
5. Հայկական դպրոցների ծրագիր կազմելու հարցը:

Գործադիր մարմնի կազմը

Համաձայն նախորդ նիստի[110] որոշման՝ ֆրակցիաները տալիս են Գործ. Մարմնի իրենց թեկնածուների անունները:

[110] Կայացել է 1919 թ. մայիսի 9-ին: Տե՛ս Աշխատաւոր, 11. 05. 1919, N 92:

1. Խնամատարութեան վարիչ – ընկ. Ա. Միանսարեան (դաշն.):

2. Արտաքին յարաբ. և նախագ. ընկ. Ա. Երզնկեան (սոց.-դեմ.):

3. Ֆինանսների վարիչ ընկ. [Ա.] Ստամբոլցեան (սոց.-յեղ.):

4. Դպրոցական մասի վարիչ պ. Ե. Տէր-Մինասեան (ժող. կուս.):

Խորհուրդը առաջարկւած թեկնածուներին հաստատում է:

Խորհրդի նախահաւութիւնը

Վիրահայ Ազգային Խորհրդի մշտական նախագահութիւն է ընտրւում հետևեալ կազմով.

Նախագահ՝ ընկ. Բ. Թոփչեան (դաշն.):

Փոխ. նախ. պ. Ա. Մխիթարեան (ժող. կուս.):

Քարտուղար մնաում է Մ. Դարբինեան (սոց.-դեմ.):

Մեկ փոխ. նախագահի տեղ վերապահւում է էսէրներին, որոնք թեկնածու մատնանշելու են հետևեալ նիստին: Նախ քան ընտրութիւնները՝ առաջարկ եղաւ պրեզիդիումի վարձատրելու մասին: Վիճաբաննութիւններից յետոյ առաջարկը մերժւեց:

Ընտրութիւնները

Ընկ. Աբեղեան զեկուցում է այն որոշման մասին, որ կայացրել է Ազգ. Խորհ. ընտրական յանձնաժողովը ֆրակցիաների ներկայացուցիչների հետ միասին:

1. Ազգային նոր խորհրդի ընտրութիւնները տեղի են ունենալու յուլիսի 15-ից մինչև 30-ը, ընդհանուր, ուղղակի, հաւասար, գաղտնի և պրոպորցիոնալ սկզբունքի հիման վրայ:

2. Ընտրութիւնները պիտի լինեն անմիջական՝ այսինքն պիտի ընտրւի ուղղակի Ազգային Խորհուրդը:

3. Ընտրողների ցուցակագրութիւնը կատարուելու է միայն քաղաքներում, այն էլ էթէ հնարաւոր լինի օգտագործել 1919 թ. ընտրական ցուցակները:

4. Ընտրութիւնների համար վարկ է բացւում 200000 ռուբլի:

Խորհուրդը առանց վիճաբանութիւնների հաստատում է կոմիսիայի այդ որոշումները:

Խորհրդի ֆինանսները

Ընկ. Ա. Երզնկեանը զեկուցում է Ազգային Խորհրդի ֆինանսական դրութեան մասին, որից պարզւում է, որ այժմ Խորհրդի ակտիւը հասնում է դրամով և մթերքներով մօտ երեք քառորդ միլիոնի: Դրա դիմաց կան պարտքեր մօտ 6 հարիւր հազարի: Այդ պարտքերի զգալի մասը կապ ունեն գաղթականների ու ռազմագերիների խնամատարութեան հետ և պիտի հանգցւեն Հայաստանի կառավարութեան կողմից:

Խորհուրդը զեկուցումը ընդունում է ի տեղեկութիւն:

Պարենաւորման գործը

Ա. Յովհաննիսեան զեկուցում է ոչ թէ առհասարակ պարենաւորման գործի, այլ միայն Բագւում կատարած գնումների մասին: Պարզւում է, որ Գործադիր Մարմնի որոշումով զեկուցողը և Ա. Զոհրաբեանը գնացել են Բագու. 1. Թոյլտուութիւն ստանալու պարեն. մթերքներ գնելու գաղթականների համար, 2. կանոնաւորելու հայ ռազմագերիների վերադարձը դէպի Ադրբէջան: Գնումների համար բաց է թողնւում 100000 ռուբլի:

Բագւում այդ պատւիրակութիւնը բանկերի միջոցով վարկ է բաց անում 3 միլիոն ռուբլու: Գնում է 1 վագոն ալիւր, սպիտակեղէն, 3 վագոն բրինձ, մօտ 1 վագոն վօբլա և այլ ձկներ – ընդամենը մօտ 1 միլիոն ռուբլու: Բոլոր մթերքները այժմ լաւ գներ ունեն, բացի վօբլայից, որը փչացել է: Այստեղ վօբլան այժմ արժէ 72 ռուբլի, մինչդէռ խորհրդի վրայ նա նստել է 200

ռուբլուց աւելի: Փչացած վօբլան այժմ լւացվում է և աղ է դրւում: Յոյս կայ, որ գները կը բարձրանան և այդ ամբողջ գնումները լիկւիդացիա կարւի անվնաս:

Հարցերից, որոնք ուղղւած էին թէ՛ զեկուցողին և թէ՛ Գործ. Մարմնի նախագահ Երզնկեանին՝ պարզւում է, որ Գործ. Մարմինը լիազօրութիւն չի տւել այդպիսի խոշոր գնումներ կատարելու համար և որ մթերքները գնւած են յանձնաժողովի հայեցողութեամբ: Պարզւում է նաև, որ ամենանպաստաւոր դէպքում այդ գործը լիկւիդացիա անելը կը պահանջի խորհրդից մօտ 270-300 հազար ռուբլի ամենաքիչը:

Նախ քան մտքերի փոխանակութեան անցնելը՝ խորհուրդը լսում է Բ. Թոփչեանի հարցապնդումը այդ նոյն գնումների մասին: Տեղի են ունենում կատաղի և բուռն վիճաբանութիւններ[111] <…>:

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 15 մայիսի 1919, N 95:

N 87
Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1919 թ. մայիսի 16-ի հերթական նիստի մասին

Նախագահում է պ. Ա. Մխիթարեանը: Հայտատւում է հետևեալ օրակարգը:

1. Ինֆորմացիա:

2. Վիճաբանութ. գնումների առթիւ արւած հարցապնդման շուրջը:

[111] Տե՛ս Աշխատաւոր,16. 05. 1919, N 96:

3. Գործադիր մարմնի առաջարկները դպրոցական գործի ընդհանուր վիճակի և ծրագրի մասին:

4. Ընթացիկ հարցեր:

Ա. Երզնկեանը Գործադիր մարմնի կողմից զեկուցում է, որ Հայաստանի կառավարութիւնը Ախալքալաքի շրջանի գաղթականների պէտքերի համար ուղարկել է 10 միլիոն չորս հարիւր հազար ռուբլի, գումարը պիտի գործադրւի յատուկ կազմւած յանձնաժողովի կողմից:

Այդ յանձնաժողովը կազմւած է Ազգային Խորհրդի, Գիւղատնտեսական ընկերութեան, Հայաստանի խնամատարութեան մինիստրութեան և Ախալքալ. Հայրենակց. Միութեան ներկայացուցիչներից: Յիշեալ յանձնաժողովը մեկնելու է Ախալքալաք՝ տեղն ու տեղը կազմակերպելու օգնութեան գործը[112]:

Զեկուցումն ընդունւում է ի տեղեկութիւն: Անցնում են հարցապնդման վիճաբանութիւններին[113] <…>:

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 18 մայիսի 1919, N 98:

---

[112] Խոսքը ՀԱԽ-ին կից ստեղծված «Ախալքալաքի հատուկ կոմիտե» կոչված կառույցի մասին է: Նրա «գործունեությունը» տեղիք տվեց բազմաթիվ նախատանքների, որոնք հնչեցին և՛ ՀԱԽ-ի շրջանակներուն և՛ մամուլում: Տե՛ս Գաղթականութեան անց ու դարձը Ջաւախքում // Նոր Աշխատաւոր, 30. 07. 1919: Նաև՝ Զեղծումների աշխարհում // Աշխատաւոր, 14. 10. 1919:

[113] Քննարկումների շարունակությունը նաև տե՛ս Աշխատաւոր, 21. 05. 1919, N 100:

N 88
Վրաստանի ՀԱԽ-ի անդամ Ա. Աբեղյանի կարծիքը՝ ՀԱԽ-ի առջև ծառացած բուն խնդիրների մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի գոյութեան հիմնական նպատակը պիտի համարել այն, որ նա կարողանայ կեանքի մէջ իրականացնել ազգային-կուլտուրական աւտոնոմիայի սկզբունքները: Այդ աւտոնոմիան է, որ հնարաւորութիւն պիտի տայ Վրաստանի խոշորագոյն փոքրամասնութիւն ներկայացնող հայ ազգաբնակութեան ազգային, կուլտուրական և քաղաքացիական իրաւունքները պաշտպանելու և նրա նորմալ զարգացման ուղին հարթելու: Այդ ձևով միայն՝ Ազգային Խորհուրդը այսուհետև հանդիսանալու է Վրաստանի հայութեանն օրինական ներկայացուցչութիւնը, վերապահելով իրեն այն բոլոր իրաւունքները, որ մասամբ ունեցել է մինչև հիմա եկեղեցին՝ կրթական-դպրոցական խնդիրներում: <…>

Վ. Հ. Ազգային Խորհրդի անմիջական նպատակն է՝ քննութեան առնել և պարզել Վրաստանի սահմաններում ապրող հայութեան ազգային-կուլտուրական և իրաւական քաղաքացիական դրութիւնը, նրա կարիքները և պահանջները ու համապատասխան միջոցներ ձեռք առնել՝ կանոնաւորելու ազգային կուլտուրական-քաղաքացիական կեանքը, յեղափոխութեան ընձեռած ազատութեան ամենալայն սահմաններում:

Ազգային կուլտուրական աւտոնոմիան է լինելու այն իրաւական հասարակական ինստիտուտը, որ նոր կարգերի սահմաններում հանդիսանալու է տէր ու տնօրէն և հովանաւոր Վրաստանի սահմաններում ապրող հայութեան, առանց դաւանանքի խտրութեան, կուլտուրական բոլորատեսակ հաստատութիւնների և ձեռնարկների, որպիսիք են՝ դպրոց (ամեն

տիպի և կարգի), թատրոն, գեղարուեստ, գիտութիւն, թանգարան-գրադարաններ, լուսատարած հաստատութիւններ և ընկերութիւններ, բարեգործական-մարդասիրական հաստատութիւններ, հասարակական խնամատարութիւն, որբերի խնամատարութիւն և դաստիարակութիւն, գրադարան-ընթերցարաններ և այլն: Այս բոլորի պահպանութեան և զարգացման համար Ազգային Խորհուրդն ունենալու է իր սեփական դրամական ռեսուրսները – կուլտուրական տուրքի ձևով գանձուած, պետական կամ այլ աղբիւրներից ստացուած:

Այսպիսով Ազգային Խորհուրդը հանդիսանալու է Վրաստանի սահմաններում ապրող հայութեան ազգ. կուլտուրական գերագոյն ղեկավար մարմինը:

Երբ օրէնսդրական եղանակով ընդունուած և հաստատուած կը լինի ազգային աւտոնոմիան, այդ ժամանակից արդէն Վրաստանի հայութեան կեանքը իր նորմալ հունի մէջ կը մտնի: <…>

Տե՛ս Ա.Աբեղեան, Վ. Հ. Ազգային Խորհրդի ընտրութիւնները // Աշխատաւոր, 23 մայիսի 1919, N 102:

N 89

Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի 1919 թ. մայիսի 23-ի հերթական նիստի մասին

Նախագահում է ընկ. Բ. Թոփչեան: Հաստատւում է հետևեալ օրակարգը՝

1. Ինֆորմացիա Գործ. Մարմնի.

ա) Ձերբակալուածների վիճակը:

բ) Գագրիի և Պիլենկովայի շրջանների Ազգային Խորհրդի դիմումը:

գ) Պարեն. գնումների լիկվիդացիան:

2. Ծառայողների ռոճիկների յաւելում:

3.Ընթերցում և հաստատում ընտրական հրահանգի:

4.Գործ. Մարմնի առաջարկները դպրոցական գործի մասին:

5.Վերաստուգիչ յանձնաժողովի ընտրութիւնները:

6. Ընթացիկ հարցեր:

Ա. Գործադիր Մարմնի նախագահ ընկ. Ա. Երզնկեանը զեկուցում է այն քայլերի մասին, որ արել է Գործ. Մարմինը մինչև այժմ բանտերում տառապող Շուլաւէրցի, Դաղէթցի և Բոլնիսցի գիւղացիներին ազատելու համար:

Պարզւում է, որ մի շարք բանտարկեալների մասին ոչ մի տեղեկութիւն չունի կենտրոնական իշխանութիւնը, որը խոստացել է անմիջապէս ազատել վարչական կարգով ձերբակալուածներին:

Խորհուրդը որոշում է յատուկ պատւիրակութիւն ուղարկել կառավար. նախագահի մօտ՝ բանտարկեալների վերջնական վիճակը պարզելու համար: Պատւիրակութեան կազմելը յանձնւում է խորհրդի նախագահութեանը և Գործադիր Մարմնին:

Բ. Այնուհետև քննութեան է դրւում Գագրիի և Պիլենկովայի շրջանների ազգ. խորհուրդների դիմումը օգնութեան մասին (տե՛ս Աշխատաւոր, N 100): Շրջանի դրութեան մասին զեկուցում են ընկ. Երզնկեան և Բ. Թոփչեան: Խորհուրդը որոշում է վերոյիշեալ պատւիրակութեանը յանձնարարել բանակցել կառավարութեան հետ Գագրիի շրջանը մի արտակարգ լիազօրութիւններով կոմիսիա ուղարկելու: Կոմիսիայի կազմելը յանձնել նախագահութեանը և Գործ. Մարմնին:

Գ. Պարենաւորման գնումների լիկւիդացիան շարունակւում է: Գործը յանձնուած է բանկերին: Հաստատւում է Գործադիր Մարմնի որոշումը վոբլայից դուրս՝ մնացած մթերքներից գոյացած յաւելեալ գումարը գործադրել բանկերի վնասները հանգցնելու վրայ:

2.Կարճատև վիճաբանութիւններից յետոյ Խորհուրդը որոշում է աւելացնել բոլոր ծառայողների ռոճիկը 50 տոկոսով, կիրառելով այդ որոշումը մայիսի 1-ից:

3.Կարդացւում է և չնչին փոփոխութիւններով հաստատւում է ընտրական հրահանգը:

Ուշ լինելու պատճառով մնացած հարցերի քննութիւնը յետաձգւում է հետևեալ նիստին:

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 25 մայիսի 1919, N 104:

N 90
Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի շրջանային ընտրական հանձնաժողովների մասին

Վրաստանի Հայոց Ազգ. Խորհրդի կենտրոնական ընտրական յանձնաժողովը կազմակերպել է ընտրական շրջանները և նշանակել նախագահներ և փոխ-նախագահներ: Այսպէս՝ Սուխումի ընտրական շրջանի նախագահ է ընտրուել Խ. Աւդալբէկեան, փոխ-նախագահ՝ Յ. Տէրտէրեան, Թելաւի նախ. Ս. Դանդուրեան, փ.-նախ.՝ Գ. Տէր-Յարութիւնեան, Քութայիսի՝ Պետ. Ռաֆայէլեան, փոխ-նախագահ՝ Պ. Յովհաննիսեան, Գորի-Դուշէթի՝ նախագահ՝ Խ. Աֆրիկեան, փոխ-նախագահ՝ Ս. Գորգեան, Ախալցխայի՝ նախագահ՝ Մ. Այվազեան, փոխ-նախագահ՝ Ագայեան: Կենտրոնական ընտրական յանձնաժո-

ղովի վերոյիշեալ ընտրաշրջաններին արդեն փոխադրել է հարկաւոր գումարները, կազմակերպչական պէտքերի համար: Թիֆլիսի և Սղնախի գաւառների ընտրաշրջանները կը կազմակերպւեն այս օրերս:

Տե՛ս Լրատու //
Աշխատաւոր, 6 հունիսի 1919, N 110:

N 91
Հաղորդագրություն՝ Վրաստանի վարչապետ Ն. Ն. Ժորդանիայի, ՆԳ նախարար Ն. Վ. Ռամիշվիլու և ՀԱԽ-ի լիազորների 1919 թ. հունիսի 5-ի աշխատանքային հանդիպման մասին

Յունիսի 5-ին Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի կողմից մի պատգամաւորութիւն ներկայացաւ Վրաստանի վարչապետ Ժորդանիային և ներքին գործերի ու զինուորական մինիստր Ն. Ռամիշուիլուն և խնդրեց՝ 1) դադարեցնել հայ-վրացական կոֆլիկտի պատճառով հետապնդումը հայ գիւղացիներին, 2) Վրաց կառավարութեան և Հայոց Ազգային խորհրդի կողմից արտակարգ լիազօրութիւններով խառն յանձնաժողով ուղարկել Սոչիի և Սուխումի շրջանը, այնտեղի հայերի դրութիւնը բարելաւելու համար և 3) թոյլ տալ կայացնելու Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ընտրութիւնները: Վարչապետ Ժորդանիան Ազգային Խորհրդի պատգամաւորութեանը խոստացաւ. 1) թոյլ տալ Ազգային Խորհրդի ընտրութիւնները կատարել, որոշ փոփոխութիւններ մտցնելով ընտրութիւնների ձևի մէջ, 2) ուղարկել մի խառն յանձնաժողով Սոչիի և Սուխումի շրջանը, հայերի դրութեան հետ ծանօթանալու և բարելաւելու համար և 3) հայ-վրացական կոնֆլիկտի առթիւ հետա-

պնդման գործի հետ ծանօթանալուց յետոյ, անել հարկաւոր կարգադրութիւն: Պատգամաւորութեան կազմն էր՝ խորհրդի նախագահ՝ Բ. Թոփչեան, Գործադիր Մարմնի նախագահ՝ Ա. Երզնկեան և ընտրական յանձնաժողովի նախագահ՝ Արտ. Աբեղեան:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի
պատգամաւորութիւնը Ն. Ժորդանիայի մօտ //
Աշխատաւոր, 7 հունիսի 1919, N 111:

N 92

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հունիսի 6-ի հերթական նիստի մասին

Նախագահում է ընկ. Թոփչեան: Հաստատւում է հետևեալ օրակարգը.

1) Ինֆորմացիա կառավարութեան հետ ունեցած բանակցութիւնների մասին:

2) Վերաստուգիչ յանձնաժողովի ընտրութիւնները:

3) Ախալք. Հայր. Միութեան յայտարարութիւնը խորհրդի անդամ Ա. Տէր-Գրիգորեանի մասին:

4) Դպրոցական յանձն. զեկուցումը:

5) Առաջարկութիւն Գործ. Մարմնի հոգաբ. ընտրութ. մասին:

6) Ընթացիկ հարցեր:

1. Ընկեր Բ. Թոփչեանը զեկուցում է այն տեսակցութիւնների մասին, որ Ազգային Խորհրդի որոշման համաձայն, ունեցել են խորհրդի նախաձեռնութեամբ Բ. Թոփչեանը, Գործադիր Մարմնի նախ. Ա. Երզնկեանը և ընտրական յանձնաժողովի

նախ. Ա. Աբեղյանը, նախ ներքին գործոց մինիստրի, ապա և կառավարութեան նախագահի հետ:

Բանակցութիւնները վարուել են 3 խնդրի՝ 1) Խորհրդի ընտրութիւնների, 2) Սոչիի շրջ. հայութեանն վիճակի բարւոքման և 3) Բանտարկեալների ազատման խնդրի շուրջը: Պարզուել է, որ կառաւարութիւնը համաձայն է ընտրութիւններին, միայն առանց նախնական ցուցակագրութեան: Կառավարութիւնը ընդառաջ է գնացել նաև խորհրդի ցանկութեանը մի խառը պատուիրակութիւն ուղարկել Սոչիի շրջանի դէպքերի հետ ծանօթանալու և էքսցեսների առաջն առնելու համար:

Բանտարկեալների նկատմամբ որոշ խոստում չի տրուած: Առաջարկւած է բանակցել Սահմ. Ժողովի օրէնսդր. յանձնաժող. նախագահի հետ, հայ-վրաց. կոֆլիկտի առթիւ մի օրէնագիծ մշակելու վերաբերեալ: Խորհուրդը յանձնարարում է պրեզիդիումին և Գործ. Մարմնին ուղարկել պատուիրակութիւն Սոչիի [շրջան] և շարունակել բանակցութիւնները բանտարկեալների մասին: Վէճ է առաջանում ընտրուցեանց համար ցուցակներ կազմելու շուրջը: Հարցը յետաձգւում է հետևեալ արտակարգ նիստին:

2. Ընկ. Մ. Զարգարեան առաջարկում է ընտրել մի վերաստուգիչ յանձնաժողով թէ՛ իրա՝ Խորհրդի և թէ՛ ժառանգած հաշիւների քննութեան համար: Լինում են առաջարկութիւններ: Ի վերջոյ խորհուրդը ընդունում է վերաստ. յանձ. անհրաժեշտութիւնը: Անդամների ընտրութիւնը յետաձգւում է:

3. Այնուհետև կարդացւում է Ախալք. Հայր. Միութ. գրութիւնը Արամ Տեր-Գրիգորեանի մասին: Խորհուրդը ի նկատի ունենալով իր նախկին որոշումը, ընտրում է մի յանձնաժողով քննելու համար Տեր-Գրիգորեանի վրայ բարդած մեղադրանք-

ները: Ոշ լինելու պատճառով մնացած հարցերը յետաձգւում են:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 11 հունիսի 1919, N 114:

N 93
ՀԱԽ-ի կենտրոնական ընտրական հանձնաժողովի ծանուցումը՝ Վրաստանի հայ ազգաբնակչության

Սրանով յայտարարում է ի գիտութիւն Վրաստանի սահմաններում ապրող հայ ազգաբնակութեան, որ համաձայն Ազգային Խորհրդի որոշման, առաջիկայ յուլիսի 20-ին ամենուրեք Վրաստանում նշանակուած են Ազգային խորհրդի ընտրութիւնները – ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի և համեմատական սկզբունքով: Կուսակցութիւնները և խմբակցութիւնները պատգամաւորական թեկնածուների ցանկերը ներկայացրած պիտի լինեն Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովին մինչև յունիսի 20-ը: Կազմակերպուել են շրջանային ընտրական յանձնաժողովներ՝ Թելաւում, Սղնախում, Գորի[ում], Սուխում[ում], Քութայիս[ում], Ախալցխա[յում] և Թիֆլիսի շրջանում[114]:

---

[114] Հաջորդ անգամ սույն ազդի լույս ընծայման դեպքում, ՀԱԽ-ի ընտրական հանձնաժողովը նույն տեքստին ավելացրել է ևս մի պարբերություն: Այն է՝ «Ընտրութիւնները պէտք է կատարել առանց նախնական ցուցակագրութեան: 1917 թուի համառուսական Սահմ. Ժողովի առթիւ կազմուած ցուցակներից կարելի է օգտուել այն դէպքում միայն, երբ հնարաւոր է»: Տե՛ս Ժողովրդի Ձայն, 14 հունիսի 1919, N 124: Հիշյալ հանգամանքը ևս համոզիչ կերպով ապացուցում է այն անհերքելի փաստը, որ իշխանությունների հանձնարարականով 1918-1919 թթ. իրականացված ընտրողների ընդհանուր ցուցակագրումը չէր արտացոլում Վրաստանի հայ ազգաբնակչության թվաքանակի իրական պատկերը և, հետևաբար, լինելով կեղծված, չէր էլ կարող

Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի հասցէն՝ Тифлисъ, Дворцовая ул., Арм. Нац. Сов. Центральная Избирательная Комиссія. Հեռագրի համար՝ Арм. Нац. Сов. Тифлисъ.

Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի նախագահ՝
Արտաշէս Աբեղեան
Անդամ-քարտուղար՝ Սիմէօն Փիրումեան

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի
Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովը //
Ժողովրդի Ձայն, 12 հունիսի 1919, N 122:

N 94

Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունների կազմակերպման ընթացակարգի մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ընտրությունների շուրջը: Ազգային Խորհուրդը իր վերջին նիստում, կառավարութեան նախագահի հետ ունեցած բանակցութեան հետևանքով[115], որոշել է առաջիկայ յուլիսի 20-ի ընտրութիւնները կատարել առանց ընտրողների նախնական պարտադիր ցուցակագրութեան:

– Բացի արդէն կազմակերպուած Շրջանային ընտրական յանձնաժողովների (Թելաւ, Գորի, Դուշեթ, Քութայիս, Ախալցխա և Սուխում), կենր. ընտրական յանձնաժողովը իր վերջին նիստում կազմակերպեց Շրջանային յանձնաժողովներ նաև Թիֆլիսի և Սղնախի գաւառների համար: Թիֆլիսի գաւառի յանձնաժողովի նախագահ ընտրուեց Ն. Մատինեան, փոխ-

---

վստահելի հիմք ծառայել ՀԱԽ-ի ընտրությունների գործը պատշաճ կազմակերպելու համար:

[115] Տե՛ս Хроника // Кавказское Слово, 7 июня 1919.

նախագահ՝ Ա. Թումանեան, իսկ Սղնախի Շրջանային յանձ-նաժողովի նախագահ ընտրուեց [Քրիստ.] Տէր-Աստուածատ-րեան, փոխնախագահ՝ Ե. Մամուլեան:

Տե՛ս Տեղական կեանք //
Ժողովրդի Ձայն, 13 հունիսի 1919, N 123:

N 95
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հունիսի 13-ի հերթական նիստի մասին

Նախագահում է ընկ. Բ. Թոփչեան: Հաստատվում է հետևեալ օրակարգը.

1. Ինֆորմացիա.

ա) Գործադիր մարմնի

բ) Ընտրական յանձնաժողովի

2. Վերաստուգիչ յանձնաժողովի ընտրութիւններ

3. Զեկուցում հասարակ. հիմնարկ. հաշիւների քննութ. մասին

4. Ընթացիկ հարցեր:

Նախագահը, նախ քան օրակարգին անցնելը յիշեցնում է խորհրդին, որ ըստ նակազի 3 նիստ բաց թողած անդամները համարւում են խորհրդից դուրս եկած:

Պարապմունքները ընթանում են անկանոն: Բոլոր ֆրակ-ցիաները թող ներկայացնեն իրենց անդամների վերջնական ու լրիւ անուանացուցակը: Ապա յայտնում է, որ շնորհիւ մնայուն բիւջէի բացակայութեան, նախագահութիւնը զուրկ է հնարա-ւորութիւնից հսկելու Գործ. Մարմնի գործնէութեան վրայ: Մինչդեռ նա այդ պարտաւոր է անել: Երբ խորհուրդը որոշում

է կայացնում, կամ վարկ բաց անում, նախագահութիւնը նախօրօք չգիտէ, թէ արդեօք հնարաւո՞ր է այդ որոշումը իրագործել: Ուստի անհրաժեշտ է պարտաւորեցնել Գործ. Մարմնին գէթ մի ժամանակաւոր բիւջէ ներկայացնել, մինչև նոր Ազգային Խորհրդի գումարելը: Կարճատև մտքերի փոխանակութիւնից յետոյ խորհուրդը որոշում է պարտաւորեցնել Գործ. մարմնին ներկայացնել բիւջէն մի շաբաթւայ ընթացքում:

Ընկ. Մ. Զարգարեան բողոքում է, Խորհրդի այն որոշման դէմ, ըստ որի դպրոցական յանձնաժողովի անդամներին ամսավճար է տրւում: Պէտք է վարձատրել միայն աշխատանքը: Առաջարկում է ամսավճարը փոխարինել նստավճարով: Առաջարկն անցնում է:

Ընկ. Ա. Միանսարեան զեկուցում է, որ Գործ. Մարմինը Հայաստանի կառավարութիւնից փոխարինաբար ալիւր է խնդրել Վրաստանի շրջանակում գտնւող հայ կարիքաւոր գիւղերին բաժանելու համար: Համարժէքը պիտի վերադարձւի կամ ցորենով, կամ դրամով: Արդէն բաշխումը կատարւած է և լիազօրները ուղարկւած են:

Ընկ. Աբեղեան համառօտ զեկուցում է տալիս ընտրակ. յանձնաժողովի աշխատանքների մասին: <…>

Ընկ. Ա. Երզնկեան. - Զեկուցում է Գործ. Մարմնի որոշումները Բագւի գնումների մասին: Իր առաջարկով Գործ. Մարմինը որոշել է բոլոր ասէկօսներին վերջ տալու համար քննութիւն կատարել և այդ գործը յանձնել նորընտիր վերաստուգիչ յանձնաժողովին: Խորհրդի անդամներից ոմանք առաջարկում են ընտրել յատուկ յանձնաժողով: Ի վերջոյ անցնում է Գործ. Մարմնի առաջարկը և գործի քննութիւնը յանձնւում է վերաստուգիչ յանձնաժողովին:

Ուշ լինելու պատճառով օրակարգի միւս հարցերը յետաձգւում են:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 17 հունիսի 1919, N 119:

N 96

Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի Թիֆլիսի թաղային ընտրական հանձնաժողովների մասին

Ընտրական կենտրոնական յանձնաժողովը արդէն կազմել է Թիֆլիսի թաղային ընտրական յանձնաժողովները հետևեալ կազմով. I և II թաղամասերի յանձնաժողովի նախագահ՝ Մ. Մարգարեան, փոխ-նախագահ՝ Հ. Թերզիբաշեան, անդամ՝ Վ. Տէր-Սիմոնեան, III թաղամասի նախագահ՝ Լ. Խալաթեան, փոխ-նախագահ՝ Թ. Ազատեան, անդամ՝ Ա. Ապրէլեան, IV թաղամասի նախագահ՝ Ի. Յարութիւնեան, փոխ-նախագահ՝ Յովսէփ Աբաղեան, անդամ՝ Վ. Աթոյեան, V թաղամասի նախագահ՝ Զ. Կաճկաճեան, փոխ-նախագահ՝ Յ. Աղաբաբ, անդամ՝ Տէր-Ներսեսեան, VI և VII թաղամասերի նախագահ՝ Զ. Զօրեան, փոխ-նախագահ՝ Արշ. Մարգարեան, անդամ՝ Պ. Տէր-Սիմոնեան, VIII թաղամասի նախագահ՝ Գ. Տէր-Ստեփանեան, փոխ-նախագահ՝ Ա. Աղաջանեան, անդամ՝ Արա Մարգարեան, IX թաղամասի - նախագահ՝ Քէշիշեան, փոխ-նախագահ՝ Ճոնեան, անդամ՝ Խարազեան և X, XI և XII թաղամասերի -նախագահ՝ Ն. Աթոյեան, փոխ-նախագահ՝ Ս. Շխեան, անդամ՝ Յ. Յակովբեան:

Տե՛ս Լրատու՝ Հայոց ազգային խորհրդի
ընտրութիւնների շուրջը //
Աշխատաւոր, 24 հունիսի 1919, N 124:

N 97

Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի վերաստուգիչ հանձնաժողովի կազմի մասին

Վիրահայ Ազգային Խորհրդի Վերաստուգիչ Յանձնաժողովը արդէն սկսել է իր աշխատանքները հետևեալ կազմով. Նախագահ՝ Գար. Տէր-Ստեփանեան, քարտուղար՝ Յով. Յովհաննիսեան, անդամներ՝ պ.պ. Ա. Աղաջանեան, Ա. Իվանեան և վերահսկիչ՝ Յով. Խունունց:

Տե՛ս Տեղական կեանք //
Ժողովրդի Ձայն, 26 հունիսի 1919, N 133:

N 98

Կուսակցական թեկնածուների ցուցակները՝ ներկայացված Վրաստանի ՀԱԽ-ի համամասնական ընտրությունների համար (1919 թ., հուլիս)

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ
ՑԱՆԿ N 1
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԼՈԿԻ
(Սօցիալ-դեմոկրատներ եւ սօց.- յեղափոխականներ)

1. Զոհրաբեան Արշակ
2.Սահակեան Սաքօ
3.Երզնկեան Արամայիս
4.Ստամբոլցեան Անուշաւան
5.Փիրումեան Սիմէօն
6.Տէր-Ներսիսեան Իսահակ
7.Ազատեան Հայկ
8.Մելքոնեան Արամ
9.Մելիք-Շահնազարեան Սերգէյ
10.Տէր-Ներսիսեան Միքայէլ
11.Իվանեան Արամ
12.Տէր-Գրիգորեան Արամ
13.Դարբինեան Մաթէոս
14.Սաղաթէլեան Շուշանիկ
15.Աթոյեան Նիկօլայ
16.Յովհաննիսեան Արամ

17.Աբովեան Սարգիս
18.Սիմօնգուլեան Գրիգոր
19.Փոթէեան Վարդան
20.Յովհաննիսնեան Յակովբ
21.Մարգարեան Արշակ
22.Մարգարեան Արա
23.Տէր-Բարսեղեան Արտեմ
24.Քեմջեան Խաչատուր
25.Թումանեան Անտօն
26.Յարութիւնեան Բագրատ
27.Վարդանեան Խաչատուր
28.Բաղալեան Յովհաննէս
29.Կաֆեան Գաբրիէլ
30.Զաքարեան Արշակ
31.Մեհրաբեան Արշակ
32.խարազեան Ռուբէն
33.Աւանեան Սուրէն
34.Մաճկալեան Աստղիկ
35.Քեշիշեան Խաչատուր
36.Կարապետեան Վահան
37.Աթոյեան Վարդան
38.Ազատեան Արմենակ
39.Տէր-Բարսեղեան Ալէք-սանդր
40.Գրիգորեան Աղասի

ՑԱՆԿ N 2
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

1.Մխիթարեան Արշալոյս
2.Ստեփանեան Կարապետ
3.Բարխուդարեան Արշակ
4.Այվազեան Յարութիւն
5.Սպեդիարեան Յովհաննէս
6.Յարութիւնեան Իսահակ
7.Տէր-Մինասեան Երուանդ
8.Աֆրիկեան Խաչատուր
9.Մալխասեան Ստեփան
10.Դոլուխանեան Պօղոս
11.Տէր-Յովսէփեան Վալերիան
12.Հախումեան Տիգրան
13.տիկ. Թումանեան Մարիամ
14.Կիւլպէնկեան Սերոբէ
15.Փիրալեան Յարութիւն
16.Շահպարոնեան Մանուէլ
17.Ալիխանեան Յովհաննէս
18.Մովսիսեան Մովսէս
19.Մելեան Մեսրոպ քահ.
20.Աղաջանեան Արմենակ
21.Սուլխանեան Ստեփան
22.Գէորգբէկեան Տիգրան
23.Կանայեան Խաչատուր
24.տիկ. Պողոսեան Օլգա
25.Կաճկաճեան Զաքարիա
26.Մատոյեան Ղուկաս
27.Մելիք-Փարսադանեան Ար-տավազդ

28.Կուսիկեան Արշակ
29.Ալեքսանդրեան Մարտի-
րոս
30.Թերգիբաշեան Նիկողայոս
31.Տէր-Աւետիսեան Արտաշէս
32.Խաղազորգեան Միսակ
33.Նարինեան Խաչատուր
34.Աֆրիկեան Կոստանդին
35.Ղասարեան Ռուբէն
36.Մարութեան Մեսրովբ
37.Թադէոսեան Ռուբէն
38.Առաքելեան Բարսեղ
39.Այվազեան Բագրատ
40.Խիթարեան Գրիգոր

ՑԱՆԿ N 3

ՎՐԱՍՏ[ԱՆԻ] ՍՈՑ[ԻԱԼ] - ԴԵՄ[ՈԿՐԱՏԱԿԱՆ] ԲԱՆ[ՎՈՐԱ-ԿԱՆ] ԿՈՒՍԱԿ[ՑՈՒԹԵԱՆ] ՀԱՅԿ[ԱԿԱՆ] ՍԵԿ[ՑԻԱՅԻ]

1.Դանդուրեան Սարգիս
2.Փանեան Կոստանդին
3.Մկրտումեան Բագրատ
4.Վարդոյեան Գէորգ
5.Խիթարեան Աղեքսանդր
6.Վարդոյեան Մկրտիչ
7.Պալեան Մկրտիչ
8.Ղայթանջեան Ստեփան
9.Տէր-Բարսեղեան Էլէօնորա
10.Երզնկանեան Յակովբ
11.Ալիխանեան Վարդան
12.Վանցեան Լևոն
13.Փորսուղեան Հռիփ[սիմե] (Հայկանուշ)
14.Գլախոյեան Սարգիս
15.Դաւթեան Յովհաննէս
16.Նիկողոսեան Ամիրան
17.Մինասարեան Պետրոս
18.Նիկողոսեան Թիկօ
19.Գալստեան Գէորգ
20.Աուշտրեան Ռուբէն
21.Եղիազարեան Ալէքսանդ-
րա
22.Մուրմանեան Դաւիթ
23.Շահնազարեան Նիկո-
ղայոս
24.Ոսկանեան Յարութ[յուն] (Յովսէփ)
25.Շիմշիրեան Լևոն
26.Յովհաննիսեան Գէորգ
27.Լորիս-Մելիքեան Եւա
28.Յարութիւնեան Մովսէս
29.Արզումանեան Գէորգ
30.Եղիազարեան Վարդան
31.Արշակունի Սիմէոն
32.Ալէքսանեան Լևոն
33.Համբարձումեան Սարգիս
34.Զախարեան Նատալիա

35.Կուլխանեան Ալէքսանդր
36.Իսրայէլեան Ստեփան
37.Անդրիանեան Եգոր
38.Իտրեան Նիկողայոս
39.Յակոբեան Գրիգոր
40.Գաբրիէլեան Ալէքսանդր

ՑԱՆԿ N 4
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

1.Զօրեան Զօրի
2.Թոփչեան Բագրատ
3.Աւետիսեան Տիգրան
4.Իսրայէլեան Աշոտ
5.Դաւիթխանեան Դաւիթ
6.Չիֆլիկեան Գրիգոր
7.Մատինեան Նիկողայոս
8.Թադէոսեան Արշակ
9.Տէր-Ստեփանեան Գարեգին
10.Տէր-Յարութիւնեան Գարեգին
11.Հոգիջանեան Արշակ
12.Էլիբէկեան Յակոբ
13.Միանսարեան Արշակ
14.Ղազազեան Անահիտ
15.Տէր-Պօղոսեան Պօղոս
16.Զարգարեան Միքայէլ
17.Բալասբէկեան Գրիգոր
18.Բաղալեան Եղիշէ
19.Տէր-Գրիգորեան Զալալ
20.Զիջեան Զարիբէկ
21.Մամիկոնեան Արմենակ
22.Թադէոսեան Տիգրան
23.Կոդբաշեան Ջանիկ
24.Մուչայեան Միքայէլ
25.Ազնաուրեան Շահէն
26.Ամիրխանեան Աղաբէգ
27.Գուրգէնեան Սիմէոն
28.Թոփչեան Աղասի
29.Արեան Մուշեղ
30.Տօնեան Արշակ
31.Աղաջանեան Սենեքերիմ
32.Մեսեան Գէորգ
33.Ամիրբէգեան Սիրանուշ
34.Աբաղեան Յովսէփ
35.Յովհաննիսեան Արմենակ
36.Ապրելեան Անդրէաս
37.Յովսէփեան Գրիգոր
38.Տէր-Յարութիւնեան Մինաս
39.Յովհաննիսեան Գիսակ
40.Թոսունեան Մեդրակ
41.Շահվերդեան Սիմէոն
42.Մկրտչեան Սիմէոն
43.Տէրտէրեան Յարութիւն
44.Նահապետեան Յարութիւն
45.Մատոյեան Սիմէոն
46.Պապովեան Հեղինէ
47.Շէկոյեան Յակովբ

48.Ստեփանեան Արշաւիր
49.Տօնեան Ռուբէն
50.Հայրեան Իշխան
51.Մամուլեան Նիկողայոս
52.Յովհաննիսեան Պօղոս
53.Սարեան Գրիգոր
54.Պետրոսեան Մադաթ
55.Թումանեան Մարիամ
56.Տէր-Սարգսեան Ա.
57.Վարդանեան Խաչատուր
58.Ղազարեան Գրիգոր
59.Ղուլեան Եղիազար
60.Յարութիւնեան Երեմ

ՑԱՆԿ N 5
ԱԲԽԱԶԻԱՅԻ ՀԱՅ ՍՈՑԻԱԼ - ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ

1.Տէր-Ղազարեան Ղազար
2.Աւդալբէգեան Խաչատուր
3.Սողոմոնեան Տիգրան
4.Աղէկեան Վաղարշակ
5.Մինասեան Երուանդ
6.Ռշտունի Վահան
7.Միւսելլիմեան Եղիա
8.Զէյթունեան Յակովբ
9.Տատեան Օննիկ
10.Փիլոսեան Լևոն

ՑԱՆԿ N 6
Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

1.Մարօ Նազարբէկ
2.Արշակ Բաբեան
3.Սիմէօն Հովուեան (Ս. Տաշիր)
4.Բագրատ Աւագեան (Սիւնիք)
5.Յակովբ Ղազարեան (Լազօ)
6.բժ. Լևոն Տէր-Ստէփանեան
7.Հրանտ Գալիկեան
8.Տիգրան Ղազանճեան
9.Խորէն Թորիկեան
10.Արտաշէս Գասպարեան
11.Յակովբ Բաբախանեան
12.Իսահակ Հովուեան

Վ. Հ. Ազգ. Խորհրդի կենտ. ընտր. յանձնաժողովի
Նախագահ՝ Արտաշէս Աբեղեան
Անդամներ՝ Արշակ Բարխուդարեան

Արամ Յովհաննիսեան
Անդամ-քարտուղար՝ Սիմէոն Փիրումեան

Տե՛ս ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑԱՆԿԵՐ՝
Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ընտրութիւնների համար (յուլիս 1919) //
Նոր Աշխատաւոր, 10 հուլիսի 1919, N 136:

N 99
Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի ընտրությունների շուրջն առաջացած խոչընդոտների մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ընտրությունների շուրջը. – Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի կենտրոնական ընտրական յանձնաժողովի թէ՛ մասնաւոր անձերից և թէ՛ իր հրահանգիչներից ստացել է տեղեկութիւններ, որ գաւառներում ինչպէս կոմիսարները, այնպէս էլ մասնաւոր անձինք Ազգային Խորհրդի ընտրութիւնների դէմ խոչընդոտներ են յարուցանում և հայ ժողովրդին պահում ահաբեկման մէջ: Այս առթիւ կենտրոնական ընտրական յանձնաժողովի նախագահ Արտ. Աբեղեանը և անդամ [Մ.] Վարդոյեանը ներկայացան Վրաստանի ներքին գործերի մինիստր [Ն.] Ռամիշվիլուն և նման խոչընդոտների առաջն առնելու համար խնդրեցին միջոցներ ձեռք առնել: Ներքին գործերի մինիստրը խոստացաւ մի շրջաբերականով յայտնել կոմիսարներին և զեմստուային վարչութիւններին, որ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ընտրութիւնները տեղի են ունենում կառավարութեան գիտութեամբ և ընտրութիւնների դէմ խոչընդոտներ չպիտի յարուցուեն:

Տե՛ս Տեղական կեանք //
Ժողովրդի Ձայն, 10 հուլիսի 1919, N 145:

N 100

Վրաստանի ՀԱԽ-ի կենտրոնական ընտրական հանձնաժողովի ծանուցումը՝ ի գիտություն Թիֆլիսի հայ ազգաբնակչության

Այսու յայտնում է ի գիտութիւն Թիֆլիսի հայ ազգաբնակութեան, որ կիրակի, յուլիսի 20-ին, քաղաքումն կատարուելու են Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ընտրութիւնները, որին մասնակցելու իրաւունք ունեն 20 տարին լրացած բոլոր հայերը՝ առանց սեռի, հպատակութեան և դաւանութեան խտրութեան: Ընտրութիւններին ձայնի իրաւունքից օգտուել ցանկացողները պիտի ներկայացնեն անցագիր (պասպորտ) կամ նրան փոխարինող ուրիշ վկայական (видъ на жительство):

Թէ՛ անցագրերը և թէ՛ յիշած վկայականները պէտք է ներկայացուած լինեն միլիցիային (предъявленный къ прописке), իսկ ովքեր չունեն, այդպիսի անցագիր կամ վկայական, պէտք է ստանան անուական վկայականներ իրենց թաղամասի յանձնաժողովից՝ ներկայացնելով տնային գիրքը (домовая книга), ի հաստատութիւն անցագիր կամ վաւերացրած վկայական չունենալուն: <…>

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի
Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովը //
Ժողովրդի Ձայն, 17 հուլիսի 1919, N 150:

N 101

ՎՍԴԲԿ-ի հայազգի անդամների միջնորդությունը՝ Վրաստանի ՀԱԽ-ի ընտրությունները հետաձգելու մասին

Վրաստանի ներքին գործերի մինիստրը հարցում է ուղղել Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդին, թէ համապատասխա-

նո՞ւմ է իրականութեան այն լուրը, թէ Ախալքալաքի գաւառում, իբրև վիճելի երկրամաս, Հայոց Ազգային Խորհրդի ընտրութիւններ չեն կատարուելու:

– Յուլիսի 17-ին վրաց կառավարութիւնը Թելաւի սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնից, Վելիսցիխէի սոցիալ-դեմոկրատների հայկական սեկցիայի ներկայացուցիչ Մ. Իսահակեանից, Թելաւի Աշիեթի շրջանային սոցիալ-դեմոկրատների կուսակցութեան հայկական սեկցիայից և Վելիսցիխէի սոցիալ-դեմոկրատների կոմիտէից ստացել է հեռագիր, որով նրանք խնդրում են Հայոց Ազգային Խորհրդի ընտրութիւնները յետաձգել մինչև աշուն, որովհետև դաշտային եռուն աշխատանքների պատճառով այդ շրջանների ազգաբնակութիւնը հնարաւորութիւն չունի պէտք եղած չափով մասնակցել ընտրական աշխատանքներին[115]:

Տե՛ս Տեղական կեանք //
Ժողովրդի Ձայն, 19 հուլիսի 1919, N 152:

---

[115] ՎՍԴԲԿ-ի «հայկական սեկցիան» ցուցաբերել էր ակտիվ մասնակցություն ՀԱԽ-ի ընտրությունների նախապատրաստման գործերում: Սակայն պաշտոնական Թիֆլիսը վճռեց այլ կերպ: Հետևապես փոխվեց նաև «հայկական սեկցիայի» դիրքորոշումը: Այսպիսով՝ ՎՍԴԲԿ-ի առանձին հայ անդամները իրենց դրսևորեցին որպես վրաց իշխանությունների քաղաքականության հլու կամակատարներ, քանզի «դաշտային եռուն աշխատանքների» մասին մոգոնած պատրվակն արդեն չէր էլ կարող քողարկել այս պարզ հանգամանքը: Նման երևույթ տեսանք նաև Լոռվա ճակատագրի վճռման հարցում: Սեկցիայի ղեկավարը հորդորում էր գավառի հայ ազգաբնակչությանը կողմ արտահայտվել Վրաստանի սահմանների մեջ «չեզոք գոտին» կցելու օգտին: Տե՛ս Документы об армяно-грузинском пограничном споре в Лори (декабрь 1920 г. – январь 1921 г.) // ՊԲՀ, 2010, N 1, փաստ. 2, էջ 259:

N 102

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. հուլիսի 18-ի արտահերթ նիստի մասին

Վրաստանի Հ. Ա. Խ. նիստը բացուեց երեկոյեան ժամը 8-ին ընկ. Բ. Թոփչեանի նախագահութեամբ:

Բացի Ազգային Խորհրդի անդամներից, դահլիճը լիքն էր երկսեռ խուռն բազմութեամբ:

Կառավարութեամբ կարգադրութիւնը, կասեցնել Ազգ. Խոր. ընտրութիւնները, կայծակի արագութեամբ տարածուել էր հասարակական լայն խաւերում և բազմութիւնը լցուել էր նիստի դահլիճը, տեսնելու համար, թէ ինչ պատասխան է տալու խորհուրդը կառավարութեան այդ ոտնձգութեան:

Նախագահ ընկ. Բագ. Թոփչեանը, նիստը բաց անելով, յայտնեց, որ նիստի քննութեան առարկան նախ՝ կառավարութիւնից Ազգային խորհրդի ընտրութիւնները դադարեցնելու մասին ստացած գրութիւնն է, ապա վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը:

Առաջին հարցի մասին զեկուցում է Խորհրդի գործադիր մարմնի նախագահ ընկ. Ա. Երզնկեանը, նա կարդում է ներքին գործոց մինիստրի օգնական [Պ.] Ճիճինաձէի գրութիւնը Վ.Հ.Ա.Խ. ընտրութիւնները դադարեցնելու մասին, ապա զեկուցում է, որ այդ գրութիւնն ստացուելուց յետոյ Գործադիր մարմնի և նախագահութիւնն ու Խորհրդի նախագահը ներկայացել են պ. Ճիճինաձէին խնդիրը պարզելու համար: Ճիճինաձէն հրաժարուել է գրութեան բովանդակութեան սահմաններից դուրս որևէ զիջում անել և յայտարարել է, որ խնդրի վերաքննութիւնը կարելի է յանձնել յաջորդ օրը (յուլիսի 19-ին) տեղի ունենալիք մինիստրական խորհրդին:

Զեկուցումից յետոյ արտայայտւում են բոլոր ֆրակցիաների ներկայացուցիչները, որոնք բոլորն էլ կառավարութեան այդ ապօրինի կարգադրութիւնը համարում են բռնութեան մի ակտ, որը արհամարհելով Ազգային խորհուրդի իրաւունքները, միաժամանակ վիրաւորում է նրա արժանապատուութիւնը: Բոլոր ֆրակցիաների միաբան համաձայնութեամբ որոշւում է բուռն կերպով բողոքել կառավարութեն այդ ապօրինի կարգադրութեան դէմ (ուր և ընդմիջումի ընթացքում մշակւում է բողոք-բանաձևի գլխաւոր թեզերը) և մի առանձին թռուցիկով իրազեկ դարձնել հասարակութեանը ստեղծուած դրութեան: Որոշւում է նոյնպէս գաւառական հրահանգիչներին հեռագրով տեղեկացնել կառավարութեան կարգադրութիւնը, գաւառներում հնարաւոր ընդհարումների առաջն առնելու համար:

Միաժամանակ Ազգային Խորհրդի նախագահին և գործադիր մարմնի նախագահութեանը յանձնարարւում է բանակցութիւններ վարել կառավարութեան հետ Ազգային Խորհրդի իրաւունքները վերականգնելու համար: <…>

Հասարակութիւնը հեռանում է խիստ յուզած:

* * *

Վրաստանի Հայոց Ազգային խորհուրդը յուլիսի 18-ի երեկոյեան իր արտակարգ նիստում քննելով վերոյիշեալ գրութիւնը՝ որոշեց մի պատգամաւորութեան միջոցով պատճառաբանեալ գրաւոր բողոք յայտնել վրաց կառավարութեան, գտնելով, որ կարգադրութիւնը արւած է յետին թւով, որ ներկայումս էլ զեմստուային ինքնավարութեան ընտրութիւններն են կատարւում երկրի զանազան մասերում, որ կուլտուրական աւտոնոմիայի խնդրում հպատակութիւնը մեծ դեր չի կատարում,

որ դեռ ևս ամիս ու կէս առաջ յայտնի է կառավարութեանը ընտրութիւնների յուլիսի 20-ին նշանակւած լինելու մասին, որ հայոց Ազգային Խորհուրդը իր ներքին կարգադրութիւնների մէջ իրեն անկախ է համարում և այլն: Ազգային խորհուրդը միաժամանակ գիտակցում է, որ այդ կարգադրութիւնը արւում է պետական կուսակցութեան յաղթանակը ապահովելու համար:

Պատգամաւորներ ընտրւեցին՝ Բ. Թոփչեան, Ա. Երզնկեան, Ա. Մխիթարեան և Տէր-Ներսիսեան, որոնք խորհրդի պատճառաբանեալ բողոքը երեկ ներկայացրին վրաց կառավարութեանը:

Խորհուրդը յանձնարարեց մի կոչով յայտնել հայ ազգաբնակութեանը ընտրութիւնները չկայանալու մասին:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Նոր Աշխատաւոր, 20 հուլիսի 1919, N 144:

N 103

«Նոր Աշխատավոր» օրաթերթի մեկնությունը՝ Վրաստանի ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությանների արգելման պատճառների մասին

Այսօր տեղի ունենալիք Ազգային խորհրդի ընտրութիւնները չեն կայանալու, որովհետև Վրաստանի «հոգատար» կառավարութիւնը «անհրաժեշտ է համարել յետաձգել այդ ընտրութիւնները»: <…>

Իր միջամտութիւնը հայ աշխատաւորութեան միակ ներկայացուցչական մարմնի ներքին գործերին կառավարութիւնը պատճառաբանում է նրանով, որ ա) գաւառում դաշտային աշխատանքները չեն վերջացել և բ) որ ընտրութիւնները չեն նշա-

նակւած միաժամանակ ամբողջ Վրաստանում: Այս հիմունքների ամբողջ անհեթեթութիւնը ակներև է: Հիմք ունենք կարծելու, որ Վրաստանի կառավարութիւնը միայն յուլիսի 18-ին չէ որ յիշեց, թէ դաշտային աշխատանքները մեր երկրում տեղի են ունենում յուլիսի ընթացքում, այլ նա գիտէր այդ բանը նաև մէկ ու կէս ամիս առաջ, երբ Ազգ. Խորհրդի պատւիրակութիւնը զեկուցել էր ընտրութիւններ նշանակելու մասին: Եւ վերջապէս, ինչո՞ւ այդ դաշտային աշխատանքները չեն խանգարում զեմստւային և Սահմ. Ժողովի ընտրութիւններին ու խանգարում են Խորհրդի ընտրութիւններին: Ինչո՞ւ Սահմ. Ժողովի ընտրութիւնները կարելի է նշանակել զանազան վայրերում տարբեր ժամանակ, իսկ Խորհրդինը՝ ոչ: Պարզ է, որ այդ պատճառաբանութիւնները լոկ ձևական են և նպատակ ունեն քօղարկելու կառավարական այդ քայլերի իսկական պատճառները:

Յայտնի է, որ վրաց կառավարութիւնը մեծ հետաքրքրութիւն ցոյց տւեց այս խորհրդի ընտրութիւններին: Յայտնի է նաև այն, որ նրա պնակալէզները հանդէս եկան N 3 ցուցակով: Կառավարութիւնը ուզում էր խորհուրդը իր արբանեակների ձեռքը ձգել, որպէս զի նա դառնայ իր քմահաճոյքներին ենթարկւող մի խրտիլակ: Ըստ երևոյթին գաւառի դրութիւնը, որի վրայ այնքան յոյսեր էին դնում վրաց մենշևիկները, այնքան էլ նրանց համար նպաստաւոր չի եղել: Հայ աշխատաւորութիւնը, թէպէտև ահաբեկւած, լաւ ճանաչելով հայորսութեան հեղինակներին՝ երես է դարձրել նրանցից: <…>

Տե՛ս Կամայականութիւնը //
Նոր Աշխատաւոր, 20 հուլիսի 1919, N 144:

N 104

ՀՅԴ Վրաստանի ճյուղի ԿԿ-ի դիմումը երկրի հայ քաղաքացիներին՝ ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունները արգելելու կապակցությամբ

Ընկերներ!

Կառավարական կամայականութիւնների անծայր շարանին ուելացաւ մի ակտ ևս. ներքին գործոց մինիստրի օգնականի անմիջական կարգադրութեամբ արգելւած են Ազգային Խորհրդի ընտրութիւնները ամբողջ Վրաստանում:

Իր այդ կամայական ու հակադեմոկրատական քայլը կառավարութիւնը իր «հաղորդագրութեան» մէջ փորձում է պատճառաբանել դաշտային աշխատանքների չվերջացած լինելով: Ողորմելի պատճառաբանութիւն: Բոլորին յայտնի է, որ դաշտային աշխատանքները Վրաստանում տեղի են ունենում ամառային ամիսներին: Այդ բանը պիտի յայտնի լինէր նաև կառավարութեանը: Եւ եթէ նա երկու ամիս առաջ գիտենալով Խորհրդի ընտրութիւնների մասին միայն այժմ, ընտրութեանց նախօրեակին իր արգելքը յարուցեց, այդ միայն նրա համար, որ իր քաղաքական նկատառումները յօդս ցնդած տեսաւ:

Ընկերներ! Մեր յեղափոխական աշխատանքի ամբողջ ընթացքում կառավարութիւնն ու նրա գործակալները աշխատում էին ամեն տեսակ խոչընդոտներ յարուցել: Տեղիս ու գաւառի մեր ակտիւ ընկերները հսկողութեան տակ են առնւած: Կուսակցական ժողովները փաստօրէն արգելւած են և դաշնակցական լինելը խոշոր յանցանք է համարւում: Չնայելով այդ բոլորին, Խորհրդի ընտրութիւններին մեր դէմ դուրս եկած կառավարական պնակալէզները անկարող եղան իրենց կողմը քաշել հայ աշխատաւորութեանը և իրենց խայտառակ պար-

տութիւնը քօղարկելու համար, յետաձգել տւին ընտրութիւնները: <…>

Հ. Յ. Դ. Վրաստանի Կենտրոնական Կոմիտէ

19 յուլիս 1919

Թիֆլիս

Տե՛ս Ազգային Խորհրդի ընտրութիւնները արգելւած // Նոր Աշխատաւոր, 22 հուլիսի 1919, N 145:

N 105

Վրաստանի ՆԳՆ-ի փոխնախարարի գրությունը՝ ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունները արգելելու պատճառների մասին

Վրաստանի ներքին գործերի մինիստրութիւնը յուլիսի 18-ին Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդին ուղարկել է հետևեալ շտապողական գրութիւնը:

«Ներքին գործերի մինիստրութեան մէջ ստացւած տեղեկութիւնների համաձայն Վրաստանում բնակւող հայ ազգաբնակութիւնը դաշտային աշխատանքների սկսւած լինելու պատճառով դժւարանում է ակտիվ մասնակցութիւն ունենալ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի առաջիկայ ընտրութիւններին:

Վրաստանի հանրապետութեան կառավարութիւնը շահախնդրւած է, որ Վրաստանի հպատակները կարողանան իրենց քաղաքական և քաղաքացիական իրաւունքներից օգտւել լիապէս, և քննելով վերոյիշեալ հանգամանքը, կառավարութիւնը անհրաժեշտ գտաւ յետաձգել Ազգային խորհրդի ընտրութիւնները մինչև դաշտային աշխատանքների վերջանալը, միևնոյն ժամանակ նպատակայարմար գտնելով ընտ-

րութիւնները կատարել միաժամանակ Վրաստանի բոլոր մասերում, ուր տեղաւորուած են հայեր, և ոչ թէ զանազան ժամանակներում, ինչպէս ենթադրում է Հայոց Ազգային Խորհուրդը:

Սրա հետ միաժամանակ անհրաժեշտ եմ համարում տեղեկացնել, որ հանրապետութեան կառավարութիւնը որոշել է, որ ընտրութեան ակտիւ և պասսիւ իրաւունքներից կարող են օգտուել - գիւղական համայնքներում միայն հայ ազգին պատկանող անձինք, որոնք տեղական բնակիչ են, իսկ քաղաքներում նոյն ազգին պատկանող անձինք, որոնց Վրաստանի հանրապետութեան հպատակութիւնը պարզաբանւում է, հպատակութեան օրէնքի հիման վրայ, որ ընդունւել է Վրաստանի Սահմանադիր Ժողովի կողմից մայիսի 25-ին և յայտարարւել է «Սաքարթւելոս Ռեսպուբլիկա» թերթի յունիսի 26-ի N 122-ում:

Ներքին գործ. մին. օգնական՝ [Պարմեն] Ճիճինաձե

Դիւանապետ (ստորագրութ.)»

Տե՛ս Վրաստանի Կառավարութեան գրութիւնը
Վիրահայ Ազգային Խորհրդին //
Գործաւոր, 28 հուլիսի 1919, N 18:

N 106

Բողոք Վրաստանի ներքին գործերի նախարարին՝ ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունները արգելելու կապակցությամբ

Քննութեան առնելով ներքին գործերի մինիստրի 1919 թւի յուլիսի 18-ի N 12492 գրութիւնը, Հայոց Ազգային Խորհուրդը միաձայն ընդունեց հետևյալ որոշումը:

Հայոց Ազգային խորհուրդը գոյութիւն ունեցող օրէնսդրութեան սահմաններում իրաւունք ունի իր հայեցողութեամբ տնօրենելու իր բոլոր աշխատանքները, որոնց թւում նաև Խորհրդի ընտրութիւնները դեմոկրատական հիմունքներով: Այդ իրաւունքը նա ստացել է Ռուսական Մեծ Յեղափոխութիւնից անմիջապէս, որի փաստական հաստատութիւնը տուել է դեմոկրատական Վրաստանը: Մինչդեռ ներկայ քննութեան ենթակայ դրութիւնը կառավարութեան կողմից, բացայայտ կերպով խախտում է այդ իրաւունքը և միջամտում է ընտրութիւնների գործին ոչ թէ ձևականօրէն, այլ ըստ էութեան: Դաշտային աշխատանքների վրայ մատնանշելը էական չէ այդ պատճառով, որ կառավարութիւնը Սահմանադիր Ժողովի և զեմստուոեան ընտրութիւններ է կայացնում օգոստոս ամսին, այսինքն նոյն այդ դաշտային աշխատանքների ամենաեռուն ժամանակ:

Ազգային Խորհուրդը ամուր կանգնելով աւելի կատարեալ և դեմոկրատական ընտրութիւնների հողի վրայ, որոնց պէտք է մասնակցեն քաղաքային և գիւղական դեմոկրատիայի աւելի լայն խաւեր, յայտնում է, որ ընտրութիւններին, նրանց շրջանակին ու ժամանակին վերաբերեալ հարցերը ներքին հարցեր են, եթէ միայն չեն խանգարում գոյութիւն ունեցող օրէնսդրական նորմաներին: Ընտրութիւնները յետաձգելու համար կառավարութեան դաշտային պարապմունքների վրայ յենուելը անկասկած նշան է Ազգային Խորհրդի ներքին գործերի, ինչպէս նաև ընտրութիւնների գործի մէջ խառնուելուն՝ ըստ դրանց էութեան և հետևապէս, դրանով ոտնահարւում են նրա հիմնական իրաւունքները, մի բան, որ անթոյլատրելի է դեմոկրատական երկրում:

Դաշտային աշխատանքների վրայ մատնանշելու այդ երևոյթը առանձնապէս աչքի է ընկնում մանաւանդ նրանով, որ ներքին գործերի մինիստրութեան ընտրութիւնների վերաբերութեամբ եղած դիմումը ստացուեց Ազգային Խորհրդի պրեզիդիում միայն այսօր, այսինքն ընտրութիւններից երկու օր առաջ, մինչդեռ ընտրութիւնների ժամանակը յայտնի էր կառավարութեան դեռևս ամիս ու կէս սրանից առաջ: Նրան նոյնպէս չէր կարող յայտնի չլինել, որ դաշտային աշխատանքները կատարում են յուլիս և օգոստոս ամիսների ընթացքում:

Կառավարութիւնը ոչ միայն իրեն է վերապահել Ազգային Խորհրդի ընտրութիւնները յետաձգելու իրաւունքը, այլ և այդ կարգադրութիւնը դրել է Ազգային Խորհրդն արհամարհող ու վիրաւորող պայմանների մէջ, Ազգային Խորհուրդը, որ Վրաստանի սահմաններում ապրող հայ ժողովրդի ամբողջ կուլտուրական կեանքն է ղեկավարում:

Այսպէս կառավարութիւնը նոյնիսկ նեղութիւն չէ քաշել ստուգելու Ազգային Խորհրդում իր ստացած տեղեկութիւնները և առհասարակ բանակցելու նրա հետ, այլ կարգադրել է ընտրութիւնները յետաձգել իր կոմիսարների միջոցով, անցնելով այդպիսով Ազգային Խորհրդի իրաւանց սահմաններից:

Այս բոլորից պարզ է, որ կառավարութիւնն իր դեկրետով ոտնահարել է Ազգային Խորհրդի հիմնական իրաւունքները, իւրացրել է ներքին կարգադրութիւններին և ընտրութիւններին ըստ էութեան միջամտելու գոյութիւն չունեցող իրաւունքը, հակառակ գոյութիւն ունեցող և գործող օրէնսդրութեան ձևի ու էութեան և, որ այդ ամենը մի անմիջական նպատակ են ունեցել՝ խափանել ընտրութիւնները:

Արձանագրելով այս ամենը, Ազգային Խորհուրդը միաձայն բողոքում է կառավարութեան այդ ակտի դէմ, համարե-

լով այն հակաօրինական և Ազգային Խորհրդի հիմնական և անկապտելի իրաւունքները բացորոշ կերպով խախտող և ըստ էութեան չյետաձգելով ընտրութիւնները, ստիպւած է ենթարկուելու կոպիտ ոյժին:

Դրա հետ միասին Ազգային Խորհուրդը յայտարարում է, որ յետագայում էլ յենւելով իր աներկբայելի իրաւունքների վրայ, գոյութիւն ունեցող օրէնսդրութեան սահմաններում պիտի որոշի իր ամբողջ գործունէութեան ծաւալը, բնոյթն ու ուղղութիւնը, ինչպէս և ընտրութիւնների նշանակումն ու ժամանակամիջոցը:

Հայոց Ազգ. Խորհրդի նախագահ՝ Բ. Թոփչեան
Գործադիր կոմիտէի նախագահ՝ Ա. Երզնկեան
Քարտուղարի փոխ. Ա. Յովհաննիսեան

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդի 1919թ. յուլիսի 18-ի որոշումը // Գործաւոր, 28 հուլիսի 1919, N 18:

N 107

«Գործավոր» պարբերականի մեկնաբանությունը՝ Վրաստանի ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունները արգելելու պատճառների մասին

Վիրահայ Ազգային Խորհրդի ընտրութիւնները <…> վրաց դեմոկրատիք հանրապետութեան կառավարութեան կարգադրութեամբ «յետաձգւած» են անորոշ ժամանակով: <…>

Կառավարութեան պատճառաբանութիւնը ոչ մի քննադատութեան չէ դիմանում, քանի որ նա բացարձակ կամայականութիւն և քմահաճոյք է: Այդ կարգադրութեան բուն պատճառը և իսկական աստառը յայտնի են ամենքին: Սակայն մի րոպե ենթադրենք, թէ կառավարութիւնն իւր «հպատակների» ան-

վթար և վսեմ շահերը ի նկատի առնելով, դիմել է այդ արտառոց քայլին: Մի՞թէ նա չպէտք է իմանար, այդ դէպքում, որ ընտրութիւնները կատարուելու են ամառային աշխատանքների ժամանակ, քանի որ մօտ երկու ամիս է, որ արծարծուած և վճռուած է Ազգ. Խորհրդի ընտրութիւնների հարցը, հետևաբար և այդ կառավարութիւնը առաջուց կանէր իւր դիտողութիւնը: Սակայն այդ դիտողութիւնն անելու իսկ նա իրաւունք չպիտի համարի իրեն, եթէ որ նա իսկապէս դեմոկրատիք հանրապետական կառավարութիւն է, եթէ նա թոյլ է տալիս ամեն մի ժողովրդի ազատօրէն վարելու իւր ներքին, կուլտուրական գործերը: Գիւղական աշխատանքները ամենաչնչին չափով հազիւ կարող են արգելք հանդիսանալ ընտրութիւններին, քանի որ վերջիններս կատարուելու են կիրակի օրերը, երբ գիւղացիք ազատ են լինում դաշտային պարապմունքներից: Զարմանալի այն է, որ նոյն այս ժամանակները Վրաստանի սահմաններում կատարւում են զեմստւօի և այլ ընտրութիւնները, ու դաշտային աշխատանքները արգելք չեն հանդիսանում նրանց խաղաղ ընթանալուն և յաջողութեան, բայց մի չարաբաստիկ դիպուածով խոչընդոտ են Վիրահայ Ազգ. Խորհրդի ընտրութիւններին: <…>

Պարզ բան է, որ այս բոլորը մի, ինչպէս ասացինք, բացարձակ կամայականութիւնն է, և կառավարութեան մէջ բերած փաստերը ոչ թէ պատճառաբանութիւններ են, այլ փառաւոր պատրուակներ… Իսկական պատճառը N 3 չարաբաստիկ ցուցակի հաւանական անյաջողութիւնն էր, որ եկաւ քար ձգելու Վրաստանի հայ ժողովրդի գէթ այս անգամ իրագործուելիք ընտրական գործին, և մենք համոզուած ու հաւատացած ենք, քար գցեց ընդմիշտ: Այդ ընտրութիւնները տեղի չեն ունենալ այլ ևս <…> նոյնքան անհիմն և կամայական է երկրորդ փաս-

տաբանութիւնը հպատակութեան խնդրի յարուցումը: Վիրահայ Ազգային Խորհուրդը պէտք է լինի մի կուլտուրական, ժողովրդական օրգան, զուրկ քաղաքական ձգտումներից և միտումներից, բոլոր այն հայերը, որոնք ապրում են ժամանակաւորապէս կամ մշտապէս Վրաստանի սահմաններում, նրանք իրաւունք ունեն մասնակցեկու այն կուլտուրական բնոյթ կրող գործուղութիւններին, որոնք կատարւում են իրենց շահերի համար, կամ նրանց շահերն ու ձգտումները ընդգրկում են: Հին ռէժիմի օրով իսկ ոչ ոք չէր հարցնում պարսկահայ, ռուսահայ, տաճկահայ, բոլորն էլ ազատօրեն կարող էին մեր դպրոցական, հասարակական, ազգային ու բարեգործական օրգաններում ընտրուել, ընտրել, պաշտօնավարել և ակտիվ մասնակցութիւն ունենալ <…>:

Կառավարութեան պատճառաբանութեան երրորդ կէտը՝ Բորչալուի և Ախալքալաքի խնդիրն է <…>: Նախ և առաջ Վիր. Ազգ. Խորհուրդն արդէն յայտնել էր, որ այդ գաւառներում լրացուցիչ ընտրութիւններ կըլինեն անպատճառ, եթէ սկզբում չեն նախատեսւել, այդ կատարւել է տեխնիքական անյարմարութիւնների պատճառով: <…>

Ամեն պարագայի տակ, Վիրահայ Ազգ. Խորհրդի ընտրութիւնների վիժումը մի զգալի հարւած է մեր ժողովրդի կուլտուրական և հասարակական գործերի համար <…>: Ներկայ Ազգ. Խորհուրդը հեղինակութիւն չունի, արհեստականօրէն ստեղծւած մի օրգան է, զուցէ չարիքներից փոքրագոյնը: Այժմեանից իսկ դրւում է նրա ապագայի խնդիրը: Մեր կարծիքով միչև քաղաքական հորիզոնի պարզւելը, Վիրահայ Ազգ. Խորհուրդը պէտք է նոյն եղանակով, ինչ եղանակով աշխարհ եկաւ նա, վերակազմութեան, վերափոխութեան կամ, աւելի ճիշտ բարեփոխութեան ենթարկւի նա:

Պէտք է, ժամանակաւորապէս նրա մէջ հրաւիրել մեր կեանքում գոյութիւն ունեցող այլ հոսանքների ներկայացուցիչներ, որոնք նոյնքան իրաւունք ունեն այնտեղ բազմելու և գործելու որպէս և միւսները, որոնք մի տեսակ դիկտատուրա են հռչակել ազգային գործերում <…>:

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդի ընտրութիւնների
«յետաձգումը» //
Գործաւոր, 28 հուլիսի 1919, N 18:

N 108
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունների արգելման պատճառով առաջացած վիրահայ հանրության բողոքների մասին

Ախալցխա, 21 յուլիսի. – Ընտրական աշխատանքները ընթանում էին շատ կանոնաւոր. ժողովուրդը ցոյց էր տալիս մեծ հետաքրքրութիւն: Բոլորովին անսպասելի յետաձգման լուրը շեշտակի կերպով տարածուեց ժողովրդի մէջ և մեծ յուզմունք առաջ բերեց:

Հասարակութիւնը հաւաքուելով մի մեծ սրահի մէջ և լսելով կառավարութեան անհիմն պատճառաբանութիւնները, իր բուռն բողոքն է ուղարկում կատարուած ակտի դէմ:

Մ. Յակովբեան

Ցարսկիե Կոլոդցի, 21 յուլիսի. – Ընտրութիւնների յետաձգումն ճնշող ազդեցութիւն թողեց ձայն տրուողների վրայ: Համար չորսի յաջողութիւնը ապահովուած էր:
Ընտրական յանձնաժողովի նախագահ՝ Երևանդ վարդ[ապետ]

Թելաւ, 22 յուլիսի. – Հայ հասարակութիւնը լսելով կառավարութեան ակտը, իր բուռն բողոքն է յայտնում, և պահանջում է Ազգային Խորհրդից միջոցներ ձեռք առնել իր ոտնահարուած իրաւունքները վերականգնելու:

Ի դիմաց ժողովի՝ Սեդրակ Սուքիասեան

Գորի, 22 յուլիսի. – Կառավարութեան միջամտութիւնը Հայոց Ազգային խորհրդի գործերի մէջ, մեծ յուզմունք առաջ բերեց հասարակական լայն խաւերում:

Յետաձգման ակտը, որ ուղղուած է դաշնակցութեան դէմ, որը տանելու էր փայլուն յաղթանակ, հայ աշխատաւորութիւնը հանդուրժել չի կարող:

Մի խումբ Դաշնակց[ական] ընկերներ

Նամակ Ուրիաթուբանից (Թելաւի գաւառ)

Տեղիս սոցիալ-դեմոկրատների միջնորդութիւնը Ազգային Խորհրդի ընտրութիւնների յետաձգման առթիւ այնքան էր մեզ համար անսպասելի, որ միանգամայն ապշեցրեց: Դաշտային աշխատանքները երբէք չպէտք է խանգարէին ընտրութիւններին: Մենք միանգամայն բողոքում ենք մեզ տեղացի գիւղացիների անունը շահագործող մի քանի մարդկանց դէմ իրենց կուսակցական շահերի նպատակով: <…> Վանօ Գրիգորեան

Վելիսցիխէ, 24 յուլիսի. – Յուլիսի 24-ն Վելիսցիխէում տեղի ունեցաւ կուսակցական բազմամարդ ժողով: Ժողովին արտայայտուեցին Գարեգին Տէր-Ստեփանեանը, [Գ.] Տէր-Յարութիւնեանը և Մնացականեանը: Առաջին հերթին ժողովը իր բուռն բողոքն ու զայրոյթն արտայայտեց կառավարութեան

Հայոց Ազգային Խորհրդի ընտրութիւնները յետաձգելու ապօրինի և բռնի քայլի դէմ <…>:

Վելիսց[իխեի] կոմիտ[եի] նախագ[ահ]՝ Օհանեան

Վելիսցիխէ, 25 յուլիսի. - Այցելեցի Կախէթիայի շատ գիւղեր. ամենուրեք համատարած զայրոյթ է իշխում կառավարութեան Հայոց Ազգ. Խորհրդի ընտրութիւնները յետաձգելու առթիւ:

Չորրորդ N-ի յաջողութիւնն ամեն տեղ ապահովւած էր:

Գարեգին Տէր-Ստեփանեան

Տե՛ս Բողոքներ Վրաստանի Հայոց Ազգային
Խորհրդի ընտրութիւնների յետաձգման առթիւ //
Նոր Աշխատաւոր, 24 հուլիսի, N 147 և
1 օգոստոսի 1919, N 153:

N 109

Լրատվություն՝ ՀԱԽ-ի 1919 թ. օգոստոսի 1-ի նիստի մասին

Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի օգոստոսի 1-ի նիստում որոշ փոփոխութիւններից յետոյ ընդունուեց դպրոցական Կանոնադրութիւնը և յանձնարարուեց դպրոցական յանձնաժողովին վերջնական խմբագրութեան ենթարկել կանոնադրութիւնը: Երկար վիճաբանութիւնների տեղիք տուեց Վրաստանի սոց.-դեմոկրատների Խորհրդի կազմի մէջ մտնելու դիմումը:

Այդ առթիւ դաշնակցականները այն կարծիքի էին, որ պէտք է վերակազմութեան ենթարկել Խորհուրդը և վերացնել պարիտետի սկզբունքը, իսկ Հայ Ժողովրդական Կուսակցութեան ֆրակցիան առաջարկում էր թողնել նոյն կազմը նոյն

ձևով, որովհետև համաձայնությունը կայացել է միմիայն մինչև այժմ խորհրդի կազմի մէջ գործող կուսակցությունների միջև: Սոց.-յեղափոխականների և սոց.-դեմոկրատները ևս պաշտպանում են պարիտետի սկզբունքը, և կողմնակից են նոր կուսակցությունների մուտք գործելուն: Վերջում որոշուեց այդ խնդիրը յետաձգել մի ուրիշ նիստի:

Տե՛ս Տեղական կեանք //
Ժողովրդի Ձայն, 5 օգոստոսի 1919, N 164:

N 110

Լրատվություն՝ ՀԱԽ-ի 1919 թ. օգոստոսի 1-ի նիստի մասին

Նախագահում է ընկ. Բ. Թոփչեան: Օրակարգի խնդիրներն են. 1) Դպրոցական կանոնադրութեան հաստատումը, 2) Խորհրդի վերակազմութիւնը և 3) Վրաստանի սոց.-դեմ. կուսակցութեան հայկական հատուածի, հնչակեանների և կադէտների դիմումը Խորհրդի կազմի մէջ մտնելու մասին:

Կէտ առ կէտ ընթերցումով որոշ ուղղումներից յետոյ հաստատւում է դպրոցական յանձնաժողովի մշակած դպրոցական կանոնադրութիւնը, որն ըստ էութեան քննւել էր նախօրօք նիստին: Վերջում յանձնարարուեց նոյն յանձնաժողովին վերջնական խմբագրութեան ենթարկել կանոնադրութիւնը:

Այնուհետև նախագահը յայտնում է, որ Վրաստանի սոց.-դեմոկրատների կենտրոնական կոմիտէն դիմել է խորհրդին, խնդրելով իրենց հայկական հատուածին ևս տեղ յատկացնել պարիտէտի հիման վրայ[116], դիմումի պատճէնն արդէն ուղարկւած է ֆրակցիաներին: Աւազների խորհրդում քննւել է

[116] Դիմումի բովանդակությունը տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 61, թ. 20:

այդ խնդիրը. դիմումին կողմնակից են եղել սոց.-դեմոկրատնե-րի և սոց.-յեղափոխականների ներկայացուցիչները, իսկ դաշ-նակցական ֆրակցիայի ներկայացուցիչները սկզբունքով չա-ռարկելով, առաջարկել են վերակազմել Խորհրդի կազմը: Հայ Ժողովրդական կուսակցութեան ներկայացուցիչները առա-ջարկել են թողնել նոյն կազմը նոյն ձևով մինչև ընտրութիւննե-րը: Բացի այս՝ հնչակեանների գրաւոր, իսկ կադէտական կու-սակցութեան նախագահը բանաւոր արել են նոյն պահանջնե-րը: Խորհրդի վերակազմութեան հարցը դնելով՝ նախագահը հարկ է համարում զեկուցել, որ գործադիր մարմնի համար ստեղծուել է անորոշ դրութիւն և օրգանական աշխատանք կա-տարելու հնարաւորութիւն չունի շնորհիւ նրա, որ Խորհուրդն էլ գտնուում է անորոշ դրութեան մէջ:

Ս. Փիրումեան (ս.-դ.) առաջարկում է հնչակեանների և միւսների խնդիրը յետս ձգել, իսկ այսօր զբաղուել միայն Վրաս-տանի սոց.-դեմոկրատներին խորհրդի կազմի մէջ ընդգրկելու խնդրով:

Նախագահ. – Նախ քան այդ խնդրին անցնելը՝ պիտի սկզբունքօրէն որոշել Խորհրդի վերակազմութեան խնդիրը:

Մի փոքր մտքերի փոխանակութիւնից յետոյ, որոշւում է զբաղուել Խորհրդի վերակազմութեան խնդրով:

Բ. Թոփչեան հիմնաւորում է այն միտքը, որ պարիտէտի սկզբունքի վրայ գործող Ազգային Խորհուրդը մի տարուց աւե-լի գործունէութեան ընթացքում կատարել է անբաւարար գործ շնորհիւ ուժերի աննորմալ փոխ-յարաբերութեան, ուստի պի-տի Խորհուրդը վերակազմել ուժերի փոխհարաբերութեամբ և ոչ թէ պարիտէտի սկզբունքով և իր ֆրակցիան, – ասում է նա, – այն կարծիքի է, որ հայ կեանքում իրական ուժեր ցուցանող ու իրականութիւնից դուրս եկած ուժերի մասնակցութեամբ

խորհուրդը կը լինի աւելի կենսունակ, քան եղել է: Այժմեան Ազգային Խորհուրդը դրուած էր մրցման մէջ, որը չէր կարող չանդրադառնալ գործերի վրայ: Ազգային Խորհուրդը մի մարմին է, որ կարգադրելու է կուլտուրական աշխատանքներ, որի համար անհրաժեշտ է բոլոր գործօն ուժերի՝ կուսակցութիւնների մասնակցութիւնը այն չափով, որ չափով նրանք բղխում ու արտայայտիչ են հանդիսանում հայ իրականութեան, ուստի մենք իրաւունք չունենք բաւականանալ միայն չորս կուսակցութեան ներկայացուցիչներով, այլ և դրական իմաստով լուծում պիտի ստանան բոլոր կուսակցական դիմումները, եթէ նրանք մեր իրականութիւնից են բղխում, բայց երբէք չպիտի Խորհրդի կազմին միացնել հայ իրականութեան համար խորթ ուժերը. այս պատճառով Ազգային խորհուրդը անընդունակ կը լինի աշխատանք կատարել, ուստի պիտի ընդունել այն հիմնական դրութիւնները, որ մենք դնում ենք Ազգային Խորհրդի վերակազմութեան մէջ:

Ա. Երզնկեան (ս.-դ.) այն կարծիքի է, որ մինչև ընտրութիւնները պիտի Խորհրդի կազմը թողնել նոյն պարիտէտի սկզբունքի վրայ: Ներկայ կազմը ընդունելիս հիմնական նպատակը եղել է այն, որ մասնակցեն այն կուսակցութիւնները, որ կան հայ իրականութեան մէջ: Առարկելով նախորդ ճառախոսին՝ նա այն միտքն է յայտնում թէ կրիտերիում չկայ, որի հիման վրայ էլ տեղերը կարելի կը լինի բաժանել կուսակցութիւնների մէջ: Քանի որ դեռևս ընտրութիւններ չկան, ուստի պիտի հիմնել միայն կուսակցութիւնների համաձայնութեան վրայ: Նա ևս գտնում է, որ պարիտէտի սկզբունքը դանդաղեցնում է Խորհրդի աշխատանքները: Վերջում նա եզրակացնում է, որ Խորհուրդը պէտք է շարունակել այն ձևով, ինչ ձևով եղել է մինչև այժմ: «Իմ կուսակցութիւնը, – ասում է նա, – երբէք չի

համաձայնվիլ, որ երբ ժողովրդական թւէ չկայ, իր տեղերը զիջի մի ուրիշ կուսակցութեան. դա կը նշանակի քաղաքական ինքնասպանութիւն գործել»:

Ա. Մխիթարեան (ժողովրդական) գտնում է, որ եթէ Դաշնակցութիւնը մի տարի առաջ համաձայնւել է պարիտէտի սկզբունքին, այժմ նրա խախտումը կարող է տարաձայնութիւններ առաջ բերել: Եթէ Դաշնակցութիւնը առաջ զիջում է արել, այժմ այդ զիջումը պարտաւորական է նրա համար: Խորհուրդը պարիտէտ կազմով էլ պիտի մնայ. եթէ կային ուրիշ կուսակցութիւններ՝ սկզբից պիտի մտնէին, որովհետև համաձայնութիւնը կայացել է չորս կուսակցութիւնների միջև, ուստի նրանք էլ պիտի մնան մինչև վերջը, մինչև ընտրութիւնները, այլ ելքը կը կործանի Ազգային Խորհուրդը:

Սոց. – յեղ. կուսակցութեան ֆրակցիայի կողմից [Ի.] Տէր-Ներսիսեան առաջարկում է թողնել Խորհրդի ներկայ կազմն անփոփոխ, որի մէջ նորից կարող են մտնել բոլոր այն կուսակցութիւնները, որոնք գործում են հայ իրականութեան մէջ:

Բ. Թոփչեան յայտարարում է, որ Դաշնակցութիւնը առաջ համաձայնութիւն է կայացրել գործի տեսակէտից, որովհետև անցողակի շրջան էր, նախկին Ազգային Խորհուրդը հեռացել էր, պիտի նրան փոխարինէր ուրիշը: Այժմ, եթէ մենք գործ կատարելու համար ենք եկել այստեղ, պէտք է երևան բերենք մեր ռէալ ոյժերը. պարիտէտը չի լինի այն ելքը, որի համար աշխատում ենք: Համաձայնութիւնը կայացել է չորս կուսակցութիւնների միջև որոշ ժամանակով: Պարիտէտը լաւ բան է նրա համար, ով չի ուզում գործ անել, այլ կամենում է ցուցադրել, որ իրենք էլ ուժ ունեն:

Ղ. Տէր-Ղազարեան առաջարկում է խնդրի վերջնական քննութիւնը յանձնել կուսակցութիւններին՝ համաձայնութեան գալու համար, և վիճաբանութիւնները դադարեցնել:

Մ. Մխիթարեան կրկնելով իր վերև բերուած պատճառաբանութիւնները և իր ֆրակցիայի առաջարկը դաշնակցական ֆրակցիային՝ ասում է. «Դուք այս կազմով համաձայնուել էք մի տարի առաջ, դուք վեքսէլ էք տուել»:

Բ. Թոփչեան. – պ. Մխիթարեան, մեր տուած վեքսէլը бессрочный չէ, այլ срочный:

Ղ. Տէր-Ղազարեանի առաջարկներին միանում է Ա. Երզնկեան, դէմ է սոց.-դեմոկրատների ֆրակցիան, որի հետևանքով առաջարկը վերացուած է համարւում: Բ. Թոփչեանը առաջարկում է նիստը փակել: Ա. Զոհրաբեան առաջարկում է բանաձև, որ Հայոց Ազգային Խորհուրդը թողնելով հին կազմը՝ անցնում է հերթական խնդիրներին: Դաշնակցական և ժողովրդական կուսակցութեան ֆրակցիաները դէմ են առաջարկութեան. առաջարկը վերացւում է:

Նախագահը հիմնուելով նակազի վրայ, առաջարկում է նիստը փակել:

[Ա.] Իւանեան (ս.-դ.) առաջարկում է վերակազմութեան խնդիրը թողնել առկախ և անցնել օրակարգի միւս խնդիրներին:

Նախագահը յայտարարում է 10 ր. ընդմիջում:

Նիստը վերսկսւելով Ա. Միանսարեանն դաշնակցական և Ա. Մխիթարեանը հայ ժողովրդական կուսակց. ֆրակցիաների կողմից՝ առաջարկում են խնդրի քննութիւնը յետաձգել մի ուրիշ նիստին:

Առաջարկն ընդունւում է և 10 ու կէս ժամին փակւում է նիստը:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային խորհուրդ //
Նոր Աշխատավոր, 5 օգոստոսի 1919, N 156:

N 111

Հաղորդագրություն՝ Բորչալուի գավառի հայ ազգաբնակչությանը՝ Վրաստանի ՀԱԽ-ի միջոցներից հատկացրած պարենային օժանդակության մասին

Աղբուլաղի շրջանի հայ գիւղերի ազգաբնակութեանը Վիրահայ Ազգային Խորհրդի կողմից ուղարկւած ալիւրների բաժանումն արդէն վերջացել է: Ալիւր բաժանւած են հետևեալ գիւղերում. - Դաղէթում, Սամշուիլդայում, Վախունայում, Սամզիէթում և վերջապէս Աղբուլաղում բնակւող տեղացի հայերին:

Տե՛ս Տեղեկութիւններ Աղբուլաղի շրջանից //
Նոր Աշխատավոր, 5 օգոստոսի 1919, N 156:

N 112

ՀՅԴ-ի Վրաստանի ճյուղի «ռայոնական ժողովի» բանաձևը (1919 թ., 7 օգոստոսի)՝ ՀԱԽ-ի համաժողովրդական ընտրությունների արգելման կապակցությամբ

Հ. Յեղ. Դաշնակցութեան Վրաստանի 3-րդ Ռայոնական ժողովը, քննութեան առնելով կառավարութեան կողմից Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ընտրութիւնները արգելող կարգադրութիւնը և անկապտելի համարելով իւրաքանչիւր, մանաւանդ դեմոկրատական պետութեան սահմաններում ազգային փոքրամասնութիւնների իրենց ներքին ազգային-կուլտուրական կեանքի լիակատար ինքնօրէն տնօրէնութեան իրաւունքը, իր բուռն բողոքն է արտայայտում կառավարութեան այդ ապօրինի քայլի, որպէս բռնութեան ու կամայականութեան մի ակտի դէմ, ուղղւած հայ դեմոկրատիայի

նւիրական իրաւունքների ոտնահարման: Ռայոնական ժողովը լիայոյս է, որ հայ յեղափոխական դեմոկրատիան կարող կը լինի պատուաւոր կերպով պաշտպանելու իր անբռնադատելի իրաւունքները ամեն տեսակի քմահաճ ու անտեղի միջամտութիւններից:

Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութիւն. Վրաստանի III ռայոնական ժողով //Նոր Աշխատաւոր, 10 օգոստոսի 1919, N 161:

N 113
Լրատվություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. օգոստոսի 8-ի նիստի մասին

Նիստը բացւեց երեկ. ժամը 7 և կէսին Ներսիսեան դպրոցի դիւանատանը: Նախագահում էր Բ. Թոփչեան:

Նախորդ նիստի արձանագրութիւնները հաստատելուց յետոյ նախագահը յայտնում է, որ խորհրդի ընտրութիւնների յետաձգման պատճառով գործադիր մարմնի համար ստեղծւել է ծանր կացութիւն բիւջէտի խնդրի վերաբերմամբ. ինչպէս յայտնի է, խորհուրդը հաստատել է բիւջէ մի ասւայ համար, որի ժամանակամիջոցն անցել է արդէն, ուստի կարևոր է օգոստոս ամսւայ համար հաստատել նոր բիւջէ, իսկ մինչ այդ թոյլ տալ օգտագործել նախկին բիւջէի յօդւածները: Այս կարծիքի է նաև Ա. Միանսարեանը: Ժողովը ընդունում է նախագահի առաջարկը:

Ապա Թելաւի հայկական գիմնազիայի պահպանութեան մասին նախահաշիւ է ներկայացնում դպրոցական մասի վարիչ Ե. Տէր-Մինասյանը, ըստ որի առաջիկայ ուսումնական տարում գիմնազիայի պահպանութեան համար ծախս պահանջւում է 262700 ռ. <…>

Իս. Յարութիւնեան առաջարկում է նման խնդիրները մինչև խորհրդի ընտրութիւնները՝ յանձնուեն դպրոցական յանձնաժողովի քննութեան:

Ազգային Խորհուրդը հաստատում է նախահաշիվը և յատկացնում պահանջւած գումարը: Ապա ընդունւում է Իս. Յարութիւնեանի առաջարկը:

Այնուհետև նախագահը յայտնում է, որ քննւելու է օրակարգի երրորդ կէտը. այն է՝ Ազգային Խորհրդի վերակազմութիւնը: Այս առիթով նա յայտնում է, որ Վրաստանի սոց.-դեմոկրատների հայկական հատւածը, Հնչակեան կուսակց., կադէտները և առևտրա-արդիւնաբերականների խմբակցութիւնը պահանջել են տեղ պարիտէտի սկզբունքով: Այդ խնդիրը քննելով աւագների խորհուրդը, որոշել է պարիտէտի սկզբունքը վերացնել և խորհուրդը վերակազմել կուսակցութիւնների համաձայնութեամբ, որոշ թւափոխ յարաբերութեամբ: Աւագների խորհուրդում կայացել է մի համաձայնութիւն, ըստ որի վերակազմւած Ազգային Խորհրդի կազմի մէջ դաշնակցութիւնը ունենալու է 11 ներկայացուցիչ, ռուսաստանի սոց.-դեմոկրատներ, Հայ Ժողովրդական կուսակցութիւնը և սոցիալիստ յեղափոխականները 7-ական ներկայացուցիչ, հնչակեանները - 2, առևտրա-արդիւնաբերականները՝ 2, կադէտները՝ 1, իսկ Վրաստանի սոց.-դեմոկրատների մասին Խորհրդում եղել է երկու առաջարկ 5 կամ 7 տեղ, որի վերաբերմամբ աւագների խորհուրդը միաձայն որոշման չի եկել, ուստի այդ խնդիրը վերապահւում է Ազգային Խորհրդին:

Ար. Երզնկեան յայտարարում է, որ եթէ որևէ կուսակցութիւն չհամաձայնւի ավագների խորհրդի որոշմանը ենթարկւել և հեռանայ, այն ժամանակ պէտք է թւերի նոր կոմբինացիա անել:

Խորհուրդը միաձայն ընդունում է աւագների խորհրդի որոշումը, առանձին քննութեան նիւթ դարձնելով Վրաստանի սոց.-դեմոկրատների խնդիրը: Այս խնդրի վերաբերմամբ որոշ համաձայնութեան չլինելու համար նախագահը յայտարարում է ընդմիջում:

Կէս ժամից աւելի տևող ընդմիջումից յետոյ վերսկսւում է նիստը:

Նախագահը առաջարկում է Վրաստանի սոց.-դեմոկրատների հարցը վերացնել օրակարգի քննութիւնից և ֆրակցիաներից ընտրել 3-ական ներկայացուցիչ վերջնական համաձայնութեան գալու համար խորհրդակցելու: Առաջարկը ընդունւում է միաձայն:

Դաշնակցական ֆրակցիայի կողմից առաջարւում են՝ Բ. Թոփչեան, Ա. Միանսարեան և Գ. Տեր-Ստեփանեան, սոցիալիստ-յեղափոխականներից՝ Յակ. Յովհաննիսեան, Իս. Տէր-Ներսէսեան և [Ն.] Թարխանեան, հայ ժողովրդական կուսակցութիւնից՝ Ա. Մխիթարեան, Ե. Տէր-Մինասեան և Իս. Յարութիւնեան, սոց.-դեմոկրատներից՝ Ղ. Տէր-Ղազարեան, Ա. Երզնկեան և Ս. Փիրումեան:

Սպասածից աւելի վէճի առարկայ է լինում անցեալ տարի տաճիկ բարբարոսների կողմից Եկատերինենֆելդի մօտ սրախողխող արւած հայ զինւորների[117] յիշատակին արձան կանգ-

[117] Ղարաքիլիսայի ճակատամարտում 1918 թ. մայիսին մասնակից զորամասերից մեկը և նրան միացած փախստականները, շուրջ 800 մարդ, պարտադրված դեպի Թիֆլիս նահանջելով, Եկատերինենֆելդ (այժմ՝ Բոլնիսի) բնակավայրի մոտ օղակվեցին Բորչալուի թաթարական հրոսակախմբերով և այնուհետև տեղ հասած թուրքական կանոնավոր զորքերով: Զինամթերքը ամբողջությամբ ապառած հայ զինվորները չկարողացան երկար դիմագրավել թշնամում, մեծ մասամբ գերի ընկան և դաժանաբար կոտորվեցին:

նեցնելու խնդիրը, որը յարուցել է Եկատերինենֆելդի պաստորը:

Գործադիր մարմնի նախագահ Ա. Երզնկեան պաշտպանում է այն տեսակէտը, որ արձան կանգնեցնելու խնդրին պիտի մի տեսական, տեղական բնոյթ տալ: Ելնելով այս տեսակէտից, Գործադիր Մարմինը առաջարկել է պաստորին տեղում հայերից և գերմանացիներից կազմել մի մարմին արձանի գործը հոգալու համար, իսկ Խորհրդի կողմից խոստացուել է աջակցութիւն գործի յաջողութեան համար:

Բ. Թոփչեան այն կարծիքի է, որ տաճիկների ձեռքով նահատակվածների յիշատակին արձան կանգնեցնելու գործը ամբողջապէս իր վրայ պէտք է վերցնի Ազգային Խորհուրդը:

Քուէարկւում են ընկ. Թոփչեանի և Ա. Երզնկեանի առաջարկները: 11 ձայնով 7-ի դէմ որոշւում է Եկատերինենֆելդում թաղուած մեր հերոսների յիշատակին յուշարձան կանգնեցնել Ազգային խորհրդի կողմից, որի համար յանձնարարուեց Գործադիր Մարմնին կազմել նախահաշիւ:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Նոր Աշխատաւոր, 12 օգոստոսի 1919, N 162:

N 114

«Բորբա» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. օգոստոսի 8-ի նիստի մասին

Газета “Борьба” о заседании Армнацсовета Грузии (8 августа 1919 г.)

На заседании совета от 8 августа под председательством Б.Топчяна в первую очередь обсуждался вопрос о содержании телавской армянской гимназии. Заведующий учебным отделом

Е. Тер-Минасян представил смету на содержание гимназии на предстоящий учебный год, по которой сумма расходов исчисляется в 262.700 рублей, а приход в 222.000 рублей; от совета требуется субсидия в размере 60.000 рублей. Плата за обучение в приготовительных классах доведено до 500-600 руб., а в высших 900-1000 рублей.

После прений национальный совет утверждает смету на содержание гимназии и ассигнует требуемую сумму. Затем председатель ставит на обсуждение вопрос о реорганизации национальнаго совета. По этому поводу он сообщает, что армянская секция социал-демократической партии Грузии, инчакианская партия[118], кадеты и группа торговопромышленников требует предоставления им мест в совете на началах паритетнаго представительства. Совет старшин национальнаго совета обсуждал уже этот вопрос и решил паритетное начало упразднить и реорганизовать совет на началах взаимнаго соглашения партий. В совете старшин состоялось соглашение, по которому в реорганизованный совет войдут: от дашнакцутюна 11 представителей, от р.с.-д.р.п., армянской народной партии и социал-революционеров по 7 представителей, от инчакистов торговопромышленников по 2 представителя, от кадетов 1 представитель, а относительно армянской секции социал-демократической партии Грузии было два предложения, по одному предлагается предоставить ей 5 мест, а по другому – 7 мест. Вследствие этого разногласия совет старейшин по этому вопросу не пришел к определенному заключению и разрешение его предоставляется на усмотрение пленума национального совета.

---

[118] Իմա՝ Հնչակյան կուսակցություն:

Член совета А. Ерзнкян заявляет, что если какая-либо партия не согласится на постановление совета старшин и уйдет из совета, то встанет вопрос о числе соотношений партий в совете.

Совет единогласно принимает постановление совета старшин, причем число представителей армянской секции с[оциал]-д[емократической] п[артии] Грузии решено обсуждать особо.

После перерыва председатель предлагает снять с порядка дня вопрос и для окончательнаго его решения избрать по 3 представителя из каждой фракции.

Предложение принимается единогласно.

От дашнакцаканской фракции выбираются: Б. Топчян, А. Миансарян и Г. Тер-Степанян; от социал-революционеров: Акоп Ованнисян, Исаак Тер-Нерсесян и [Н.] Тарханян; от армянской народной партии: А. Мхитарян, Е. Тер-Минасян и Ис. Арутюнян; от социал демократов: К. Тер-Казарян, А. Ерзнкян и С. Пирумян[119].

Տե՛ս В армянском национальном совете Грузии //
Борьба, 13 августа 1919, N 180.

---

[119] **Փիրումյան (Պիրումով) Սիմոն (Սիմոնիկ)**, բոլշևիկ-կոմունիստ, Չեկայի գործակալ: Վարել է մի շարք ղեկավար պաշտոններ Բեռլինի, Փարիզի, Վարշավայի խորհրդային դիվանագիտական և արևտրական ներկայացուցչություններում: Ստալինյան բռնաճնշումների զոհերից է:

N 115

Լրատվություն՝ Վրաստանի նորացված ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 18-ի նիստի մասին

Նախագահութեամբ ընկ. Բ. Թոփչեանի Ներսիսեան դպրոցի դիւանատանը <…> տեղի ունեցաւ վերակազմւած Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի անդրանիկ նիստը հետևեալ կազմով.

Հ. Յեղ. Դաշնակցութիւնից. – Մ. Զարգարեան, Զ. Զօրեան, Բ. Թոփչեան, Տ. Յովհաննիսեան, [Ար. Դ.] Հոգիջանեան, Ան. Ղազազեան, Նիկ. Մատինեան, Ա. Միանսարեան, Յ. Նահապետեան, Յ. Տէր-Միրաքեան, Պ. Տէր-Պօղոսեան և Գ. Տէր-Ստեփանեան:

Ռուս. սոց.-դեմոկրատներից.– Ա. Զոհրաբեան, Սիմ. Փիրունեան, Ա. Երզնկեան, Ա. Իւանեան, Ղ. Տէր-Ղազարեան, Ս. Աբովեան, Հ. Աթոյեան և Մ. Դարբինեան:

Վրաստանի սոց.-դեմոկր. հայկ. հատւածից. – Բ. Մկրտումեան, Խ. Աւդալբէկեան, Մ. Վարդոյեան, Ս. Դանդուրեան, Տ. Սողոմոնեան, Ստ. Ղայթանջեան, Վ. Ռշտունի և Մ. Պալեան:

Սոց.-յեղափոխականներից. – Ա. Տէր-Գրիգորեան, Ան. Ստամբոլցեան, Ն. Թարխանեան, Ա. Մելքոնեան, Յակ. Յովհաննիսեան, Իս. Տեր-Ներսիսեան, Վ. Թուրազեան և Ա. Մարգարեան:

Հայ ժողովրդ. կուսակցութիւնից. – Ա. Մխիթարեան, Իս. Յարութիւնեան, Ե. Տէր-Մինասեան, Խ. Կանայեան, Լ. Խալաթեան, Ա. Աղաջանեան, Պ. Դոլուխանեան և Ս. Առաքելեան:

Հայ սեփականատէրերի և առևտրա-արդիւնաբերողների կուսակցութիւնից. – Միք. Արամեան, Ի. Մայիլեան*, Յ. Սէյլանեան և Կ. Խալաթեան:

Հնչակեան կուսակցութիւնից. – Լազօ, Ա. Բաբեան:

Կադէտներից. – Բ. Ամիրաղեան և Ե. Խանդանեան:

Բաց անելով ժողովը ընկ. նախագահը մի քանի խօսքով բնորոշելով նրա պատկերն ու կատարելիք դերը, ասաց, որ որքան բազմակողմանի լինի Խորհրդի կազմը՝ այնքան արդիւնաւէտ կըլինի հայ աշխատաւորութեան համար. թէև հնարաւոր չի եղել, որ խորհուրդը լինի ընտրովի, բայց այն վերակազմուել է հայ իրականութեան մէջ գործող կուսակցութիւնների համաձայնութեամբ: Վերակազմուած Խորհրդի առաջ դրուած են մի շարք հրատապ խնդիրներ, որոնց պէտք է լուծում տայ Ազգային Խորհուրդը անցնելով օրգանական աշխատանքների: Ապա նախագահը առաջարկեց նոր Գործադիր Մարմնի և Խորհրդի նախագահութեան ընտրութիւն կատարել, որպէսզի հնարաւոր լինի մի շարք կարևոր խնդիրների ընթացք տալ:

Մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշուեց Գործադիր Մարմնի և Խորհրդի նախագահութեան ընտրութիւնները յետաձգել այսօր կայանալիք Խորհրդի նիստին, իսկ ուրբաթ օրը[120] գումարել աւագների խորհրդի նիստ օրակարգը մշակելու և ընտրուելիք մարմինների մասին խորհրդակցելու համար: Ընտրուեց աւագների խորհուրդ, որի կազմի մէջ մտան - Բ.

---

* Խոսքը մեծահարուստ Եղիա Մայիլյանի (նաև՝ Իլյա Մայիլով) մասին է: Ժամանակին Դանիել և Հովհաննես իր եղբայրների հետ նա հայտնի է եղել ազգօգուտ բոլորանվեր բարեգործությամբ: Մանրամասն տե՛ս Զաքարյան Ա., Լևոն Լիսիցյանը Մայիլյան եղբայրների գիտատնտեսական արշավախմբի մասին// ՊԲՀ, 2001, N 1, էջ 277-285:

[120] Իմա՝ 1919 թ., 19 սեպտեմբերի:

Թոփչեան, Ս. Փիրումեան, Իս. Յարութիւնեան, Տ. Սողոմոնեան, Յ.Սէյլանեան, Լազօ և Իս. Տեր-Ներսիսեան:

Ապա Խորհուրդը լսեց նախագահի համառօտ հաղորդագրութիւնը Ազգային Խորհրդի գործունէութեան մասին, որից երևաց, որ Խորհուրդը առաջին հերթին զբաղուել է դպրոցական խնդրով, ապա վրայ է հասել գաղթականների խնամատարութեան գործը, որի համար խորհուրդը լարել է իր բոլոր ոյժերը աշխատելով ցոյց տալ ամեն տեսակի օգնութիւն Վրաստանի սահմաններում ապաստանած գաղթականներին: Խորհուրդը իրեն յայտարարել է գերագոյն մարմին Վրաստանի սահմաններում եղած հայերի կրթական կուլտուրական խնդիրների վերաբերմամբ: Որովհետև Խորհուրդը զբաղուած է եղել խնամատարութեան գործով ու հանդէս եկել հայ-վրացական կոնֆլիկտին ու պաշտպան եղել հայ աշխատաւորութեան այն ժամանակ, երբ նա օրէնքից դուրս էր յայտարարուած, ուստի և խորհրդի մնացած գործերը ունեցել են թերութիւններ: Մինչև օրս խորհուրդը չի կարողացել Սահմանադիր ժողովից ստանալ իր կոնստիտուցիան, որ հնարաւորութիւն ստանար պարտադիր տուրք սահմանել ապահովելու համար Խորհրդի ֆինանսական դրութիւնը: Խորհուրդը գաղթականների վրայ կատարած ծախսերը կարողացել է հոգալ Հայաստանի կառավարութիւնից ստացած գումարներով և գաղթականական մարմնի ունեցած գումարով: Այժմ Խորհրդի գումարները սպառուած են և պէտք է զբաղուել նոր միջոցներ ստեղծելու խնդրով: Խորհուրդը հանդէս է եկել և պէտք է հանդէս գայ ի պաշտպանութիւն հայ աշխատաւորութեան:

Իր եզրակացութեան մէջ ընկ. Թոփչեանը յայտնեց այն միտքը, թէ եթէ Խորհուրդը չշտապի, մեր դպրոցներից շատերը փակ կը մնան:

Խորհուրդը բաւականացաւ նախագահի համառօտ հաղորդագրութեամբ և ցրուեց երեկոյեան ժամը ութ ու կէսին:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 20 սեպտեմբերի 1919, N 196:

N 116
Լրատվություն՝ Վրաստանի նորացված ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 18-ի նիստի մասին

Ամսոյս 18-ին երեկ. ժ. 7 և կեսին կայացաւ վերակազմուած Ազգ. խորհրդի անդրանիկ նիստը. նախագահում էր [հին] կազմի նախագահ Բ. Թոփչեանը, մասնակցում էին «պարիտետի» հիմունքներով հետևեալ կուսակցութիւնները.

1. Հայկական սեկցիա 8 տեղ
2. Ռ.Ս.Դ.Բ. կուսակ. 8 “ “
3. Ս. Յեղափոխականներ 8 “ “
4. Հնչ. սօց.-դեմ. 2 “ “
5. Դաշնակցութիւնը 12 “ ”
6. Հայ Ժող. կուսակ. 8 “ ”
7. Արդիւնաբերողներ 4 “ ”
8. Ռուս կադէտներ[121] 2 “ ”

<…>

Նորակազմ խորհուրդը լսեց միայն հին կազմի ինֆորմացիան և կազմեց աւագների խորհուրդ, թողնելով յաջորդ նիստին ընտրելու պրեզիդիում ու նոր գործադիր մարմին: Նիստը փակուած յայտարարուեց ժամը 8 1/2 – ին:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգ. Խորհուրդ //
Բանվորի Ձայն, 21 սեպտեմբերի 1919, N 2:

[121] Խոսքը ռամկավար-սահմնադրական ռուսական «Ժողովրդական ազատության կուսակցության» հայազգի ներկայացուցիչների մասին է:

N 117
«Աշխատավոր» լրագիրը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 20-ի նիստի մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի նոր նստաշրջանի երկրորդ նիստը տեղի ունեցաւ Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում երեկ[ոյան] ժամը 8-ին, նախագահութեամբ ընկ. Բ. Թոփչեանի, որը բանալով նիստը առաջարկեց յոտնկայս յարգել Ազգային խորհրդի անդամ և բժշկա-սանիտարական մասի վարիչ Կ. Ստեփանեանի յիշատակը, բնորոշելով նրան իբրև կարող ու եռանդուն գործչի: Խորհուրդը ոտքի է կանգնում:

Ապա նախագահը կարդում է հետևեալ օրակարգը.

1)Ազգային Խորհրդի նախագահութեան և գործադիր մարմնի կազմի խնդիրը, 2)Ախալքալաքի ժողովրդի օգնութեան գործի կազմակերպումը, 3)դպրոցական նախահաշւի քննութիւնը, 5)Յովնանեան դպրոցի հոգաբարձութեան հարցը, 5)ֆինանսների կազմակերպումը, 6)դպրոցական յանձնաժողովի հարցը և 7)Հոգևոր իշխանութեան և Հայոց Ազգային Խորհրդի փոխ-յարաբերութեան հարցը:

Օրակարգը նոյնութեամբ հաստատվում է:

Առաջին խնդրի մասին զեկուցում է նախագահ Թոփչեանը: Զեկուցումից երևում է, որ աւագների խորհրդում հանդէս են եկել երկու տրամադրութիւն. մեկ, որ Խորհուրդն ունենայ երկու նախագահ և երկու քարտուղար, իսկ գործադիր մարմնի կազմը թողնել նոյնը, միւսը՝ թէ Խորհրդի նախագահութիւնը թողնել նոյն կազմով, իսկ գործադիր մարմնի կազմը 4-ի փոխարէն դարձնել 5: Եղել է նաև առաջարկ, որ ամեն մի ֆրակցիան ունենայ իր ներկայացուցիչը: Գործադիր մարմնի կազմն

ընդարձակելու կողմնակիցները հիմնւում են այն բանի վրայ, որ կարող է դպրոցական գործն ընդարձակւել և այլն: Յամենայն դէպս աւագների խորհրդում թէ՛ կողմերի և թէ՛ անւանական ցուցակների մասին դեռևս համաձայնութիւն չի կայացել և ստեղծւել են չհամաձայնւող կողմեր, ուստի այդ բոլոր խնդիրները պիտի որոշի ինքը՝ Խորհուրդը:

Իս. Յարութիւնեան առաջարկում է նախագահութեան ընտրութիւնը յետաձգել, գտնելով, որ առանց նախնական համաձայնութեան գալու հնարաւոր չէ կատարել նախագահութեան ընտրութիւնը և այդ խնդիրը յանձնել աւագների խորհրդի քննութեան:

Ս. Փիրումեան (ռ. ս. դեմ.) առաջարկում է ընտրութիւնները կատարել, որովհետև նոր խորհուրդը ունենալու է նոր նախագահութիւն: «Դաշնակցութիւնը, - ասում է նա, - առաջարկել է մի թեկնածու, որ մենք չենք ընդունի: Դաշնակցութեան և մեր միջև համաձայնութիւն երբէք չի լինի, ուստի պէտք է այժմ ընտրել Խորհրդի պրեզիդիում, իսկ գործադիր մարմնի ընտրութիւնը յետաձգել»:

Զ. Զօրյան գտնում է, որ էականը նախագահութեան ընտրութեան մէջ չէ, այլ այն, որ պէտք է կողմերի միջև համաձայնութիւն լինի, ուստի անհրաժեշտ է և նպատակահարմար, որ նախագահութեան ընտրութիւնը յետաձգիւ մի քանի օրով, բայց կողմերի համաձայնութեամբ:

Սոց.-յեղափ. ֆրակցիայի կողմից Իս. Տէր-Ներսիսեանը առաջարկում է, որ ընտրութիւնները կատարւեն նոյն նիստում: Վրաստանի սոցիալ-դեմոկրատների հայկական սէկցիայի կողմից [Մ.] Վարդոյեանը ասում է. «Ազգային Խորհուրդը երկու նիստ գումարեց, բայց ազգին ոչ մի օգուտ չրւեց, դրա համար էլ պիտի կատարել պրեզիդիումի ընտրութիւն»:

Նրանց առարկում է Գ. Տէր-Ստեփանեան և անհեթեթ ու անհետևողական է համարում վերոյիշեալ ֆրակցիաների առաջարկութիւնները և անհրաժեշտ գտնում նախագահութեան ընտրութեան յետաձգումը:

Առաջարկները նախագահը դնում է քւէարկութեանը. 26 ձայնով 25-ի դէմ որոշւում է նախագահութեան ընտրութիւնը յետաձգել մէկ շաբաթով:

Ս. Փիրումեան յայտարարում է, որ համաձայն պարլամենտական օրէնքների Բ. Թոփչեանի փոխարէն, մինչև նոր նախագահութեան ընտրութիւնը, նիստը պիտի նախագահի Խորհրդի անդամներից ամենաաւագը:

Զ. Զօրեան, Պ. Տէր-Պօղոսեան և Մ. Զարգարեան գտնում են, որ մինչև նորի ընտրութիւնը պէտք է հին նախագահութիւնը, ըստ ընդունւած սովորութեան, շարունակի իր գործերը:

Խորհուրդը ձայների մեծամասնութեամբ ընդունում է պ. Փիրումեանի առաջարկը: Այնուհետև նիստը նախագահում է Միք. Արամեան[122] իբրև ամենաաւագը, իսկ իբրև ամենակրտսերը, քարտուղար է ընտրւում Ս. Առաքելեանը:

Ա. Բաբեան և ուրիշներ առաջարկում են նիստը փակել և օրակարգի խնդիրների քննութիւնը յետաձգել յաջորդ նիստին, իսկ Բ. Թոփչեան պաշտպանում է այն միտքը, թէ Խորհուրդը պէտք է անյապաղ լուծում տայ այն խնդիրներին, որոնք դրւած են օրակարգի մէջ: Առաջին կարևոր խնդիրը Ախալքալաքին օգնութիւն հասցնելու գործն է, որ յետաձգման չի կարող սպասել, ապա դպրոցական խնդիրը, որ նոյնպէս շտապողական ու այժմեան խնդիր է: Կանգնելով գործնական տէսակէտի վրայ,

---

[122] **Արամյանց Միքայել Հովսեփի** (****-1922), մեծահարուստ, բարերար:

ընկ. Թոփչեանը պնդում է, որ Խորհուրդը անմիջապէս զբաղուելու է օրակարգի խնդիրներով:

Սոց.-դեմոկրատները կողմնակից են օրակարգի խնդիրների քննութեան յետաձգման, նրանց միանում են ուրիշները ևս և երեկ[ոյան] ժամը 9 և կէսին նախագահը յայտարարում է նիստը փակւած:

Q.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 23 սեպտեմբերի 1919, N 198:

N 118
«Բանվորի Ձայն» շաբաթաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 20-ի նիստի մասին

Ամսիս 20-ին, շաբաթ օրը, երեկոյեան ժամը 8-ին [Թիֆլիսի] Դումայի դահլիճում տեղի ունեցաւ վիրահայ Ազգ. Խորհ. երկրորդ նիստը: Նախագահում էր Բ. Թոփչեանը:

Երկրորդ նիստի գլխաւոր հարցն էր նախագահութեան ընտրութիւնը, որով Խորհուրդը հնար կունենար անցնելու հերթական մի շարք անյետաձգելի խնդիրների լուծմանը, որոնց մէջ առաջին տեղում կանգնած են Ախալքալաքի գաղթականներին օգնելու և դպրոցական խնդիրը կարգաւորելու հարցերը:

Նախագահի զեկուցումից պարզւեց, որ ֆրակցիաների մէջ նախագահութիւն և գործադիր մարմինը կազմելու խնդրի շուրջն աւագների խորհրդում համաձայնութիւն չի կայացել և հարցի վերջնական լուծումը թողնւած է Խորհրդին: <…> Նախագահութիւն կազմելու ձևի մասին երկու առաջարկ կայ: <…> Ռ. Ս. Դ. Բ. կուսակցութիւնը, Վ. Ս. Դ. Բ. կուսակցութեան

Հայկական սեկցիան և Սոցիալիստ-Յեղափոխականները առաջարկում են հինգ անդամից կազմված նախագահութիւն, որի մէջ տեղ կունենան բոլոր գլխաւոր ֆրակցիաները, իսկ Դաշնակցականներն կարծում են, որ չորս հոգուց պիտի կազմել նախագահութիւնը: <…> Առաջին երեք ֆրակցիաները միասին Ազգային Խորհրդի նախագահի համար ունեն մէկ առանձին թեկնածու, իսկ դաշնակցականներն ու Հայ Ժողովրդական կուսակցութիւնն էլ իրենց հերթին առանձին առանձին թեկնածուներ: <…>

Սոցիալիստական երեք ֆրակցիաների կողմից առաջարկ է լինում անմիջապէս անցնել ընտրութեան, որովհետեւ ոչ մի յոյս չկայ համաձայնութեան գալու, իսկ առանց նախագահութեան Խորհուրդը չի կարող անցնել իր աշխատանքներին. դանդաղելը յանցանք է: Դաշնակցութեան և Հայ Ժողովրդական կուսակցութեան կողմից առաջարկ է լինում յետաձգել ընտրութիւնը և յանուն համերաշխութեան աշխատել համաձայնութիւն տալ: <…> Քսանվեց ձայնով ընդդէմ 25-ի որոշւում է մի շաբաթ յետաձգել նախագահութեան ընտրութիւնը:

Ապա ընկեր Ս. Փիրումեանը առաջարկում է ժողովին շարունակել իր զբաղմունքները նոր նախագահով, որովհետև Բ. Թոփչեանը այս երեկոյ պատահական անձնաւորութիւն է և Ազգ. Խորհրդի նոր կազմը մինչև նախագահութեան ընտրելն ըստ պարլամենտական սովորութեան իր աւագագոյն անդամին է հրաւիրելու նախագահութեան, իսկ կրտսեր անդամին էլ քարտուղարութեան: Այս առաջարկը բանական է գտնում Հայ ժողովրդական կուսակցութիւնն էլ, բացի դաշնակցութեան մի քանի հռետորներից, որոնք ճգնում են հակառակն ապացուցել: Քւեարկութեամբ անցնում է Ս. Փիրումեանի առաջարկը և նա-

խագահի տեղը բռնում է պ. [Մ.] Արամեանը, իսկ քարտուղարը՝ պ. Ս. Առաքելեանը:

Դաշնակցականներն առաջարկում են օրակարգի միւս խնդիրներին անցնել: Եւ այս այն ժամանակ, երբ նախագահութեան ընտրութեան յետաձգումով նրանք Ազգ.Խորհրդի պարապմունքների կանոնաւոր և շտապ աշխատելու հնարաւորութեան առաջ քար են ձգել:

Սոցիալիստական երեք ֆրակցիան ի նկատի ունենալով յետագայ խնդիրների յապաղականութիւնը համաձայնում են այս առաջարկին, բայց գտնում են, որ առաջ պիտի պարզել Ազգ.Խորհրդի ֆինանսական դրութիւնը, որովհետև յետագայ հարցերի բարեյաջող լուծումը կախւած է նիւթական միջոցներից: Հայ ժողովրդական կուսակցութիւնը գտնում է, որ այժմ և եթ պիտի փակել այս նիստը, որովհետև մի շաբաթ հէնց նրա համար յետաձգւեց նախագահութեան ընտրութիւնը, որ կուսակցութիւնները համաձայնութեան գան ընտրութեան շուրջը և ապա նոր նախագահութեամբ կանոնաւոր աշխատանքի դիմեն:

Նախագահը նիստը փակւած յայտարարեց: <…>

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդի երկրորդ նիստը //
Բանվորի Ձայն, 28 սեպտեմբերի 1919, N 3:

N 119

Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի վերակազմավորման հարցում Վրաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցութեան «հայկական սեկցիայի»[123] դիրքորոշման մասին

Չորեքշաբթի, ամսիս 24-ին տեղի ունեցաւ Վ. Ս. Դ. Բ. Կուսակց. Հայկական Սեկցիայի հերթական ժողովը, ուր ի միջի այլ հարցերի քննութեան առնուեց Վիրահայ Ազգ. Խորհրդի նախագահութեան և գործադիր մարմնի կազմութեան խնդիրը և պարզաբանուեց այն տեսակէտը, որ պաշտպանելու են մեր ներկայացուցիչները թէ՛ սոցիալիստական կուսակցութիւնների ֆրակցիաների խորհրդակցութեան մէջ և թէ՛ Ազգ. Խորհրդի ընդհանուր ժողովում: Մինչև այժմ կատարուածի մասին ժողովին զեկուցում տուեց ընկ. Տ. Սողոմոնեանը <…>: Մտքերի փոխանակումից յետոյ ընկեր Ս. Ղայթանջեանի և Վ. Ռշտունու[124]

---

[123] Ընկալվելով որպես վրացական ազգային կուսակցություն՝ ՎՍԴԲԿ-ն, այնուամենայնիվ, բազմազգ էր: Նրա շրջանակներում գործում էր նաև «հայկական սեկցիա» (շուրջ 150 կուսակցական), որը ղեկավարն էր ՎՍԴԲԿ Կենտկոմի անդամ Մ. Կ. Վարդոյանը: Սեկցիան ուներ պարբերական՝ «Բանվորի Ձայն» շաբաթաթերթը: Առավելապես աչքի էր ընկնում սեկցիայի Աբխազիայի ճյուղը, որի անդամները (Խ. Ավդալբեգյան, Տ. Սողոմոնյան, Ե. Մինասյան, Վ. Ռշտունի և այլք) առաջնորդում էին նաև Սուխումի Հայոց շրջանային ազգային խորհուրդը:

[124] **Ռշտունի Վահան Հարությունի** (1894-1970), պատմագիտության դոկտոր, Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1915), այնուհետև անցել է մանկավարժական գործունեության՝ սկզբում Թավրիզի, ապա՝ Ախալցխայի, Սուխումի և Թիֆլիսի հայկական դպրոցներում: 1918-ին ակտիվ մասնակցություն է ունեցել Ախալցխայի հայության ինքնապաշտպանության գործում: 1919թ.-ից բնակվել է Վաղարշապատում, այնուհետև Սուխումում: Ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես Աբխազիայի հայ համայնքի կյանքում, այդպես էլ ՎՍԴԲԿ-ի «հայկական սեկցիայի» աշխատանքներում: Հաջողությամբ ավարտելով Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի հասարակագիտական ֆակուլ-

առաջարկով ժողովը հրահանգում է իր ներկայացուցիչներին ոչ մի դէպքում դաշնակցութեան հետ համաձայնութեան չըգալ նախագահութեան կազմելու խնդրում, այլ ուրիշ խմբակցութիւնների հետ ժամանակաւոր համաձայնութեամբ լուծել այդ խնդիրը և սոցիալիստական մեծամասնութիւն ստեղծել թէ՛ նախագահութեան և թէ՛ գործադիր մարմնի մէջ:

Տե՛ս Վ. Ս.-Դ. Բանւ. Կուս. Հայկական Սեկցիա //
Բանվորի Ձայն, 28 սեպտեմբերի 1919, N 3:

N 120

Հաղորդագրություն՝ Սուրամի (Գորիի գավառ) հայկական դպրոցը Վրաստանի ՀԱԽ-ին ենթարկելու մասին

Սուրամ, 18 սեպտեմբերի

<…> Սուրամի ինտելլիգենցիան հոգաբարձութեան նախագահի հետ խորհրդակցելով որոշում է հրաւիրել բազմամարդ ժողով, որ գումարուեց ամսիս 17-ին – նախագահութեամբ Յովհ. Դաւթեանի և քարտուղարութեամբ օր. Ս. Նազարեանի:

Ժողովը որոշում է. ա)դպրոցն այսուհետև ժողովրդականացնել, անջատելով հոգևոր իշխանութեան գերիշխանութիւնից և ենթարկել Վրաստանի Հայոց Ազգային խորհրդին, կատարելով վերջինից բըխած բոլոր հրահանգներն ու կարգադրութիւնները անշեղ ու անթերի: <…>

Շանթահար

Տե՛ս Սուրամի հայոց դպրոցը //
Բանվորի Ձայն, 28 սեպտեմբերի 1919, N 3:

տետը (1924), վերադարձավ Հայաստան՝ դասախոսական աշխատանքի: Նրա անվան հետ է կապված ԵՊՀ-ում ԽՍՀՄ պատմության ամբիոնի հիմնադրման նախաձեռնությունը, որի ղեկավարն էր չորս տասնամյակ:

N 121

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 28-ի նիստի մասին

Կիրակի, սեպտեմբերի 28-ին [Թիֆլիսի] Դումայի դահլիճում, ժամը 8-ին տեղի ունեցաւ Վիրահայ Ազգ. Խորհրդի երրորդ նիստը: Օրակարգի առաջին խնդիրը նախագահութեան ընտրութիւնն էր:

Ընթերցողները յիշում են, որ դաշնակցականների և Հայ ժողովրդական կուսակցութեան առաջարկով և ջանքերով անցեալ նիստում նախագահութեան ընտրութիւնը յետաձգուեց և այդ էլ այն պատճառով, որ այդ <…> մարդիկ յոյս ունէին, որ գործի յաջողութեան համար ֆրակցիաները համաձայնութեան կը գան: Բայց ոչ մի համաձայնութիւն չէր կայացել այդ մի շաբաթւայ ընթացքում այն պարզ պատճառով, որ իւրաքանչիւր ֆրակցիա նախագահութեան կազմի մասին շարունակում էր իր նախկին տեսակէտի պաշտպանութիւնը և երեք անգամ հրաւիրուած աւագների խորհուրդը նիստ չէր ունեցել այս կամ այն ֆրակցիայի բացակայութեան պատճառով:

Բայց այնուամենայնիւ դաշնակցականներն որոշ աշխատանք կատարել էին, թէ ինչ ձևով այդ իրենց գործն է, միայն փաստն այն է, որ երբ քւէարկութեան դրուեցին Ա. Խորհրդի նախագահութեան համար երկու թեկնածուները՝ Ա. Երզնկեանը սոցիալիստական երեք ֆրակցիաների, իսկ Բ. Թոփչեանը դաշնակցականների կողմից, վերջինն ստացաւ 26 ձայն, այսինքն երկու ձայն աւելի սոցիալիստների թեկնածուից և ընտրուեց Ազգ. Խորհրդի նախագահ: Ձեռնպահ էին ռուսական կադէտների երկու հայ ներկայացուցիչները: <…>

Նախագահի ընտրութիւնից յետոյ սոցիալիստական ֆրակցիաների առաջարկով ընդմիջում յայտարարուեց և սոցիալիստներն առանձնացան ստեղծուած դրութիւնը քննելու:

Մտքերի փոխանակութիւնը պարզեց, որ ստեղծուած դրութիւնը թելադրում է մասնակցութիւն չունենալ նախագահութեան և գործադիր մարմնի մէջ: Այն ծրագիրը, որ ունէր սոցիալիստական բլոկը, ձգտում էր սոցիալիստական մեծամասնութիւն ստեղծել յիշած երկու մարմիններում և այդ պիսով անգործունէութիւնից հանել Ազգային Խորհուրդը: Այդ ծրագրով մտածւում էր չեզոքացնել նոյնպէս Դաշնակցութեանը և նրան զրկել ղեկավարողի դերից <…>:

Նիստի վերսկսումից յետոյ սոցիալիստական բլոկի անունից ընկեր [Ն.] Թարխանեանը վերևում շեշտած հիմունքներով մի յայտարարութիւն է անում:

Նիստի շարունակութեան ժամանակ նախագահի օգնական է ընտրւում բաց քուէարկութեամբ Ա. Մխիթարեանը, իսկ քարտուղար Լազօն /անուանի հնչակեան/[125] :

Ապա վէճի առարկայ է դառնում այն թէ՝ այժմ պէտք է զբաղուել օրակարգի միւս խնդիրներով, թէ թողնել մի արտակարգ նիստի:

Այս անգամ էլ դաշնակցութեան և ժողովրդականների ձայներով որոշւում է փակել նիստը և մի ուրիշ ժողովում քննել Ախալքալաքի և դպրոցական հարցերը: <…>

Տե՛ս Ազգային Խորհրդի 3-րդ նիստը //
Բանվորի Ձայն, 5 հոկտեմբերի 1919, N 4:

---

[125] **Ղազարյան Հակոբ**, եղել է Թիֆլիսում 1919 թ. եզդիների ազգային խորհրդի ստեղծման նախաձեռնողը և նրա պատվավոր անդամը: Կազմել է քրդերենի առաջին այբուբենը և Էջմիածնում 1922 թ. հրատարակել է «Շամս» դասագիրքը:

N 122
«Աշխատավոր» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 30-ի նիստի մասին

Երեկոյեան ժամը 8-ին Թիֆլիսի դումայի դահլիճում նախագահութեամբ ընկ. Բ. Թոփչեանի տեղի ունեցաւ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի արտակարգ նիստը, որի օրակարգն էր. 1)լրացուցիչ ընտրութիւններ, 2)դպրոցական նախահաշիւ, 3)Ախալքալաքին օգնութիւն կազմակերպելու խնդիրը և 4)ֆինանսական յանձնաժողովի զեկուցումը:

Զ. Զօրեան առաջարկում է ընտրութիւնները յետաձգել, որովհետև այդ մասին բոլոր ֆրակցիաների միջև դեռևս համաձայնութիւն չկայ. մի բան, որ կարևոր է: Ա. Մխիթարյեան միանում է Զ. Զօրեանի առաջարկին: Սոցիալիստական բլոկի ներկայացուցիչները առաջարկում են ընտրութիւնները կատարել նոյն նիստում: Քւէարկութեամբ 24 ձայնով 23-ի դէմ որոշւում է կատարել լրացուցիչ ընտրութիւնները: Նախքան ընտրութիւններին անցնելը յայտարարւում է ընդմիջում:

Նիստը վերսկսւելով կատարւում է գործադիր մարմնի ընտրութիւն: Դաշնակցական ֆրակցիայի կողմից գործադիր մարմնի համար թեկնածու են առաջարկւում Ա. Միանսարեան և Գ. Տէր-Ստեփանեան, Հայ Ժողովրդական կուսակցութեան կողմից՝ Երւ. Տէր-Մինասեան, արևտրա-արդիւնաբերողների կողմից՝ Մ. Արամեան: Թերթիկներով կատարւած գաղտնի քւէարկութիւնը տւեց հետևեալ արդիւնքը. առաջարկւած բոլոր թեկնածուները ստացան 26-ական ընտրական ձայն, 15 ոչ ընտրական և ձեռնպահ: Այդպիսով բոլոր թեկնածուները համարւեցին ընտրւած:

Սոցիալիստական բլոկի առաջարկով դարձեալ ընդմիջում է յայտարարւում: Կէս ժամից աւել տևող ընդմիջումից յետոյ վերսկսւում է նիստը:

Նախագահն անցնելով օրակարգին՝ առաջարկում է ընտրել Խորհրդի գլխաւոր վերահսկիչ և ֆինանսական յանձնաժողով:

Զ. Զօրեան առաջարկում է նախկին գլխաւոր վերահսկիչ Յ. Խունունցին տալ վստահութեան քւէ և նրան խնդրել շարունակել իր աշխատանքները: Առաջարկին միանում են միւս ֆրակցիաները և Յ. Խունունցը վերընտրւում է Ազգային Խորհրդի գլխաւոր վերահսկիչ:

Սոցիալիստական բլոկի կողմից Ս. Փիրումեան յայտարարում է, թէ գործադիր մարմնի և նախագահութեան ընտրութիւնը պարզեց, որ Ազգային Խորհուրդը ունի ազգային-բուրժուական կազմ: Նկատի ունենալով այդ, ինչպէս և այն, որ այդպիսով կուսակցութիւնների միջև կայացած համաձայնութիւնը խախտած է՝ սոցիալիստական բլոկը յետագայում իրեն է վերապահում իր գործունէութիւնը եւ ազատութիւնը:

Այդ յայտարարութիւնից յետոյ բլոկի բոլոր անդամները հասարակութեան ծիծաղի ու բացականչութիւնների տակ հեռանում են նիստի դահլիճից:

Նախագահը յայտարարում է նիստը շարունակելու մասին, որ ընդունւում է բուռն ծափերով:

Հնչակեան ֆրակցիայի անդամ Ա. Բաբեանը Ս. Փիրումեանի ճառի մէջ վիրաւորանք է նկատում և բողոքում է, որ նախագահը նրա ճառը չէ ընդհատել:

Նախագահը ցաւ է յայտնում, որ ստեղծւած պայմանների հետևանքով հնարաւորութիւն չի ունեցել ընդհատելու ճառախօս Փիրումեանին: Ապա առաջարկում է ընտրել ֆինանսա-

կան յանձնաժողով: Ընտրւում են՝ Շարաֆեան (դաշն.), Ա. Աղաջանեան (հայ. ժող. կուսակց.) և [Ե.] Մայիլեան (առևտրա-արդիւնաբերողներից):

Ապա Զ. Զօրեան առաջարկում է նախագահութեանը, գործադիր մարմնին և ֆինանսական յանձնաժողովին յանձնարարել մշակել ֆինանսական դրութեան կարգաւորման նախագիծ և անհրաժեշտ քայլեր և դիմումներ անել ախալքալաքցիներին օգնութիւն կազմակերպելու համար:

Ընկ. Զօրեանի առաջարկն ընդունւում է: Ժամանակի ուշ լինելու պատճառով օրակարգի միւս խնդիրների քննութիւնը յետաձգւեց յաջորդ նիստին:

Զ.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ //
Աշխատաւոր, 2 հոկտեմբերի 1919, N 205:

N 123
«Բանվորի Ձայն»-ը՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 30-ի նիստի մասին

Սեպտեմբերի 30-ին, երեկոյեան ժամը 8-ին [Թիֆլիսի] Դումայի դահլիճում կայացաւ Ազգային խորհրդի 4-րդ նիստը: Օրակարգի մէջ դրւած էր ի միջի այլոց գործադիր մարմնի ընտրութեան խնդիրը, որ այս նիստի զբաղման գլխաւոր նիւթը և երկար վէճերի առարկայ դարձաւ, որովհետև դաշնակցականների կողմից առաջարկ եղաւ այդ խնդիրն էլի յետաձգել:

Սոցիալիստական բլոկը կտրուկ կերպով պահանջեց, որ այսօր և եթ լուծւի գործադիր մարմնի խնդիրը, չնայած ինքը չի մասնակցում այդ մարմնում, բայց անհրաժեշտ է գտնում, որ ատեղծւած մեծամասնութիւնը ընտրի այդ վարիչ մարմինը: Այսպիսով մեր ընկերները, որ հին գործադիր մարմնում դեռ աշխատում են, հնար կստանան հեռանալ:

Խնդիրը դրւում է քւէարկութեան և 24 ձայնով ընդդէմ 23-ի վճռւում է գործադիր մարմնի ընտրութեանն անցնել:

<…> Գործադիր մարմնի համար առաջարկւում է և ընտրւում դաշնակցութիւնից՝ Գ. Տէր-Ստեփանեանը և Ա. Միանսարեանը, իսկ Հայ ժողովրդական կուսակցութիւնից՝ [Մ.] Արամեան և Ե. Տէր-Մինասեան: Սոցիալիստական բլոկը բոլորին սև քւէ է տալիս:

Յայտարարւում է նորից ընդմիջում և սոցիալիստական բլոկը քննում է այն դրութիւնը, որ ստեղծւեց այժմեան Ազգային Խորհրդում շնորհիւ այն հանգամանքի, որ թէ՛ նախագահութիւնը և թէ՛ գործադիր մարմինը կազմւեց բուրժուական-նացիոնալիստական տարրերից:

Նիստի վերաբացումից յետոյ ընկեր Ս. Փիրումեանը բլոկի կողմից անում է մի յայտարարութիւն, որտեղ շեշտում է, որ սոցիալիստները մտան ազգային խորհուրդ այն մտադրութամբ, որ բուրժուական-նացիոնալիստական ռէակցիոն տարրերի կործանարար և հակաժողովրդական գործունէութեանը վերջ տան և իրենց ամբողջ ուժերը լարած հայ ժողովրդական մասսաների բարեկեցութեան համար աշխատեն: Շնորհիւ Ազգ. Խորհրդի այժմեան վարիչ մարմինների կազմի, սոցիալիստների համար ժողովրդի օգտին աշխատելու հնարաւորութիւն չկայ:

Դրա համար սոցիալիստական ֆրակցիաները քանդւած են յայտարարում այն իրաւաբանական հիմունքը, այսինքն կուսակցութիւնների փոխադարձ համաձայնութիւնը, որի արդյունքն է այս Ազգային Խորհուրդը և յետագայ քայլերի համար իրենց ազատ են զգում: <…>

Վ.

Տե՛ս Ազգային Խորհրդի 4-րդ նիստը //
Բանվորի Ձայն, 5 հոկտեմբերի 1919, N 4:

N 124

«Բորբա» օրաթերթը՝ Վրաստանի ՀԱԽ-ի գործկոմի վերընտրության և նրա նոր կազմի մասին

Сообщение газеты “Борьба” о переизбрании исполкома Армнацсовета Грузии и его новом составе

На заседании 30 сентября [1919г.] армян. национальнаго совета Грузии избран новый исполнит[ельный] комитет в составе: А. Миансарова, Г. Тер-Степаняна, М. Арамянца и Е. Тер-Минасяна. Главным контролером совета переизбран И. Хунунц. В финансовую комиссию вошли – Шарафян, [А.] Агаджанян и [Е.] Маилов. Социалистический блок: (обе фракции соц.-дем. и соц.-рев.) отказались выставить своих кандидатов в исп[олнительный] комитет.

Տե՛ս Хроника: В армянском национальном совете Грузии // Борьба, 2 октября 1919, N 223.

N 125

Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի աշխատակազմի ինքնալուծարման մասին

Վիրահայ Ազգ. Խորհուրդը ցրուած է և միջկուսակցական խորհրդակցութիւնը հետևեալն է յայտնում ֆրակցիաներին.

1. Ազգային խորհուրդը արձակւում է մինչև նոր ժողովրդական ընտրութեամբ կազմւած Խորհրդի գումարւելը:

2. Նախկին Ազգ. Խորհ. նախագահութիւնը և գործադիր մարմինը շարունակում են իրենց ընթացիկ աշխատանքները:

Խորհրդի ընտրությունների ժամանակ և եղանակի մասին կը հաղորդուի լրացուցիչ, ամենակարճ ժամանակամիջոցում[126]:

Տե՛ս Կարեւոր լուրեր //
Բանվորի Ձայն, 5 հոկտեմբերի 1919, N 4:

N 126
Վրաստանի ՀԱԽ-ի հայտարարությունը՝ ուսուցչական անձնակազմ վարձելու մասին

Վրաստանի հայոց Ազգային Խորհրդի դպրոցների համար հարկաւոր են ՈՒՍՈՒՑԻՉ-ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ:

Պայմաններն են՝ 15.000 ռուբլի տարեկան ռոճիկ ու բնակարան, վառելիք ու լուսաւորութիւն:

Խնդրատուները պէտք է դիմեն Ազգային Խորհրդի Դպրոցական Բաժինը (ամեն օր ժամը 10-3-ը) Սերգիևսկայա փողոց N 9 Վրաստանի Հ. Ազգ. Խորհրդի Դպրոց. Բաժնի վարիչ՝ Ե. Տէր-Մինասեան:

Տե՛ս Բանվորի Ձայն, 12 հոկտեմբերի 1919, N 5:

---

[126] 1920 թ. փետրվարին հայկական քաղաքական հոսանքները Վրաստանում դարձյալ համաձայնության եկան ՀԱԽ-ի վերակազմավորման հարցում, որի անդամների համար հատկացվում էր 30 աթոռ: Այս պարագայում ՀՅԴ-ն ունեցավ 10-ը, իսկ մյուս կուսակցություններից (ՎՍԴԲԿ, ՌՍԴԲԿ, հնչակյաններ, էսէռներ) յուրաքանչյուրը 5-ական տեղ: Տե՛ս Хроника // Борьба, 10 февраля 1920. Այս կառուցվածքը պահպանվեց մինչև ՀԱԽ-ի գոյության վերջին պահը՝ 1921 թ. փետրվարի 28-ը:

N 127

Վրաստանի ՀԱԽ-ի հայտարարությունը՝ դպրոցական տեսուչներ վարձելու մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդին ենթակայ հայոց դպրոցների համար հարկաւոր են շրջանային տեսուչներ բարձրագոյն կրթութեամբ:

Պայմանները - ամսական 3000 ռուբլի ռոճիկ և ճանապարհածախս:

Խնդիր պէտք է ներկայացնել Ազգային Խորհրդի դպրոցական բաժնին համառօտ կենսագրութեան և վկայականների հետ (ամեն օր ժամը 10-2-ը) Սերգիևսկայա փողոց N 9 Վրաստանի Հ. Ազգ. Խորհրդի Դպրոց. Բաժնի վարիչ՝ Ե. Տէր-Մինասեան:

Տե՛ս Բանվորի Ձայն, 12 հոկտեմբերի 1919, N 5:

N 128

Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի դպրոցական տեսուչներին նշանակելու մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի տնօրինութեան տակ եղած դպրոցների տեսուչներ են հրաւիրուել Վ. Թուրազեան և Մ. Ղարաբէկեան:

Տե՛ս Լրատու //
Աշխատաւոր, 18 հոկտեմբերի 1919, N 219:

N 129
Վրաստանի զավառների ու Լոռվա «չեզոք գոտու» հայալեզու դպրոցները

Չնայած, որ Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը մի քանի անգամ դիմել էր ժողովրդական գւարդիայի գլխաւոր շտաբին, Սղնախի դպրոցի շէնքը գւարդիականներից ազատելու մասին[127], և գլխաւոր շտաբի կարգադրութեան, որ դպրոցի շէնքը անմիջապէս յանձնվի ըստ պատկանելոյն, մինչ օրս էլ դպրոցը մնում է գւարդիականների ձեռքին: Այս առիթով Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը որոշեց նորից միջնորդել ժողովրդական գւարդիայի գլխաւոր շտաբի առջև, որ համապատասխան կարգադրութիւն արւի Սղնախի հայկական դպրոցի շէնքը անյապաղ գւարդիականներից ազատելու մասին:

Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը արդէն դպրոցներ է բացել Սագարէջօ, Մեծ-Դաղէթ, Հաղպատ, Սանահին, Այգեհատ, Մուխրան, Վաղա, Ալաստան, Ղըզըլ-Քիլիսա և Սաչխերի գիւղերում:

Տե՛ս Լրատու //
Աշխատաւոր, 30 հոկտեմբերի 1919, N 228:

N 130
Հաղորդագրություն՝ Բորժոմի հայկական դպրոցը Վրաստանի ՀԱԽ-ին ենթարկելու մասին

Բորժոմ, 17 հոկտեմբերի

Մի քանի անգամ հրաւիրելուց յետոյ այսօր, ամսիս 16-ին վերջապէս կայացաւ հասարակական ժողովը մօտ 50 անդամի հերկայութեամբ:

---

[127] Տե՛ս ՀԱԽ-ի գործկոմի 1919 թ. օգոստոսի 8-ի դիմումը (ՀԱԱ, ֆ. 441, ց.1, գ. 48, թ. 49):

Նախագահ ընտրուեց պ. Կ. Մուրադխանեան, քարտուղար աւ. ուս. Յովհ. Դաւթեան:

Այս ժողովի քննութեան առարկան էր ի շարս բազմաթիւ հարցերի նաև դպրոցի խնդիրը: Դրսում բազմաթիւ ասէկոսներից ու գաղտնի որոգայթներ լարելուց յետոյ, այս ժողովին հնարաւորութիւն ստացան հակառակորդներն ազատօրէն արտայայտուելու: Աւագ ուս. պ. Յ. Դաւթեանի զեկուցումը զգայնացած լսելուց յետոյ, որ առաջարկում էր դպրոցը Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդին ենթարկել, վերածել ժողովրդականի և կրօնի դասաւանդութիւնը վերածել – ջուխտ ու կէնտ կղերամոլները գլուխ ունենալով տեղիս Վ. ք. Վարդանեանին, սկսում են արշաւանք զեկուցանողի և առաջարկած կարծիքի դէմ: <…>

Եւ ի վերջոյ երբ հետևեալ բանաձևը քւեարկութեան դրուեց, անցաւ համարեա միաձայն (երկուսի ձեռնպահութեամբ միայն):

«Լսելով աւ. ուս. զեկուցումը, ժողովն որոշում է, այսուհետև դպրոցին եկեղեցականի տեղ ժողովրդական անունը տալ, վերացնել կրօնի դասաւանդութիւնը և ամբողջովին ենթարկուել Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդին, այլևս չճանաչելով հոգևոր իշխանութեան կարգադրութիւնները դպրոցական գործերում»: <…>

Ժան-Դաւ

Տե՛ս Գաւառական կեանք. հասարակական ժողովը Բորժոմում //Բանվորի Ձայն, 27 հոկտեմբերի 1919, N 7:

N 131

Հաղորդագրություն՝ ջավախահայությանն օգնելու նպատակով՝ Վրաստանի ՀԱԽ-ի արած միջնորդությունների մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի գործադիր մարմինը քննելով ախալքալաքցիների օգնութիւն հասցնելու խնդիրը որոշել է սերմացուի համար դիմել Հայաստանի կառավարութեան աջակցութեանը, հացի և հագուստի համար Ամերիկեան կոմիտէին, իսկ գիւղատնտեսական գործիքների և լծկանների համար Հայոց Գիւղատնտեսական ընկ. հետ միասին դիմել վրաց կառավարութեան, որ ախալքալաքցիներին տրւի զեմստուային ինքնավարութիւններին յանձնւած երկրագործական գործիքներից: Ամերիկեան Կոմիտէի կարգադրութեամբ արդէն սկսւել է Ախալքալաք ուղարկւել 150 հազ. փութ ալիւր:

Ախալքալաքի դպրոցները բանալու նախնական ծախսերի համար Հայոց Ազգային Խորհուրդը յատկացրել է 10000 ռ.:

Տե՛ս Վրաստան՝ օգնութիւն ախալքալաքցիներին /
Ախալքալաքի դպրոցների համար //
Աշխատաւոր, 2 նոյեմբերի 1919, N 231:

N 132

Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի նախագահության որոշման՝ Կովկասի հայոց բարեգործական ընկերությունն իրեն ենթարկելու մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի նախագահութիւնը քննելով մի խումբ ժողովականների բողոքը Կովկ. Հայոց բարեգործ. ընկ. նոր խորհրդի ընտրութիւնների դէմ, որոշել է

խորհրդի ներկայ դրութիւնը թողնել անփոփոխ և յատուկ յանձնաժողովի քննութեան յանձնել բողոքը. յանձնաժողովին տալով երեք օր ժամանակ վճիռ կայացնելու համար: Յանձնաժողովի անդամներն են՝ Կ. Ղազազեան, Ս. Փիրումեան, [Ն.] Թարխանեան և Պ. Դոլուխանեան: Բացի այս նախագահութիւնը որոշել է բարեգործական ընկ. համարել Ազգային Խորհրդին ենթակայ:

Տե՛ս Լրատու //
Աշխատաւոր, 9 նոյեմբերի 1919, N 237:

N 133
Հաղորդագրություն՝ նոր դպրոցներ հիմնադրելու և ֆինանսավորելու Վրաստանի ՀԱԽ-ի որոշման մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը որոշել է Ախալցխայի քաղաքային հայկական դպրոցին նպաստի հաշուին տալ 20000 ռ. նախնական ծախսերի համար, իսկ Թիֆլիսի Շամքորեցոց դպրոցին՝ 5000 ռ.

Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը որոշել է դեկտեմբերի 1-ից բոլոր վրացախօս հայկական գիւղերում բաց անել դպրոցներ:

Տե՛ս Լրատու //
Աշխատաւոր, 13 նոյեմբերի 1919, N 240:

N 134

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի անդամներին երկրից վտարելու կապակցությամբ՝ վրաց վարչապետին հղած բողոքի մասին (1919 թ., նոյեմբեր)

Ներքին գործերի նախարարութեան նոյեմբերի 12-ի կարգադրութեան համաձայն՝ Վրաստանի սահմանադրութեան համաձայն՝ Վրաստանի սահմաններից արտաքսուեցին Հայոց Ազգային Խորհրդի անդամներ՝ Արշակ Զոհրաբեան, Սիմոնիկ Փիրումեան, Նիկոլայ Թարխանեան և Իսահակ Տէր-Ներսէսեան: Վրաստանի Հայոց Ազգ. Խորհուրդն պարտքն ու իրաւունքն է համարում պարզել, թէ ի՞նչ պատճառով յիշեալներն այդպիսի պատժի ենթարկուեցին: Ազգ. Խորհրդի պատուիրակութիւնը մի քանի անգամ փորձեց, ներքին գործերի պարոն նախարարի հետ անմիջական բանակցութիւններով, պարզել այդ հարցերը, բայց դժբախտաբար այդ բանակցութիւնները չկայացան, քանի որ պարոն նախարարն ազատ ժամանակ չունէր:

Միակ նիւթը, որ կայ Ազգ. խորհրդի տրամադրութեան տակ, – դա բնագիրն է այն գրութեան, որ թելադրուել է և ստորագրել է տուել Խորհրդի արտաքսուող անդամներին, և որ չի կարող պատասխանել յուզող հարցերին. ընդհակառակը՝ նա միայն նոր հարցեր է յարուցանում: Աւելորդ չենք համարում յիշատակել այդ գրութեան բնագիրը. «Ստորագրեալս, Знамя Революціи թերթի աշխատակից Իսահակ Տէր-Ներսէսեանս, այս ստորագրութիւնն եմ տալիս ներքին գործերի նախարարութեան կից Յատուկ Զօրախմբի պարոն պետին, որ այսօր ես պարտաւորուում եմ 24 ժամւայ ընթացքում, համաձայն ներքին գործերի նախարարի օգնականի սույն նոյեմբերի 12-ի որոշ-

ման, հեռանայ վրաց դեմոկրատական հանրապետութեան սահմաններից. հակառակ դէպքում կը ձերբակալուեմ և կարտաքսուեմ վարչական միջոցներով: Այդ հաստատելու համար՝ ստորագրում եմ սեփական ձեռքով»:

Ինչպէս երևում է, Ազգ. Խորհրդի յիշեալ անդամներն արտաքսուում են առանց պատճառները պարզելու, վարչական կարգով: Ազգ. Խորհուրդն անթոյլատրելի է համարում վարչական հալածանքների կիրառման վերականգնումը: Սոցիալիստական Վրաստանում պէտք է իշխէ ազատ դատարանի գերակայութեան սկզբունքը:

Եթէ յիշեալ անձերը որևէ յանցանք են գործել, այդ դէպքում Ազգ. Խորհուրդը, թանգ գնահատելով իր արժանապատուութիւնը, ամենքից աւելի շահագրգռուած է իր կողմից հեռացնելու յանցաւոր կամ ոճրապարտ տարրերին: Բայց դրա համար անհրաժեշտ է, որ հաստատուի յանցանքի փաստը, որ յանցանքն որակուի՝ հանրապետութեան մէջ գործող օրէնքների հիման վրայ, և որ նշանակուի համապատասխան պատիժ, այլ խօսքով՝ պէտք է գործէ դատական ապպարատը, և ոչ թէ վարչական հայեցողութիւնը:

Եւ ապա – արտաքսուածներից՝ Արշակ Զոհրաբեանը և Նիկոլայ Թարխանեանը հանդիսանում են Վրաստանի քաղաքացիներ (հպատակներ): Վրաստանում, ինչպէս և ամբողջ երկրագնդում գործող օրէնսդրութիւնների հիման վրայ, սեփական հպատակը չի կարող բռնի արտաքսուել իր հայրենիքի սահմաններից, ինչպիսի ոճիր էլ որ գործաց լինի:

Բոլոր վերոյիշեալների հիման վրայ՝ Ազգ. Խորհուրդը վճռական բողոք է յայտնում՝

1)Ազգ. Խորհրդի անդամներ Արշակ Զոհրաբեանի, Սիմոնիկ Փիրումեանի, Իսահակ Տէր-Ներսէսեանի և Նիկոլայ Թարխանեանի նկատմամբ վարչական հալածանքների դէմ,

2)Գործադրութեան դէմ այնպիսի պատժի, որ չի նախատեսւած Վրաստանի, ինչպէս և ամբողջ աշխարհի օրէնսդրութեամբ–սեփական հպատակին հայրենիքի սահմաններից արտաքսելու դէմ:

Ազգ. Խորհուրդը յոյս ունի, որ Վրաստանի կառավարութիւնը կը համաձայնւի նրա բողոքի հիմքի հետ և Ազգ. խորհրդի այդ տուժած անդամներին կը վերադարձնէ իրենց պարտականութիւնների կատարմանը:

Ազգ. Խորհրդի նախագահ՝ Բ. Թոփչեան

Գործադիր Կոմիտէի նախագահ՝ Ա. Երզնկեան

Ի. տ. քարտուղարի՝ Ս. Հովհաննիսեան

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգ. Խորհրդի բողոքագիրը Վրաստանի կառավարութեան նախագահին // Աշխատաւոր, 20 նոյեմբերի 1919, N 246:

N 135

Հաղորդագրություն՝ վարչապետի պաշտոնակատար Ե. Պ. Գեգեճկորու և ՀԱԽ-ի լիազորների 1919 թ. նոյեմբերի 22-ի աշխատանքային հանդիպման մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը որոշել է միջնորդել վրաց կառավարութեան առջև, որ Թիֆլիսից օտար տարրերին արտաքսելու որոշումը[128] վերացի, որովհետև հայ գաղ-

[128] Թիֆլիսի քաղաքային ավագանին (սակրեբուլո), որի աթոռների շուրջ 87 տոկոսը պատկանում էր վրացիներին, վճռել էր «օտար տարրերին» քաղաքից հեռացնելու մասին: Սույն որոշումը մեծ իրարանցում առաջացրեց մայ-

թականութիւնը հետզհետե արդէն հեռանում է Թիֆլիսից, իսկ ազգաբնակութեան համար որոշման իրագործումը ստեղծել է ծանր կացութիւն:

Երեկ Ազգային Խորհրդի նախագահ ընկ. Բ. Թոփչեանը և գործ. մարմնի նախ. ընկ. Ա. Երզնկեանը տեսակցութիւն ունեցան կառավարութեան նախագահի պաշտօնակատար Ե. Գեգեճկորու հետ մի շարք խնդիրների առթիւ: Թիֆլիսից օտար տարրերի հեռացնելու մասին արուած դիմումին Ե. Գեգեճկորին խոստացել է հսկել, որպէսզի ապօրինութիւններ տեղի չունենան:

Ազգային Խորհուրդը մտադիր է իր ներկայացուցիչներին ուղարկել կենտրոնական ու թաղային կոլլեգիաները, որ պիտի հսկեն այդ գործի վրայ և այդ ուղղութեամբ արդէն քայլերի է ձեռնարկել:

Տե՛ս Լրատու //

Աշխատաւոր, 23 նոյեմբերի 1919, N 249:

բաքաղաքի բազմազգ բնակչության միջավայրում: Իշխանությունները նախատեսել էին շուրջ 400 հազ. թվաքանակ ունեցող քաղաքը ազատել նրա 1/4 բնակիչներից: Մամուլը հաղորդում էր, որ «օտար տարրերը Թիֆլիսից արտաքսելու պարտադիր որոշման հրատարակութեան առիթով ամեն օր բազմաթիւ քաղաքացիներ դիմում են Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդին բացատրութեան համար: Պարտադիր որոշումը մեծ յուզում է առաջ բերել ազգաբնակութեան մէջ»: Տե՛ս Լրատու // Աշխատաւոր, 20. 11. 1919: Հիշյալ խնդրին վերաբերող «Օտար տարրերը Թիֆլիսից հեռացնելու մասին (կառավարական հաղորդագրութիւն)», «Թիֆլիսը ազգայնացւում է» և «Տագնապը չի վերացւում» խորագրով նյութերը տե՛ս նույն օրաթերթի 1919 թ. նոյեմբերի 14, 18 և 19 համարներում:

N 136

Հաղորդագրություն՝ Վրաստանի ՆԳ նախարարի և ՀԱԽ-ի լիազորների 1919 թ. նոյեմբերի 24-ի աշխատանքային հանդիպման մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի նախագահ Բ. Թոփ-չեան և գործադիր կոմիտէի նախագահ Ա. Երզնկեան նոյեմբե-րի 24-ին այցելեցին ներքին գործերի մինիստր Ն. Ռամիշուիլին և ունեցան երկարատև զրոյց Թիֆլիսից օտար տարրերին հե-ռացնելու, Ախալքալաքի գաղթականների զօրակոչը յետաձգե-լու և հայ-վրացական կոնֆլիկտին մասնակցելու մէջ մե-ղադրուող Բորչալուի գաւ. հայ գիւղացիներին ամնիստիա տա-լու մասին: Ներքին գործերի մինիստրը Ազգային Խորհրդի ներկայացուցիչներին խոստացաւ պատասխանել վերոյիշեալ գործերի հետ ծանօթանալուց յետոյ:

Տե՛ս Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչները
Ն. Վ. Ռամիշուիլու մօտ //Աշխատաւոր,
26 նոյեմբերի 1919, N 251:

N 137

Հաղորդագրություն՝ Ջավախքի հայկական դպրոցներին նպաստ հատկացնելու ՀԱԽ- ի որոշման մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը որոշել է Ախալ-քալաքի տեղական և գաւառական դպրոցներին տրուելիք նպաստի հաշուին բաց թողնել 50000 ռուբլի: Նոյն խորհուրդը որոշել է Օնիում (Քութայիսի նահ.) բացանել հայկական դպրոց:

Տե՛ս Դպրոցական կեանք //
Աշխատաւոր, 28 նոյեմբերի 1919, N 253:

N 138

Հաղորդագրություն՝ ՀԱԽ-ի միջոցներով Ջավախքում հայկական դպրոցներ վերաբացելու մասին

Սուլտա, 10 դեկտ[եմբերի]

Նոյեմբերի 28-ին մեր գիւղը ժամանեց շրջանային տեսուչ պ. Մ. Ղարաբէկեանը: Վիրահայ Ազգային Խորհրդի հրահանգով և նոյն խորհրդի դրամական միջոցներով Սուլտայում վերաբացուեց դպրոցը, մի ուսուցչով և 50 աշակերտով: Ինչպէս պ. տեսուչը տեղեկացրեց, գաւառումս բացւում են այնպիսի դպրոցներ Վիրահայ Ազգային Խորհրդի ջանքերով 9 հատ, հետևեալ գիւղերում. Սուլտա, Կարզախ, Վաչեան, Մեծ գեօնդուրա, Սաթխա, Տիլիսկա, Արակովա, Գանձա և Ալաստան: <…>

Տե՛ս Դպրոցական՝ Ջաւախքում //
Աշխատաւոր, 24 դեկտեմբերի 1919, N 273:

N 139

Հաղորդագրություն՝ Վրաստանի Սահմանադիր ժողովի ղեկավարության առջև ՀԱԽ-ի նախագահ Բ. Թոփչյանի միջնորդության՝ հայազգի կալանավորների պատիժը թեթևացնելու մասին

Сообщение о посредничестве председателя Армнацсовета Б. Топчяна перед руководством Учредительного собрания Грузии об облегчении участи арестантов-армян

Председатель армянскаго национальнаго совета [Б.] Топчян посетил вчера старшего товарища председателя Учредительного Собрания А. С. Ломтатидзе, с которым имел про-

должительную беседу по вопросу смягчения кары лицам обвиняемым в связи с армяно-грузинским конфликтом.

Տե՛ս Просьба о смягчении кары //
Борьба, 24 января1920, N 17.

N 140

Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ի որոշման՝ իրեն ենթակա դպրոցներում ուսուցիչ-մանկավարժների նյութական կացությունը բարելավելու մասին

Сообщение о решении Армнацсовета Грузии об улучшении в подчиненных ему школах материального положения учителей-педагогов

Армянский национальный совет постановил с 1 января [1920г.] уравнять в окладах преподавателей в школах совета с преподавателями государственных учебных заведений.

Տե՛ս Хроника: Уравнение окладов //
Борьба, 22 января 1920, N 15.

N 141

ՀԱԽ-ի կոչը Վրաստանի հայ ազգաբնակչությանը՝ Գորիի երկրաշարժի կապակցությամբ

ԿՈՉ
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ

Փետրվարի 19-ին և 20-ին անսպասելի երկրաշարժը գրեթէ հիմնայատակ արեց Գորի քաղաքը իր շրջակայ գիւղերով: Զմռան այս սոսկալի սառնամանիքին հազարաւոր ընտանիքներ, զրկւած ամեն բանից, քաղցած, մերկ ու բոկոտն, մնացել են բաց երկնքի տակ:

Մեր հարազատները տնաւեր ու անօգնական իրենց միակ յոյսը դրել են մեզ վրայ: Ամեն մի գիտակից ու սրտացաւ քաղաքացու պարտականութիւնն է օգնութեան ձեռք մեկնելու իր տառապեալ եղբորը:

Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը, միանգամայն վստահ լինելով Վրաստանի հայութեան վրայ, սրանով կոչ է անում ամենքին լայն չափով օգնութեան գալու գորեցիներին: Թող ամեն մէկը իր լուման տայ աւերուած գորեցուն: Թող ամեն մէկը մի աղիւս բերէ քանդուած Գորու վերաշինութեան համար:

Օգնեցէք, ինչով կարողեք: Դրամով, հագուստով, ոտնամանով, տնային իրերով, ամանեղէնով և այլ պարագաներով:

Ամեն ինչ Գորու համար:

Թող այս լինի մեր օրւայ լոզունգը:

Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ

Նւերները ընդունում են Ազգային խորհրդում առաւ. ժամը 10-3-ը:

Սերգիևսկայա փողոց N 9

1920 թ. 25 փետրվարի

Թիֆլիս

Տե՛ս Բանվորի Ձայն, 29 փետրվարի 1920, N 9:

N 142

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. փետրվարի 24-ի նիստի մասին

Երեքշաբթի, փետրւարի 24-ին Ազգային Խորհրդի շէնքում տեղի ունեցաւ նորակազմ Խորհրդի երկրորդ նիստը: Կարդացւեցին օրակարգի խնդիրները, որոնց մէջ առաջին տեղն

էին բռնում Ազգային Խորհրդի նախագահութեան և Գործադիր Մարմնի ընտրութիւնները: <…>

Արդէն մի ամսից աւելի է, որ Ազգային Խորհուրդը վերակազմուելու համար բանակցութիւններ են վարւում, որոնց ժամանակ [ՎՍԴԲԿ] Հայկական Սեկցիայի ներկայացուցիչները միշտ այն միտքն են պաշտպանել, որ կոնտրոլի տեղը պիտի վերապահուի իրենց, իսկ նախագահութեան և Գործադիր Մարմնի մէջ տեղ ունենալուց Հայկական Սեկցիան հրաժարվում է: <…>

Նիստի բացումից յետոյ կարդացուեց և հաստատուեց անցեալ ժողովի արձանագրութիւնը, ապա ժողովը անցաւ նախագահութեան ընտրութեանը: Բոլոր ֆրակցիաների միաձայն քւէով Ազգային Խորհրդի նախագահ ընտրվեց Դաշնակցութեան թեկնածու պ. Բ. Թոփչեանը, իսկ սոց.-յեղափոխականների ֆրակցիայի ձեռնպահութեամբ Ազգ. Խորհրդի քարտուղար ընտրուեց Ռ.Ս.Դ.Բ.Կ. թեկնածու ընկեր Մ. Դարբինեանը:

Գործադիր Մարմնի նախագահութեան համար առաջարկուեց Ռ.Ս.Դ.Բ.Կ. կողմից ընկեր Ա. Երզնկեանի թեկնածութիւնը, սոց.-յեղափոխականների կողմից Գործադիր Մարմնի ֆինանսական մասի վարիչի համար առաջարկուեց ընկեր Ա. Ստամբոլցեանի թեկնածութիւնը, Դաշնակցութիւնը դրեց պ. Ա. Միանսարեանի թեկնածութիւնը խնամատարական բաժնի վարիչի համար, իսկ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը դպրոցական վարիչի համար պ. Ի. Յարութիւնեանի թեկնածութիւնը: Առաջարկուած բոլոր թեկնածուները միաձայնութեամբ ընտրուեցին:

Ապա ժողովն անցաւ կոնտրոլի և փոխ-նախագահների ընտրութեան խնդրին: <…>: Ընդմիջում յայտարարուեց, որի ժամանակ [ՎՍԴԲԿ] Հայկական Սեկցիան պարզ և որոշ յայ-

տարարեց ֆրակցիաների ներկայացուցիչներին, որ ինքը փոխ-նախագահների երկու տեղը թողնում է սոց.-յեղափոխականներին և Հայ Ժողովրդական Կուսակցութեանը, իսկ առաջարկում, որ կոնտրոլի տեղը տրւի իրեն: <…>

Երկար բանակցութիւնները ցոյց տւեցին, որ Դաշնակցութիւնը ուղղակի չի ուզում կոնտրոլի տեղը վերապահել [ՎՍԴԲԿ] Հայկական Սեկցիային, իսկ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնն էլ տատանւում է թեկնածուին ծանօթանալու պատրւակով, իսկ երկուսը միաբերան առաջարկում են խնդիրը յետաձգել միւս նիստին:

Վերջ ի վերջոյ [ՎՍԴԲԿ] Հայկական Սեկցիային առաջարկում է նիստը փակել և հետևեալ նիստին առաջին հերթին դնել այդ խնդիրը, որպէսզի այդ երկու կուսակցութիւնները «մտածելու» ժամանակ ունենան և զրկւեն պատրւակներին ապաստանելու հնարաւորութիւնից: Առաջարկը ընդունւում է և նիստը փակւում է:

Արտակարգ կերպով քննւում է Գորու երկրաշարժից վնասւածների հարցը: Որոշւում է յանձնարարել Գործադիր Մարմնին, որ նա կոչով դիմէ հայ հասարակութեան, ապա 50 հազար ռուբլի դրւում է նրա տրամադրութեան տակ աղէտեալներին օգնութեան հասնելու համար, նաև որոշւում է պահել մինչև 20 մահճակալ Գորու հիւանդ աւէտեալների համար:

Վ.

Տե՛ս Նորակազմ Վիրահայ Ազգային Խորհրդի Բ. նիստը // Բանվորի Ձայն, 29 փետրվարի 1920, N 9:

N 143

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. մարտի 1-ի նիստի մասին

Մարտի 1-ի նիստում Վիրահայ Ազգային Խորհրդը համարեա թէ աւարտեց Նախագահութեան, Գործադիր Մարմնի և գլխաւոր վերահսկիչի ընտրութիւնը, ասում ենք համարեա թէ, որովհետև դեռ նախագահի երկու օգնականի ընտրութիւնը չի կատարւած, թէև սկզբունքային համաձայնութեան եկել են բոլոր ֆրակցիաները, որ օգնականների երկու տեղերը յատկացուեն Սոցիալիստ Յեղափոխականներին և Հայ Ժողովրդական Կուսակցութեանը: Կարելի է ասել, որ այդ խնդիրը հարթւած է և նոր բարդութիւնների և երկար բանակցութիւնների առիթ չի լինի: Գլխաւոր վերահսկիչի պաշտօնի համար միաձայն ընտրւեց ընկեր Ալէքսան Մելիք-Աղաջանեան, որ պերսոնալ ձևով առաջարկւել էր Վ.Ս.Դ.Բ. Կուսակցութեան Հայկական Սեկցիայի կողմից: <…>

Շնորհիւ պարիտետի սկզբունքին Ազգ. Խորհրդում ստեղծւած է հաւասարակշռութիւն մի կողմից սոցիալիստական հատւածի և միւս կողմից Դաշնակցութեան և Հայ Ժողովրդական Կուսակցութեան միջև <…>: Յանուն պարիտետի և հաւասարակշռութեան իւրաքանչիւր ֆրակցիա աշխատել է և աշխատում է իր կուսակիցների համար այնքան տեղ ու պաշտօն ստանալ, ինչքան ունեն միւսները: Այս չարաբաստիկ սկզբունքը այնքան է ամրապնդւել ֆրակցիաների մէջ մի տխուր տրադիցիայի շնորհիւ, որ այլ ևս հանդուրժել անկարելի է և վարկաբեկիչ է միանգամայն յատկապէս սոցիալիստական հատւածի համար:

Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդում //
Բանվորի Ձայն, 7 մարտի 1920, N 10:

N 144

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. մարտի 6-ի և 9-ի նիստերի մասին

I.

Շաբաթ, մարտի 6-ին, կայացած յատուկ նիստում Վր. Հ. Ազգ. Խորհ. զբաղուեց Վրաստանի կառավարութեան ներկայացնելիք ազգային փոքրամասնութիւններին վերաբերեալ նախագծի քննութեամբ:

Նախագահում էր ընկ. Բ. Թոփչեանը:

Նախագահի զեկուցումից երևում է, որ Վրաստանի կոնստիտուցիա մշակող յանձնաժողովը դեռևս համարեա ոչ մի քայլ չի արել այդ խնդրի վերաբերեալ: Ուղիղ է, յանձանաժողովը ստացել է առ այժմ 3 պրոէկտ, բայց դրանք թերի ու անմշակ են եւ ոչինչ չեն խոստանում ազգային փոքրամասնութիւններին: Վրաստանի սահմանադրութիւնը մշակող յանձնաժողովը հրաւիրել էր ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչներին լսելու նրանց կարծիքները: Երեքշաբթի[129] պէտք է ներկայացնել մի մշակւած նախագիծ և ահա սրա համար է, որ կարիք զգացւեց Վ. Հ. Ազգ. Խ.-ի արտակարգ նիստ գումարելու: Վեց ամիս աւելի է, ինչ աշխատում է նախագիծը մշակող մեր յանձնաժողովը, բայց մինչև այսօր առիթ և յարմարութիւն չենք ունեցած ներկայացնելու Վր. Հ. Ա. խորհրդին այդ նախագիծը ի քննութիւն:

Այնուհետև նախագահը խօսք է տալիս ընկ. [Ռ.] Բէկզադեանին, որը զեկուցում է յանձնաժողովի աշխատանքների մասին:

---

[129] Իմա՝ 1920 թ. մարտի 9-ին:

Ընկ. Բէկզադեան. - Աղքատ է ազգային փոքրամասնութիւններին վերաբերեալ գրականութիւնը, մինչ նրա նիւթը շատ բարդ է և շատ դժւար է ժողովում իր ամբողջ ծաւալով ցուցադրել և քննել:

Չունենալով ոչ մի յարմար նիւթ, ստիպւած ենք մշակելու ինքներս, որպէսզի ազգային փոքրամասնութիւնների խնդիրը մի փոքր շարժւի:

Մենք խնդրին մօտեցանք գործնական կողմից և չարծարծեցինք այնպիսի խնդիրներ, որոնք կարող են աւելորդ թիւրիմացութիւններ յարուցել, կամ դանդաղեցնել գործը: Յանձնաժողովը ներկայացնում է մեզ երկու պրոէկտ, մէկը ընդհանուր է և վերաբերում է առհասարակ Վրաստանի սահմաններում ապրող բոլոր ազգային փոքրամասնութիւններին, իսկ երկրորդը յատուկ, սոսկ հայկական: Առաջինը իմս է, իսկ երկրորդը ընկ. [Ա.] Պապովեանինը:

Երկրորդ պրոէկտի էութիւնը նրանում է, որ հայերը Վրաստանում կազմում են մի միութիւն և ունին ազգային ինքնավարութիւն. նրանք օգտւում են բացի Վաստանի քաղաքացիների իրաւունքներից, նաև այն յատուկ իրաւունքներից, որ առհասարակ հայութիւնը վայելելու է միջազգային օրէնքներից. լեզուն ապահովւում է օրէնքով, հայերը վարում են իրենց ներքին կուլտուրական գործերը, օգտւում են պետական համապատասխան բիւջէից. հայկ. ինքնավարութիւնը իրաւունք ունի շարժական և անշարժ կայքեր ունենալու, որոնք համարւելու են ազգի սեփականութիւն, այնտեղ, որտեղ ոչ-վրացիները կէս մասն են կազմում, այդպիսի շրջանները համարւում են խառը և պաշտօնեաները պարտաւոր են հայերէն գիտենալ և ենթակայ են հայկական ինքնավարութեան կոնտրոլի, ազգ. ինքնավարութիւնը իրաւունք ունի տուրքեր հաւաքելու, մի-

նիստրական կազմի մէջ մտնում է հայկական գործերը վարող հայազգի մի մինիստր: Սա է ընկ. [Ա.] Պապովեանի նախագծի էութիւնը:

Միւսը աւելի թէորիտիքական է և շոշոփում է ազգերի հաւասարութիւնն և ազգութիւնը բնորոշ խնդիրները: Ըստ պրոէկտի անհատն է ինքը որոշում թէ ինչ ազգութեան է պատկանում ինքը, մինչև 16 տարեկան հասակը պատկանում է ծնողների ազգութեան, խօսւում է լեզուների հաւասարութեան և պլեբիսցիտի մասին, ցոյց է տալիս, թէ որոնք են խառը և մեծամասնութեան շրջանները ու պահանջ է դրւում բոլոր ազգային փոքրամասնութիւնների համար ունենալ ստատսեկրետար:

Ընկեր Բէկզադեանի զեկուցումից յետոյ Ազգ. Խորհուրդն անցնում է երկու պրոէկտների քննութեանն ըստ էութեանը: Մի քանի կէտերի դէմ արւում են լուրջ առարկութիւններ ընկեր Ա. Երզնկեանի կողմից, որն ընդհանրապէս այն տեսակէտն է պաշտպանում, որ ազգային փոքրամասնութիւնների ինքնավարութիւնները այն ոգով պիտի կազմւած լինեն, որ չը հակասեն պետական ամբողջութեան ընդհանուր սկզբունքներին և միայն լրացնեն ու ամբողջացնեն նրան: Ապա որոշ առարկութիւններ են անում պ. [Գ.] Մելիք-Ղարագեօզեանը և ընկեր Ա. Ստամբոլցեանը, որից յետոյ անցնում են յօդւածային ընթերցումին: Իբրև հիմք ընդունւում է ընկեր Ա. Պապովեանի մշակած պրոէկտը, որ նպատակ ունի պարզելու յատկապէս հայկական պահանջները:

II.

Մարտի 9-ին կայացաւ Վր. Հայոց Ազգ. Խորհրդի հերթական նիստը: Կարդացւեցին և հաստատւեցին անցեալ ժողովների արձանագրութիւնները, որից յետոյ խորհուրդն անցաւ օրակարգի խնդիրների քննութեանը:

Օրակարգի առաջին խնդիրն էր՝ Գանձակի դէպքերը, որի մասին զեկուցում տուեց պ. Բ. Թոփչեանը: Գանձակից եկած յատուկ պատուիրակութիւնը հաստատում է այն սարսափելի վիճակը, որի մէջ գտնուում է այժմ Գանձակի և շրջակայ գիւղերի հայ ազգաբնակութիւնը: <…>

Օրակարգի երկրորդ խնդիրն էր Վր. Ազգ. Խորհրդի դպրոցական քաղաքականութիւնը, որի մասին զեկուցեծ պ. Իս. Յարութիւնեանը և որից յետոյ կարևոր լրացումներ արեց ընկեր Ա. Երզնկեանը:

Մինչև այժմ հայկական դպրոցները կառավարւում են ինքնավար կերպով Ազգ. խորհրդի կողմից, որովհետև դեռ Վրաստանի հանրապետութիւնը չունի այդ մասին որոշ սահմանադրութիւն:

Միայն այս տարւայ ընթացքում տեղի են ունեցել գաւառի զեմստուային ինքնավարութիւնների կողմից մէկ-երկու դէպք, երբ նրանք միջամտել են հայ դպրոցների ներքին գործերին: Այդ մասին Սահմանադիր ժողովին զեկուցւել է, որը պաշտպանել է հայ դպրոցի իրաւունքը, բայց ինչ-ինչ պատճառներով դեռ ևս կատարւած սխալները չեն ուղղւած: Լուսաւորութեան մինիստրը վերջերս առաջարկել է Գործ. Մարմ., որ նա նոր դպրոցներ բանալիս ստանայ կառավարութեան կամ տեղային ինքնավարութիւնների համաձայնութիւնը, վրացախօս հայերի մէջ դասաւանդութիւնը վրացերէն լեզւով կատարել տայ մինչև որ երեխաները կը տիրապետեն հայերէն լեզւին, ապա կրօնի դասաւանդութիւնը վերացնի հայկական դպրոցներից: Մինիստրը նշանակել է նաև կառավարական վերաստուգիչ, որ այցելելու է հայկական դպրոցները և ունենալու է ինֆորմացիոն իրաւունք և բոլորովին չի միջամտելու հայկական դպրոցական կեանքի անցուդարձին:

Այս բոլորին Գործադիր Մարմինը պատասխանել է, որ ինքը կանգնած է հայկական դպրոցների ինքնավարութեան պաշտպանելու տեսակէտի վրայ և խնդրել ժամանակ այդ հարցերին պատասխանելու համար, երբ հնար կը լինի լսելու նորակազմ Ազգ. Խորհրդի կարծիքը:

Ժողովը քննելով այս զեկուցումը գտաւ, որ ընդհանրապէս Գործադիր Մարմինը ճիշտ տեսակէտի վրայ է կանգնած և պիտի շարունակել պաշտպանել հայկական դպրոցների ինքնավար իրաւունքը: Բայց ընդգծուեց նաև, որոշ թերացումներ նկատւում է և նրա գործունէութեան մէջ: Օրինակ՝ հակառակ Ազգ. Խորհ. կտրուկ որոշման նա մինչև այժմ չի իրագործել կրօնի վերացումը մեր դպրոցներից: [ՎՍԴԲԿ] Հայկական Սեկցիան առաջարկեց ընդունել մինիստրի առաջարկը կառավարական վերաստուգիչի մասին ինֆորմացիոն իրաւունքով, նաև կրօնի վերացման մասին, որովհետև այդ կէտերը չեն հակասում մեր դպրոցների ինքնավարութեան, իսկ վերջինը ընդունուած է Ազգ. Խորհրդի կողմից, բայց ապօրինի կերպով չի իրագործուել: Առաջարկը չընդունուեց:

Ժամանակը ուշ լինելու պատճառով նիստը փակուեց և օրակարգի միւս երկու խնդիրները յետաձգուեցին ուրբաթ[130] օրուայ արտակարգ նիստին: Այդ խնդիրներն էին պ. Ա. Միանսարեանի զեկուցումը իր Հայաստան գնալու առաքելութեան մասին և ընկեր Խ. Աւդալբէկեանի զեկուցումը Սուխումի Հայոց Ազգ. խորհրդի հրաժարականի մասին:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգ[ային] Խորհուրդ //
Բանվորի Ձայն, 14 մարտի 1920, N 11:

---

[130] Իմա՝ 1920 թ. մարտի 19-ին:

N 145

Վրաստանի ՀԱԽ-ի թեզերը՝ վիրահայերի ինքնակառավարում և մշակութային ինքնավարություն հիմնելու մասին[131]

1. Հայերը Վրաստանում սահմաններում կազմում են Հայկական Ազգային Ինքնավարութիւն:

2. Ազգային ինքնավարութիւնը իրականացուում է Ազգային ժողովի և նրա գործադիր մարմնի՝ Ազգային Խորհրդի միջոցով:

3. Ազգային ժողովն ընտրուում է ընդհանուր, հաւասար, գաղտնի, ուղղակի ու համեմատական ընտրական սկզբունքով և գումարուում է իր իսկ որոշած ժամանակաշրջաններում, իսկ Ազգային Խորհուրդը գործում է Ազգային Ժողովի կողմից տրուած իրաւունքների սահմաններում:

4. Ազգային Ժողովն ու Խորհուրդն հասարակական իրաւական օրգաններ են, օժտուած իրաւական անձի (юридическое лицо) բոլոր իրաւունքներով, որոնց մէջ նաև շարժական և անշարժ կայքեր ձեռք բերելու ու սեփականացնելու իրաւունքով, օրինական բոլոր միջոցներով:

5. Հայոց Ազգային Ինքնավարութեան գոյքերը համարուում են Վրաստանի հայոց ազգային սեփականութիւն:

6. Ազգային Ժողովի ընդհանուր ժողովներում անդամները օգտուում են խօսքի ազատութիւնից նոյն հիմունքներով, որով օգտուում են Օրէնսդիր Հիմնարկութեան անդամները: Թերացումների և ընդհանուր յանցանքների համար Ազգային Ժո-

---

[131] «Թեզեր»-ը շարադրվել էին Վրաստանի ՀԱԽ-ի օրենսդրական հանձնաժողովի անդամներ Կորյուն Ղազազյանի և Ալեքսանդր Պապովյանի ջանքերով: Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 441, ց. 1, գ. 61, թ. 21:

ղովի և Խորհրդի անդամները, կարող են հետապնդել և զրկվել ազատութիւնից միայն դատական կարգով:

7. Այն շրջաններում, որտեղ հայ ազգաբնակութիւնը կազմում է տեւեալ ռայոնի (քաղաք, գաւառ, թեմի, գիւղ) բնակիչների 15-ից ոչ պակաս տոկոս, հայոց լեզուն ճանաչւում է իրաւահաւասար պետական լեզուին վարչական տեղերում, ինքնավարութեան օրգաններում, դատական հաստատութիւններում, հրապարակական ժողովներում և պոստ-հեռագրական հաղորդակցութեան մէջ, այդ տեղերը, հիմնարկութիւնները, հաստատութիւնները և պաշտօնական անձինք, հայերի հետ յարաբերութիւններ ունենալիս, պարտաւոր են ընդունել բանաւոր և գրաւոր յայտարարութիւններ, բացատրութիւններ ու բոլոր գործավարական թղթերը հայերէն լեզուով, այլ և պատասխանել ու թղթեր տալ նոյն հայերէն լեզուով:

8. Կենտրոնական կառավարութեան համապետական օրէնքներն ու կարգադրությունները հրատարակւում են բացի վրացերենից նաև հայերէն լեզուով: Հայերէն են հրատարակւում նմանապէս սոյն թէզիսների 7-րդ կէտում յիշած վայրերում, վարչական տեղերի և անձանց, տեղական ինքնավարութիւնների և դատական մարմինների բոլոր որոշումներն ու կարգադրութիւնները:

9. Հայոց լեզուի իրաւունքները, որոնք յիշւած են սոյն թէզիսների 6 և 7 կէտերում, ապահովւում են յատուկ օրէնքով:

10. Ազգային Ինքնավարութեան իրաւասութեանը ենթակայ են.

ա/ Ներկայացուցչութիւն ու պաշտպանութիւն շահերի և իրաւունքների հայկական հիմնարկութիւնների և հայերի՝ ինչպէս անհատական, նոյնպէս և խմբական, որոնք բխում են նրանց հայ ազգին պատկանելուց:

բ/ Վարումն ժողովրդական կրթութեան և ազգային կուլ-տուրայի զարգացման գործերի, ինչպէս և օգնութիւն հայ ազ-գաբնակութեան պարենաւորման, գիւղատնտեսական, առող-ջապահական և խնամատարական ասպարէզներում:

11.Հայ ժողովրդական կրթութեան գործը ամբողջութեամբ յանձնւում է Հայոց Ազգային Ինքնավարութեան, դպրոցներում դասաւանդութիւնը տարւում է հայերէն լեզուով: Ստորին, միջ-նակարգ և բարձրագոյն թէ հանրակրթական և մասնագիտա-կան դպրոցներում դասաւանդելիք ծրագիրների որոշման և հաստատման, ինչպէս և նրանց կառավարելու գործը ամբող-ջութեամբ անցնում է Ազգային Ինքնավարութեան: Բարձր տարրական և միջնակարգ դպրոցներում վրաց լեզվի դասա-ւանդութիւնը պարտաւորեցուցիչ է:

12.Ժողովրդական կրթութեան, ազգային կուլտուրայի զարգացման համար Հայոց Ազգային Ինքնավարութեանն է տրամադրւում միջոցներ ազգաբնակութեան համեմատական չափով – պետական և տեղական ինքնավարութիւնների հա-մապատասխան բիւջէներից:

13.Հայոց Ազգային Ինքնավարութիւնը իրաւունք ունի նշանակել և յատուկ տուրքեր հայերի վրայ, իր իրաւասութե-ան մէջ եղող գործերի համար:

14.Նախարարական Խորհրդի նիստերում մասնակցում է Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչը, որպէս հայկական ինքնավարութեան գործերի վարիչ, մինիստրական իրաւունք-ներով:

Տե՛ս «Թէզեր», Վրաստանի Հայոց Ազգային Ինքնավարութեան,
մշակւած Հայոց Ազգային Խորհրդի կողմից //
Աշխատաւոր, 25 մարտի 1920, N 68:

N 146

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. մարտի 19-ի արտահերթ նիստի մասին

<…> Վրաստանի Հայոց Ազգ. Խորհուրդը իր մարտի 19-ի արտակարգ նիստում քննութեան առաւ <…> Սուխումի շրջանային Հ[այոց] Ազգ[ային] Խորհրդի գրաւոր հրաժարական-զեկուցումը, որի մասին բանաւոր բացատրութիւններ տուեց Սուխումի Հ.Ա.Խ. Նախագահ ընկեր Խաչ. Աւդալբէկեանը և լիովին հերքեց այն սխալ տեղեկութիւնները, որ նիստի ժամանակ հաղորդեց դաշնակցական ֆրակցիայի ներկայացուցիչը:

Սոցիալիստական ֆրակցիաների ներկայացուցիչները գտան, որ այն քաղաքականութիւնը, որին հետևել է Սուխումի Հ[այոց] Ա[զգային] Խորհուրդը միանգամայն ճիշտ է և ապահովում է ժողովրդի շահերը:

Այդ իմաստով բանաձև ընդունվեց Վր[աստանի] Հ[այոց] Ազգ. Խոր. որ առաջարկուեց սոցիալիստական ֆրակցիաների կողմից: Դաշնակցականների բանաձևը շահեց միայն 8 ձայն:

Ըստ ընդունուած բանաձևի որոշուեց յայտնել Սուխումի Շրջ. Հ. Ազգ. Խորհրդին, որ նրա գործելակերպը ճիշտ է և համապատասխանում է ժողովրդի տնտեսական կուլտուրական շահերին և առաջարկել, որ նա վերսկսէ իր գործունէութիւնը, մինչև որ նոր համագումար կը հրաւիրի, և նոր Խորհուրդ կընտրի, ապա որոշուեց յանձնարարել Վր. Հ. Ազգ. Խոր. Գործադիր Մարմնին, որ նա Սուխումի Շ. Հ. Ա. Խորհրդի նախագահի հետ համապատասխան միջնորդութիւն յարուցանէ, որ Սուխումի Ազգ. Խորհրդի գործունէութեան հանդէպ կանգնած արգելքնե-

ը չեզոքացուեն և նա առաջուայ պէս կարողանայ ժողովրդին օգտակար լինել:

Վ[ահան] Ռ[շտունի]

Տե՛ս Սուխումի Շրջանային Հայոց Ազգ[ային] Խորհ[րդի] հրաժարականի առթիւ // Բանվորի Ձայն, 28 մարտի 1920, N 13:

N 147

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. մայիսի 11-ի նիստի մասին

Մայիսի 11-ին, երկուշաբթի երեկ[ոյան] ժամը 6-ին տեղի ունեցաւ Վ.Հ.Ա.Խ. հերթական նիստը:

Օրակարգի առաջին խնդիրն էր երկու փոխ-նախագահների ընտրութիւնը: Ֆրակցիաները նախնական համաձայնութեան էին եկել այդ խնդրի շուրջը և այդ պատճառով էլ երկար վիճաբանութիւն չեղաւ այդ մասին:

Փոխ-նախագահների երկու տեղերի համար թեկնածուներ առաջարկեցին Սոց.-Յեղափոխականները և Հայ Ժողովրդական կուսակցութիւնը. առաջինների թեկնածուն էր ընկեր Գ. Սիմոնգիւլեանը, իսկ երկրորդը՝ պ. Գ. Մելիք-Ղարագեօզեանը: Երկուսն էր ընտրուեցին միաձայն:

Ապա խորհուրդն անցաւ օրակարգի երկրորդ խնդրի քննութեանը: Խորհրդի նիստերի ժամանակ մի երկու անդամ խօսում են ռուսերէն, իսկ մէկը բոլորովին չի հասկանում այդ լեզուն: Սրա համար նախագահութիւնն առաջարկում է Խորհրդին տալ այդ խնդիրը լուծելու որոշ հրահանգ: Լինում է այս հարցի շուրջ փոքրիկ մտքերի փոխանակութիւն, որից պարզւում է, որ երկու կարծիք կայ այդ մասին: Առաջինը այն է, որ Հ.Ազ. Խորհրդում կարելի է միմիայն խօսել հայերէն լեզուով,

իսկ երկրորդ կարծիքը պաշտպանողները չառարկելով ըստ էութեան առաջին կարծիքի դէմ, գտնում են սակայն, որ թոյլ պիտի տրւի այն պատգամաւորներին, որոնք չեն տիրապետում մայրենի լեզւին, խօսել ռուսերէն լեզւով: Մտքերի փոխանակութեան ընթացքում պարզւում է, որ այս երկու կարծիքի կողմնակիցները ընդհանուր լեզու գտնել չեն կարողանում, դրա համար էլ խնդիրը դրւում է քւէարկութեան: Առաջին կարծիքը պաշտպանողների առաջարկած բանաձևը դաշնակցականների և Հայ Ժողովրդական կուսակցութեան ձայներով մեծամասնութիւն է շահում և այնպիսով որոշւում է թոյլ չտալ հայերէնին չը տիրապետող պատգամաւորներին խօսել ռուսերեն լեզւով: <…>

Նիստի վերջում Խորհուրդը յանձնարարեց նախագահութեանը, որ համապատասխան յանձնաժողովի հետ տեղեկանայ, թէ ինչ դրութեան մէջ է Վրաստանի Սահմանադիր Ժողովին ներկայացրած Հայոց Ազգային Ինքնավարութեան նախագծի քննութեան հարցը: Անհրաժեշտ համարւեց մամուլում Հայոց Ազգային Ինքնավարութեան նախագծի մասին պրոպագանդ մղել և ընդհանրապէս հայ լայն մասսաներին ծանօթացնել նրա հետ:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդում//
Բանվորի Ձայն, 16 մայիսի 1920, N 20:

N 148
Ծանուցում Վրաստանի հայկական դպրոցների մանկավարժներին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը ձեռնարկել է կազմել ուսուցչական ցանկ: Այն ուսուցիչներն ու վարժուհինե-

ը, որոնք պաշտօնավարում են մեր դպրոցներում – միջնակարգ, բարձր տարրական և ստորին տարրական կամ ապագայում կը ցանկանան պաշտօն ստանալ, բարեհաճեն մինչև մայիսի վերջը ներկայացնել Ազգային Խորհրդի Դպրոցական Բաժնին իրենց ուսման վկայականները (իսկական կամ հաստատուած պատճէնը) գրաւոր յայտնելով նաև՝ թէ քանի տարի և որտեղ են ուսուցչական պաշտօն վարել և ի՞նչ առարկաներ են դասաւանդել: Սեպտեմբերին պաշտօն կունենան միմիայն նրանք, որոնց անունները կը լինեն ցանկի մէջ:

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի Գործադիր Մարմնի անդամ և Դպրոցական Բաժնի վարիչ՝ Իս. Յարութիւնեան

Տե՛ս Վրաստանի հայոց դպրոցների ուսուցիչներին և վարժուհիներին // Բանվորի Ձայն, 16 մայիսի 1920, N 20:

N 149

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. հունիսի 22-ի նիստի մասին

Երեքշաբթի, յունիսի 22-ին տեղի ունեցաւ Վ. Հ. Ա. Խորհրդի հերթական նիստը: Օրակարգի մէջ դրուած էին մի քանի խնդիրներ, բայց այդ նիստին հնար եղաւ զբաղուել միայն նախագահութեան, աւելի ճիշտ կը լինի ասել նախագահ պ. Բ. Թոփչեանի հրաժարականի խնդրով:

Բանը հետևեալումն է:

Նախագահ Բ. Թոփչեանը բաց անելով նիստը զեկուցում է այն մասին, թէ Վ. Հ. Ա. Խորհրդի մշակած ազգային աւտոնոմիայի նախագծի և Վրաստանի Սահմանադիր Ժողովի սահմանադրական յանձնաժողովի մշակած և հրատարակած նախագծերի մէջ ոչ մի նմանութիւն չկայ, բնական է որ վերջինս

բոլորովին չի բաւարարելու հայ ժողովրդին: Ապա աւելացնում է, որ համաձայն Ազգային Խորհրդի հրահանգների նախագահութիւնը ի միջի այլոց թռուցիկներով հրատարակել է Ազգային Խորհրդի մշակած ազգային կուլտուրական աւտոնոմիայի թեզերը, որոնց կցել է մի կոչ ևս:

Կարդացւում է այդ կոչը, որից յետոյ և սկսւում է այդ կոչի որոշ արտայայտութիւնների քննադատութիւնը: Այդ մասին առաջինը արտայայտւում է մեր ընկեր Բ. Մկրտումեանը, որը յայտարարում է, որ կոչի վերջին նախադասութիւնը այնպէս է խմբագրւած, որ կարող է շատ թիւրիմացութիւնների տեղիք տալ և անակնկալ բարդութիւններ առաջացնել: Նա կարծում է, որ նման պատասխանատու քայլ նախագահութիւնը չը պիտի անէր, երբ այդ բանին Ազգային Խորհրդի ֆրակցիաներից մի քանիսը և համարեա բոլոր անդամները անտեղեակ են և միայն նիստից առաջ պատերին կպցրած թռուցիկներից են ծանօթանում նախագահութեան այդ կոչին:

Ընկեր Ղ. Տէր-Ղազարեանը պաշտպանում է նոյն միտքը, գտնելով որ այս քայլով Ազգային Խորհուրդը հայ դեմոկրատիայի համար բաց է անում 33-րորդ մի նոր և աւելորդ ֆրոնտ, փոխանակ կրճատելու եղածները:

Հայ Ժողովրդական կուսակցութեան ներկայացուցիչ պ. Ի. Յարութիւնեանը և Դաշնակցութեան ներկայացուցիչ պ. Պ. Տէր-Պողոսեանը այն միտքն են պաշտպանում, որ կոչը ոչ մի թիւրիմացութեան տեղիք տալ չի կարող և մաշակւած է միանգամայն ընդունելի ձևով և աւելորդ են այդ մասին եղած քննադատութիւնները:

Սոցիալիստ յեղափոխականները պաշտպանում են այն միտքը, որ աչքի առաջ ունենալով եղած պայմանները նրանք

ևս միանում են ը.ը. [Բ.] Մկրտումեանի և Ղ. Տէր-Ղազարեանի պաշտպանած տեսակէտին:

Նախագահ Բ. Թոփչեանը տալիս է եղած քննադատութիւնների առթիւ բացատրութիւններ, պաշտպանելով նախագահութեան (այսինքն իր և քարտուղարի, որովհետև նախագահի օգնականները ներկայ չեն եղել այդ կոչի մշակման ժամանակ) արածը և գտնելով, որ այդ կատարուած է հէնց Ազգային Խորհրդի հրահանգների հիման վրայ:

Ապա աւելացնում է, որ եղած քննադատութիւններով նախագահութիւնը մեղադրւում էր այն բանում, որ նա դուրս է եկել իր իրաւունքների սահմաններից, դրա համար էլ բացատրութիւններից յետոյ նախագահութիւնը դնում է վստահութեան քւէի խնդիրը:

Ապա Բ. Թոփչեանը և քարտուղար Մ. Դարբինեանը թողնում են նախագահութեան սեղանը, նախագահի տեղն անցնում է պ. Գ. Մելիք-Ղարագեօզեանը:

Սոցիալիստական երեք ֆրակցիաները յայտարարում են, որ նախագահութիւնը բոլորովին անտեղի կերպով դրեց վստահութեան քւէի խնդիրը, որովհետև քննադատութիւնը եղել է միայն կոչի մի կէտի դէմ և իրենք անվստահութեան խնդիր երբեք չեն յարուցել: Չնայած այս յայտարարութեան այնուամենայնիւ ձայների մեծամասնութեամբ որոշւում է վստահութեան խնդիրը քւեարկութեան դնել: Արդիւնքն այն է լինում, որ վստահութեան քւե են տալիս 12 հոգի, ձեռնպահ են մնում 10, դէմ ոչ ոք:

Բ. Թոփչեանը յայտարարում է, որ այս քւէարկութիւնը նախագահութիւնը համարում է անվստահութեան քւէ և հրաժարւում է: <…>

Յայտարարւում է ընդմիջում, որ տևում է մօտ 40 րոպէ: Նիստը բացուելուց յետոյ սոցիալիստական ֆրակցիաները առաջւայ նման յայտարարում են, որ իրենք անտեղի էին համարում վստահութեան խնդիր դնելը, դրա համար էլ չեն մասնակցել քւէարկութեանը: Այսպիսով վերջանում է պ. Թոփչեանի առաջ բերած «միջադէպը»:

Որոշւում է դադարեցնել թռուցիկների տարածումը և չորեքշաբթի ժամը մէկին գումարել ֆրակցիաների նիստ, որ նախագահութեան հետ կը մշակի կոչի վիճելի կէտերը:

Նիստը փակւեց ժամը 11-ին:

Չորոքշաբթի, ժամը 1-ին կայացաւ այդ նիստը, որ դուրս գցեց կոչի վերջին պարբերութիւնը և նորից խմբագրեց այն: Այս նոր ձևով է ահա, որ կոչը պիտի տարածւի ժողովրդի մէջ:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդում //
Բանվորի Ձայն, 27 հունիսի 1920, N 26:

N 150

ՀԱԽ-ի կոչը Վրաստանի հայազգի քաղաքացիներին՝ մշակութային ինքնավարության պահանջի մասին

Քաղաքացինե՛ր

Ազգային Խորհուրդը այս թէզերը համարում է այն նւազագոյն իրաւունքները, որոնք պիտի ապահովեն Սահմանադիր ժողովի կողմից հայութեան Վրաստանի հատւածին՝ նրա ազգային կուլտուրական գործերը անարգել կերպով վարելու համար:

Մօտիկ ապագայում Վրաստանի Սահմանադիր ժողովը պիտի քննութեան առնի սահմանադրական յատուկ յանձնաժողովի կողմից մշակւած Վրաստանի Սահմանադրութիւնը:

Քաղաքացինե՛ր

Ազգային խորհուրդը պիտի պահանջի, որ հայ դպրոցի և ազգային այլ գործերի ինքնավարութիւնը ապահովւած լինի հիմնական օրենքներում, Սահմանադրութեան մէջ:

Իր պահանջների ու դիմումների մէջ Խորհուրդը կարող է ու պիտի յենւի միայն մեզ վրայ: Արծարծեցէք ազգային կուլտուրական ինքնավարութեան գաղափարը, տարածեցէք այս թէզերը[131], որով և աջակցած կը լինէք Ազգային Խորհրդին, ձեր իրաւունքների պաշտպանութեան գործում:

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի Նախագահ՝
Բ. Թոփչեան
Անդամ քարտուղար՝ Մ. Դարբինեան

Տե՛ս Վրաստանի Հայ քաղաքացիներին //
Բանվորի Ձայն, 4 հուլիսի 1920, N 27:

N 151
Վրաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության «հայկական սեկցիայի» առանձնակի կարծիքը՝ մշակութային ինքնավարության պահանջի կապակցությամբ

Տպագրելով Վ. Հ. Ա. Խորհրդի նախագահութեան խնդրի համաձայն խորհրդի մշակած թէզերը և նրան կցած կոչը[132], խմբագրութիւնս հարկ է համարում յիշեցնել մեր ընթերցողներին, որ թէ՛ մեր և թէ՛ Ազգային Խորհրդի մեր ֆրակցիայի տեսակէտը նշանակալի չափով տարբեր է այս հարցի վերաբերմամբ:

---

[131] Տե՛ս N 145 վավերագիրը:
[132] Տե՛ս N 150 վավերագիրը:

Թէ՛ այս թէզերի մշակման ժամանակ և թէ՛ վերջերս մեր թերթում մենք առիթ ենք ունեցել շեշտելու, որ ազգային փոքրամասնութիւնների ազգային-դպրոցական կարիքների բաւարարման և կուլտուրական կեանքի զարգացման համար աւելի ընդունելի և արդիւնաւէտ միջոցը պետական մեխանիզմի լայն դեմոկրատացումն, որի ժամանակ տեղական և քաղաքային ինքնավարութիւնները լիովին կը փոխարինեն ազգային աւտոնոմիային և կապահովեն պետութեան մէջ ապրող իւրաքանչիւր քաղաքացու և ազգի բոլոր իրաւունքները:

Տե՛ս Բանվորի Ձայն, 4 հուլիսի 1920, N 27:

N 152

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. հուլիսի 6-ի նիստի մասին

Ազգային Խորհրդի յուլիսի 6-ի հերթական նիստի օրակարգի առաջին հարցը ազգային փոքրամասնութիւնների բանաձևի հաստատութիւնն էր: Ինչպէս գիտեն մեր ընթերցողները, Վ.Հ.Ա. Խորհրդի ազգային կուլտուրական աւտոնոմիայի և Վրաստանի Հիմնադիր Ժողովի սահմանադրական յանձնաժողովի նոյն խնդրի մասին մշակած նախագծի մէջ հիմնական տարբերութիւններ կան, այդ տարբերութիւնները չեն վերանում և այն ուղղումներով, որ սահմանադրական յանձնաժողովի նախագծի մէջ մտցրեց Վ. Ս. Դ. Բ. կուսակցութեան վերջին համագումարը: Վ.Հ.Ա. Խորհուրդը ընդհանրապէս Վրաստանի ազգային փոքրամասնութիւնների և մասնաւորապէս հայերի կուլտուրական-կրթական գործերի ամբողջ ղեկավարութիւնը իր նախագծով վերապահում է ազգային աւտոնոմիային, իսկ սահմանադրական յանձնաժողովը և Վ.Ս.Դ.Բ. կուսակցութե-

ան համագումարը, որ ընդարձակել է և լայնացրել առաջինի նախագիծը, այդ իրաւունքները և պարտականութիւնները ամբողջովին թողնում են տեղային և քաղաքային ինքնավարութիւնների վրայ և ազգային փոքրամասնութիւնների կրթական-կուլտուրական կարիքների լիակատար բաւարարումը պետական մեխանիզմի լայն դեմոկրատիզմի հետ կապում:

Մեր ընթերցողներին յայտնի է նոյնպէս, որ Վ.Հ.Ա. Խորհուրդը բոլորովին անբաւարար և անընդունելի համարում թէ սահմանադրական յանձնաժողովի նախագիծը և թէ այն ուղղումները և յաւելումները, որ մտցրել է նրա մէջ Վ.Ս.Դ.Բ. կուսակցութեան համագումարը, դրա համար էլ բողոքի մի բանաձև է մշակել և որոշել է դիմել մի շարք միջոցների պետական ղեկավար շրջանների և հայ լայն մասսաների մէջ իր տեսակէտներն ընդունելի դարձնելու համար:

Երբ կարդացուեցին այդ բանաձևը և ձեռք առնուելիք միջոցները թուեցին և ժողովը քուէարկութեան էր անցնում, Վ.Ս.Դ.Բ.Կ. Հայկական Սեկցիայի ֆրակցիան արեց հետևեալ յայտարարութիւնը:

«Ինչպէս յայտնի է Ազգային Խորհրդի Հայկական Սեկցիան աւտոնոմիայի նախագիծը մշակելիս որոշ կետէրում, որոնք էական նշանակութիւն ունին, քուէ չի տուել. օրինակ՝ Ազգային Խորհրդին յատուկ տուրք դնելու իրաւունք ունենալում. նրան տնտեսական ֆունկցիաներ յատկացնելում, Վրաստանի կառավարութեան մէջ առանձին հայկական գործերի մինիստր ունենալուն: Ընդհանրապէս Հայկական Սեկցիան չառարկելով ազգային աւտոնոմիայի գաղափարի դէմ, նրան ավելի նեղ բովանդակութիւն է տուել քան միւս ֆրակցիաները: Իսկ այժմ, երբ Վ.Ս.Դ.Բ. կուսակցութեան համագումարը ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների պաշտպանութեան համար

այլ ճանապարհ է ընտրել, Հայկական սեկցիան սրանից հետոյ Ազգային Խորհրդի այն բոլոր քայլերի վերաբերմամբ, որոնք ուղղուած են աւտոնոմիայի պաշտպանութեանը, ձեռնպահ է մնալու կամ եթէ հարկ համարեց, հակառակ քւէ է տալու»:

Օրակարգի երկրորդ խնդիրն էր 1920-21 դպրոցական տարւայ նախահաշւի քննութիւնը: Այս մասին զեկուցում տւեց դպրոցական վարիչ պ. Իս. Յարութիւնեանը, որ ընդհանուր գծերով թւեց այն ծախքերը, որոնք առաջիկայ տարում անհրաժեշտ են դպրոցների բաւարար քանակ պահելու համար: Այժմեան դասագներով այդ ծախքերի գումարը 11 միլիոնից անց է: Նախահաշիւը ըստ էութեան չքննւեց, որովհետև ֆրակցիաները դեռ հնար չէին ստացել ծանօթանալու նրա հետ, վճռեցին մի քանի կոնկրետ հարցեր, իրկ ամբողջութեամբ խնդիրը քննւելու է յետագայ հերթական նիստերում: <…>

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդում //
Բանվորի Ձայն, 11 հուլիսի 1920, N 28:

N 153
Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1920 թ. օգոստոսի 3-ի նիստի մասին

Օգոստոսի 3-ին, երեքշաբթի օրը, տեղի ունեցաւ Վրաստանի Հայոց Ազ. խորհրդի հերթական նիստը: Օրակարգի խնդիրներն էին՝ 1. գլխաւոր վերահսկչի զեկուցումը, 2. դպրոցական բիւջէի քննութիւնը, 3. նախագահութեան լրացուցիչ ընտրութիւններ, 4. Ազգ. Խորհրդի միամսեայ արձակուրդի խնդիրը:

Գլխաւոր վերահսկիչ ընկ. Ալ. Մելիք-Աղաջանեանը մանրամասն զեկուցեց իր մի քանի ամսւայ աշխատանքների արդիւնքի մասին:

Ընկերոջը յաջողուել է կարգի բերել իրար վրայ անկարգ կերպով կուտակուած բազմաթիւ հաշիւները, որ Ազգ. Խորհրդին ժառանգութիւն են մնացել Գաղթականական Խորհրդից և որոնք մի այնպիսի վիճակում են, որոնց համար հաշիւ բառը կարելի է գործածել խոշոր վերապահութեամբ միայն: Հաշուապահական ամենատարրական պահանջներին անգամ չեն բաւարարում այդ հաշիւ կոչուածները և մնում է, որ Ազգային խորհուրդը որոշ միջոցներ ձեռնարկէ փակելու կամ գրքերից հանելու դրանց: Վերահսկիչը աշխատել է միայն որոշ դասերի վերածելու, որոշ կարգ մտցնելու դրանց մէջ, իսկ վերջնական անօրինութիւնը ի հարկէ պատկանում է Ազ. Խորհրդին: Այս եղանակով կարգի է բերուած մինչև 1919 թ. սեպտեմ. 1-ի հաշիւները:

Ազգային Խորհուրդը անկարելի համարեց կէտ առ կէտ քննելու բոլոր հաշիւները իր ընդհանուր նիստում, այլ որոշեց ընտրել մի յանձնաժողով և նրան լիազօրել, որ փակէ այն բոլոր հաշիւները, որը հնարաւոր կը նկատի, իսկ մնացած յատուկ քննութիւն պահանջող կամ վիճելի խնդիրները բերելու Ազգային Խորհուրդ:

Դպրոցական վարիչ պ. Իս. Յարութիւնեանը տուեց մի քանի լրացուցիչ բացատրութիւններ բիւջէի մասին, որոց պարզուեց, որ բիւջէն կազմուած է այն դպրոցների համար, որոնք անցեալ տարում պահուել են Ազգ. Խորհրդի միջոցներով կամ որոշ նպաստով: Հաշուի չեն առնուած Բաթումի, Սուխումի դպրոցները և այն դպրոցները, որ ծրագրուել է բաց անել եկող ուսումնական տարուայ ընթացքում: Կազմուած է այսպէս կոչուած նորմալ բիւջէ, այսինքն հաշուած է տուեալ դպրոցների ամբողջ տարուայ ծախքերը այս տարուայ դասագներով և այն մի շարք բարեփոխումներով, որի մասին արդէն ստացուել է Ազգային Խորհրդի համաձայնութիւնը:

Այսպիսով Ազգ. Խորհրդի 50 դպրոցի ծախքերն են մօտ 12 միլլիոն ռուբլի: Այս 50 դպրոցից երկուսը միջնակարգ են, մի քանիսը բարձր տարրական, իսկ մեծ մասը տարրական դպրոցներ:

Դպրոցների մեծ մասը նիւթական միջոցներից բոլորովին զուրկ է և Ազգային Խորհուրդն է ամբողջովին հոգում նրանց ծախքերը, իսկ մի մասն էլ ունի եկամուտի աղբիւրներ և ծածկում է իր ծախքերի որոշ մասը, իսկ Ազգ. Խորհուրդը միայն լրացնում է բաց մնացած մասը: Այսպէս որ 12 միլլիոն բիւջէն ամբողջովին չի ծանրանալու Ազգ. Խորհրդի վրայ, այլ նրա որոշ մասը հոգալու են դպրոցների տնտեսական խորհուրդները: Առայժմ դեռ պարզուած չէ, թէ եկող ուսումնական տարում դպրոցների տնտեսական խորհուրդները իրենց ծախքերի որ մասն են կարողանալու հոգալ:

Բիւջէի շուրջը թեր և դէմ վիճաբանութիւններից յետոյ որոշուեց Գործադիր մարմնին վարկ բաց թողնել դպրոցների ծախքերը լրացնելու համար 6 միլլիոն ռուբլի: Առաջարկուեց գործադիր մարմնին և դպրոցական վարիչին մի ամսւայ ժամանակամիջոցին պահանջել և ստանալ դպրոցներից իւրաքանչիւրի բիւջէն և պարզել այն բացը, որ առաջանում է ամեն մի դպրոցի բիւջէի մէջ և որը լրացնելու է Ազգ. Խորհուրդը, Բաթումի և Սուխումի դպրոցների համար նոյնպէս մշակել բիւջէ: Ձեռք առնել միջոցներ, որ Ազգ. Խորհրդին չենթարկւող Ներսիսեան դպրոցը մտնի ընդհանուր դպրոցական ցանցի մէջ և նոյնպէս ներկայացնի իր բիւջէն:

Բիւջէի շուրջը տեղի ունեցած վիճաբանութիւններից պարզուեց, որ դեռ չի յաջողուել կառավարութեան հետ մեր դպրոցների իրաւական և տնտեսական դրութեան մասին որոշ համաձայնութեան գալ:

Հէնց այս հանգամանքն էլ կազմում է մեր դպրոցների ամենաթոյլ կողմը: Նախագահը յայտնում, որ Հայ Ժողովրդական կուսակցութեան ֆրակցիայի անդամ Գ. Մելիք-Ղարագեոզեանը հրաժարուել է Ազգ. Խորհրդի անդամութիւնից, պարոնը միաժամանակ նախագահութեան անդամ էր, ուստի հարկաւոր է նոր ընտրութիւն կատարել: Հայ Ժողովրդական Կուսակցութեան կողմից նախագահի օգնականութեան թեկնածու է առաջարկւում պ. Այվազեանը, որն էլ ընտրւում է:

Ապա նախագահը ծանուցանում է, որ աւագների խորհուրդը ձայների մեծամասնութեամբ որոշել է Ազգ. Խորհրդի առաջ միամսեայ արձակուրդի խնդիրը դնել, որի ժամանակ նախագահութիւնը և Գործ. Մարմինը տանելու են առօրեայ գործավարութիւնը, իսկ եթէ կարևոր խնդիր առաջ եկաւ, կը գումարւի աւագների խորհուրդը, աւելի կարևոր դէպքում կը հրաւիրւի Ազգ. խորհրդի արտակարգ նիստ:

Առանց վիճաբանութիւնների ժողովը համաձայնութիւն է տալիս միամսեայ արձակուրդի առաջարկին:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդում//
Բանվորի Ձայն, 8 օգոստոսի 1920, N 32:

N 154

ՌՍԴԲԿ «միջազգայնականներ»-ի կուսակցական լրագրի մեկնաբանությունը՝ Վրաստանի ՀԱԽ-ի դպրոցական քաղաքականության մասին

<…> Վր. [Հայոց] Ազգային Խորհրդի քաղաքականութիւնը եղել է հնի շարունակութիւնը, նա պահպանմել է հին կարգը, սիստեման, այսինքն մեր դպրոցների պահպանութեան հիմքն ընդունել է ոչ թէ պետական, ինչպէս նաև մունիցիպալ աղ-

բիւրները, այլ զուտ հայկական միջոցները: Հայ դպրոցները պահւել են զուտ հայկական եկամուտներով և ոչ պետութեան հաշւով: Տարբերութիւնը միայն այն է եղել, որ հայ դպրոցների ղեկավարութիւնը հոգևորականութեան փոխարեն անցել է Ազգային Խորհրդին: <…>

Մենք այժմ էլ de facto ունինք դպրոցական ինքնավարութիւն, ինչպէս և առաջ, հին ռեժիմի օրով, օգտութեամբ զուտ բարեգործական հիմունքներով առանց պետական օժանդակութեամբ: <…>

Հայկական համարւում է միայն այն, ինչ որ պահւում ու ղեկավարւում է հայի ձեռքով ու միջոցներով:

Գիմնազիաներն ու այլ դպրոցներ, որոնք պահւում են պետութեան կամ ինքնավարութեան միջոցներով, հայկական չեն համարւում: Այդ է պատճառը, որ Վրաստանի Հայ Ազգային Խորհուրդը բնաւ ուշադրութեան չէ առնում այդ դպրոցները[133], այն ինչ հայ երեխաների մեծագոյն մասը այդ դպրոցներում են ուսանում: <…>

Թիֆլիսի III-րդ իգ. հայկ գիմնազիայում, որ տարէց տարի ազգայնանում է, ղեկավար շարունակում է մնալ մի վրացի, միւս դպրոցների ղեկավարներն էլ եթէ հայեր են, միանգամայն անպատրաստ իրենց կոչումին ու դիրքին: <…>

Աս.

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի դպրոցական քաղաքականութիւնը //Նոր Խօսք, 13 սետեմբերի 1920, N 4:

---

[133] Հոդվածագիրը միանգամայն վերացական դիտարկում է անում: Պետական դպրոցներում հայերեն լեզվի և այլ հայագիտական առարկաների դասավանդման ու նույնանման խնդիրների նկատմամբ վերահսկման գործը դարձել էր լուսավորության նախարարության մենաշնորհը, ամբողջությամբ դուրս մնալով ՀԱԽ-ի իրական հնարավորությունների շրջանակներից: Տե՛ս ՀԱԽ-ի դիմումը Վրաստանի վարչապետին, ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 30, թ. 16-17:

N 155

1919-1920 ուսումնական տարվա վիճակագրական տվյալները՝ Վրաստանի ՀԱԽ-ին ենթակա ժողովրդական դպրոցների մասին

Աղյուսակ N 1

դպրոցների տեսակը (աստիճանը)	դպրոցների թվաքանակը	աշակերտների թվաքանակը				աշակերտների թվաքանակը դասարաններում		
		տղաներ	աղջիկներ	ընդամենը	դասարանների թվաքանակը	minimum	maximum	միջին թիվը
ստորին տարրական	45	1940	1926	3866	134	20	60	29
բարձր տարրական	5	269	884	1153	36	8	58	32
միջնակարգ	3	26	461	484	18	12	44	27
միասին	53	2235	3271	5506	188			29

Աղյուսակ N 2

	Ուսուցչա-մանկավարժական անձնակազմ				
	Ուսուցիչ-ուսուցչուհիների կրթական աստիճանը				
դպրոցների տեսակը (աստիճանը)	բարձրագույն	միջնակարգ	մասնագիտական	տարրական	ընդամենը
ստորին տարրական	2	61	22	24	109
բարձր տար-րական	13	21	7	7	48
միջնակարգ	24	20	9	1	54
միասին	39	102	38	32	211

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդն եւ նրան ենթակա դպրոցները //Նոր Խօսք, 27 սեպտեմբերի 1920, N 6:

N 156

Հաղորդագրություն՝ Աբխազիայի (Սուխումի շրջան) հայկական ժողովրդական դպրոցների մասին[134]

Անցեալ ուսումնական տարւայ մարտ ամսին Սուխումի շրջանի Հայոց Ազգ. Խորհուրդը յանձինս իր նախագահ ընկեր Խաչ. Աւդալբէգեանի դիմել էր Վրաստանի Հանրապետութեան կառավարութեանը և խնդրել, որ նա պետական միջոցներից վճարէ հայ դպրոցների ուսուցիչներին ևս այն յաւելումները,

[134] Խնդրո առարկա մանրամասն տե՛ս Մաիլյան Բ. Վ. Աբխազիայի հայկական դպրոցների պատմությունից (1918-1920 թթ.) // Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի հինգերորդ տարեկան գիտաժողով, (2010 թ., դեկտեմբեր), գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2011, էջ 25-35:

որ արուել էին և արուելու էին պետական դպրոցների ուսուցիչ-ների ռոճիկների վրայ: Այս խնդրի մասին կառավարութեան հետ բանակցութիւններ է վարել ընկեր Աւդալբէգեանը Վրաստանի Հ. Ազգ. Խ. Գործադիր Մարմնի նախագահ ընկեր Ա. Երզնկեանի հետ միասին:

Ապա այդ բանակցութիւնները շարունակուել են և այս ուսումնական տարայ համար ևս Սուխումի Հայոց Ազգային Խորհուրդը կառավարութիւնից իր դպրոցների համար նպաստ է խնդրել:

Այս սեպտեմբերին պարզուել է, որ Սուխումի շրջանի կենտրոնական զեմստուոյին վարչութիւնը շրջաբերական է ուղարկել բոլոր հայ դպրոցներին, թէ նրանք անցնում են զեմստուօներին և պահուելու են նրա միջոցներով և ուսուցիչներ վարձելը, հաստատելը և ընդհանրապէս դպրոցական գործի ղեկավարութիւնն անցնում է զեմստուօներին: Հենց որ այս մասին տեղեկացնում են Սուխումի Հ. Ազգ. Խոր. Գործադիր Մարմինը և Շրջանային տեսուչը անմիջապէս դիմում են Խորհրդի նախագահ ընկեր Աւդալբէգեանին, որ այստեղ Թիֆլիսում էր, որպէս զի նա պարզի այս խնդիրը և վերականգնի Ազգ. Խորհրդի իրաւունքները:

Ընկեր Աւդալբէգեանի կողմից անմիջապէս համապատասխան գրաւոր դիմում է արւում լուսաւորութեան մինիստրութեանը, որի մէջ մանրամասն բացատրւում է դրութիւնը և մատնանշւում, որ այժմեան հանգամանքներում Սուխումի զեմստուօներն անկարող են բաւարար բարձրութեան վրայ պահել հայ ազգային դպրոցները և որ նրանք պիտի շարունակուեն պահուել Ազգային Խորհրդի ղեկաւարութեամբ:

Կառավարութիւնը պիտի նպաստ տայ հայ դպրոցներին զեմստուօների միջոցով, Ազգային Խորհուրդը կը կազմի ուսուց-

չական խմբերը, և կը ներկայացնի զեմստուօներին ուսուցիչնե-
րի ռոճիկների հաշիւը և կստանայ դրամը և կը բաշխի նրանց,
իսկ տարեայ վերջում ընդհանուր տեղեկագիր կը ներկայացնի
զեմստուօներին իր դպրոցների մասին:

Այսպիսով Սուխումի շրջանի Հայոց Ազգ. Խորհուրդը իրեն
է վերապահում հայ դպրոցների ամբողջ ղեկավարութիւնը և
միայն աշխատում է կառավարութիւնից ստանալ դրամական
միջոցները, իսկ կառավարական օրգաններին - զեմստուօներին
մնում է միայն ընդհանուր հսկողութեան գործը, որ առանց
նպաստ տալու անգամ նրանց իրաւունքն է: Կառավարութեան
և Սուխումի Հ. Ա. Խորհրդի բանակցութիւնները դեռ վերջնա-
կան ելքի չեն հանգել <…>:

Ահա այս խնդրի շուրջն է, որ Վրաստանի Հ. Ա. խորհրդի
սեպտեմբերի 28-ի նիստում դաշնակցական ֆրակցիան իր
հարցապնդով <…> աշխատում էին տեսնել ազգային կուլտու-
րական ինքնավարութեան խնդրի կանխորոշում և ոտնահա-
րում Սուխումի Ազգ. Խորհրդի կողմից, բացի այս պնդում էին,
որ Սուխումը իրաւունք չունէր անկախ կերպով նման քայլի
դիմել:

Այն բացատրութիւնները, որ տուեցին այդ մասին Գործա-
դիր մարմնի նախագահ ընկ. Ա. Երզնկեանը և Սուխումի Հ. Ա.
Խ. նախագահ ընկ. Խ. Աւդալբէգեանը և Շրջանային տեսուչ
ընկ. Տ. Սողոմոնեանը միանգամայն պարզ կերպով ցոյց տուե-
ցին, որ <…> Սուխումի Հ. Ա. Խ. անցեալ մարտ ամսին, երբ դի-
մել է կառավարութեանը, և խնդրել իր ուսուցիչների համար
ևս վճարել պետական դպրոցներում կատարած յաւելումները,
իր բանակցութիւնները վարել է Վ. Հ. Ա. Խ. գործադիր Մարմնի
նախագահի հետ միասին: Բացի այդ դպրոցական վարիչն ան-
գամ խոստուանեց և այդ բոլորին էլ յայտնի է, որ Վ. Հ. Ա. Խ. և

Սուխումի Հ. Ա. Խ. յարաբերութիւնները մինչև այժմ այնքան էլ սերտ չեն եղել և վերջինս յաճախ անկախ դիմումներ է արել կառավարութեանը շրջանի այս կամ այն կարիքը բաւարարելու համար: Սրան երբէք դէմ չի արտայայտուել Վ. Հ. Ա. Խորհուրդը, ընդհակառակը յանձնարարել է Գործ. Մարմնին օժանդակել Սուխումին իր դիմումների ժամանակ, - հենց սրա հիման վրայ ընկ. Ա. Երզնկեանը իբրև Գործ. Մարմնի նախագահ օգնել է Սուխումի Հ. Ա. Խ. իր մարտ ամսի դիմումի ժամանակ: <…>

Բացատրութիւնները ցոյց տուեցին, որ Սուխումի Հ. Ա. Խորհուրդը կառավարութեան դիմել է և միայն նպաստ է խնդրել իր դպրոցների համար, զեմստուօների կարգադրութիւնը, թէ դպրոցներն անցնում են իրենց, միանգամայն նորութիւնն է և անընդունելի է Սուխումի [ՀԱԽ-ի] համար, դրա համար էլ լուսաւորութեան մինիստրութեանը դիմում է արուած, որ ոչչնչացնի զեմստուօների այդ կարգադրութիւնը և մինչև Հիմնադիր Ժողովը ազգային աւտոնոմիայի խնդիրը կը լուծէ վերջնական ձևով, դրութիւնը մնայ հինը և Ազգ. Խորհուրդը լինի ղեկավարը իր դպրոցների, զեմստուօներից ստանայ միայն դրամական միջոցները և նրանց հաշիւ տայ իր գործունէութեան մասին: Այսպիսով՝ պետական օրգաններին - զեմստուօներին վերապահւում է միայն հսկողութիւնը, իսկ գործի տէրն ու տնօրէնը նորից մնում է Ազգ. Խորհուրդը <…>:

Տե՛ս Դաշնակցականները եւ Սուխումի Հայոց Ազգային Խորհուրդը // Բանվորի Ձայն, 3 հոկտեմբերի 1920, N 40:

N 157

Հաղորդագրություն՝ Թիֆլիսի հայ հանրության 1920 թ. հոկտեմբերի 6-ի ցույցի մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի և կուլտուրական-կրթական բոլոր հաստատությունների ժողովի որոշման համաձայն Թիֆլիսի հայ հասարակությունը հոկտեմբերի 6-ին կազմակերպեց հսկայական բողոքի ցույց Հայաստանի վրայ կատարած տաճկական արշավանքի առթիւ:

Փակ էին բոլոր դպրոցները, առևտրական և ազգային այլ հաստատությունները: Բազմահազար ժողովուրդը նախ հաւաքւեց Վանքի բակում, որտեղից ժամը 10-ին դրօշակներով, պլակատներով և երաժշտութեամբ դիմեց դէպի Հայաստանի դիւանագիտական միսսիայի շէնքը, որտեղ եղան մի քանի ճառախօսութիւններ, ապա ամբոխը հետզհետէ ստւարանալով դիմեց նախ դէպի Հիմնադիր Ժողովի շէնքը, ապա Ազատութեան Հրապարակը: Ամերիկեան, Յունական, Ֆրանսիական, Անգլիական, Իտալական և Ռուսական միսսիաների առաջ ևս եղան ցոյցեր:

Ի միջի այլ հռետորների հանդէս եկան նաև Ալ. Լոմտատիձէն[135], Վ. Ջուղելին[136]: Բոլոր հռետորները միաբերան ընդգծում էին դրութեան լրջութիւնը և Հայաստանի ու Վրաստանի դեմոկրատիայի համերաշխ ու եռանդով գործակցելու անհրաժեշտութիւնը:

Տե՛ս Բանվորի Ձայն, 10 հոկտեմբերի 1920, N 41:

---

[135] Վրաստանի Սահմանադիր Ժողովի փոխնախագահ (1919-1921), Թիֆլիսի քաղաքային դումայի նախագահ (1918-1921):

[136] Վրաստանի Ժողովրդական գվարդիայի գլխավոր շտաբի պետ, քաղաքական գործիչ, ՎՍԴԲԿ-ի կարկառուն դեմքերից մեկը:

N 158

Հաղորդագրություն՝ Թիֆլիսի Ռուսաց ազգային խորհրդի դիմում-առաջարկը՝ Վրաստանի ՀԱԽ-ի հետ միասնաբար գործելու մասին

Сообщение об обращении Русского национального совета в Тифлисе к Армнацсовету Грузии с предложением о совместной деятельности

Русский национальный совет представил армянскому национальному совету доклад по вопросу о необходимости объединения всех национальных советов Грузии. Необходимость этого объединения мотивируется тем, что с предстоящим утверждением закона о правах национальных меньшинств явится неизбежность разрешения некоторых вопросов культурно-просветительных работ, осуществимых только путем согласованной деятельности всех существующих в Грузии национальных советов. На очереди – образование высшаго учебнаго заведения для обслуживания культурных нужд национальных меньшинств; необходима работа по углублению самодеятельности меньшинств в области материальной и духовной культуры при помощи кооперативов и земств.

Предложение русскаго национальнаго совета обсуждено было армянским советом на заседании 16 октября [1920 г.] и принципиально принято. Избраны 2 представителя для для совместнаго с представителя[ми] др[угих] советов обсуждения типа будущаго учебнаго заведения, предназначеннаго для культурных нужд национальных меньшинств.

Տե՛ս Хроника: объединение национальных советов //
Борьба, 20 октября 1920.

N 159

Հաղորդագրություն՝ Վրաստանում հայազգի քաղաքացիների իրավունքների վերաբերյալ հատուկ «հուշագիր» կազմելու ՀԱԽ-ի ղեկավարության որոշման մասին

Сообщение о решении руководства Армнацсовета Грузии о составлении особого “меморандума”, посвященного защите прав граждан армянской национальности

Армян. национ. совет в Грузии в соединенном заседании своего президиума, исполнительного органа и юридической комиссии рассматривал вопрос о правах национальных меньшинств в Грузии. Юридическая комиссия представила свой доклад по этому вопросу. Соединенное заседание поручило юридической комиссии изготовить соответствующий меморандум, который будет внесен в Учр. Собрание как документ, выясняющий армянские тезисы.

Տե՛ս Хроника //
Слово, 12 января 1921, N 7.

N 160

Հաղորդագրություն՝ Վրաստանի բարձրագույն իշխանություններին ՀԱԽ-ի «հուշագիրը» հանձնելու նպատակով՝ պատվիրակություն կազմելու որոշման մասին

Հայոց Ազգային Խորհուրդը՝ կառավարութեան նախագահին, Սահմանադիր Ժողովի նախագահին և ֆրակցիաների ներկայացուցիչներին կուլտուրա-ազգային աւտոնոմիայի մեմորանդում ներկայացնելու համար ընտրել է մի առանձին պատուիրակութիւն: Պատուիրակութիւնը պէտք է միջնորդէ և

այն մասին, որ եկեղեցին պետութիւնից բաժանելու օրէնքը ընդունելու դէպքում հայ եկեղեցու կալուածները յանձնուեն Ազգային Խորհրդի կարգադրութեան:

Տե՛ս Քրոնիկոն //
Մշակ, 28 հունվարի 1921, N 19:

N 161
Հաղորդագրություն՝ հայկական դպրոցների ներկայացուցիչների հետ ՀԱԽ-ի գործկոմի 1921 թ. հունվարի 30-ի խորհրդակցության մասին

Կիրակի, յունվարի 30-ին, երեկոյեան կայացաւ խորհրդակցական նիստ Ազգ. Խորհ. գործադիր մարմնի, տնտեսական խորհրդների ներկայացուցիչների. քննուեցին՝ եկեղեցական կալուածների խնդիրը, Ազգ. Խորհրդի կազմած դպրոցական կանոնադրութիւնը (մանրամասն քննութիւնը թողնուեց ապագայում) և այն սուղ միջոցները, որ այսօր ունեն տարաբաղդ հայ դպրոցները կալուածական եկամուտների չնչին լինելու պատճառով: Առաջին հարցի մասին խորհրդակցելու համար ընտրուեց մի մասնախումբ 4 հոգուց, որ աշխատի Ազգ. Խորհ. գործադիր մարմնի հետ՝ պ.պ. Յովհ. Մալխասեան, Յովհ. Տէր-Միրաքեան, Գար. Գարդիշեան և Աբազեան, ապա որոշուեց, որ իւրաքանչիւր դպրոցի վարչութիւն մտցնի մինիստրութիւն (Ազգ. Խորհրդի միջոցով) պարենաւորման համար պահանջուած 10000 ռ[ուբլի] գումարի կէսը՝ իւրաքանչիւր ուսուցչի համար 5000-ական ռուբլի, մնացած 5000-

ական ռուբլին մտցնելու է ինքը Ազգ. Խորհուրդը. բոլորը միասին պէտք է մտցնել փետրվարի 1-ի թուով 800000 ռուբլի[137]:

Տե՛ս Քրոնիկոն //
Մշակ, 2 փետրվարի 1921, N 23:

N 162
Հաղորդագրություն՝ Վրաստանի ՀԱԽ-ին ենթակա ժողովրդական դպրոցներում ուսումնական գործի կազմակերպման մասին

Մաս I

Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը կազմակերպուեց 1918 թ. աշնան սկզբին և իր ձեռքն առաւ Վրաստանում գտնուող բոլոր հայոց դպրոցների ղեկավարութիւնը: Սակայն այդ ուսումնական տարուայ ընթացքում Ազգային Խորհրդի դպրոցական բաժինը շատ քիչ բան կարողացաւ անել աննօրմալ պայմանների շնորհիւ. թկար դեռ ևս դպրոցական կանոնադրութիւն և ծրագիր:

Կանոնադրութիւնը պատրաստ էր միայն 1919-1920 ուսումնական տարուայ սկզբին և այդ ժամանակից էլ սկսւում

[137] Կառավարությունը կոոպերատիվների միջոցով կազմակերպել էր էժան հացի և այլ բնամթերքի մատակարարում պետականորեն ճանաչված արհեստակցական միությունների անդամների համար: Ինչպես երևում է, «Վրաստանի հայկական դպրոցների ուսուցիչների արհեստակցական միությունը», որը ստեղծվել էր 1919 թ., այդ տեսակի արտոնությունից չէր օգտվում: Հետևապես, սույն կազմակերպությունը 1921 թ. սկզբին մտել էր Վրաստանի ուսուցչական միության մեջ, որպես «հայկական դպրոցների դասատուների սեկցիա», «Ունիվերսալ» նրա կոոպերատիվի ծառայությունից օգտվելու պայմանով: Տե՛ս Քրոնիկոն // Մշակ, 13. 02. 1921: Այսպիսով՝ ՀԱԽ-ը պարտավորվել էր իրեն ենթակա դպրոցների հայ ուսուցիչներին ցածր գներով պարենավորման դիմաց գումար հատուցել սույն կոոպերատիվին:

է դպրոցական բաժնի սիստեմատիկ աշխատանքը. ընտրւում է ժամանակաւոր դպրոցական խորհուրդ և հրաւիրւում են երկու շրջանային տեսուչներ, որոնք դպրոցական բաժնի վարիչի հետ գործելով զբաղւում են դպրոցական ծրագիր մշակելով և ամբողջ դպրոցական գործին կանոնաւոր ընթացք տալով:

Ազգային Խորհրդի դպրոցական կանոնադրութեան հաստատած 31-րդ յօդուածի հիման վրայ դպ. խորհուրդը պէտք է բաղկացած լինի Վրաստանի հայ դպրոցների ուսուցչութեան կողմից ընտրուած 2 ներկայացուցչից, դպրոցական տնտեսական խորհուրդների 1 ներկայացուցչից և դպրոցական բժիշկների 1 ներկայացուցչից:

Գործադիր մարմինը ի նկատի ունենալով այս ներկայացուցիչների ընտրութեան դժուարութիւնները տիրող հանգամանքների շնորհիւ, 1919 թ. հոկտեմբերին որոշեց դպրոցական խորհրդի ֆունկցիաները յանձնել Ազգային Խորհրդի ընտրուած դպրոցական յանձնաժողովին: 1920 թ. ապրիլի 6-ին Ազգային Խորհուրդը լսելով դպ. վարիչի զեկուցումը դպրոցական խորհրդի մասին, ընտրել է նոր դպրոցական յանձնաժողով չորս հոգուց բաղկացած, և յանձնարարել նրան դպրոցական վարիչի նախագահութեամբ կատարել ժամանակաւորապէս դպրոցական խորհրդի ֆունկցիաները, ըստ կանոնադրութեան պահանջների:

Դպրոցական վերահսկողութեան գործը կանոնաւորելու համար 1919 թ. հոկտեմբերին Գործադիր Մարմինը լրագրական յայտարարութեամբ դիմողներից հրաւիրեց և շրջանային 2 տեսուչ[138]:

Ազգային խորհրդի դպրոցական բաժնի վարիչը, դպրոցական խորհուրդը և շրջանային տեսուչները միասին վարել են

[138] Տե՛ս. N 128 վավերագիրը:

մեր դպրոցական գործը իբրև մի ամբողջութիւն՝ իւրաքանչիւրն իր պարտականութիւնների և իրաւունքների սահմաններում:

Դպրոցական բաժնի առաջին գործն եղավ լրացնել և ամբողջացնել ստորին դպրոցների ծրագրային աշխատանքները, որ կատարել էր նախկին դպրոցական յանձնաժողովը:

Նոր ծրագրի կարիքն զգացւում էր բոլոր դպրոցական գործիչների շրջաններում, որովհետև հին ծրագրի թերութիւնները և ժամանակի պահանջներին չհամապատասխանելը ակնբախ էր դարձել. նոր ծրագիրը կազմուեց համաձայն Ազգային խորհրդի ընդունած և հրատարակած դասատախտակի՝ սկզբունք ընդունելով ժամանակակից մանկավարժական պահանջները և դեմօկրատիկ տեսակէտները: Ըստ հնարաւորութեան ի նկատի առնուեց նոյնպէս աշխատանքի դպրոցի պահանջը. ասում ենք ըստ հնարաւորութեան, որովհետև այդ պահանջն ամբողջովին կիրառելու համար կային բազմաթիւ արգելառիթ հանգամանքներ, որոնցից յիշենք այստեղ միայն երկուսը – ա) ուսուցիչների անպատրաստ լինելը և բ) նիւթական միջոցների պակասութիւնը: Վերոյիշեալ հիմունքներով կազմուած ծրագիրը քննութեան ենթարկուեց Թիֆլիսի հայ դպրոցների ուսուցչական խմբերի ներկայացուցիչների ընդհանուր ժողովներում, հրատարակուեց և ուղարկուեց բոլոր դպրոցներին ի գործադրութիւն:

Այնուհետև դպրոցական բաժինը ձեռնարկեց բարձր տարրական դպրոցների ծրագրի մշակման գործին ուսուցչական մասնաժողովների միջոցով. մասնաժողովների մեծ մասն արդէն աւարտել է իր գործը անցեալ ուսումն[ական] տ[արվա] ընթացք[ում], սակայն ընդհանուր ժողովների քննադատութիւնները չվերջացան, որովհետև ամառը վրայ հասնելով՝

ուսուցիչների մեծ մասը ցրուեց. գործը շարունակւում է այս տարի: Բարձր տարրական դպրոցների ծրագիրները նոյնպէս մշակուեցին ստորին տարրականի ծրագրի սկզբունքով, միայն այստեղ գործն աւելի դժուար էր, որովհետև այս տիպի դպրոցների ծրագիրները միաժամանակ թէ՛ իբրև վերջացած ամբողջութիւն պէտք է կազմէին, և թէ՛ միջնակարգ դպրոցներում շարունակել ցանկացողների համար նախապատրաստական շրջան կազմէին: Մեր ծրագիրներն այնպէս են կազմւում, որ մէկ տիպի դպրոցն աւարտող աշակերտները առանց արգելքի ընդունուեն և շարունակեն իրենց ուսումը յաջորդ, ավելի բարձր տիպի դպրոցում, այսպիսով պահպանւում է երկու կարգի՝ ստորին և միջնակարգ դպրոցների միութեան ամբողջութիւնը և բաւարարութիւն է տրւում այն պահանջին, որ իւրաքանչիւր մանուկ մտնելով ստորին տարրականի առաջին բաժանմունքը՝ իրաւունք և միջոց ունի մտնելու համալսարան՝ նայելով իր ընդունակութիւններին:

Մեր դպրոցներում երեխաների ծնողները ոչ մի մասնակցութիւն չունէին դպրոցական գործում և այդպիսով դպրոցի և ընտանիքի մէջ ոչ մի յարաբերութիւն չլինելով տուժում էր թէ՛ դպրոցը և թէ՛ ընտանիքը. մինչդեռ դաստիարակչական խնդիրներում այդ երկու գործօնների միահամուր աշխատանքի անհրաժեշտութիւնը վաղուց արդէն ճանաչուած է թէ՛ մանկավարժներից և թէ՛ հասարակութիւնից: Դպրոցական բաժինն այս խնդրին ընթացք տալով մշակեց ծնողական միութիւնների համար հրահանգներ և կարգադրեց, որ մեր բոլոր դպրոցներում կազմակերպուեն ծնոցական խորհուրդներ: Անցեալ տարուայ ընթացքում մեր բոլոր դպրոցները, բացի մի քանի գիւցական դպրոցներից, ունեցան բացի տնտեսական խորհուրդ-

ներից նաև ծնողական խորհուրդներ, որոնք գործում էին մշակուած հրահանգների համաձայն:

Դպրոցական տօների և արձակուրդների նկատմամբ շփոթութիւններ էին տիրում մեր դպրոցներում. միևնոյն տօնը մի քանի դպրոցում տօնում էին, իսկ միւսներում չէին տօնում, կամ մեր դպրոցները տօնում էին, իսկ պետական դպրոցների հայ աշակերտութիւնն արգելւում էր այդ օրը բացակայել դպրոցից: Այս շփոթութիւնները վերացնելու և դպրոցական պարապմունքները կանոնաւորելու նպատակով մշակուեց դպրոցական տօների ու արձակուրդների նօրմալ տախտակ և ուղարկուելով մեր բոլոր դպրոցներին հրահանգուեց անշեղ կերպով գործադրել: Նոյն տախտակն ուղարկելով վրաց լուսաւորութեան մինիստրութեան, միջնորդութիւն յարուցուեց, որ պետական դպրոցների հայ աշակերտութեան համար ևս նոյնութեամբ գործադրուի:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի դպրոցական գործը //Մշակ, 3 փետրվարի 1921, N 24:

Մաս II

Դպրոցական կանոնադրութեան 44 յօդուածի իմաստով մեր դպրոցների տնտեսական խորհրդի անդամները պէտք է ընտրուեն «համայնքից (հայ քաղաքացիներից) քառանդամ սիստեմով». ներկայ պայմաններում հնարաւոր չլինելով այդպիսի ընտրութիւններ կատարել, ժամանակաւորապէս կարգադրուեց, որ դպրոցների նախկին հոգաբարձութիւնների անդամները համարուեն տնտեսական խորհրդի անդամներ՝ ծնողական և մանկավարժական խորհուրդների ներկայացուցիչների և դպրոցական բժշկի հետ, այս կազմը հաստատւում է

դպրոցական բաժնից: Չնայելով ընտրութեան վերոյիշեալ ձևով կատարուելու դժուարութիւններին, այնուանենայնիւ մի քանի տեղերից դիմումներ ստացուեցին, որպէսզի ընտրութիւնների համար հրահանգ ուղարկուի իրենց, այդ դիմումներին ևս բաւարարութիւն տալու համար դպրոցական բաժինը մշակեց տնտեսական խորհուրդների անդամների ընտրության համար հրահանգ, սակայն ոչ մի տեղ չյաջողուեց կանոնադրութեան պահանջված եղանակով ընտրութիւններ անել և դպ. բաժինը հրահանգած ժամանակաւոր կարգադրութիւնը մնաց իր ուժի մէջ:

Դպրոցական կանոնադրութեան մէջ որոշուած են շրջանային տեսուչների պարտականութիւնները. դպրոցական բաժինը հարկաւոր համարեց աւելի մանրամասնօրէն որոշել նրանց գործունէութեան վերաբերեալ խնդիրները և մշակել նրանց համար հրահանգներ, որոնցով առաջնորդուեցին նրանք անցեալ ուսումնական տարուայ ընթացքում;

Որպէս զի դպրոցների գործունէութեան, ուսուցիչների պարապմունքների, աշակերտների առաջադիմութեան և տնտեսական խորհուրդների կատարած աշխատանքների մասին կանոնաւոր և ճիշտ ստատիստիկական տեղեկութիւններ լինեն, դպ. պաժինը մշակել է երեք ստատիստիկական տախտակների ձևեր և տպագրել տալով ուղարկել է դպրոցներին, դրանցից մեկը տարեսկզբի տեղեկագիրն է, երկրորդը տարեվերջի ու երրորդը տնտեսական խորհուրդների հաշուետուութեան մասին: Այս տեղեկութիւններից է կազմուած դպրոցական տարեկան հաշուետութեան տեղեկագիրը:

Որպէս զի իւրաքանչիւր դպրոցի համար դասատու հրաւիրելիս դպ. բաժինը ստիպուած չլինի ամեն անգամ վկայաթղթեր պահանջել դրանցից, կազմուեց մի ընդհանուր ցուցակ

այն ուսուցիչների ու վարժուհիների, որոնք պաշտօնավարում են կամ ցանկութիւն ունեն պաշտոնավարելու մեր դպրոցներում. ցուցակի մէջ նշանակուած են դասատուների անունը, հայրանունը, ազգանունը, ուսման վկայականի N-ը, մը թուին աւարտած լինելը: Նոր պաշտօն ստացող դասատուները չեն հաստատւում իրենց պաշտօններում, մինչև որ նրանք արձանագրուած չը լինեն այս ընդհանուր ցուցակի մէջ:

Այն ուսուցիչները, որոնք միջնակարգ դպրոցների աւարտման վկայական չունեն, նշանակւում են ուսուցիչ տարրական դպրոցներում ժամնակաւորապէս՝ ի նկատի ունենալով նրանց փորձառութիւնը կամ մասնագիտական պատրաստականութիւնը: Միջնակարգ դպրոցներում դասաւանդելու իրաւունք ունեն համալսարանաւարտները: Բաւականաչափ կօնտինգէնտ չունենալու պատճառով՝ թոյլ է տրուած դարձեալ ժամանակաւորապէս դասաւանդելու համալսարաններում եղած, բայց աւարտական վկայական չունեցողներին:

Վաղուց ձեռնարկուած էր կազմել ուսուցչական թոշակարկղի կանոնադրութիւնը, սակայն այդ խնդրի շուրջը ծագած բարդութիւնները հնարաւորութիւն չեն տալիս արագ լուծելու այդ հարցը: Այժմ մշակւում է պետական դպրոցների դասատուների համար թոշակարկղի կանոնադրութիւնները, որը հաստատուելուց յետոյ որոշ չափով կարող է հիմք ծառայել մեր թոշակարկղի կանոնադրութեան համար: Թոշակարկղի կանոնադրութեան հետ է կապուած նաև հնգամեակների խնդիրը, որովհետև ծառայութեան վայրը և ծառայած տարիների թիւը հարկ է համարւում հաստատել փաստաթղթերով:

Մեր դպրոցական դասատախտակում նշանակուած են ազատ ժամերի պարապմունքներ, որոնց համար ուսուցիչները վարձատրութիւն են ստանում, այս ժամերի պարապմունք-

ները սկզբում անորոշ էին և ուսուցիչները տարբեր կերպով էին հասկանում իրենց անելիքը, որպէսզի ազատ ժամերը միայն ձևական նշանակութիւն չունենան և աշակերտները կարողանան էապէս օգուտ ստանալ, դպ. բաժինը զբաղուեց այդ խնդրով և մշակեց որոշ հրահանգներ բոլոր տիպի դպրոցների համար <…>

Դպրոցական բաժինը նպատակայարմար համարեց ընդունել դասարանական դաստիարակների սիստեմը, ամեն մի դասարան յատուկ դաստիարակ պէտք է ունենայ, որի պարտականութիւնը լինի իր դասարանի աշակերտութեանն դաստիարակութեան վրայ առանձին ուշադրութիւն դարձնել, ծանօթանայ նրանց անհատականութեան, ընտանեկան կեանքի, նիւթական միջոցների հետ և այլն: Ճիշտ է, այս սիստեմը նոր բան չէ մեր դպրոցների համար, բայց որովհետև դասարանական դաստիարակները յատուկ վարձատրութիւն չէին ստանում առաջ, այդ պաշտօնն էլ միայն ձևական նշանակութիւն ուներ: Դպ. բաժինը սահմանեց դաստիարակների համար որոշ վարձատրութիւն (շաբաթական 6-8 ժամուայ դասազնի վարձատրութիւն) և մշակեց հրահանգներ, որով պէտք է ղեկավարուեն նրանք:

Դպրոցական բաժինը, յատուկ ուշադրութիւն է դարձրել նաև Թիֆլիսի դպրոցների վրայ: Այստեղ գոյութիւն ունեցող քաղաքային ըև պետական միջնակարգ ազգայնացած դպրոցները բաւական մեծ թուով [հայազգի] աշակերտութիւն ունեն, հարց առաջացավ թէ արդեօք կարիք կայ, որ մենք Թիֆլիսում մեծ թուով դպրոցներ պահենք: Դպրոց. բաժինը ի նկատի ունենալով, որ վերոյիշեալ դպրոցներում հայ աշակերտութիւնը չի տուժում, եկաւ այն որոշման, որ հետզհետէ կարելի է մեր

դպրոցների թիւը պակասեցնել Թիֆլիսում և դրանց տեղ նորերը բանալ գաւառներում:

Այստեղի վեց միջնակարգ և միջնակարգ կոչուող դպրոցներից որոշուեց ունենալ երեք կանոնաւոր միջնակարգ դպրոց: Թանդոյեան և Քամոյեան դպրոցները վերածել կանոնաւոր բարձր տարրական դպրոցների, իսկ հայկական գիմնազիան փակել և աշակերտներին տեղաւորել միւս դպրոցներում: Գայիանեան և Մարիամեան [օրիորդաց] դպրոցները դարձնելով զուտ միջնակարգ դպրոցներ, հետզհետէ փակել նրա ստորին դասարանները և տեղը բանալ բարձր դասարանների զուգընթացներ: Հալլաբարում գոյութիւն ունեցող երկու տարրական դպրոցները՝ Էջմիածնեցոց և Շամքորեցոց – որոշուեց միացնել և դարձնել մի կանոնաւոր դպրոց: Նոյնպէս և սբ. Սարգսի և սբ. Գէորգի դպրոցները միացնելով՝ կազմել մի ստորին և բարձր տարրական դպրոց: Քամոյեան դպրոցը դարձնելով բարձր տարրական դպրոց, տեղափոխել Հալլաբար, որպէս զի այդ թաղամասի երեխաները ստիպուած չը լինեն հեռաւոր թաղեր գնալու, փակուեց նաև Թանդոյեան դպրոցի առաջին բաժանմունքը:

Ներսիսեան դպրոցի Ազգային Խորհրդին ենթարկուելու խնդիրը դեռ ևս իր վերջնական լուշումը չի ստացել: Հոգաբարձութիւնը ցանկացաւ բանակցութիւններ վարել Ազգային Խորհրդի նախագահութեան հետ, բայց ձգձգուեց և դպ. բաժինը մինչև այժմ չկարողացաւ ստանալ այդ դպրոցի անցեալ տարուայ տեղեկագիրը և այս տարուայ նախահաշիւը:

Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի դպրոցական գործը //Մշակ, 4 փետրվարի 1921, N 25:

N 163

Բաթումի ՀԱԽ-ի հայտարարությունը

Ի գիտութիւն Բաթումի վրայով Պոլիս կամ արտասահմանի որևէ վայր անցնելու մտադրութիւն ունեցող բոլոր հայ գաղթականների այսու վերջնականապէս յայտարարում ենք, որ Բաթումի Հայոց Ազգային Խորհուրդը, զուրկ լինելով նիւթական միջոցներից, իր վրայ չի վերցնում ոչ մի պարտականութիւն, կամ նրանց աջակցելու որևէ ձև:

Բաթումի Հայոց Ազգային Խորհուրդ
1 փետրվարի 1921 թ.
Բաթում

Տե՛ս Յայտարարութիւն //
Մշակ, 6 փետրվարի 1921, N 27:

N 164

Հաղորդագրություն՝ Վրաստանի հայկական ժողովրդական դպրոցների ուսուցիչների աշխատավարձերը հավելելու ՀԱԽ-ի որոշման մասին

Հայոց Ազգային Խորհուրդը, ի նկատի ունենալով կառավարութեան կողմից արած կարգադրութիւնը ռոճիկների 100 տոկոս յաւելման մասին, կարգադրել է ըստ նորմայի ուսուցիչների դասագինը աւելացնել 100 տոկոսով, իսկ Ազգային Խորհրդի տրուող նպաստը 50 տոկոսով:

Ազգային Խորհուրդը որոշել է պահանջել Ներսիսեան դպրոցի Հոգաբարձութիւնից դպրոցի նախկին տարիների ուսումնական և տնտեսական հաշիւը և տեղեկագիրը:

Տե՛ս Քրոնիկոն //
Մշակ, 6 փետրվարի 1921, N 27:

N 165

Լրագրային հաղորդում՝ հայկական ժողովրդական դպրոցների հանդեպ վրաց իշխանությունների ունեցած վերաբերմունքի մասին

<…> Յայտնի է, որ վրաց կառավարութեան և Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի մէջ կայացած համաձայնութեան հիման վրայ՝ մինչև Սահմանադիր ժողովի կողմից օրէնք հրապարակուելը - փոքրամասնութեանց ինքնաւարութեան մասին – հայոց դպրոցները մնում են նախկին դրութեան մէջ. այսինքն լիովին անկախ և ինքուրոյն կազմակերպութեամբ, սակայն զեմստվոներն իրաւունք են համարում ի նկատի չառնել այդ հանգամանքը:

Զեմստվոները ցանկանալով աւելացնել իրենց շրջանի դպրոցների թիւը, նոր դպրոց են բաց անում հէնց այն գիւղում, որտեղ արդէն հայ դպրոց կայ, թէև շրջակայ մի քանի գիւղեր մնում են առանց դպրոցի:

Երբեմն էլ չբաւականալով դրանով իրենց բացած դպրոցը տեղաւորում են հայ դպրոցի շէնքի մէջ, այդ դեռ բաւական չէ, պատահում են դէպքեր, որ զեմստվոն գրաւելով հայ դպրոցի շէնքը և տեղաւորուելով այնտեղ՝ խլում է նաև դպրոցական կարասիքը, նստարանները, գրասեղանները, գրատախտակը և հայ դպրոցի ուսուցիչն ու երեխաները մնում են դուրսը: <…>

Պատահել են դէպքեր էլ, երբ զեմստվոները ցանկացել են նաև իրենց իրաւասութիւնից բարձր խնդիրներ վճռել և այդ ուղղութեամբ պահանջներ արել – օրինակ՝ նրանք ժխտել են հայ դպրոցի և հայոց լեզուի գոյութեան իրաւունքը և պահանջել, որ հայ դպրոցում բոլոր առարկաներն աւանդուեն վրացե-

րէն լեզուով և, երբ այդ պահանջը չի իրագործուել, ուժով փակել են դպրոցը: <…>:

Տե՛ս Վրաստանի զեմստվօները եւ հայոց դպրոցները //
Մշակ, 9 փետրվարի 1921, N 29:

N 166
Հաղորդագրություն՝ վիրահայերի ինքնակառավարման և մշակութային ինքնավարության խնդրին նվիրված հուշագրի մշակման ավարտելու մասին

Վրաստանի հայութեան կուլտուրական աւտօնօմիային վերաբերեալ յուշագիրը[139] Հայոց Ազգային խորհրդի մէջ արդէն մշակուած է և ներկայացուելու է Վրաստանի Հիմնադիր Ժողովին:

Տե՛ս Քրոնիկոն //
Մշակ, 10 փետրվարի 1921, N 30:

N 167
Հաղորդագրություն՝ Վրաստանի վարչապետի և ՀԱԽ-ի նախագահի 1921 թ. փետրվարի 10-ի աշխատանքային հանդիպման մասին

Փետրվարի 10-ին կառավարութեան նախագահը ընդունեց Ամերիկական Կարմիր Խաչի կոմիտէի ներկայացուցիչ կապիտան Պրոուին և Հայոց Ազգային Խորհրդի նախագահին:

Տե՛ս Քրոնիկոն //
Մշակ, 12 փետրվարի 1921, N 32:

---

[139] Տե՛ս MEMORANDUM, Учредительному Собранию о Национальном Самоуправлении армян в Грузии. [Тифлис, 1921].

N 168

Խմբագրական «Մշակ» օրաթերթում՝ Վրաստանի ՀԱԽ-ի գործունեության մասին

Վրաստանի հայության ներկայացուցիչ համարւում է Հայոց Ազգային Խորհուրդը, որ գտնւում է Թիֆլիսում և որի ձեռքերում կենտրոնացած պիտի լինեն այն բոլոր գործերը, որոնք մարմնացում են հայոց ազգային-կուլտուրական ինքնօրինութիւնն ամբողջովին, այս բառի ընդարձակ իմաստով: <…>

Վիրահայ Ազգային Խորհուրդն արդեն ունի իր պատմութիւնն, այն էլ պէտք է ասել, բաւական աղմկաւոր պատմութիւնը: Կուսակցութիւնների մրցութիւնն առաջնութեան, վճռական դիրքի համար մտաւ և այս հիմնարկութեան մէջ, որ թէև խօսում էր ժողովրդի անունից, բայց ընտրուած չէր ժողովրդից: Մեր յիշողութեան մէջ է, որ երկար ժամանակ հիմնարկութիւնը չուներ ուրիշ հարց ու հոգս, բայց միայն նախագահական բարձը կուսակցութիւններից մէկն ու մէկին տալը: Բայց վերջապէս համաձայնութիւն կայացրին և սկսեցին աշխատանքները: Եւ այս աշխատանքն էլ ահա ի ցոյց հանեց մեր ամբողջ ապիկարութիւնը:

Այստեղ մենք Ազգային Խորհրդի պատմութիւնը չենք գրում, որպէսզի մէկիկ մէկիկ մատնանշենք բոլոր պակասութիւնները: Կասենք այնքանը, որ ստեղծուեց մի բարդ և բազմագլխեան բիւրօկրատիկ գործ, պաշտօնեաների մեծ թուով և պաշտօնների դասակարգումներով: Մեր յեղափոխական ժամանակներում ամեն ինչ կատարւում է մեծ չափերով, ընդօրինակելով մեծ հիմնարկութիւնները: Վիրահայոց Ազգային Խորհուրդն ունի նախագահութիւն, գործադիր մարմին, դիւան,

ընդհանուր ժողով և այլն: Այս բիւրօկրատական ամբոխացման մէջ էլ, անկասկած, պիտի նօսրանար նոյն իսկ մեր, իբրև համայնական տարրի, ընդունակութեան մատչելի գործունէութիւնը: Մանաւանդ, որ հէնց սկզբից էլ մենք ընդգրկեցինք գործունէութեան մի շատ սահմանափակ շրջան:

Այստեղ էլ մեզ ղեկավարողը վարժապետական մտայնութիւնն էր: Ազգային-կուլտուրական աւտոնոմիայի միակ արտայայտութիւն ընդունեցինք դպրոցական գործը, միանգամայն մոռացութեան տալով ազգային համարժէք գործօնները: Այնպէս որ, վերջ ի վերջոյ, Ազգային Խորհուրդը վերածուեց ամենաշատը կրթական ինքնավար տեսչի մի դիւանի, որ ծանրաբեռնուած էր բազմաթիւ, դպրոցական գործի հետ ոչինչ առնչութիւն չունեցող, յաճախ աւելորդ, թանգ նստող և միանգամայն դատարկ թղթապանակներով:

Եւ պատահեց այն, ինչ չէր կարող չը պատահել – լճացում, անարիւնութիւն: Եւ այս հանգամանքն առանձնապէս շեշտուած առաջ եկաւ ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների հարցում:

Ո՞վ պիտի պաշտպանէր այդ իրաւունքները հայ փոքրամասնութեան կողմից, եթէ ոչ նրա Ազգային Խորհուրդը:

Մեր հաւաքած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Ազգային Խորհուրդը, գիտակցել է իր պարտականութիւնը և վաղուց սկսել է մի շարք աշխատանքներ՝ մշակելու համար ազգային ինքնօրինութեան նուազագոյն պահանջները և հիմնաւորելու համար այդ պահանջները հայ ազգի պատմական իրաւունքներով: – Սակայն բանը հարց դնելը չէ, այլ նրան իրագործելը: Այստեղ մենք տեսնում ենք անկարողութիւն շատ խոշոր չափերով: Ազգային Խորհուրդը պիտի ժողովրդականացնէր այդ հարցը նախ և առաջ հայ ժողովրդի մէջ, տալով նրա

ձեռքը գիտակցութիւն տրամադրող առատ և բազմակուտակ նիւթեր, ապա նպաստաւոր հող պատրաստէր վրաց հասարակական կարծիքի և կառավարող շրջանակների, մասնաւորապէս Հիմնադիր Ժողովի մէջ, ներկայացնելով լուրջ ուսումնասիրութիւններ ոչ միայն հայերէն, այլև պետական և ամենքին մատչելի մի երրորդ լեզուով էլ – ռուսերէնով: Այս վերին աստիճանի կարևոր գործը, ինչպէս տեղեկանում ենք, ծրագրուած է եղել Ազգային Խորհրդի մէջ, բայց նրա իրագործումը խափանուել է, զարկուելով ապիկարութեան ժայռերին և փշուր-փշուր դառնալով անկարողութեան հարուածների տակ: Անկարելի եղաւ ստեղծել եռանդոտ և կենսունակ խմբագրական և քարոզչական մարմիններ, որոնք անդադար նիւթեր տային և տարածէին, պատրաստէին և տպագրէին յուշագիրներ և ուսումնասիրութիւններ: Մարդիկ չը գտնուեցին, այս բոլորը չէ: Ինչպէս միշտ է պատահում, փող էլ չը գտնուեց հարուստ համարուող հայ ժողովրդի մէջ նրա նուիրական իրաւունքները պաշտպանելու համար: Վերջ ի վերջոյ ամեն ինչ վերածուեց չարչիութեան և գրօշանոց հաշիւների: Եւ այսօր եթէ անուում է մի բան, այդ մի փոքրիկ յուշագիր է, կազմուած շտապով ու խուճապով, որ ներկայացուում է Հիմնադիր ժողովին:

Տե՛ս Մեր ապիկարութիւնը //
Մշակ, 13 փետրվարի 1921, N 33:

N 169

Լրագրային հաղորդում՝ ՀԱԽ-ի նախագահ Բ. Թոփչյանի 1921 թ. փետրվարի 12-ի մամուլի ասուլիսի մասին

Փետրվարի 12-ին մամուլի ներկայացուցիչներն ընդունուեցին Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի նախագահ Բ. Թոփչեանից, որ նրանց հետևեալ յայտարարութիւն արաւ.

Հանրապետութեան Հիմնադիր Ժողովը ձեռնարկել է քննելու սահմանադրութեան այն յօդուածները, որոնք շօշափում են Վրաստանի հողաբաժնում ապրող ազգային փոքրամասնութիւնների շահերը:

Գիտակցելով այն մեծ պատասխանատուութիւնը, որպիսին մենք կրում ենք հայ աշխատաւոր դեմոկրատիայի առաջ նրա ապագայ վիճակը տնօրինելու գործում, Հայոց Ազգային Խորհուրդը իր պարտականութիւնը համարեց դիմել Վրաստանի գերագոյն օրէնսդրական մարմնին առանձին յուշագրով, որի մէջ պարզուած են Վրաստանի հայերի ձգտումները և ակնկալութիւնները:

Սահմանադրական մասնաժողովի մշակած սահմանադրութեան նախագիծը, որ չափով վերաբերում է ազգային փոքրամասնութիւնների իրաւունքներին, բնականաբար ոչ մի կերպ չի կարող բաւարարել հայկական փոքրամասնութեան, որի պատմական, սոցիալական ու կուլտուրական առանձնահատկութիւնները մինչև օրս ոչ ոք չի ժխտում:

Նախապատրաստական աշխատանքների շրջանում խորհուրդս քանիցս [սահմանադրական] մասնաժողովի և Հիմնադիր Ժողովի ղեկավար շրջանների ուշադրութիւնն է դարձրել այդ հանգամանքի վրայ և դեռ 1920 թ. յուլիսի 6-ին ընդունած իր բանաձևի մէջ պարզ և որոշակի յայտնեց, թէ «քննելով

Վրաստանի Հանրապետութեան սահմանադրութեան բաժինը, ազգային փոքրամաս[նությունների] իրաւունքների մասին, որ մշակել է Հիմնադիր Ժողովի սահմանադրական մասնաժողովը, գտնում է, թէ բաժինը առհասարակ չի կարող բաւարարել ազգային փոքրամասնութիւնների պահանջները, առանձնապէս Վրաստանի հայերի, որոնք ի թիւս միւս փոքրամասնութիւնների ըստ իր քանակի և այլ առանձնահատկութիւնների գրաւում է առաջին տեղը:

Միաժամանակ Խորհուրդը գտնում է, թէ բաժինը, բնաւ չապահովելով Վրաստանի հայերի ազգային կուլտուրական շահերը, բացասում է նոյն իսկ այն իրաւունքները, որ Վրաստանում հայերը իրապէս օգտւում էին մինչև այժմ»:

Բողոքելով այդ բաժնի դէմ, Խորհուրդը յանձնարարեց պրեզիդիումին ընդունել համապատասխան միջոցներ, Վրաստանի հայերի կուլտուրական-ազգային պահանջները ապահովելու համար, համաձայն Ազգային Խորհրդի մշակած նախագծի: <…>

Տե՛ս Հաղորդագրութիւն Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի նախագահից //Մշակ, 13 փետրվարի 1921, N 33:

N 170

Լրագրային հաղորդում՝ Վրաստանի ՀԱԽ-ի 1921 թ. փետրվարի 15-ի նիստի մասին

Փետրվարի 15-ին, երեկոյեան ժամը 7-ին, տեղի ունեցաւ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի նիստը: Նախագահ Բ. Թոփչեանը, յայտարարելով օրակարգի հարցերը, նախ քան նրանց քննութեան դիմելը, դարձաւ ժողովին մի ճառով, որի մէջ յիշատակելով որ Վրաստանի և Հայաստանի սահմանա-

գլխի վրայ սկսուել են պատերազմական գործողութիւններ, մատնանշեց այն հանգամանքը, որ Լոռին, ուր տեղի ունեն այդ արիւնահեղ դէպքերը, բնակեցուած է մեծագոյն մասամբ հայերով, որոնք և, բնականաբար, պիտի շատ վնասուեն պատերազմական գործողութիւններից:

Ազգային Խորհուրդն, իբրև ներկայացուցիչ և բերան Վրաստանի ամբողջ հայութեան, պիտի կատարէ իր պարտքը հանդէպ իր հայրենիքի, մի կողմից ամեն պատրաստականութիւն յայտնելով վրաց կառավարութեան աջակցելու մասին, որքան ինքը կարող է, որպէսզի դադարեցուի արիւնահեղ ընդհարումը, և եթէ կան վիճելի հարցեր Վրաստանի և Հայաստանի մէջ, դրանց կարգաւորման և լուծման համար ընտրուի բանակցութիւնների ճանապարհը, ինչպէս այդ կամենում է և վրաց կառավարութիւնը: Այդպիսի մի ծառայութիւն Ազգային Խորհուրդը կարող է մատուցանել, գործադրելով իր ամբողջ հեղինակութիւնն ու ազդեցութիւնը Լոռու հայ գիւղացիութեան վրայ և միջնորդ հանդիսանալ նրա և վրաց կառավարութեան մէջ: Այս անհրաժեշտ է ամենից առաջ հէնց հայ գիւղացիութեան տեսակէտից:

Այնուհետև խօսք տրուեց Ազգային խորհրդի ֆրակցիաներին, որոնք ամենքը, խօսելով իրար ետևեց, ցաւ յայտնեցին տեղի ունեցող տխուր դէպքերի առթիվ և միահամուր ցանկութիւն յայտնեցին, որ Ազգային Խորհրդի նախագահութիւնը և Գործադիր Մարմինն անյապաղ ներկայանան կառավարութեան նախագահին, թարգման հանդիսանան Ազգային Խորհրդի զգացմունքներին և յայտնեն Խորհրդի պատրաստականութիւնը աջակցելու կառավարութեան ներկայ դժուար կացութեան մէջ:

Այս առաջարկութիւններն ընդունւում են միաձայն:

Այնուհետև Խորհուրդն անցնում է օրակարգի հարցերին, որոնց մէջ առաջին տեղը բռնում էր նախագահութեան զեկուցումն այն դիմումների առիթով, որ նա արել է Վրաց Հիմնադիր Ժողովի և կառավարութեան նախագահներին՝ հայ ազգային փոքրամասնութեան կուլտուրական ինքնօրինութեան առիթով:

Լսելով այդ զեկուցումը, Խորհուրդը յանձնարարեց նախագահութեան շարունակել իր դիմումները նոյն կարգով:

Տե՛ս Ազգային Խորհրդի նիստը //
Մշակ, 17 փետրվարի 1921, N 36:

N 171

Հաղորդագրություն՝ վրաց բանակի կարիքների համար հիվանդանոց հիմնելու ՀԱԽ-ի որոշման մասին

Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը որոշել է կազմակերպել հիւանդանոց բաղկացած 25 մահճակալից, զօրաճակատի կարիքների համար: [Թիֆլիսի] Քաղաքագլխին փոխարինող [Գ. Գ.] Կոնիևը շնորհակալութիւն է յայտնել Ազգային Խորհրդին հիւանդանոց բանալու առթիվ և խոստացել է աջակցութիւն ցոյց տալ քաղաքային ուպրավայի կողմից:

Տե՛ս Քրոնիկոն //
Մշակ, 19 փետրվարի 1921, N 38:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ)

1. ֆ. 276, ց. 1, գ. 139, թ. 144:
2. ֆ. 441, ց. 1, գ. 26, թ. 15 շրջ:
3. ֆ. 441, ց. 1, գ. 10, թ. 10-11:
4. ֆ. 441, ց. 1, գ. 61, թ. 20:
5. ֆ. 441, ց.1, գ. 48, թ. 49
6. Ֆ. 441, ց. 1, գ. 61, թ. 21:
7. ֆ. 441, ց. 1, գ. 30, թ. 16-17:

1. Զաքարյան Ա., Լևոն Լիսիցյանը Մայիլյան եղբայրների գիտատնտեսական արշավախմբի մասին// ՊԲՀ, 2001, N 1, էջ 277-285:
2. Հայրապետյան Հ. Արտաշես Աբեղյան. Մեծ բանասերն ու հասարակական գործիչը // http://www.armin.am/images/-menus/2699/Hayrapetyan_harutyun.pdf
3. Մաիլյան Բ. Վ. Վրաստանի կառավարությունը և Սոչիի շրջանի համշենահայ համայնքը (1918-1920 թթ.) // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV, Երևան, 2005, էջ 167-170:
4. Մաիլյան Բ. Վ. Աբխազիայի հայ գաղութի պատմությունից (1918-1920 թթ.) // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVII, Երևան, 2009, էջ 115-116:
5. Մաիլյան Բ. Վ. Վրաստանի հայոց ազգային խորհրդի գործունեության պատմությունից (1918 թ. օգոստոս – 1921 թ. փետրվար) // ՊԲՀ, 2011, թիվ 1, էջ 61 - 82:
6. Մաիլյան Բ. Վ. Աբխազիայի հայկական դպրոցների պատմությունից (1918-1920 թթ.) // Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի հինգերորդ տարեկան գիտաժողով,

(2010 թ., դեկտեմբեր), գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2011, էջ 25-35:
7. Ջամալեան Ա. Հայ-վրացական կնճիռը // Հայրենիք (Բոստոն), 1928, հոկտեմբեր/1929, ապրիլ:
8. Вадачкория Ш. Вопросы грузино-армянских взаимоотношений в политической мысли Грузии (1918-1920). Тбилиси: Мецниереба, 1999.
9. Документы об армяно-грузинском пограничном споре в Лори (декабрь 1920 г. – январь 1921 г.) // ПБЖ, 2010, N 1, с. 253-262.
10. Кавказский Календарь на 1917 г., Тифлис, 1916.
11. MEMORANDUM, Учредительному Собранию о Национальном Самоуправлении армян в Грузии. [Тифлис, 1921].

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

1. ԱՇԽԱՏԱՒՈՐ [ՆՈՐ ԱՇԽԱՏԱՒՈՐ], բանվորական և գյուղացիական օրաթերթ Հայ Յեղափոխական Դաշնակցության Վրաստանի կենտրոնական և Թիֆլիսի տեղական կոմիտեների, Թիֆլիս, 1918-1920:
2. ԲԱՆՎՈՐԻ ՁԱՅՆ, Վրաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության հայկական սեկցիայի օրգան- շաբաթաթերթ, Թիֆլիս, 1919-1921:
3. ԳՈՐԾԱՎՈՐ, սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության Թիֆլիսի մասնաճյուղի օրգան- շաբաթաթերթ, Թիֆլիս, 1919:
4. ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ, Հայ ժողովրդական կուսակցության քաղաքական, հասարակական, գրական օրաթերթ, Թիֆլիս, 1918-1919:
5. ՀՈՐԻԶՈՆ [ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ], ՀՅԴ արևմտյան բյուրոյի հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ, Թիֆլիս, 1918:

6. ՄՇԱԿ, քաղաքական-գրական ամենօրյա լրագիր, Թիֆլիս, 1918-1921:
7. ՅԱՌԱՋ, աշխատավորական օրաթերթ, ՀՅԴ Վրաստանի կենտրոնական կոմիտեի օրգան, Թիֆլիս, 1919:
8. ՆՈՐ ԽՕՍՔ, սոցիալ-դեմոկրատական (ինտերնացիոնալիստների) շաբաթաթերթ, Թիֆլիս, 1920:
9. БОРЬБА, ежедневная газета, издание Центрального Комитета социал-демократической рабочей партии Грузии, Тифлис,1918-1921.
10. ГРУЗИЯ, ежедневная газета, издание грузинской национал-демократической партии, Тифлис, 1918-1919.
11. КАВКАЗСКОЕ СЛОВО, ежедневная газета, Тифлис, 1918-1919.
12. СЛОВО, ежедневная газета, Тифлис, 1920-1921.
13. «საქართველო»/«Սաքարթվելո»/«Վրաստան», Վրաստանի ազգային դեմոկրատական կուսակցության գլխավոր կոմիտեի օրաթերթ, Թիֆլիս, 1918.
14. «სახალხო საქმე»/«Սախալխո սաքմե»/«ժողովրդական գործ», Վրաստանի սոցիալիստ-ֆեդերալիստների հեղափոխական կուսակցության գլխավոր կոմիտեի օրաթերթ, Թիֆլիս, 1918.
15. «შრომა»/«Շրոմա»/«Աշխատանք», Վրաստանի սոցիալիստ-հեղափոխական կուսակցության գլխավոր կոմիտեի, օրաթերթ, Թիֆլիս, 1918.

ՎՐԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
1918 Թ. ՕԳՈՍՏՈՍ - 1921 Թ. ՓԵՏՐՎԱՐ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

Գիրք Առաջին

Ժողովածու

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» տպագրատանը:

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 20.75:
Տպաքանակը՝ 70: